



Funded by  
the European Union

# ՔՀԿ չափիչ ՔՀԿ նպաստավոր միջավայրի մոնիտորինգ

---

## Հայաստան 2025 Հետազոտության գեկույց Երևան





**Ֆինանսավորվում է  
Եվրոպական միության կողմից**



European Center for  
Not-for-Profit Law



**ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ  
ԻՆԹԵՐՆԵՇՆԼ**  
հակակոռուպցիոն կենտրոն

## Չեկոյցի ժամանակահատված՝ 2025 թվականի հունվար- նոյեմբեր

Հետազոտական թիմ՝ Տաթևիկ Մարգարյան (հիմնական հետազոտող), Անուշ Հակոբյան (իրավաբան), Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, «ԲՀԿ չափիչ» ծրագրի փորձագիտական խումբ՝ Արփիլես Հակոբյան, «ՀԿ կենտրոն» ԲՀՁ ՀԿ, Էլինա Գյուրջյան, Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ, Տաթևիկ Փափազյան, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ:

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) առաքելությունն է կոռուպցիան նվազեցնելու ու ժողովրդավարությունն ամրապնդելու ճանապարհով նպաստել լավ կառավարմանը Հայաստանում:

Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն (ECNL) հիմնադրամը քաղաքացիական հասարակության վրա ազդող քաղաքականությունների և օրենքների ոլորտում առաջատար ռեսուրսային և հետազոտական կենտրոն է Եվրոպայում: ECNL-ն ստեղծում է գիտելիք, իրավագործում գործընկերներին և օգնում ստանդարտներ սահմանել քաղաքացիական ազատությունների ձևավորման, պաշտպանության և ընդլայնման համար:

Հեղինակները շնորհակալություն են հայտնում զեկոյցի մշակման աշխատանքներին իրենց ներդրումն ունեցած բոլոր աջակիցներին, ներառյալ «ԲՀԿ չափիչ» ծրագրի փորձագիտական խմբին, Խորհրդատվական խորհրդի անդամներին, հարցազրույցներին մասնակցած փորձագետներին, ֆոկլուս խմբային քննարկումների մասնակիցներին, ECNL-ի թիմին:

*«ԲՀԿ չափիչ՝ ի գործ» ծրագիրն իրականացվում է «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն» (ECNL) հիմնադրամի և իր գործընկերների՝ Հայաստանում «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի, Մոլդովայում «Պրոմո-Լեքս» ընկերակցության, իսկ Ուկրաինայում «ԻՍԱՈՒ Էդնանսիա» կազմակերպության կողմից:*

Այս փաստաթուղթը մշակվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատու են միայն հեղինակները, և այն պարտադիր չէ, որ արտացոլի Եվրոպական Միության դիրքորոշումը:

© Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն և Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 2026: Բոլոր հեղինակային իրավունքները պաշտպանված են:



**CSO meter**

2025 Հայաստան

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ</b>	<b>4</b>
<b>I. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ</b>	<b>5</b>
<b>II. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹՎԵՐՈՎ</b>	<b>16</b>
<b>III. ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ</b>	<b>17</b>
3.1 ՄԻԱԿՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ	17
3.2 ՀԱՎԱՍԱՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԸ	24
3.3 ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ	27
3.4 ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ	31
3.5 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԸ	40
3.6 ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ	57
3.7 ՄԱՍՆԱԿՈՐ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆԸ	67
3.8 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	74
3.9 ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ	82
3.10 ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՔՀԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	91
3.11 ԹՎԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	98
<b>IV. ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>109</b>
<b>V. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>111</b>
<b>VI. ՀՂՈՒՄՆԵՐ</b>	<b>113</b>
<b>VII. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ</b>	<b>132</b>

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱՅ	Ավելացված արժեքի հարկ
ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ԱԺ	Ազգային ժողով
ԱԳ	Արևելյան գործընկերություն
ԱՄ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՄ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԱՏՊԳ	Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն
ԲԿԳ	Բաց կառավարման գործընկերություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական Միություն
ՉԼՄ	Չանգվածային լրատվամիջոց
ԹԻՅԿ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ԼԳԲՏԻԶ+	Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս, բվիր և այլն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԱԿ	Միավորված Ազգերի Կազմակերպություն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՊԵԿ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Պետռեգիստր	ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏՀՏ	Տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ECNL	Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն
DDoS	Ծառայության բաշխված մերժում
SLAPP	Ռազմավարական հայցեր հանրային մասնակցության դեմ

# I. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

## Երկրի ընդհանուր իրավիճակը և քաղաքացիական հասարակության միջավայրին առնչվող հիմնական միտումները

Հայաստանի 2025 թվականի քաղաքական միջավայրը ձևավորվել է Ադրբեջանի քաղաքական ղեկավարության կողմից շարունակվող սպառնալիքների<sup>1</sup> և խաղաղության համաձայնագրի շուրջ զուգահեռաբար ընթացող բանակցությունների ֆոնին: Քաղաքական մթնոլորտի վրա մասնավորապես ազդեցություն են ունեցել 2026 թվականի ընտրություններին ընդառաջ լարվածության աճը, Լեռնային Ղարաբաղի պատերազմի հետևանքները և աշխարհաքաղաքական փոփոխությունների ավելի լայն համատեքստը, ներառյալ Եվրամիության (ԵՄ) և Ամերիկայի Միացյալ Նահանգների (ԱՄՆ) արտաքին քաղաքականության առաջնահերթությունների փոփոխությունը, Մերձավոր Արևելքում անկայունության աճը, հարևան Կրաստանում ժողովրդավարության նահանջը և Ուկրաինայում շարունակվող պատերազմը:

2025 թվականին Հայաստանը մի շարք քայլեր ձեռնարկեց իր արտաքին քաղաքականության օրակարգը ԵՄ-ի և ԱՄՆ-ի հետ հարաբերությունների ամրապնդման ուղղությամբ զարգացնելու նպատակով: 2025 թվականի սկզբին քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության հիման վրա Ազգային ժողովն ընդունեց «Եվրոպական Միությանը ՀՀ-ի անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» օրենքը՝ որպես Հայաստանը ԵՄ-ին ինտեգրելու ուղղությամբ կառավարության քաղաքական կամքի ամրագրում և ռազմավարական քայլ<sup>2</sup>: Չուգահեռաբար, 2024 թվականի սեպտեմբերին մեկնարկած՝ վիզաների ազատականացման վերաբերյալ ԵՄ-ի հետ բանակցությունների և այդ գործընթացում Հայաստանի կառավարության ցուցաբերած առաջընթացի հիման վրա 2025 թվականի նոյեմբերի սկզբին ԵՄ-ն Հայաստանի կառավարությանը փոխանցեց վիզաների ազատականացման գործողությունների ծրագիրը: Այս ծրագիրը բարեփոխումներ է նախատեսում փաստաթղթերի անվտանգության, սահմանային և միգրացիոն կառավարման, հասարակական կարգի և անվտանգության, այդ թվում՝ տվյալների պաշտպանության, ինչպես նաև արտաքին հարաբերությունների և մարդու հիմնարար իրավունքների ոլորտներում<sup>3</sup>:

<sup>1</sup> Reuters, Armenia warns of escalation risk after Azeri leader calls it 'fascist' (Հայաստանը նախազգուշացնում է սրման վտանգի մասին այն բանից հետո, երբ Ադրբեջանի առաջնորդը այն անվանեց «ֆաշիստական»), 08.01.2025, <https://www.reuters.com/world/asia-pacific/armenia-warns-escalation-risk-after-azeri-leader-calls-it-fascist-2025-01-08/>; Armenian Weekly, Aliyev warns Armenia: amend constitution or risk fallout (Ալիևը զգուշացնում է Հայաստանին փոփոխեք սահմանադրությունը, հակառակ դեպքում կարող էք հետևանքներ կրել), 27 August 2025, <https://armenianweekly.com/2025/08/27/aliyev-warns-armenia-amend-constitution-or-risk-fallout/>

<sup>2</sup> CSO Meter, “Armenia: Following a citizen legislative initiative, National Assembly passed a law to initiate EU accession in first reading” (Հայաստան. Քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության արդյունքում Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունեց ԵՄ անդամակցության գործընթացը սկսելու մասին օրենքը), 03.03.2025, <https://csometer.info/updates/armenia-following-citizen-legislative-initiative-national-assembly-passed-law-initiate-eu>

<sup>3</sup> EU Neighbours East, “EU and Armenia announce political agreement on partnership agenda” (ԵՄ-ն և Հայաստանը հայտարարում են գործընկերության օրակարգի վերաբերյալ քաղաքական համաձայնության մասին), 01.07.2025, <https://euneighbourseast.eu/news/latest-news/eu-and-armenia-announce-political-agreement-on-partnership-agenda>, Արմենարես, «ԵՄ-ն պաշտոնապես Հայաստանին հանձնեց վիզաների ազատականացման գործողությունների

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) համար այս գործընթացը նոր հնարավորություններ է ստեղծում ԵՄ կողմից նախաձեռնված բարեփոխումների գործընթացներին և քաղաքականության երկխոսությանը մասնակցելու համար՝ միաժամանակ լրացուցիչ ճնշում գործադրելով կառավարության վրա, որպեսզի քաղաքականությունն ու օրենսդրությունը համապատասխանեցվեն եվրոպական հավակնոտ չափանիշներին: Այնուհետև, 2025 թվականի դեկտեմբերի 2-ին ԵՄ-ն և Հայաստանը ընդունեցին ԵՄ-ՀՀ գործընկերության նոր ռազմավարական օրակարգ՝ հիմնվելով ԵՄ-ՀՀ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) վրա և խորացնելով երկու երկրների միջև քաղաքական, տնտեսական և ոլորտային համագործակցությունը: 2025 թվականի հունվարին ստորագրված ԱՄՆ-ՀՀ ռազմավարական գործընկերության խարտիայի հետ միասին, որն ամրապնդեց ԱՄՆ-ի հետ համագործակցության հիմքերը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ժողովրդավարությունը, մարդու իրավունքները և կիբեռանվտանգությունը<sup>4</sup>, այս քայլերն ընդգծեցին Հայաստանի ջանքերը իր աշխարհաքաղաքական կապերը և անվտանգային գործընկերությունը դիվերսիֆիկացնելու ուղղությամբ:

2025 թվականի օգոստոսի 8-ին Հայաստանը և Ադրբեջանը ԱՄՆ-ի միջնորդությամբ համատեղ հռչակագիր ստորագրեցին՝ նախաստորագրելով խաղաղության համաձայնագրի տեքստը<sup>5</sup>: Հռչակագիրը ներառում էր մի շարք պայմանավորվածություններ, ներառյալ ԵԱՀԿ Մինսկի գործընթացի լուծարում և պետությունների ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և իրավագործության հարգանքի հիման վրա տրանսպարտային և հաղորդակցության ուղիների բացում, այդ թվում՝ Ադրբեջանի կենտրոնական հատվածի և Նախիջևանի միջև անարգել կապի ապահովում նախատեսելով Հայաստանի տարածքով՝ «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» (TRIPP) հաղորդակցության ծրագրի շրջանակներում<sup>6</sup>: Թեև խաղաղության նախաստորագրված համաձայնագիրը զգուշավոր լավատեսություն ստեղծեց երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորման և սահմանային անվտանգության բարելավման հարցում, միջպետական բոլոր պահանջները հետ վերցնելու մասին կետը լուրջ քննադատության արժանացավ մի խումբ իրավապաշտպան կազմակերպությունների կողմից: Դեռևս 2025 թվականի սկզբին ՔՀԿ-ները մտահոգություն էին հայտնում, որ միջազգային դատական ատյաններում ներկայացված հայցերից հրաժարումը կվտանգի քաղաքացիների իրավունքների իրացումը, կխախտի միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունները և թույլ կտա Ադրբեջանին խուսափել պատասխանատվությունից, իսկ

---

ծրագիրը», 05.11.2025, <https://armenpress.am/hy/article/1234129>, ՀՀ-ԵՄ վիզաների ազատականացման գործողությունների ծրագիր, ՀՀ ներքին գործերի նախարարություն, 05.11.2025, <https://mia.gov.am/2025/11/05/em-31/>

<sup>4</sup> U.S. Mission Armenia, “Charter on Strategic Partnership Between the United States of America and the Republic of Armenia” (Ամերիկայի Միացյալ Նահանգների և Հայաստանի Հանրապետության միջև ռազմավարական գործընկերության խարտիա), 15.01.2025, <https://am.usembassy.gov/charter-on-strategic-partnership-between-the-united-states-of-america-and-the-republic-of-armenia/>

<sup>5</sup> Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, «Հայաստանի և Ադրբեջանի միջև նախաստորագրված համաձայնագրի հրապարակում», 11.08.2025, <https://www.mfa.am/en/press-releases/2025/08/11/Initialed%20Arm-Az%20Peace%20Agreement%20text/13394>

<sup>6</sup> Հայաստանի Հանրապետության վարչապետ, «Ստորագրվել է Ադրբեջանի Հանրապետության նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի և Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի Դոնալդ Թրամփի համատեղ Հռչակագիրը», 09.08.2025, <https://www.primeminister.am/hy/press-release/item/2025/08/09/Nikol-Pashinyan-visit-US-declaration/>

հակամարտության ցանկացած քաղաքական կարգավորում պետք է ներառի արդարադատությունն ապահովող միջազգային մեխանիզմներ<sup>7</sup>:

2025 թվականի մայիս-հունիս ամիսներին իշխանության և Հայ Առաքելական Եկեղեցու միջև լարվածությունը սրվեց: Վերջին տարիներին եկեղեցու որոշ ղեկավար գործիչներ բացահայտորեն սատարել են ընդդիմադիր քաղաքական ուժերին և բազմիցս պահանջել են վարչապետի հրաժարականը<sup>8</sup>: Իր հայտարարություններում և սոցիալական ցանցերի գրառումներում վարչապետը եկեղեցու առաջնորդների վերաբերյալ բարեվարքության խնդիրների և կոռուպցիայի մեղադրանքներ հնչեցրեց<sup>9</sup>: Իշխանության և եկեղեցու միջև առճակատումը հանրային վրդովմունք առաջացրեց, և քաղաքացիների բազմաթիվ խմբեր, այդ թվում՝ առանձին ԲՀԿ ներկայացուցիչներ, քննադատեցին վարչապետին անպարկեշտ լեզու օգտագործելու և եկեղեցու ինքնավարությանն ու ներքին գործերին միջամտելու համար<sup>10</sup>: Այս սրացումը ուղեկցվեց Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) կողմից ենթադրյալ հեղաշրջման ծրագրերի բացահայտմամբ, ինչի պատճառով 2025 թվականի հունիսին մի շարք կրոնական և քաղաքական գործիչներ ձերբակալվեցին: Այդ ընթացքում Ազգային ժողովը երեք ընդդիմադիր պատգամավորի զրկեց անձեռնմխելիությունից՝ հնարավորություն տալով նրանց նկատմամբ քրեական գործեր հարուցել, ինչն ընդդիմադիրները որակեցին որպես քաղաքական հետապնդում<sup>11</sup>:

Հանրային վստահությունը կառավարության նկատմամբ շարունակում է նվազել: Միջազգային հանրապետական ինստիտուտի կողմից 2025 թվականի հունիս-հուլիս ամիսներին անցկացված հարցումը ցույց է տվել, որ հարցվածների 49%-ը կարծում է, որ Հայաստանը շարժվում է «սխալ ուղղությամբ», իսկ 36%-ը՝ որ այն շարժվում է ճիշտ ուղղությամբ: Միևնույն ժամանակ, հարցվածների 61%-ը նշել է, որ չի վստահում որևէ քաղաքական գործիչ<sup>12</sup>: Պետական ինստիտուտների նկատմամբ անվստահությունը սերտորեն կապված է հայ հասարակությունում պահպանվող բևեռացման և ապատեղեկատվության բարձր մակարդակի, ինչպես նաև ատելության տարածված հոետորաբանության հետ: ԲՀԿ-ների պարագայում այս սոցիալական բևեռացումը և քաղաքական լարվածությունը զգուշավոր հավասարակշռություն են պահանջում, քանի որ նրանք բախվում են հանրային ճնշման և

<sup>7</sup> ԲՀԿ-ների հայտարարություն, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, 14.01.2025, <https://prwb.am/2025/01/14/haytararvo%d6%82thyvo%d6%82n/>

<sup>8</sup> Andranik Shirinyan, As the Church and government clash in Armenia, democracy falls victim (Միևնույն եկեղեցին և կառավարությունը Հայաստանում բախվում են, ժողովրդավարությունը զոհ է դառնում), OC Media, 20.06.2025, <https://oc-media.org/opinion-as-the-church-and-government-clash-in-armenia-democracy-falls-victim/>

<sup>9</sup> Arshaluys Barseghyan, “Pashinyan and wife accuse clergymen of paedophilia and violating celibacy vows” (Փաշինյանը և նրա կինը հոգևորականներին մեղադրում են մանկապղծության և կուսակրոնության երդումները խախտելու համար), OC Media, 30.05.2025, <https://oc-media.org/pashinyan-and-wife-accuse-clergymen-of-paedophilia-and-violating-celibacy-vows>

<sup>10</sup> Susan Badalian, Tatevik Lazarian, Robert Zargarian, Pashinian’s Profanities Against Armenian Church Spark Outrage (Փաշինյանի հայիոյանքները հայ եկեղեցու հասցեին զայրույթ են առաջացրել), Ազատություն Ռադիոկայան, 30.05.2025, <https://www.azatutyun.am/a/33429832.html>, ԲՀԿ-ների հայտարարություն, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, 29.06.2025, <https://prwb.am/2025/06/29/haytararvo%d6%82thyvo%d6%82n-2/>

<sup>11</sup> Yousef Bardouka, “Armenian Parliament waives immunity for 3 MPs, including one accused in coup plot” (Հայաստանի խորհրդարանը անձեռնմխելիությունից զրկեց երեք պատգամավորների, որոնցից մեկը մեղադրվում է պետական հեղաշրջման նախապատրաստման համար), OC Media, 08.07.2025, <https://oc-media.org/armenian-parliament-waives-immunity-for-3-mps-including-one-accused-in-coup-plot/>

<sup>12</sup> International Republican Institute, “Public Opinion Survey: Residents of Armenia: June 2025” (Հասարակական կարծիքի հարցում Հայաստանի բնակչության շրջանում. 2025 թվականի հունիս), 21.07.2025, <https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia-june-2025/>

պիտակավորման նորանոր ալիքների թե՛ քննադատությունն հնչեցնելու, թե՛ կառավարության հետ համագործակցության նախաձեռնություններում ներգրավվելու համար:

Արտաքին ֆինանսավորման միտումները ավելի են խորացրել Հայաստանի քաղաքացիական հասարակության խոցելիությունը: Արտաքին աջակցության, մասնավորապես՝ ԱՄՆ ֆինանսավորման կրճատումը մեծ ազդեցություն է թողել բազմաթիվ ՔՀԿ-ների վրա: Այն հանգեցրել է տարբեր ծրագրերի փակման և բազմաթիվ կազմակերպությունների հասցրել գոյատևման կարգավիճակի, քանի որ շատերը ստիպված եղան կտրուկ կրճատել իրենց աշխատանքի ծավալը՝ հաճախ չկարողանալով հոգալ իրենց հիմնական ծախսերը, օրինակ՝ գրասենյակի վարձը<sup>13</sup>: Ֆինանսավորման այս ճգնաժամն ընդգծեց ոլորտի կախվածությունը արտաքին աջակցությունից և ֆինանսական կայունության շարունակական խնդիրները: Լրատվական կազմակերպությունները հատկապես ծանր հարված ստացան տարվա առաջին ամիսներին, երբ ռեսուրսների կրճատումը վտանգեց անկախ լրագրության շրջանակը՝ մեծացնելով քաղաքական ճնշման ու արտաքին ազդեցությանը ենթարկվելու ռիսկերը<sup>14</sup>: Չնայած ՔՀԿ-ները և լրատվական կազմակերպությունները բազմիցս դիմեցին կառավարությանը աջակցելու վերաբերյալ կոչերով՝ կառավարության կողմից որևէ առարկայական արձագանք չեղավ: ԵՄ-ի՝ Հայաստանի ՔՀԿ-ների հետ ներգրավման ճանապարհային քարտեզի վերանայված փաստաթղթում ևս ընդգծվել են ֆինանսական կայունության մարտահրավերները քաղաքական և տարածաշրջանային ավելի լայն զարգացումների ֆոնին: Այս ճանապարհային քարտեզն արձանագրել է նպաստավոր միջավայրի հիմնական խնդիրները և կարողությունների բացերը և առաջարկել ռազմավարական քայլեր՝ ամրապնդելու ՔՀԿ-ների դերը ժողովրդավարական կառավարման, քաղաքականության երկխոսության և կայուն զարգացման գործում<sup>15</sup>:

## Քաղաքացիական հասարակության միջավայրի հիմնական զարգացումները

2025 թվականին Հայաստանի ՔՀԿ միջավայրի ընդհանուր գնահատականը 2024 թվականի համեմատ **չի փոխվել** (4,8 միավոր՝ առավելագույն 7-ից): Ամենաբարձր գնահատականներն ունեցող երեք ոլորտները ևս նույնն են մնացել՝ միավորումների ազատություն (5,7 միավոր), ֆինանսավորման մատչելիություն (5,3 միավոր) և խաղաղ հավաքների ազատություն (5,2 միավոր): Ինչպես և 2024 թվականին, ամենացածր գնահատված ոլորտներ են պետություն-ՔՀԿ համագործակցությունը (4 միավոր), պետական աջակցությունը (4,1 միավոր), պետության կողմից պաշտպանության պարտականությունը (4,5 միավոր) և թվային իրավունքները (4,4

<sup>13</sup> Նախնական տվյալներով՝ հայաստանյան ՔՀԿ-ների մոտ 40%-ի բյուջեի զգալի մասը ձևավորվել է ԱՄՆ ՄՉԳ-ի դրամաշնորհների միջոցով, աղբյուր՝ Caucasus Watch, “After USAID: Armenian Civil Society at a Crossroads” (ԱՄՆ ՄՉԳ-ից հետո՝ Հայաստանի քաղաքացիական հասարակությունը խաչուղիներում), 14.08.2025, <https://caucasuswatch.de/en/insights/after-usaid-armenian-civil-society-at-a-crossroads.html>

<sup>14</sup> Tigran Grigoryan, “The impact of U.S. aid cuts on Armenia’s civil society and media” (ԱՄՆ օգնության կրճատման ազդեցությունը Հայաստանի քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների վրա), CivilNet, 17.03.2025, <https://www.civilnet.am/en/news/822632/the-impact-of-u-s-aid-cuts-on-armenias-civil-society-and-media/>

<sup>15</sup> The European Union, “EU Roadmap for Engagement with Civil Society in Armenia 2021-2027” (Հայաստանի քաղաքացիական հասարակության հետ ԵՄ-ի ներգրավման 2021-2027թթ. ճանապարհային քարտեզ), վերանայված՝ հունիս 2025 թ., <https://www.eeas.europa.eu/sites/default/files/2025/documents/EU-CSO%20Roadmap%20Armenia%20UPDATED%20June%202025.pdf>

միավոր): Երեք ոլորտում արձանագրվել է գնահատականի նվազում. դրանք են՝ խոսքի ազատությունը, մասնավոր կյանքի իրավունքը և թվային իրավունքները:

**խոսքի ազատության** ոլորտի ընդհանուր գնահատականի նվազումը (2025 թվականին՝ 4,8 միավոր՝ 2024 թվականի 4,9 միավորի համեմատ) պայմանավորված է գործնական միջավայրի գնահատականի անկմամբ (2025 թվականին՝ 4,2 միավոր՝ 2024 թվականի 4,3 միավորի համեմատ), որը տեղի է ունեցել երկրում տեղ գտած այնպիսի խնդիրների պատճառով, ինչպիսիք են ծայրահեղ բևեռացված քաղաքական մթնոլորտը և դրան ուղեկցող վիրավորանքները, զրպարտչական արշավներն ու լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության դեպքերը: Ապատեղեկատվության և ատելության խոսքի մակարդակը շարունակում է բարձր մնալ, ընդ որում մտահոգություն կա, որ իրավապահ մարմինները ընտրողաբար և անհամաչափ կերպով են կիրառում ատելության խոսքի և բռնության հրապարակային կոչերի համար նախատեսված պատժամիջոցները՝ հիմնականում պաշտպանելով իշխանության ներկայացուցիչներին: Մյուս կողմից, այս ոլորտում նկատվել են ինչպես բացասական, այնպես էլ դրական օրենսդրական զարգացումներ, այդ թվում՝ աուդիոփիզուս բովանդակության հեռարձակողներին աջակցելու նպատակով պետական հիմնադրամի ստեղծումը և հանրային հեռարձակողների նվազագույն քանակի կրճատումը: Բացի այդ՝ մի շարք օրինագծեր են նախաձեռնվել զրպարտության վերաբերյալ կարգավորումների արդիականացման, առցանց բովանդակության համար պատասխանատվության սահմանման և հեռարձակողների նկատմամբ վերահսկողության ավելացման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, կառավարությունը, համագործակցելով ԶՅԿ-ների հետ, «Ապատեղեկատվության դեմ պայքարի ազգային հայեցակարգի» շրջանակներում քայլեր է իրականացրել մեդիա գրագիտության բարելավման և ապատեղեկատվության դեմ պայքարի ուղղությամբ, իսկ վարչապետի աշխատակազմում ստեղծվել է Ռազմավարական հաղորդակցության վարչություն:

**Մասնավոր կյանքի իրավունքի** ոլորտում արձանագրված խախտումները և գաղտնալուծումների արտահոսքերը ի ցույց դրեցին տվյալների անօրինական մշակումից պաշտպանության հարցում առկա համակարգային խնդիրները և արդյունավետ կանխարգելման ու պատասխանատվության մեխանիզմների պակասը՝ հանգեցնելով ոլորտի ընդհանուր գնահատականի նվազմանը (4,8 միավոր՝ 2024 թվականի 4,9 միավորի համեմատ): Հսկողության գործողությունների վերահսկման և հաշվետվողականության մեխանիզմների անհրաժեշտությունը ևս ոլորտի առանցքային խնդիրներից են: Այս համատեքստում հանրային վայրերում տեսահսկման համակարգերին ոստիկանության համար ավելի լայն հասանելիությունն ապահովող օրենսդրական փոփոխությունները ռիսկային են համարվել: Որպես դրական զարգացում հարկ է նշել, որ կառավարությունը նախատեսում է անձնական տվյալների պաշտպանության անկախ մարմին ստեղծել, իսկ «Հանրային տեղեկատվության մասին» և «Կիբեռանվտանգության մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որը փոփոխություններ է ներառում նաև «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքում, որոշակի հիմք է ստեղծում անձնական տվյալների պաշտպանության հետագա բարելավումներ ակնկալելու համար:

Այս օրենսդրական բարեփոխումները վերաբերելի են նաև **թվային իրավունքների** ոլորտին, քանի որ հնարավորություն են տալիս ամրապնդել կիբեռանվտանգությունը նոր ինքնավար լիազոր մարմնի համակարգման ներքո: Սակայն տեսահսկման համակարգերի հասանելիության մասով պետության լիազորությունները ընդլայնող օրենսդրական

փոփոխությունները բացասաբար են ազդել ոլորտի իրավական դաշտի գնահատականի վրա, ինչը հանգեցրել է ոլորտի ընդհանուր գնահատականի նվազմանը (4,4 միավոր՝ 2024 թվականի 4,5 միավորի համեմատ): Հսկողության տեխնոլոգիաների իրավաչափ օգտագործման երաշխիքների կիրառումը գործնականում անբավարար է, և ՔՀԿ-ները, լրագրողները և ակտիվիստները շարունակում են լրտեսող ծրագրերի, ֆիշինգի և DDoS հարձակումների թիրախում լինել: Միևնույն ժամանակ, պետությունը շարունակում է քայլեր ձեռնարկել ծառայությունների թվայնացման, մեդիագրագիտության բարելավման և համացանցի հասանելիության ապահովման ուղղությամբ, և բազմաթիվ ՔՀԿ-ներ առանցքային դեր են խաղում մեդիա կրթության և փաստերի ստուգման գործում:

**Պետություն-ՔՀԿ համագործակցության** ոլորտում իրավական դաշտի գնահատականը բարելավվել է (2024 թվականի 4,3 միավորից 2025 թվականին դառնալով 4,4 միավոր) մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչության ստեղծման ու հանրային մասնակցության և պետություն-ՔՀԿ համագործակցության բարելավմանն ուղղված նոր իրավակարգավորումների ընդունման շնորհիվ: Սակայն ոլորտի ընդհանուր գնահատականը մնացել է նույնը (4 միավոր)՝ հանդիսանալով ՔՀԿ չափիչի բոլոր ոլորտներից ամենացածրը, ինչը պայմանավորված է ՔՀԿ ոլորտի վերաբերյալ որևէ համապարփակ քաղաքականության կամ ռազմավարության բացակայությամբ: Հանրային խորհրդի մասին օրենքի փոփոխությունները սկիզբ դրեցին այս սահմանադրական խորհրդակցական մարմնի վերագործարկմանը մի քանի տարվա դադարից հետո, ինչպես նաև դրա կազմում Փաստահավաք հանձնաժողովի ստեղծման գործընթացի մեկնարկին: Թեև ազգային և տեղական մակարդակներում բազմաթիվ խորհրդակցական մարմիններ և խմբեր են կազմավորվել, դրանցից շատերը չեն գործում, հաշվետվողականության խնդիրներ ունեն կամ հազվադեպ են նիստեր գումարում: 2025 թվականի սեպտեմբերին վարչապետի որոշմամբ հաստատված նոր աշխատակարգով նախատեսվում է ապահովել հասարակական խորհուրդների նիստերի կանոնավոր կազմակերպումը, մարզերի ներկայացվածությունը և հետադարձ կապի մեխանիզմների ներդրումը:

ՔՀԿ չափիչի մյուս ոլորտների գնահատականները 2025 թվականին չեն փոխվել: **Միավորումների ազատության** ոլորտի (ընդհանուր գնահատականը՝ 5,7 միավոր) օրենսդրական ու գործնական միջավայրը հիմնականում նպաստավոր է ՔՀԿ-ների ստեղծման և գործունեության համար, իսկ գրանցման նմուշային փաստաթղթերը թույլ են տալիս հասարակական կազմակերպություններին ավելի արագ գրանցվել: ՔՀԿ-ների համար առցանց գրանցման հնարավորության բացակայությունը և իրական շահառուների հայտարարագրման պահանջի հետ կապված վարչարարությունն ու ծախսերը շարունակում են մնալ այս ոլորտի հիմնական մարտահրավերները:

**Հավասար վերաբերմունքի** ոլորտում (ընդհանուր գնահատականը՝ 4,9 միավոր) առկա խնդիրները կապված են գրանցման և տնտեսական գործունեության հարկման առումով բիզնեսի համար ավելի բարենպաստ պայմանների և որոշում կայացնողների կողմից ՔՀԿ-ների ներգրավման ընտրողական մոտեցման հետ: Թեև օրենսդրությունը ՔՀԿ-ներին հնարավորություն է ընձեռում ֆինանսավորում փնտրել տարատեսակ աղբյուրներից, **ֆինանսավորման մատչելիության** ոլորտում (ընդհանուր գնահատականը՝ 5,3 միավոր) նշանակալի խնդիր է մնում ֆինանսավորման աղբյուրների բազմազանացման խթանների պակասը, ինչն ավելի ակնառու է դարձել 2025 թվականին դոնոր կազմակերպությունների աջակցության զգալի նվազման պարագայում: Ծարունակում է մտահոգել նաև

դրամաշնորհային ծրագրերը որպես «ծառայությունների մատուցում» մեկնաբանելը և, հետևապես, օրենքով սահմանված դեպքերում ավելացված արժեքի հարկով (ԱԱՀ) հարկման օբյեկտ համարելը:

**Խաղաղ հավաքների ազատության** ոլորտում (ընդհանուր գնահատականը՝ 5,2 միավոր) «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի և ենթաօրենսդրական կարգավորումների ներքո ուժի կիրառման վերաբերյալ ավելի հստակ կանոններ են սահմանվել և նախատեսվել է ոստիկանների համապատասխան վերապատրաստում, ինչը կարող է դրականորեն անդրադառնալ հավաքների ոստիկանական վերահսկողության վրա: 2025 թվականին բազմաբանակ հավաքներ ավելի քիչ են եղել, և դրանց մեծ մասն անցել է առանց միջամտության, թեև ոստիկանական ծառայողների թվաքանակը հաճախ անհամաչափ էր ցուցարարների քանակի համեմատ: Միևնույն ժամանակ, շարունակվում է մտահոգել անցյալ տարիներին տեղ գտած իրավախախտումների համար պատասխանատվության բացակայությունը:

**Որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունքի** ոլորտում (ընդհանուր գնահատականը՝ 4,9 միավոր) դրական զարգացումների շարքում են մասնակցության բարելավման նպատակով կառավարության կազմում նոր վարչության ստեղծումը և իրավական կանոնակարգերի ընդունումը: Վաղ փուլերում որոշումների կայացման գործընթացում ներգրավման և խորհրդարանում մասնակցության ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայությունը, ինչպես նաև տեղեկատվության մատչելիության հետ կապված շարունակական խնդիրները մնում են այս ոլորտի ամենակարևոր մարտահրավերները: «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագիծը, որը ներկայացված է խորհրդարանի հաստատմանը, կարող է նպաստել հրապարակվող տեղեկատվության ծավալի ավելացմանը և բաց տվյալների ձևաչափով հասանելիությանը, սակայն գործնական մարտահրավերները դեռևս շատ են:

**Պետության կողմից պաշտպանության պարտականության** ոլորտի (ընդհանուր գնահատականը՝ 4,5 միավոր) հիմնական մարտահրավերներն են զգայուն ոլորտներում աշխատող ՔՀԿ-ների արդյունավետ պաշտպանության բացակայությունը և հանրային մասնակցության դեմ ռազմավարական դատավարության (SLAPP) հայցերի միջոցով բնապահպանական ակտիվիստների դեմ շարունակվող ճնշումները: Հասարակական կազմակերպությունների կողմից դատարանում հանրային շահերը ներկայացնելու իրավունքի ընդլայնման ուղղությամբ առաջընթացը դեռևս սահմանափակ է:

Վերջապես, **պետական աջակցության** ոլորտում (ոլորտի ընդհանուր գնահատականը՝ 4,1 միավոր) հիմնական խնդիրները նույնն են մնացել, ինչ նախորդ տարիներին: Այստեղ ամենակարևոր բացը ՔՀԿ-ների և նվիրատուների համար խրախուսող հարկային միջավայրի բացակայությունն է: Դրամաշնորհների հատկացման գաղտնի որոշումների հետ կապված դեպքը նոր մտահոգություններ առաջացրեց պետական ֆինանսավորման արդարության և թափանցիկության վերաբերյալ, իսկ տեղական մակարդակում աջակցությունը մեծ մասամբ մնում է հայեցողական: Պետական գնումների նոր էլեկտրոնային հարթակը, որի միջոցով իրականացվելու է նաև դրամաշնորհների կառավարումը, դեռևս մշակման փուլում է:

## Առանցքային իրադարձություններ

2025 թվականի «ԶԿ չափիչ» գեկույցի տարբեր ոլորտներում արձանագրվել են հետևյալ առանցքային իրադարձությունները.

- ԱՄՆ արտաքին աջակցության դադարեցումը զգալի ազդեցություն ունեցավ Հայաստանի քաղաքացիական հասարակության վրա՝ հանգեցնելով բազմաթիվ ԶԿ-ների գործունեության կրճատմանը, սակայն կառավարության կողմից ֆինանսական բեռի թեթևացման կամ հարկային արձակուրդի որևէ միջոցառում չիրականացվեց: Այս մարտահրավերներին զուգահեռ ԶԿ-ները դրամահավաքի միջոցով եկամուտները բազմազանեցնելու ուղղությամբ ջանքեր են գործադրել, որոնք սակայն բավարարարյունք չեն տվել: Միևնույն ժամանակ, սոցիալական ձեռներեցության վերաբերյալ կարգավորման բացակայությունը և շուկայում մասնավոր ընկերությունների հետ անհավասար մրցակցությունը սահմանափակում են ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ԶԿ-ների կարողությունը և ինքնաբավությունն ապահովելու ջանքերը:
- Վարչապետի աշխատակազմում ստեղծվել է Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչություն, որի գործառույթներից են մասնակցային կառավարման մեթոդաբանության մշակումը և իրականացման մշտադիտարկումը, բաց կառավարման նախաձեռնությունների համակարգումը և ԶԿ-ների հետ համագործակցության բարելավումը:
- Վարչապետի որոշմամբ հաստատվել է նախարարներին և կառավարությանն առընթեր մարմինների ղեկավարներին կից հասարակական խորհուրդների վերաբերյալ նոր աշխատակարգ և խորհրդի անդամների ընտրության կարգ: Ըստ աշխատակարգի՝ նախարարությունների և այլ մարմինների կողմից մշակված բոլոր ռազմավարությունների, հայեցակարգերի և ծրագրերի նախագծերը ենթակա են հասարակական խորհրդի հետ պարտադիր քննարկման ինչպես գաղափարի ձևավորման փուլում, այնպես էլ իրավական ակտի մշակումից հետո:
- Լրատվամիջոցներն ու լրագրողները ավելի հաճախ են թիրախավորվել տարբեր քաղաքական ուժերի կողմից, կա նաև ԶԿ-ներին և ակտիվիստներին իրենց քննադատական կարծիքների և հայտարարությունների համար պիտակավորելու միտում: Ընդհանուր առմամբ, թշնամական և բևեռացված միջավայրը՝ բաց և հարգալից բանավեճի մշակույթի պակասի հետ միասին, 2025 թվականին աստիճանաբար ավելի զսպող ազդեցություն է ունեցել խոսքի ազատության վրա:
- Ապօրինի հսկողության և ինտիմ բնույթի տեսագրության ու գաղտնալուծման արտահոսքի դեպքերը, այդ թվում՝ բնակարանում նկարահանված ինտիմ բնույթի տեսանյութերի առցանց հրապարակման 2025 թվականի հոկտեմբերի աղմկահարույց միջադեպը, բացահայտեցին անձնական կյանքի պաշտպանության համակարգային բացերը և մտահոգություններ առաջացրեցին այդ արտահոսքերի հարցում իշխանության դերի և քաղաքական դրդապատճառներով հսկողության գործիքների չարաշահման հնարավորության վերաբերյալ:
- 2025 թվականի օգոստոսին կառավարությունը հավանություն տվեց «Հանրային տեղեկությունների մասին», «Կիբեռանվտանգության մասին» և «Տեղեկատվական

համակարգերի կարգավորման մարմին» մասին նոր օրենքների փաթեթին, իսկ հոկտեմբերին Ազգային ժողովը առաջին ընթերցմամբ քվեարկեց օրենսդրական փաթեթի օգտին<sup>16</sup>: Ի թիվս այլ նպատակների՝ փաթեթով նախատեսվում է սահմանել պետական մարմինների կողմից տվյալների կառավարման կանոնները և կարգավորել հանրային տեղեկությունների հասանելիությունը, բարելավել կիբեռանվտանգության միջոցառումները և համապատասխան ոլորտը համակարգող ինքնավար մարմին ստեղծել:

- 2025 թվականի մարտին ընդունված՝ «Ոստիկանության մասին» օրենքի փոփոխությունները ՀՀ ներքին գործերի նախարարությանը հնարավորություն տվեցին հասանելիություն ունենալ հանրային շինությունների արտաքին հատվածում, տրանսպորտում, օդանավակայաններում, սահմանային անցակետերում և կայանատեղիներում տեղադրված տեսահսկման համակարգերին: Ըստ օրենսդրական փոփոխությունների՝ թույլատրվում է անձանց նույնականացում իրականացնել նրանց կողմից հանցագործության կամ վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ կասկածի դեպքում: Օրենքը մի շարք երաշխիքներ է ներառում հսկողության համակարգերի թափանցիկ և հաշվետու օգտագործումն ապահովելու համար, օրինակ՝ յուրաքանչյուր մուտքի էլեկտրոնային հաշվառումը, տեսանյութի ներբեռնման ժամի արտացոլումը, տեսահսկման համակարգերի օգտագործումը միայն իրավասու աշխատակիցների կողմից, ինչպես նաև պատասխանատվության միջոցներ է նախատեսում նշված պայմանները չկատարելու դեպքում: Օրենսդրական փոփոխություններով տվյալ համայնքի վարչական տարածքում տեղադրված տեսահսկման համակարգերին հասանելիություն է տրվել նաև համայնքներին:
- «Հանրային խորհրդի մասին» օրենքի փոփոխությունների արդյունքում մի քանի տարվա դադարից հետո իր գործունեությունը վերսկսեց Հանրային խորհուրդը՝ Սահմանադրությամբ ամրագրված կառավարության խորհրդակցական մարմին, որը կոչված է հասարակության տարբեր շերտերի շահերը ներկայացնել քաղաքականության մշակման և իրականացման գործում: Այս փոփոխությունները, այլ դրույթների շարքում, նախատեսում են խորհրդի կազմում ստեղծել փաստահավաք հանձնաժողով, որը կհետաքննի 1991-2023 թվականների ընթացքում տեղի ունեցած մարդու իրավունքների հիմնարար և պարբերական խախտումները: Հանրային խորհրդի նոր կազմը ձևավորվել է 2025 թվականի ապրիլին և մի քանի նիստեր է գումարել 2025 թվականի ընթացքում, իսկ փաստահավաք հանձնաժողովը դեռևս կազմավորման ընթացքում է:

## Առանցքային առաջնահերթություններ

2025 թվականին որոշակի սահմանափակ առաջընթաց է գրանցվել 2024 թվականի «ԶՀԿ չափիչ» զեկույցի առաջարկությունների իրականացման հարցում: Մասնակցության մեխանիզմների բարելավման ու քաղաքականության մշակման վաղ փուլերում ԶՀԿ-ների ներգրավման խնդիրները մասամբ հասցեագրվել են կառավարության նոր կանոնակարգերը հաստատելու և մասնակցային ու բաց կառավարման հարցերի ուղղությամբ աշխատող ստորաբաժանում ստեղծելու շնորհիվ: Խորհրդարանի քվեարկությանը դրված օրենսդրական

<sup>16</sup> Նշում. Օրենսդրական փաթեթն ամբողջությամբ ընդունվել է խորհրդարանի կողմից 2025 թվականի դեկտեմբերի 4-ին (Սույն զեկույցում ներառված ժամանակաշրջանից հետո):

փաթեթը հիմք է ծառայում կիբեռանվտանգության և տեղեկատվության մատչելիության ոլորտներում բարելավում ակնկալելու համար: Սակայն ՔՀԿ-ների համար մարտահրավեր հանդիսացող ֆինանսական կայունության խնդիրները էլ ավելի են սրվել ֆինանսավորման գլոբալ միջավայրի փոփոխությունների հետևանքով, իսկ խոսքի ազատության և մասնավոր կյանքի իրավունքի ոլորտում առկա իրավախախտումները լուրջ մտահոգություններ են առաջացրել և բացասաբար անդրադարձել այս ոլորտների գնահատականների վրա:

Ըստ այդմ, առաջիկա ժամանակահատվածում ՔՀԿ միջավայրը բարելավելու համար կառավարությանը և համապատասխան կառույցներին կոչ է արվում ՔՀԿ-ների ու բոլոր շահագրգիռ կողմերի հետ միասին իրականացնել հետևյալ յոթ առաջարկությունները, որոնք որպես առաջնահերթ են ընտրվել ՔՀԿ չափիչի 11 ոլորտների 38 առաջարկներից (այս յոթ առաջարկից չորսը վերահաստատում են 2024 թվականի զեկույցի առաջարկությունները):

1. ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ սահմանել «դրամաշնորհ» հասկացությունը՝ հաշվի առնելով միջազգային առաջատար փորձը և խորհրդակցելով ՔՀԿ-ների հետ, և դրամաշնորհային ծրագրերն ու ոչ առևտրային գործունեության այլ տեսակները չհամարել ձեռնարկատիրական գործունեություն
2. ՀՀ կառավարությանը (մասնավորապես՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը), ինչպես նաև Ազգային ժողովին՝ ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային միջավայր ստեղծել, որը կօգնի բարելավել տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ անհատների և տնտեսվարող սուբյեկտների նվիրատվություններից ֆինանսավորում և բնաիրային աջակցություն հայթայթելու հնարավորությունները:
3. ՀՀ Ազգային ժողովին՝ մեխանիզմներ նախատեսել ԱԺ պատգամավորների հեղինակած նախագծերի պարտադիր հանրային քննարկումներն իրականացնելու և իրավական նախագծերի նախնական գաղափարների քննարկման, ինչպես նաև կառավարության կողմից ներկայացված նախագծերի վերանայման ավարտական փուլերում ՔՀԿ-ներին ներգրավելու (այդ թվում՝ մշտական հանձնաժողովների մակարդակով մասնակցության) համար:
4. Պետական մարմիններին՝ օգտագործել մասնակցության առկա և նոր ինստիտուցիոնալ մեխանիզմները և ապահովել բովանդակային մասնակցություն, այդ թվում՝ ներգրավել ՔՀԿ-ներին քաղաքականության մշակման վաղ փուլերում, հասցեագրել e-draft հարթակի խնդիրները և վիճակագրություն կազմել պետական մարմինների կողմից իրականացվող մասնակցային գործընթացների և առաջարկների ներառման վերաբերյալ, բավարար ժամանակ տրամադրել քննարկումների համար և ավելի հաճախ դեմառդեմ քննարկումներ կազմակերպել, այդ թվում՝ մարզերում, հնարավորինս հաշվի առնել և ներառել ՔՀԿ-ների փաստահեն և հիմնավորված առաջարկությունները:
5. Պետական մարմիններին և պաշտոնյաներին՝ պահպանել խոսքի ազատության չափորոշիչները, խթանել բաց և հարգալից հանրային երկխոսության մշակույթ և պատասխանատու հաղորդակցություն ապահովել լրատվամիջոցների հետ՝ զերծ մնալով այլախոհ կամ քննադատական կարծիքների նկատմամբ անհանդուրժողականությունից, ինչպես նաև այնպիսի հայտարարություններից, որոնք կարող են թշնամանք հրահրել կամ խաթարել հանրության վստահությունը լրագրողների և լրատվամիջոցների նկատմամբ:

6. ՀՀ կառավարությանը՝ ավելի գործունե երաշխիքներ նախատեսել անօրինական հսկողության և մասնավոր կյանքի իրավունքի խախտումների դեմ ապահովելով անկախ վերահսկողություն և թափանցիկ հետաքննություն:
7. Պետությանը՝ համարժեք պաշտպանություն ապահովել ՔՀԿ-ների համար, այդ թվում՝ խտրականության դեմ պայքարի մասին օրենքի ընդունման և համապատասխան մարմնի ստեղծման, Եվրոպայի խորհրդի կողմից 2024 թվականի ապրիլին ընդունված հանձնարարականների հիման վրա SLAPP հայցերի դեմ օրենսդրական ու գործնական միջոցառումների իրականացման, երրորդ անձանց կողմից թիրախավորված ՔՀԿ-ներին աջակցող հրապարակային հայտարարությունների ներկայացման և ողջամիտ ժամկետում ՔՀԿ-ների ու ակտիվիստների դեմ հարձակումների պատշաճ քննության միջոցով:

# II. ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԹՎԵՐՈՎ

**Բնակչությունը՝** 3080300 մարդ (2025 թ. հունվարի 1-ի դրությամբ)<sup>17</sup> | **Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն՝** 8500,6 ԱՄՆ դոլար (2024)<sup>18</sup> | **ՔՀԿ-ների քանակը՝** 7148 հասարակական կազմակերպություն, 1854 հիմնադրամ<sup>19</sup> | **ՔՀԿ-ների քանակը 10000 բնակչի հաշվով՝** 29,2 | **ՔՀԿ-ի գրանցման վճար՝** 10000 ՀՀ դրամ<sup>20</sup> | **Ազատությունն աշխարհում 2025՝** 54/100 (մասամբ ազատ)<sup>21</sup> | **Մամուլի ազատության համաշխարհային ինդեքս 2025՝** 73,96 (180 երկրներից 34-րդը)<sup>22</sup>



**Երկրի գնահատական՝ 4.8**

**Իրավական դաշտ՝ 5.2**

**Գործնական դաշտ՝ 4.4**

Գնահատման սանդղակը ներառում է 1-ից 7 միավոր, որտեղ 1-ը ամենացածր հնարավոր գնահատականն է (ծայրաստիճան անբարենպաստ՝ ավտորիտար միջավայր), իսկ 7-ը՝ ամենաբարձր հնարավոր գնահատականը (չափազանց բարենպաստ միջավայր):

Ոլորտներ	Ընդհանուր	Իրավական	Գործնական
Միավորումների ազատություն	5.7	5.8	5.6
Հավասար վերաբերմունք	4.9	5.0	4.8
Ֆինանսավորման մատչելիություն	5.3	5.8	4.8
Խաղաղ հավաքների ազատություն	5.2	5.7	4.7
Որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունք	4.9	5.4	4.3
Խոսքի ազատություն	4.7 ↓	5.2	4.2 ↓
Մասնավոր կյանքի իրավունք	4.8 ↓	5.7 ↓	3.8 ↓
Պետության կողմից պաշտպանության պարտականություն	4.5	5.2	3.8
Պետական աջակցություն	4.1	4.3	3.9
Պետություն-ՔՀԿ համագործակցություն	4.0	4.4 ↑	3.6
Թվային իրավունքներ	4.4 ↓	4.8 ↓	4.0

Սլաքները ցույց են տալիս բարելավում կամ վատթարացում՝ անցյալ տարվա գնահատականների համեմատ:

<sup>17</sup> Ժամանակագրական շարքեր, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, <https://armstat.am/am/?nid=12&id=11001>

<sup>18</sup> The World Bank, "GDP per capita – Armenia" (ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով. Հայաստան), <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=AM>

<sup>19</sup> Տվյալները տրամադրվել են 2025 թ. օգոստոսի 31-ի դրությամբ՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 2025 թվականի սեպտեմբերի 9-ին՝ ի պատասխան ԹԻՀԿ հարցման:

<sup>20</sup> Պետական գրանցման/հաշվառման/ համար անհրաժեշտ փաստաթղթեր, տուրքերի դրույքաչափեր և ժամկետներ, Էլեկտրոնային ռեգիստր, Հայաստանի Հանրապետության կառավարություն, <https://www.e-register.am/am/docs/49>

<sup>21</sup> Freedom House, "Freedom in the World 2025 Countries and Territories" (Ազատությունն աշխարհում 2025, երկրներ և տարածքներ), <https://freedomhouse.org/countries/freedom-world/scores>

<sup>22</sup> Reporters Without Borders, 2025 World Press Freedom Index (Մամուլի ազատության համաշխարհային ինդեքս 2025), <https://rsf.org/en/index>

# III. ԲԱՅԱՅԱՑՈՒՄԵՐ

## 3.1 Միավորումների ազատություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 5.7/7

Իրավական դաշտ՝ 5.8/7	Գործնական դաշտ՝ 5.6/7
-------------------------	--------------------------

Հայաստանում միավորումների ազատությունը երաշխավորված է օրենսդրությամբ: ԲՀԿ-ները (հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները) էական դժվարությունների չեն հանդիպում գրանցման և գործունեության ընթացքում: Քաղաքացիական նախաձեռնություններից չի պահանջվում գրանցվել որպես իրավաբանական անձ, չկան նաև առցանց միավորումներ կազմելու սահմանափակումներ: Գրանցման ընթացակարգը պարզ է և ոչ թանկ: Հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ներ) գրանցումն ավելի արագ է իրականացվում այն դեպքում, երբ հիմնադիրներն օգտվում են կառավարության կողմից հաստատված՝ փաստաթղթերի նմուշային ձևից, սակայն այս նմուշը ղեկավարման կառուցվածքի և անդամակցության կարգավորումների միայն մեկ տարբերակ է առաջարկում: ԲՀԿ-ները դեռ առցանց գրանցվելու հնարավորություն չունեն՝ ի տարբերություն առևտրային կազմակերպությունների շատ տեսակների: Այն ԲՀԿ-ները, որոնք այլևս չեն գործում, խուսափում են լուծարման գործընթացից դրա հետ կապված վարչարարության և ծախսերի պատճառով:

ՀԿ-ներն ու հիմնադրամները պարտավոր են տարեկան հաշվետվություններ ներկայացնել իրենց բյուջեի և գործունեության վերաբերյալ: Այս պահանջները չկատարելու համար օրենսդրությամբ որոշակի պատժամիջոցներ են սահմանված, որոնց կիրառման լիազոր մարմինը ՀՀ պետական եկամուտների կոմիտեն է (ՊԵԿ): ԲՀԿ-ների տարեկան հաշվետվությունները ստանալուց հետո ՊԵԿ-ը դրանք հրապարակում է կայքում՝ PDF ձևաչափով: Իրական շահառուներին հայտարարագրելու պահանջը լրացուցիչ ծախսեր է առաջացնում հայտարարագրի տվյալների փոփոխության դեպքում:

Միավորումների ազատության ոլորտի գնահատականները 2024 թվականի համեմատ նույնն են մնացել: Պետական ռեգիստրի նոր հարթակը մշակման ընթացքում է, և առցանց գրանցման համակարգը շուտով կգործարկվի: Այս պահի դրությամբ, սակայն, դեռևս արդիական է ԲՀԿ-ներին առցանց գրանցման հնարավորություն տալու վերաբերյալ «ԲՀԿ չափիչի» նախորդ գեկույցի առաջարկը, ինչպես նաև մյուս առաջարկները՝ գրանցման համար օգտագործվող կանոնադրության նմուշը ավելի ճկուն դարձնելու և ԲՀԿ-ների տարեկան հաշվետվությունների բազան արդիականացնելու վերաբերյալ:

Չափորոշիչ 1. Յուրաքանչյուր ոք ազատորեն կարող է ՔՀԿ ստեղծել, անդամակցել ՔՀԿ-ին և մասնակցել ՔՀԿ գործունեությանը:

Հայաստանում օրենսդրությունը բոլորին թույլ է տալիս ՔՀԿ ստեղծել, անդամակցել ՔՀԿ-ին կամ մասնակցել ՔՀԿ-ի գործունեությանը: ՀՀ սահմանադրությամբ ամրագրված է միավորումների ազատությունը, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով<sup>23</sup>: ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված շահույթ չհետապնդող կազմակերպությունները ներառում են հասարակական միավորումները և հիմնադրամները, իսկ հասարակական միավորումների շարքում են հասարակական կազմակերպությունները, կրոնական կազմակերպությունները, քաղաքական կուսակցությունները և արհմիությունները: Այս զեկույցի շրջանակներում Հայաստանի «գրանցված ՔՀԿ-ներ» ասելով՝ նկատի կունենանք հասարակական կազմակերպություններն և հիմնադրամները:

Հասարակական կազմակերպություն կարող է հիմնադրել առնվազն երկու անձ՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական: Կուսակցությունները, կրոնական կազմակերպությունները, արհեստակցական միությունները չեն կարող ՀՀ հիմնադիր կամ անդամ լինել, քանի որ տվյալ կազմակերպությունների համար կան այլ տիպի հասարակական միավորումներ<sup>24</sup>: Հիմնադրամը կարող է հիմնադրել մեկ կամ ավելի անձ՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական<sup>25</sup>: Թեև կրոնական կազմակերպությունները և քաղաքական կուսակցությունները կարող են հիմնադրամ ստեղծել, իսկ գործնականում ՀՀ-ներ հիմնադրելու արգելի հետ կապված դեռևս որևէ խնդիր չի արձանագրվել, այս արգելքը համահունչ չէ միջազգային իրավունքին<sup>26</sup>:

Հիմնադրամների և ՀՀ-ների հիմնադիրների կացության, ազգության կամ քաղաքացիության վերաբերյալ սահմանափակումներ օրենսդրությամբ նախատեսված չեն: Դատավորները չեն կարող ոչ առևտրային կազմակերպություններում վարձատրվող կամ գործադիր ղեկավարի պաշտոն զբաղեցնել<sup>27</sup>: Անհատները և կազմակերպությունները կարող են նաև ազատորեն միավորվել ինչպես անձամբ, այնպես էլ առցանց՝ առանց գրանցվելու անհրաժեշտության:

Գործնականում որևէ խոչընդոտ չկա կազմակերպություն հիմնադրելու կամ գրանցելու, ինչպես նաև որևէ ՔՀԿ-ին անդամակցելու կամ ՔՀԿ-ի գործունեությանը մասնակցելու համար: Գրանցման ընթացակարգը ներառում է հիմնականում իրավական պահանջներին փաստաթղթերի համապատասխանության ձևական ստուգում:

Չափորոշիչ 2. ՔՀԿ-ն որպես իրավաբանական անձ գրանցելու ընթացակարգը հստակ է, պարզ, արագ և ոչ թանկ:

<sup>23</sup> ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 45, <https://www.arlis.am/hy/acts/102510>

<sup>24</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, վերջին փոփ. 13.10.2023, հոդված 10, <https://www.arlis.am/hy/acts/183139>

<sup>25</sup> ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, վերջին փոփ. 22.05.2024, հոդված 12, <https://www.arlis.am/hy/acts/214356>

<sup>26</sup> Կոնվենցիա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին, փոփոխված 11-րդ արձանագրությամբ, 4-րդ նոյեմբերի, 1950 թ., Յոն, <https://www.arlis.am/hy/acts/20870>, OSCE/ODIHR, “Guidelines on the Legal Personality of Religious or Belief Communities” (Ուղեցույց կրոնական կամ հավատալիքային համայնքների իրավաբանական կարգավիճակի վերաբերյալ), 2014, <https://www.osce.org/files/f/documents/9/9/139046.pdf>

<sup>27</sup> ՀՀ դատական օրենսգիրք, 07.02.2018, վերջին փոփ. 11.04.2024, հոդված 5, <https://www.arlis.am/hy/acts/199816>

ՔՀԿ-ների գրանցման՝ օրենքով սահմանված ընթացակարգը պարզ է, արագ և ոչ թանկ: Հայաստանում իրավաբանական անձանց գրանցման պատասխանատուն ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունն է (պետռեգիստր): ՔՀԿ-ների գրանցման պետական տուրքը 10000 դրամ է, գրանցման ժամկետը՝ առավելագույնը 10 աշխատանքային օր: Այն դեպքում, երբ հիմնադիրներն օգտվում են կանոնադրության և մյուս փաստաթղթերի նմուշային ձևերից, հասարակական կազմակերպության գրանցումն իրականացվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում<sup>28</sup>: Կանոնադրության փոփոխությունների ու լրացումների և գրանցման ենթակա տեղեկությունների փոփոխության գրանցման համար պետական տուրքը 10000 դրամ է, իսկ գործադիր դեկավարի տվյալների փոփոխության դեպքում՝ 5000 դրամ<sup>29</sup>: Առցանց գրանցումը ՔՀԿ-ների համար դեռևս հասանելի չէ. ակնկալվում է, որ ՀՀ արդարադատության նախարարությունը այն կգործարկի պետռեգիստրի նոր էլեկտրոնային հարթակի հետ մեկտեղ 2025 թվականի ավարտին<sup>30</sup>:

Գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանված է օրենքով և հրապարակված է պետռեգիստրի կայքում<sup>31</sup>: Գրանցումը մերժելու հիմքերը ներառում են իրավաբանական անձի կազմավորման կարգի խախտումը, սահմանված փաստաթղթերը չներկայացնելը, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի կամ անվանման անհամապատասխանությունը օրենքով սահմանված պահանջներին<sup>32</sup>: Մասնավորապես, ըստ օրենքի, ՔՀԿ անվանումը պետք է ցուցում պարունակի կազմակերպության գործունեության բնույթի մասին<sup>33</sup> և չպետք է նույնական լինի որևէ այլ, ներառյալ գրանցմանը նախորդող վերջին մեկ տարվա ընթացքում լուծարված իրավաբանական անձանց անվանումներին<sup>34</sup>:

Գործնականում չեն արձանագրվել այնպիսի դեպքեր, երբ որևէ ՔՀԿ չի կարողացել գրանցվել: Պետռեգիստրի տրամադրած տվյալների համաձայն՝ 2025 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ՔՀԿ-ների կողմից ներկայացված սկզբնական պետական գրանցման 322 հայտից մերժվել է երկուսը, ընդ որում՝ հնարավորություն է տրվել նորից դիմելու հայտում անհրաժեշտ շտկումները կատարելուց հետո<sup>35</sup>: ՔՀԿ-ները նշում են, որ պետռեգիստրի աշխատակիցները պատրաստակամ են և համագործակցող, ժամանակին հետադարձ կապ են տրամադրում և անհրաժեշտության դեպքում խորհրդատվություն տալիս կանոնադրության և այլ փաստաթղթերում շտկումների վերաբերյալ, որպեսզի մերժման կարիք չլինի<sup>36</sup>: Կազմակերպություն գրանցելու կամ փոփոխություններ կատարելու համար ՔՀԿ-ների

<sup>28</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 14:

<sup>29</sup> ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին», 27.12.1997, վերջին փոփ. 22.12.2023, հոդված 16, <https://www.arlis.am/hy/acts/211026>

<sup>30</sup> Տեղեկատվության ճշտում պետռեգիստրի ներկայացուցչի հետ, հոկտեմբեր 2025 թ.:

<sup>31</sup> Պետական գրանցման/հաշվառման/ համար անհրաժեշտ փաստաթղթեր, տուրքերի դրույթաչափեր և ժամկետներ, ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստր, <https://www.e-register.am/am/docs/49>

<sup>32</sup> ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին», 03.04.2001, վերջին փոփ. 1.8.2025, հոդված 36, <https://www.arlis.am/hy/acts/210005>

<sup>33</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 05.05.1998, վերջին փոփ. 8.8.2025, հոդված 58, <https://www.arlis.am/hy/acts/210215>

<sup>34</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 6, ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 5:

<sup>35</sup> Տեղեկությունը տրամադրվել է պետռեգիստրի 2025 թ. սեպտեմբերի 9-ի գրույթամբ՝ ի պատասխան ԹԻՀԿ հարցման:

<sup>36</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

հիմնադիրները կամ ներկայացուցիչները ստիպված են լինում մեկնել մարզկենտրոն կամ մայրաքաղաք, ինչը լրացուցիչ դժվարություններ և ծախսեր է առաջացնում հեռավոր բնակավայրերում տեղակայված կազմակերպությունների համար:

Օրենսդրությունը ՔՀԿ-ներին ճկունության հնարավորություն է տալիս իրենց կառավարման կառուցվածքը, անդամակցության չափանիշները և կանոնադրության այլ դրույթները սահմանելու հարցում: Մյուս կողմից, պետության կողմից տրամադրված նմուշային փաստաթղթերը դյուրիևացնում են գրանցման փաթեթի պատրաստման գործընթացը և թույլ են տալիս արագ գրանցվել: Սակայն կանոնադրության նմուշը ղեկավարման կառուցվածքի և անդամակցության պահանջների միայն մեկ տարբերակ է առաջարկում, և չկան ղեկավարման այլ կառույցներ (օրինակ՝ խորհուրդ) նախատեսող այլընտրանքային նմուշներ, որոնք թույլ կտային ՔՀԿ-ներին ղեկավարման այս ձևն ընտրելիս ևս ավելի արագ գրանցվել<sup>37</sup>: Փորձագետները նշում են, որ արդյունքում ՔՀԿ-ները հակված են օգտագործել ստանդարտ դրույթները՝ կառավարման իրենց համար հատուկ կառուցվածքն ու ընթացակարգերը սահմանելու փոխարեն, որպեսզի կանոնադրությունը ձևանմուշին համապատասխան լինի և գրանցման գործընթացում լրացուցիչ դժվարություններ չառաջանան<sup>38</sup>:

ՔՀԿ-ների կամավոր լուծարումը մի շարք վարչարարական և ֆինանսական դժվարություններ է ենթադրում: Լուծարման գրանցումը սկսելու համար պահանջվող տուրքը կազմում է 20000 դրամ, իսկ լուծարման գործընթացի համար անհրաժեշտ է տարբեր գերատեսչություններից մի շարք փաստաթղթեր հավաքագրել: Գործնականում բազմաթիվ ՔՀԿ-ներ, որոնք փաստացի չեն գործում, գերադասում են լուծարման գործընթաց չսկսել՝ խուսափելով համապատասխան ծախսերից և թղթաբանությունից: Արդյունքում գրանցված ՔՀԿ-ների ներկայիս քանակը և ցանկը չեն արտացոլում գործող կազմակերպությունների իրական պատկերը, և ՔՀԿ հատվածի վերաբերյալ հետազոտությունների կամ զարգացման ծրագրերի իրականացման գործում լրացուցիչ դժվարություններ են առաջանում:

Չափորոշիչ 3. ՔՀԿ-ներն ազատ են սահմանելու իրենց նպատակներն ու գործունեության տեսակները և կարող են գործել ինչպես իրենց գրանցման երկրի սահմաններում, այնպես էլ այլ սահմաններից դուրս:

ՀՀ օրենսդրության համաձայն՝ ՔՀԿ-ներն ազատ են իրենց նպատակները որոշելիս, իսկ գործունեության ոլորտների սահմանափակումներ չկան: ՀՀ-ներն իրենց գործունեության նպատակները սահմանում են իրենց կանոնադրությամբ. արգելվում է այնպիսի նպատակների սահմանումը, որոնք համարվում են այլ տեսակի հասարակական միավորումների (կրոնական կազմակերպություններ, արհմիություններ կամ կուսակցություններ) նպատակներ<sup>39</sup>: Ինչ վերաբերում է հիմնադրամին, օրենքով այն սահմանվում է որպես ոչ առևտրային կազմակերպություն, որը «հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական և (կամ) այլ հանրօգուտ նպատակներ»<sup>40</sup>:

<sup>37</sup> ՀՀ նմուշային փաստաթղթեր, ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստր, <https://www.e-register.am/am/docs/364>

<sup>38</sup> Հարցազրույցներ և ֆոկլոր խմբային բնարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

<sup>39</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 3:

<sup>40</sup> ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 3:

Ըստ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի՝ ՀԿ-ները կարող են անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ առևտրային կազմակերպություններին և այլ պետություններում ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ<sup>41</sup>: «Հիմնադրամների մասին» օրենքով նախատեսվում է հիմնադրամների՝ միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին անդամակցելու իրավունքը<sup>42</sup>:

ԶԻՀ-ների՝ օրենքով թույլատրված գործունեության ոլորտներով զբաղվելու հարցում պետության կողմից կիրառվող գործնական խոչընդոտներ չկան:

Չափորոշիչ 4. Կիրառվող ցանկացած պատժամիջոց հստակ է, համապատասխանում է համաչափության սկզբունքին և ցանկալի նպատակին հասնելու համար նվազագույն միջամտություն է նախատեսում:

Օրենսդրությամբ աստիճանական պատժամիջոցներ են սահմանված իրավական պահանջները չկատարող ԶԻՀ-ների համար, այդ թվում՝ կասեցում կոպիտ խախտումների համար: Այնուամենայնիվ, պատժամիջոցների որոշ հիմքեր հստակ չեն:

Գրանցված ԶԻՀ-ները կարող են ենթարկվել վարչական պատասխանատվության օրենքով սահմանված հաշվետվությունը<sup>43</sup> չներկայացնելու, ինչպես նաև կանոնադրությամբ սահմանված նպատակներին անհամապատասխան գործունեություն իրականացնելու դեպքում<sup>44</sup>: Օրենքում հստակ սահմանված չէ, թե հատկապես ինչը կարող է համարվել կանոնադրությամբ սահմանված նպատակներին անհամապատասխան գործունեություն: ԶԻՀ-ների վերահսկողության և պատժամիջոցների կիրառման համար պատասխանատու լիազոր մարմինը ՊԵԿ-ն է: Նշված խախտումների համար տույժերը կիրառվում են աստիճանաբար՝ 30-օրյա միջակայքերով, և ներառում են նախ՝ կազմակերպության ղեկավարին ուղղված նախազգուշացում, ապա 50000 դրամ տուգանք և վերջապես՝ 200000 դրամ տուգանք<sup>45</sup>: ՀԿ գրանցման կասեցման հիմք կարող է լինել հիմնադրելիս կամ գործունեության ընթացքում թույլ տրված օրենքի կոպիտ կամ էական խախտումը: Եթե մեկ տարվա ընթացքում կասեցման հիմքերը չեն վերացվում, կազմակերպությունը ենթակա է լուծարման: Բացի այդ՝ հարկադիր լուծարման հիմք կարող են լինել ՀԿ գործունեության ընթացքում սահմանադրական կարգը բռնի տապալելու կամ ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու գործողությունները<sup>46</sup>: Նման դեպքերում լուծարման մասին որոշումը կայացնում է դատարանը լիազոր մարմնի պատճառաբանված պահանջի հիման վրա: Հիմնադրամների հարկադիր լուծարման հիմք կարող են լինել գործունեության ընթացքում օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումները, հիմնադրամը ստեղծելիս էական խախտումները կամ կեղծիքները, հիմնադրամի գույքի բավարար չլինելը նրա գործունեության

<sup>41</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 28:

<sup>42</sup> ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 18:

<sup>43</sup> Ըստ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի (հոդված 24)՝ ՀԿ-ն պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 30-ը, կազմակերպությունների կողմից հրապարակվող էլեկտրոնային հաշվետվությունների համար նախատեսված համակարգի անձնական էջում և իր պաշտոնական ինտերնետային կայքում (այդպիսին ունենալու դեպքում) հրապարակել գործունեության տարեկան հաշվետվությունը: Ըստ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի (հոդված 39)՝ հիմնադրամը իր գործունեության մասին հաշվետվությունը պարտավոր է հրապարակել յուրաքանչյուր տարի հաշվետու տարվան հաջորդող հուլիսի 1-ից ոչ ուշ՝ հիմնադրամների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված համակարգում:

<sup>44</sup> Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, 06.12.1985, վերջին փոփ. առ 01.09.2025, հոդված 169.18, 169.26, 169.27, <https://www.arlis.am/hy/acts/211145>:

<sup>45</sup> Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, 06.12.1985:

<sup>46</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 32:

իրականացման համար, կանոնադրությամբ նախատեսված նպատակներից շեղվելը, հիմնադրամի նպատակներին հասնելու անհնարինությունը, իր գործունեությամբ պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները վտանգելը<sup>47</sup>: Հիմնադրամի լուծարումը՝ կամավոր թե՛ հարկադիր, կարող է տեղի ունենալ միայն դատարանի որոշմամբ, որը դատական այլ որոշումների նման կարող է վիճարկվել վերաքննիչ, ապա՝ Վճռաբեկ դատարանում:

ՊԵԿ-ի կողմից տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2025 թվականի հունվար-օգոստոս ամիսներին 635 ՀՀ-ի ու 168 հիմնադրամի նախազգուշացում է ներկայացվել 2024 թվականի տարեկան հաշվետվության թերի հրապարակման կամ չհրապարակելու հիմքով, և իսկ 17 ՀՀ-ի վերաբերյալ 50000 դրամ տուգանք կիրառելու մասին որոշում է կայացվել՝ հաշվետվություն ներկայացնելու պարտավորությունը նախազգուշացման ընթացքում սահմանված ժամկետում չկատարելու համար: Մինևույն ժամանակ, 2025 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ՊԵԿ-ը դատարան է ներկայացրել 13 դիմում՝ նախորդ տարիների հաշվետվությունների պահանջները չկատարելու հիմքով ՀՀ-ների գործունեությունը կասեցնելու վերաբերյալ: Կանոնադրական նպատակներին չհամապատասխանող գործունեության համար վարույթներ չեն հարուցվել<sup>48</sup>: Պետոեգիստրի կողմից 2025 թվականի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում ՔՀՀ-ների դիմումների հիման վրա գրանցվել է ՀՀ-ների լուծարման 23 դեպք, իսկ հիմնադրամների դեպքում՝ լուծարման երեք դեպք, որոնք իրականացվել են դատարանի որոշման հիման վրա, ինչպես և նախատեսված է օրենքով<sup>49</sup>:

Ոչ առևտրային կազմակերպությունները պետք է հայտարարագիր տրամադրեն իրենց իրական շահառուների վերաբերյալ<sup>50</sup>: Սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու կամ սահմանված կարգի խախտմամբ ներկայացնելու դեպքում նախատեսված է վարչական պատասխանատվություն, ներառյալ 30000-ից մինչև 100000 դրամ տուգանքի նշանակում<sup>51</sup>, մինչև անգամ դատարանի որոշմամբ հարկադիր լուծարում այն դեպքում, եթե հայտարարագիրը երեք տարի անընդմեջ չի ներկայացվել<sup>52</sup> (տե՛ս նաև Ոլորտ 8՝ «Պետության կողմից պաշտպանության պարտականություն»): Իրական շահառուների վերաբերյալ առաջին հայտարարագիրը ներկայացվում է անվճար, իսկ իրական շահառուների տվյալների փոփոխման հիմքով հայտարարագրի գրանցման տուրքը կազմում է 10000 դրամ<sup>53</sup>: Պետոեգիստրից ստացված տեղեկության համաձայն՝ 2025 թվականին 65 ՀՀ-ի և 42 հիմնադրամի նկատմամբ իրական

<sup>47</sup> ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 34:

<sup>48</sup> Տեղեկությունը տրամադրվել է ՊԵԿ-ի 2025 թ. սեպտեմբերի 18-ի գրությամբ՝ ի պատասխան ԹԻՀՀ հարցման:

<sup>49</sup> Տեղեկությունը տրամադրվել է պետոեգիստրի 2025 թ. սեպտեմբերի 9-ի գրությամբ՝ ի պատասխան ԹԻՀՀ հարցման:

<sup>50</sup> ՀՀ արդարադատության նախարարություն, «Ընդլայնվել է իրական շահառուի վերաբերյալ հայտարարագիր ներկայացնողների շրջանակը. ովքե՞ր և ի՞նչ ժամկետում պետք է ներկայացնեն հայտարարագիրը», 11.10.2021, <https://www.moj.am/article/2982>

<sup>51</sup> Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը, 06.12.1985, հոդված 169.29:

<sup>52</sup> ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին», 03.04.2001, հոդված 60.5:

<sup>53</sup> ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին», 27.12.1997, հոդված 16:

շահառուների վերաբերյալ հայտարարագիր չներկայացնելու հիմքով կիրառվել է նախազգուշացում (նախորդ տարի միայն մեկ հիմնադրամ էր նախազգուշացում ստացել)<sup>54</sup>:

Չափորոշիչ 5. Պետությունը չի միջամտում ԶԿ-ների ներքին գործերին և գործունեությանը:

Օրենքով պետական մարմիններին և տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ), ինչպես նաև պաշտոնատար անձանց արգելվում է միջամտել կամ խոչընդոտել հասարակական կազմակերպության օրինական գործունեությանը<sup>55</sup>: Ինչ վերաբերում է հիմնադրամներին, պաշտոնատար անձինք կարող են ներգրավվել կառավարման մարմիններում, մասնավորապես այն դեպքերում, երբ հիմնադրամը հիմնադրվում է կառավարության կամ ՏԻՄ որոշմամբ<sup>56</sup>:

ԶԿ-ների և հիմնադրամների՝ օրենսդրության պահանջներին համապատասխանության վերահսկողության համար պատասխանատու լիազոր մարմինը ՊԵԿ ոչ առևտրային կազմակերպությունների հսկողության բաժինն է: Այս բաժնի գործառույթները ներառում են՝ ոչ առևտրային կազմակերպությունների իրազեկում, օրենքով սահմանված հաշվետվությունների և այլ փաստաթղթերի ընդունում, ուսումնասիրություն, օրենսդրության համապատասխանության գնահատում: Օրենսդրության համապատասխանության գնահատման արդյունքների հիման վրա բաժինը կարող է վարչական վարույթ հարուցել կազմակերպությունների նկատմամբ, առաջարկություններ ներկայացնել խախտումների վերացման կարգի վերաբերյալ, կազմակերպությունների գործունեության կասեցման և լուծարման պահանջ ներկայացնել դատարան<sup>57</sup>: Տվյալ ստորաբաժանումը տեղում ստուգումներ իրականացնելու լիազորություն չունի, ուստի նրա վերահսկողության գործառույթը սահմանափակվում է փաստաթղթերի ուսումնասիրությամբ:

Թե՛ ԶԿ-ները, թե՛ հիմնադրամները էլեկտրոնային հաշվետվությունների համար նախատեսված համակարգում պետք է ներկայացնեն իրենց գործունեության և բյուջեի վերաբերյալ տարեկան հաշվետվություններ: Այս հաշվետվությունները հրապարակվում են ՊԵԿ-ի կայքում՝ PDF ձևաչափով<sup>58</sup>: 2025 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ հաշվետվությունները ներկայացրել են 2767 հասարակական կազմակերպություններ և 1025 հիմնադրամներ<sup>59</sup>: Գործնականում հաշվետվության ներկայացման պահանջները համարվում են պարզ և չծանրաբեռնող<sup>60</sup>: ՊԵԿ կայքի հաշվետվությունների բազան որոնման և զտման սահմանափակ հնարավորություններ ունի և չի համապատասխանում բաց տվյալների սկզբունքներին: 2025 թվականին իրականացված ստուգումների վերաբերյալ տվյալներ չեն հավաքագրվել: ԶԿ-ների հարկային

<sup>54</sup> Տեղեկությունը տրամադրվել է պետոեզիստրի 2025 թ. սեպտեմբերի 9-ի գրությամբ՝ ի պատասխան ԹԻԶԿ հարցման:

<sup>55</sup> ԶԶ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 9:

<sup>56</sup> ԶԶ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդվածներ 10 և 12:

<sup>57</sup> ԶԶ պետական եկամուտների կոմիտեի նախագահի թիվ 137-Լ հրամանը «Հայաստանի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտեի ոչ առևտրային կազմակերպությունների հսկողության բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին», 04.03.2019, [https://www.src.am/storage/workers/charter/hr\\_hhpekn\\_2019\\_137\\_I\\_6423f78426d05.pdf](https://www.src.am/storage/workers/charter/hr_hhpekn_2019_137_I_6423f78426d05.pdf)

<sup>58</sup> Ոչ առևտրային կազմակերպությունների հաշվետվություններ, ԶԶ Պետական եկամուտների կոմիտեի, <https://www.src.am/am/organizationReportsPage/137>

<sup>59</sup> Տեղեկությունը տրամադրվել է Պետական եկամուտների կոմիտեի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 18-ին՝ ի պատասխան ԹԻԶԿ հարցման: Ըստ այս ցուցանիշի՝ որոշակի աճ է գրանցվել նախորդ տարվա համեմատ, քանի որ 2024 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ 2023 թվականի տարեկան հաշվետվություն էր հրապարակվել 2422 ԶԿ-ների և 950 հիմնադրամների կողմից:

<sup>60</sup> Հարցագրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

ստուգումները սովորաբար հազվադեպ են լինում. ըստ նախորդ տարիների տվյալների՝ այս ստուգումները հիմնականում ներառում են պետական ֆինանսավորում ստացող կազմակերպություններ կամ կրթական հաստատություններ (բուհեր), և բխում են համապատասխան օրենսդրական կարգավորումներից:

**Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.**

- Իրավաբանական անձանց պետական ռեգիստրին՝ վերանայել գրանցման համար նախատեսված կանոնադրության նմուշային օրինակը կամ մի քանի ձևանմուշ նախատեսել կազմակերպության որոշ առանձնահատկությունների ավելի ճկուն կարգավորումներ թույլ տալու համար (օրինակ՝ ղեկավարման կառուցվածք, անդամավճար և այլն):
- ՀՀ արդարադատության նախարարությանը՝ հնարավորություն ընձեռել ՔՀԿ-ների կողմից գրանցվել և գրանցման տվյալները փոփոխել էլեկտրոնային եղանակով:
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեին՝ արդիականացնել ՔՀԿ հաշվետվությունների էլեկտրոնային բազան՝ տեղեկատվության որոնման և գտման հնարավորություններ նախատեսելով ըստ տարբեր չափորոշիչների, տրամադրելով մեքենայի համար ընթեռնելի, վերաօգտագործման և համեմատության հնարավորություն տվող տվյալներ՝ ըստ «բաց տվյալների» սկզբունքի<sup>61</sup>:

### 3.2 Հավասար վերաբերմունք

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ **4.9/7**

Իրավական դաշտ՝ <b>5.0/7</b>	Գործնական դաշտ՝ <b>4.8/7</b>
--------------------------------	---------------------------------

ՔՀԿ-ների, ինչպես նաև ՔՀԿ-ների և տնտեսվարող սուբյեկտների միջև տարբերակման առումով պետության վերաբերմունքը 2024 թվականի համեմատ չի փոխվել: Գրանցման և հարկման օրենսդրության որոշ դրվագներ ավելի նպաստավոր են գործարար հատվածի համար, թեպետ գործնականում ՔՀԿ-ները զգալիորեն ավելի քիչ են ենթարկվում հարկային ստուգումների: Իրավական կարգավորումները հավասար վերաբերմունք են ապահովում բոլոր ՔՀԿ-ների համար, սակայն որոշակի խտրական դրսևորումներ են արձանագրվել որոշումների կայացման գործընթացում ՔՀԿ-ներին ներգրավելու գործելակերպում:

Հավասար վերաբերմունքի ոլորտի գնահատականները նույնն են մնացել 2024 թվականի համեմատ: Ինչպես և նախորդ զեկույցում, պետությանը առաջարկվում է միջոցներ ձեռնարկել ՔՀԿ-ների և տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ համահավասար վերաբերմունք

<sup>61</sup> Լրացուցիչ տեղեկության համար տե՛ս՝ Open Data Charter, “Open Data Charter Principles” («Բաց տվյալների կանոնադրության սկզբունքներ»), <https://opendatacharter.org/principles/>

ապահովելու ուղղությամբ, քանի որ ընկերությունները հնարավորություն ունեն գրանցվել առցանց եղանակով և անվճար՝ նմուշային փաստաթղթերի օգտագործման շնորհիվ:

### Չափորոշիչ 1. Պետությունը համահավասար կերպով է վերաբերում ԹՀ-ներին և առևտրային ընկերություններին:

Գրանցման և հարկման վերաբերյալ որոշ կարգավորումներ տնտեսվարող սուբյեկտներին ավելի շատ առավելություններ են տալիս, քան ԹՀ-ներին: Մասնավորապես, տնտեսվարող սուբյեկտների գրանցումը ԹՀ-ների գրանցման համեմատ ավելի էժան է և արագ: Այսպես, ընկերությունների գրանցման համար սահմանված առավելագույն ժամկետը երկու օր է՝ ի տարբերություն հիմնադրամների և ՀՀ-ների համար սահմանված 10 օրվա (բացառությամբ այն դեպքի, երբ ՀՀ-ներն օգտագործում են նմուշային կանոնադրություն, և գրանցումը երկու օր է տևում): Այս տարբերությունը պայմանավորված է ԹՀ-ների կանոնադրությունը մանրամասնորեն ուսումնասիրելու անհրաժեշտությամբ, եթե այն չի կազմվել ըստ պետության կողմից տրամադրված նմուշային օրինակի: ԹՀ-ների գրանցման պետական տուրքը 10000 դրամ է, մինչդեռ առևտրային ընկերությունների գրանցման համար տուրք չի գանձվում, իսկ անհատ ձեռնարկատերերը վճարում են 3000 դրամ: Բացի այդ՝ ի տարբերություն ԹՀ-ների և այլ իրավաբանական անձանց՝ ՍՊԸ-ները և անհատ ձեռնարկատերերը կարող են գրանցվել առցանց եղանակով: Այս դեպքում անհատ ձեռնարկատիրոջ գրանցման համար ևս պետական տուրք չի գանձվում<sup>62</sup>:

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս ԹՀ-ները չեն կարող օգտվել հարկման պարզեցված ընթացակարգերից, ինչպիսիք են շրջանառության հարկը կամ միկրոձեռնարկատիրությունը: Միկրոձեռնարկատիրության հարկային համակարգը նախատեսված է գործունեության սահմանափակ տեսակներ իրականացնող այն տնտեսվարող սուբյեկտների համար, որոնց տարեկան շրջանառությունը չի գերազանցում 24 միլիոն դրամը: Այս համակարգում ներառվելու դեպքում տնտեսվարողը ազատվում է բոլոր հարկային պարտավորություններից (բացառությամբ մաքսատուրքի, ակցիզային հարկի և վարձու աշխատողների համար հաստատագրված եկամտային հարկի)<sup>63</sup>: Շրջանառության հարկից կարող են օգտվել 115 միլիոն դրամը չգերազանցող շրջանառություն ունեցող ընկերությունները<sup>64</sup>, և հարկման այս համակարգում ընդգրկվելու դեպքում ԹՀ-ները կվճարեն համախառն եկամտի 10%-ը՝ շահութահարկի փոխարեն, որը, որպես կանոն, կազմում է զուտ եկամտի 18%-ը<sup>65</sup>: Միևնույն ժամանակ, քանի որ ԹՀ-ները սովորաբար շահույթ չեն կուտակում, նրանց մոտ, որպես կանոն, շահութահարկի պարտավորություն չի առաջանում: Մյուս կողմից, հարկային ստուգումները ԹՀ-ների դեպքում հազվադեպ են՝ առևտրային ընկերությունների համեմատ<sup>66</sup>:

Ի տարբերություն ընկերությունների՝ ՀՀ-ները պարտավոր են աուդիտի հաշվետվություն ներկայացնել, եթե հանրային աղբյուրներից նրանց տարեկան եկամուտը գերազանցում է 10

<sup>62</sup> Պետական գրանցման/հաշվառման/ համար անհրաժեշտ փաստաթղթեր, տուրքերի դրույթաչափեր և ժամկետներ, ՀՀ կառավարության էլեկտրոնային ռեգիստր, նշված տեղում:

<sup>63</sup> Նույն տեղում, հոդված 267 և 269:

<sup>64</sup> ՀՀ հարկային օրենսգրքի, 04.10.2016, վերջին փոփ. 02.08.2024, հոդված 254, <https://www.arlis.am/hy/acts/210052>.

<sup>65</sup> Նույն տեղում, հոդված 125:

<sup>66</sup> Նշում. Այս տեղեկությունը հիմնված է նախորդ տարիների տվյալների և ֆոկլոր խմբային քննարկումների մասնակիցներից ստացած արձագանքների վրա: Հարկային օրենսգրքի 2024 թվականի փոփոխությունների համաձայն՝ 2024 թվականի կեսից սկսած տարեկան ստուգումների պլանը այլևս չի հրապարակվում, ուստի ստուգման ենթարկվող տնտեսվարողների և ԹՀ-ների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի չէ:

միլիոն դրամը: Այս գումարն ավելանում է նրանց նախահաշվին պետական գնումների մրցույթներին դիմելիս: Գործնականում սակավաթիվ օրինակներ կան, երբ ՔՀԿ-ները պետական գնումների պատվեր են ստանում, օրինակ՝ որոշակի նեղ մասնագիտացում պահանջող վերապատրաստման կամ խորհրդատվական ծառայությունների մատուցման համար<sup>67</sup>:

Թե՛ ՔՀԿ-ներին, թե՛ տնտեսվարող սուբյեկտներին օրենքով թույլատրվում է ֆինանսավորում ստանալ ցանկացած աղբյուրից, այդ թվում՝ արտերկրից:

Չափորոշիչ 2. Պետությունը հավասարապես է վերաբերվում բոլոր ՔՀԿ-ներին նրանց հիմնադրման, գրանցման և գործունեության հարցերում:

ՔՀԿ-ների միջև օրենքով սահմանված հատուկ տարբերակում չկա: ՀԿ-ների և հիմնադրամների համար գրանցման նույն ժամկետներն ու հաշվետվության ներկայացման նույնատիպ պահանջներ են սահմանված: Հիմնադրամների համար տարեկան կտրվածքով աուդիտի հաշվետվության պահանջ է սահմանված, եթե հաշվետու տարվա ավարտին նրանց ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 10 միլիոն դրամը<sup>68</sup>: ՀԿ-ներից աուդիտի հաշվետվություն է պահանջվում պետական կամ համայնքային աղբյուրներից ստացած միջոցների օգտագործման վերաբերյալ, եթե այդ միջոցների հանրագումարը հաշվետու տարվա ընթացքում կազմել է 10 միլիոն և ավելի դրամ<sup>69</sup>:

Գործնականում, ըստ ՔՀԿ-ների, պաշտոնյաները ընտրողական մոտեցում են ցուցաբերում ՔՀԿ-ների հետ խորհրդակցելիս՝ ելնելով կազմակերպությունների ու նրանց ներկայացուցիչների քննադատական դիրքորոշումներից (տե՛ս Ոլորտ 5՝ «Որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու իրավունք»)<sup>70</sup>:

**Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.**

- ՀՀ արդարադատության նախարարությանը՝ հնարավորություն ընձեռել ՔՀԿ-ներին գրանցվել և գրանցման տվյալները թարմացնել էլեկտրոնային եղանակով:
- ՀՀ արդարադատության նախարարությանը՝ նմուշային փաստաթղթերով գրանցման դեպքում զրոյացնել ՔՀԿ-ների գրանցման վճարը (ինչպես դա արվում է ընկերությունների դեպքում):

<sup>67</sup> Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ի պատասխան ԹԻՀԿ հարցման 2025 թ. հոկտեմբերի 23-ի գրությամբ տրամադրված տվյալներ:

<sup>68</sup> ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 39:

<sup>69</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 26:

<sup>70</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

### 3.3 Ֆինանսավորման մատչելիություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 5.3/7

Իրավական դաշտ՝ 5.8/7	Գործնական դաշտ՝ 4.8/7
-------------------------	--------------------------

ՀՀ օրենսդրությունը թույլ է տալիս ԲՀԿ-ներին ֆինանսավորում հայցել, ստանալ և օգտագործել բոլոր օրինական աղբյուրներից, այդ թվում՝ միջազգային դոնորներից: Սակայն այս իրավունքը լիարժեք չի իրացվում՝ Նվիրաբերություններ հավաքագրելու և ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար խթանող մեխանիզմների պակասի պատճառով, ուստի ԲՀԿ-ների մեծ մասը ապավինում է դրամաշնորհներին: Մյուս կողմից, արտաքին դոնորներից, մասնավորապես՝ ԱՄՆ կողմից աջակցության կրճատումը հանգեցրեց ծրագրերի փակման և գործունեության կրճատման՝ մասնավորապես այն ԲՀԿ-ների դեպքում, որոնք աշխատում են մարդու իրավունքների, վերահսկողական գործունեության, ընտրությունների դիտորդության և մեդիա ոլորտներում:

Ինչպես և Նախորդ տարիներին, աուդիտ իրականացնելու՝ օրենքով սահմանված պահանջը բացասաբար է ազդում ֆինանսավորման մատչելիության վրա, քանի որ բազմաթիվ կազմակերպություններ ազատ միջոցներ չունեն աուդիտի ծախսերը հոգալու համար: Դրամաշնորհային ծրագրերը որպես ծառայության մատուցում դիտարկելու և տարեկան շրջանառության սահմանված շեմը անցնելու դեպքում դրամաշնորհային ֆինանսավորումը ԱԱՀ հարկման վտանգը շարունակում է մտահոգություններ առաջացնել ԲՀԿ-ների շրջանում և ռիսկային է գործնականում ֆինանսավորման մատչելիության սահմանափակման տեսանկյունից:

Ֆինանսավորման մատչելիության ոլորտի գնահատականները 2024 թվականի համեմատ չեն փոխվել: Դրամաշնորհի հասկացությունը սահմանելու, ԲՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային միջավայր ապահովելու և աուդիտի պահանջի հետ կապված խնդիրները հասցեագրելու վերաբերյալ առաջարկները արդիական են մնացել:

Չափորոշիչ 1. ԲՀԿ-ներն ազատ են ֆինանսական և նյութական ռեսուրսներ փնտրելու, ստանալու և օգտագործելու իրենց նպատակների իրականացման ուղղությամբ:

ՀՀ օրենսդրությունը թույլ է տալիս ԲՀԿ-ներին իրենց գործունեության համար ազատորեն հայցել, ստանալ և օգտագործել ֆինանսական ու նյութական ռեսուրսներ: Կազմակերպությունների եկամուտների հնարավոր աղբյուրները թվարկված են «Հասարակական կազմակերպությունների մասին» և «Հիմնադրամների մասին» օրենքներում: ԲՀԿ-ները կարող են անդամավճար գանձել, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել, ստանալ դրամական մուտքեր պետական բյուջեից, ինչպես նաև դրամաշնորհներ, Նվիրաբերություններ և օրենքով չարգելված այլ միջոցներ<sup>71</sup>:

<sup>71</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 7, ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 8:

«Հիմնադրամների մասին» օրենքում որպես ֆինանսավորման հնարավոր աղբյուր է նշված նաև անձեռնմխելի կապիտալով հիմնադրամը, որի մասին դրույթը պետք է ներառված լինի կանոնադրության մեջ այդ հիմնադրամի կառավարման և վերահսկման վերաբերյալ այլ դրույթների հետ մեկտեղ:

Օրենսդրությամբ սահմանված աուդիտի ընթացակարգերը կարևոր նշանակություն ունեն ՔՀԿ-ների կողմից հանրային միջոցների օգտագործման և ֆինանսավորման վերաբերյալ հաշվետվության գործընթացում (մանրամասների համար տե՛ս Ոլորտ 2՝ «Հավասար վերաբերմունք»): Աուդիտի իրականացումը ՔՀԿ-ների կողմից խնդրահարույց է դիտվում, քանի որ այն լրացուցիչ ֆինանսական ծախսեր է ենթադրում և նվազեցնում է նրանց մրցունակությունը պետական գնումների մրցույթներին մասնակցելիս:

Ոչ առևտրային կազմակերպությունները ինքնաբերաբար դառնում են 20% ԱԱՀ վճարող, եթե նրանց իրացման շրջանառությունը տարվա ընթացքում գերազանցում է 115 միլիոն դրամը, սակայն այս հարկը հաշվարկվում է միայն ԱԱՀ-ի շեմը գերազանցող մասով<sup>72</sup>: Այն դեպքում, երբ ՔՀԿ-ն գերազանցել է այս շեմը (անկախ նրանից, թե այդ եկամուտը ինչ աղբյուրներից է գոյացել, օրինակ՝ դրամաշնորհներից, նվիրատվություններից, թե տնտեսական գործունեությունից), այն պետք է ԱԱՀ գանձի իր ապրանքների, աշխատանքի ու ծառայությունների համար և իրականացնի համապատասխան վճարումը: Ըստ ՀՀ հարկային օրենսգրքի՝ դրամաշնորհների ձևով հատուցմամբ ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը և ծառայության մատուցումը ևս ենթակա են ԱԱՀ-ով հարկման, թեև կարող են բացառություններ տրամադրվել կառավարության համապատասխան որոշմամբ<sup>73</sup>: Հարկ է նշել, սակայն, որ օրենսգրքում «դրամաշնորհ» հասկացությունը սահմանված չէ, իսկ իրավական մյուս կարգավորումներում օգտագործվում է հակասական բնորոշումներով, ինչն այս պահանջի տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալիս<sup>74</sup>: ՔՀԿ-ները մտավախություն ունեն դրամաշնորհների՝ ԱԱՀ-ով հարկման պահանջի վերաբերյալ, քանի որ այն կարող է ռիսկեր առաջացնել այն կազմակերպությունների համար, որոնք ապավինում են դրամաշնորհային ֆինանսավորմանը և որոնց շրջանառությունը գերազանցել է սահմանված շեմը, հատկապես եթե նրանց ծրագրերը չեն համապատասխանում բարեգործական կարգավիճակի չափանիշներին: Սա նշանակում է, որ նրանք պետք է ԱԱՀ վճարեն բոլոր այն դրամաշնորհային միջոցների համար, որոնք ընթացիկ տարում գերազանցում են սահմանված շեմը, իսկ հաջորդ տարվա սկզբից համարվում են ԱԱՀ վճարող հարկման ենթակա բոլոր միջոցների համար: ՔՀԿ-ները նշում են, որ իրավական անհամապատասխանությունները և դրամաշնորհային ֆինանսավորման նկատմամբ ԱԱՀ-ի կիրառումը լուրջ սպառնալիք են ոլորտի կայունության և ռեսուրսների հասանելիության համար: Որոշ կազմակերպություններ խուսափում են լրացուցիչ ֆինանսավորում փնտրելուց՝ շեմը չհատելու համար, իսկ շեմը գերազանցողները կարող են հայեցողական ստուգումների և տուգանքի ենթարկվել, եթե նրանց դրամաշնորհային ծրագրերը համարվեն ծառայությունների մատուցում<sup>75</sup>: Չնայած 2023 թվականից պետական մարմինների հետ ունեցած մի շարք հանդիպումներին և քննարկումներին, ինչպես նաև ՔՀԿ-ների բազմաթիվ նամակներին և դիմումներին, որտեղ նրանք խնդրում են կառավարությանը

<sup>72</sup> ՀՀ հարկային օրենսգրք, 04.10.2016, հոդվածներ 59 և 63:

<sup>73</sup> Նույն տեղում, հոդված 4 և 64:

<sup>74</sup> Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, «Դրամաշնորհային ծրագրերը որպես տնտեսական գործունեություն դիտարկելը վտանգում է ՔՀԿ-ների ֆինանսավորման մատչելիության իրավունքը», 13.12.2023, <https://transparency.am/hy/media/news/article/5031>

<sup>75</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

այս հարցին լուծում տալ ըստ միջազգային պրակտիկայում ընդունված սկզբունքների՝ որևէ լուծում դեռևս չի առաջարկվել կառավարության կողմից<sup>76</sup>: 2025 թվականի նոյեմբերին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից քննարկմանը ներկայացված «Գնումների մասին» օրենքի փոփոխությունների նախագծում, ի թիվս այլ դրույթների, առաջարկվում է «դրամաշնորհի» սահմանումը, սակայն այդ սահմանումն ավելի շատ հարցեր է առաջացնում, քան ծառայում ինդրի լուծմանը: Այն նմանակում է պետական դրամաշնորհների ընթացակարգում տրամադրված սահմանմանը՝ մի հավելումով, որ դրամաշնորհը «չի ենթադրում արդյունքի ընդունում պատվիրատուի կողմից»:<sup>77</sup> Սակայն հենց այս գաղափարն է ընկած Հարկային օրենսգրքի ինդրահարույց դրույթի հիմքում, քանի որ դոնորներին տրամադրվող հաշվետվությունը հարկային մարմինների կողմից մեկնաբանվում է որպես ծառայությունների արդյունքի ընդունում:

Հարկային միջավայրը չի խթանում ֆիզիկական անձանց և ընկերությունների նվիրատվությունները, թեև դրանք ֆինանսավորման կարևոր աղբյուր կարող են լինել ԲՀԿ-ների համար: Այսպես, մասնավոր հատվածի նվիրատվությունների համար առկա արտոնությունները արդյունավետ չեն, իսկ անհատական նվիրատվությունները խթանող իրավական մեխանիզմ չկա: Բնաիրային նվիրատվությունները հարկվում են ԱԱՀ-ով՝ բացառությամբ հատուկ դեպքերի (տե՛ս նաև Ոլորտ 9՝ «Պետական աջակցություն»):

Ընթացիկ հարկային բարեփոխումների շրջանակներում կառավարությունը փոփոխություններ կատարեց Հարկային օրենսգրքում՝ տնտեսական գործունեության տեսակների մեծ մասի համար շրջանառության հարկի դրույթաչափը 5%-ից 2025 թվականի հունվարից դարձնելով 10%: Բացի այդ՝ իրավաբանական ու հաշվապահական ծառայությունները գրկվեցին շրջանառության հարկի դաշտում աշխատելու հնարավորությունից՝ 2025 թվականի հուլիսից անցնելով հարկման ընդհանուր դաշտ՝ ԱԱՀ և շահութահարկ վճարելու պարտավորությամբ: Արդյունքում, այն ԲՀԿ-ները, որոնք ընկերություններից կամ անհատ ձեռնարկատերերից խորհրդատվական, փորձագիտական, փաստաբանական կամ հաշվապահական ծառայություններ են պատվիրակում, ներկայումս ավելի մեծ գործառնական ծախսեր են կրում<sup>78</sup>:

Գործնականում ԲՀԿ-ները սահմանափակումների չեն հանդիպում տարբեր աղբյուրներից ֆինանսավորում հայցելու, ստանալու և օգտագործելու հարցում: Այլընտրանքային ֆինանսավորման հայթայթումը հատկապես հրատապ է դարձել ԱՄՆ արտաքին աջակցության դադարեցման հետևանքով առաջացած ճգնաժամի պարագայում, որը զգալի ազդեցություն ունեցավ ոլորտի վրա: Բազմաթիվ ԲՀԿ-ներ, այդ թվում՝ մարդու իրավունքների, վերահսկողական գործունեության, ընտրությունների դիտորդության և մեդիա ոլորտներում աշխատող կազմակերպություններ, մեծապես կախված էին ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) և ԱՄՆ այլ աղբյուրների ֆինանսավորումից, ուստի արտաքին աջակցության անկումը բերեց մի շարք կազմակերպությունների գործունեության դադարեցմանը և ստիպեց խոշոր կազմակերպություններին կրճատել իրենց աշխատանքների

<sup>76</sup> Հարցազրույցներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

<sup>77</sup> «Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերին հավանություն տալու մասին (նախագիծ), Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/9302>

<sup>78</sup> Հարցազրույցներ և ֆոկլոր խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

ծավալը<sup>79</sup>: Որոշ ԶԿ-ներ, մասնավորապես՝ լրատվամիջոցներ ունեցողները, դրամահավաքի (քրաուդֆանդինգ) արշավներ նախաձեռնեցին իրենց կայքերի կամ հատուկ հարթակների միջոցով, սակայն հավաքագրված գումարները դեռևս չափազանց փոքր են նրանց ծախսերը ծածկելու համար: ԶԿ-ների և փորձագետների կարծիքով՝ հանրությունը հակված է նվիրատվություններ կատարել մարդասիրական, առողջապահական, կրթական և սոցիալական նպատակների համար, մինչդեռ իրավապաշտպան, վերահսկողական, մշակութային և լրատվական կազմակերպությունները հաճախ չեն կարողանում հասնել ֆոնդահայթայթման իրենց թիրախներին<sup>80</sup>:

Մասնավոր ընկերությունները, որպես կանոն, քիչ են հետաքրքրություն ցուցաբերում ԶԿ-ների գործունեության նկատմամբ, թեև առանձին համայնքներում փոքրածավալ աջակցության դեպքեր են արձանագրվել: Աստիճանաբար ավելանում են այն ԶԿ-ները, որոնք տնտեսական գործունեությունը դիտարկում են որպես ինքնաֆինանսավորման հնարավոր աղբյուր: Սակայն նրանք լուրջ դժվարությունների են բախվում, այդ թվում՝ մասնավոր հատվածի հետ անհավասար մրցակցության առումով, քանի որ ԶԿ-ները սովորաբար հետ են մնում անբավարար գործարար կարողությունների, ավելի մեծ վարչական ծախսերի, մյուս կողմից էլ՝ սոցիալական ձեռներեցության վերաբերյալ իրավակարգավորումների բացակայության պատճառով<sup>81</sup>: Արդյունքում, դոնորների ֆինանսավորումը դեռևս ԶԿ-ների եկամտի հիմնական աղբյուրն է հանդիսանում, իսկ նվիրատվությունները, ձեռնարկատիրական գործունեությունը, անդամավճարները, պետական և մասնավոր աջակցությունը շատ փոքր մասնաբաժին են կազմում:

## Չափորոշիչ 2. Ֆինանսավորման կամ նյութական ռեսուրսների տեղական, օտարերկրյա և միջազգային աղբյուրների միջև տարբերություն չի դրվում:

ԶԿ-ների համար միջազգային աղբյուրներից նվիրատվություններ, դրամաշնորհներ կամ բնաիրային աջակցություն ստանալու համար իրավական սահմանափակումներ չկան: Հարկային ընթացակարգերն ավելի նպաստավոր են որոշակի օտարերկրյա աղբյուրներից ֆինանսավորվելու դեպքում, երբ ԶԿ-ները կարող են ազատվել ԱԱՀ-ից դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում հատուկ միջկառավարական համաձայնագրերի հիման վրա ապրանքներ կամ ծառայություններ գնելիս (օրինակ՝ ԵՄ-ից ֆինանսավորում ստանալու դեպքում): Այլ աղբյուրներից ֆինանսավորվելու դեպքում հարկային արտոնություններ կարող են տրամադրվել տվյալ ծրագիրը որպես բարեգործական որակող համապատասխան լիազոր մարմնի որոշմամբ, որը, սակայն, երկարատև վարչարարական գործընթաց է պահանջում (տե՛ս նաև Ոլորտ 9՝ «Պետական աջակցություն»): Ինչ վերաբերում է միջազգային աղբյուրներից բնաիրային աջակցության հարկմանը, ապա արտերկրից ստացած ապրանքները ենթակա են մաքսատուրքի վճարման, եթե դրանք բարեգործական ծրագրերի շրջանակներում չեն ներմուծվել:

<sup>79</sup> Caucasus Watch, “After USAID: Armenian Civil Society at a Crossroads” (ԱՄՆ ՄԶԳ-ից հետո՝ Հայաստանի քաղաքացիական հասարակությունը խաչուղիներում), 14.08.2025, նշված տեղում, Tigran Grigoryan, “The impact of U.S. aid cuts on Armenia’s civil society and media” (ԱՄՆ օգնության կրճատման ազդեցությունը Հայաստանի քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների վրա), CivilNet, 17.03.2025, նշված տեղում:

<sup>80</sup> Հարցազրույցներ և ֆոկլոր խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.: ReArmenia հիմնադրամի հետ տեղեկատվության ճշտում, սեպտեմբեր 2025 թ.:

<sup>81</sup> Հարցազրույցներ և ֆոկլոր խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

ՔՀԿ-ներին «օտար շահերին ծառայելու» համար մեղադրող բացասական խոսույթները շարունակվում են: Սակայն այս բնորոշումները արդեն ոչ այնքան ՔՀԿ-ների ֆինանսական աղբյուրների հետ են ասոցացվում, որքան արտացոլում են մեդիայում և հանրային խոսույթում առկա «ՀԿ դաշտի» մասին ընդհանուր կարծրատիպը՝ նմանակելով տարածաշրջանում տարածված և քաղաքացիական հասարակությունը պիտակավորելու համար օգտագործվող «օտարերկրյա գործակալի» հասկացությանը (տե՛ս նաև Ոլորտ 8՝ «Պետության կողմից պաշտպանության պարտականություն»):

**Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.**

- ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ սահմանել «դրամաշնորհ» հասկացությունը՝ հաշվի առնելով միջազգային առաջատար փորձը և խորհրդակցելով ՔՀԿ-ների հետ, և դրամաշնորհային ծրագրերն ու ոչ առևտրային գործունեության այլ տեսակները չհամարել ձեռնարկատիրական գործունեություն:
- ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ ստեղծել ավելի բարենպաստ հարկային միջավայր, որը կբարելավի ՔՀԿ-ների հնարավորությունները տարբեր աղբյուրներից ֆինանսավորում և բնափրային աջակցություն հայթայթելու գործում, ներառյալ անհատներից և տնտեսվարող սուբյեկտներից նվիրատվությունների ստացումը և ուղղակի ձեռնարկատիրական գործունեությունը:
- ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ ապահովել, որ պետական մարմինները դրամաշնորհներ և գնումների պայմանագրեր տրամադրելիս նախատեսեն պարտադիր աուդիտի համար անհրաժեշտ ծախսերը, ինչպես նաև քննարկել աուդիտի ենթակա գումարի շեմի բարձրացման հնարավորությունը աուդիտի համար նախատեսված ծախսը նվազեցնելու և այդ գումարը դրամաշնորհային բյուջե ուղղելու նպատակով:

### 3.4 Խաղաղ հավաքների ազատություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ **5.2/7**

Իրավական դաշտ՝ <b>5.7/7</b>	Գործնական դաշտ՝ <b>4.7/7</b>
--------------------------------	---------------------------------

Հավաքների ազատությունը պաշտպանվում է ՀՀ օրենսդրությամբ՝ միջազգային չափորոշիչներին համահունչ: Յուրաքանչյուր ոք կարող է կազմակերպել խաղաղ հավաքներ և մասնակցել դրանց, և այս իրավունքը պետք է պատշաճ պաշտպանվի՝ անկախ այն բանից, թե որտեղ են կազմակերպվում հավաքները: Ըստ օրենքի՝ բացօթյա հանրային հավաքների կազմակերպիչները հավաքին 100 հոգուց ավելի մասնակից ակնկալելու դեպքում պետք է հավաքի մասին իրազեկեն համայնքապետարանին: Ինքնաբուխ և շտապ հավաքների դեպքում նախնական իրազեկում ներկայացնելը պարտադիր չէ: Միաժամանակյա և հակադարձ ուղղվածությամբ հավաքների համար սահմանափակումներ չկան: Ըստ օրենքի՝

նստիկանությունը պարտավոր է ցանկացած դեպքում աջակցել հավաքին, եթե հավաքը խաղաղ բնույթ ունի՝ անկախ իրազեկման պահանջի իրականացումից: Ոստիկանությունը կարող է դադարեցնել հավաքը միայն այն դեպքում, եթե այլ կերպ հնարավոր չէ կանխել այլ անձանց հիմնական իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակումը:

2025 թվականին նախորդ տարիների համեմատ բազմաթիվ հավաքներն ավելի քիչ են եղել, մեծ մասն՝ առանց միջամտության: Սակայն ոստիկանական ծառայողների թվաքանակը հաճախ անհամաչափ էր ցուցարարների քանակի համեմատ: 2025 թվականի նոյեմբերին ուժի մեջ մտած «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքում կարևորվել են հավաքների մասնակիցների իրավունքների պաշտպանությունը և ոստիկանական ծառայողների կանոնավոր վերապատրաստումները: Մինևույն ժամանակ, անցյալում տեղ գտած ոստիկանության անօրինական գործողությունների համար հաշվետվողականության բացը մտահոգություններ է առաջացնում ապագայում ուժի կիրառման համաչափության և նոր ոստիկանական ստորաբաժանման արդյունավետության վերաբերյալ: Առհասարակ, թեև օրենսդրական շրջանակը նպաստավոր է, իսկ հավաքների ոստիկանական վերահսկողությունը ընդհանուր առմամբ՝ բավարար, անհետևողական կիրարկումը, որոշ հավաքների ընթացքում ոստիկանական բազմաթիվ ուժերի ներկայությունը և խախտումների համար անբավարար պատժամիջոցները շարունակում են խոչընդոտել Հայաստանում խաղաղ հավաքների իրավունքի լիարժեք իրացմանը:

Այս ոլորտի գնահատականը 2024 թվականի համեմատ չի փոխվել: Առաջարկությունները ներառում են հավաքների ընթացքում ոստիկանական վերահսկողության նոր չափորոշիչների լիարժեք կիրառման ապահովումը, ոստիկանության անօրինական գործողությունների կանխարգելումը, ոստիկանության կողմից իրավախախտումների կամ ուժի անօրինական կիրառման բոլոր դեպքերի արագ, թափանցիկ և արդյունավետ հետաքննությունը և պատժամիջոցների ապահովումը, ինչպես նաև հատուկ միջոցների տեսակների և կիրառման վերաբերյալ տեղեկությունների գաղտնագերծումը:

### Չափորոշիչ 1. Յուրաքանչյուր ոք կարող է ազատորեն օգտվել խաղաղ հավաքների կազմակերպման և մասնակցության իրավունքից:

Ըստ օրենքի՝ յուրաքանչյուր ոք կարող է կազմակերպել խաղաղ հավաքներ և մասնակցել դրանց, և այդ հավաքները պետք է պատշաճ պաշտպանվեն՝ անկախ այն բանից, թե որտեղ են կազմակերպվում: Հավաքների ազատությունը պաշտպանվում է ՀՀ Սահմանադրությամբ և կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով<sup>82</sup>: «Հավաքների ազատության մասին» օրենքում «հավաք» հասկացությունը հետևյալ կերպ է սահմանվում՝ «հավաքը երկու կամ ավելի անձանց խաղաղ և առանց զենքի ժամանակավոր ներկայությունն է որևէ վայրում՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ ընդհանուր կարծիք ձևավորելու կամ արտահայտելու մտադրությամբ»<sup>83</sup>: Օրենքը հավաքների ազատության իրավունքի իրացման որոշակի

<sup>82</sup> ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 44:

<sup>83</sup> ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, վերջին փոփ. առ 14.11.2024, հոդված 2, <https://www.arlis.am/hy/acts/199693>

սահմանափակումներ է նախատեսում անձանց առանձին խմբերի, օրինակ՝ դատավորների, դատախազների, քննիչների, ինչպես նաև զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների համար. նրանք հավաքներին մասնակցելիս պետք է քաղաքական չեզոքություն ցուցաբերեն և ծառայողական համազգեստ չկրեն<sup>84</sup>: Ինքնաբուխ և շտապ հավաքների դեպքում նախնական իրազեկում ներկայացնելը պարտադիր չէ: Միաժամանակյա և հակադարձ ուղղվածությամբ հավաքների համար սահմանափակումներ չկան: Ընդհանուր առմամբ, խաղաղ հավաքների վերաբերյալ օրենսդրությունը գնահատվում է որպես միջազգային չափորոշիչներին համապատասխան: Թվային կամ առցանց հավաքների վերաբերյալ կարգավորումներ չկան: Սա մի կողմից նշանակում է, որ դրանց համար ներկայումս սահմանափակումներ չեն սահմանվել, մյուս կողմից՝ միջոցներ չեն նախատեսված նման հավաքներին մասնակցությունը պաշտպանելու համար:

Քրեական օրենսգրքի համաձայն՝ հավաք անցկացնելուն կամ դրան մասնակցելուն խոչընդոտելը կամ հարկադրելը, ինչպես նաև հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը պատժվում է ընդհուպ մինչև երեք տարի ազատազրկմամբ, ինչպես նաև ավելի խիստ միջոցներով, եթե դա կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունների օգտագործմամբ<sup>85</sup>: Նյութապես շահագրգռելու գործողության քրեականացման վերաբերյալ դրույթը մշակվել է ընտրական օրենսդրության բարեփոխումների գործընթացում ԶԶԿ-ների առաջարկների հիման վրա, որպեսզի կանխվի հավաքին մասնակցելուն կամ մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելու համար ֆինանսական խրախուսման կիրառումը, ինչը դիտարկվել է որպես քվեների գնմանը հավասարեցվող պրակտիկա<sup>86</sup>: Վենետիկի հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերին հրապարակված խորհրդատվական կարծիքի (Amicus Curiae) համաձայն՝ պետությունները իրավասու են կարգավորել վարձատրվող մասնակցությունը հավաքներին, բայց առաջին հերթին ընտրարշավի ֆինանսավորման համատեքստում՝ արդար քաղաքական մրցակցություն ապահովելու համար: Հանձնաժողովը, սակայն, համարել է, որ Քրեական օրենսգրքի «նյութապես շահագրգռել» եզրույթը բավարար իրավական որոշակիություն չունի և կարող է կամայականորեն մեկնաբանվել՝ նշելով, որ այնպիսի աջակցությունը, ինչպես օրինակ տրանսպորտային կամ կազմակերպչական ծախսերի փոխհատուցումը, կարող է սխալմամբ քրեականացվել՝ խախտելով խաղաղ հավաքների իրավունքը, և առաջարկել է հողվածի շրջանակից բացառել նման գործողությունները և ապահովել, որ թափանցիկությանն ուղղված բոլոր անհրաժեշտ միջոցառումները լինեն հստակ և համաչափ<sup>87</sup>: Գործնականում

<sup>84</sup> Նույն տեղում, հոդված 8:

<sup>85</sup> ՀՀ քրեական օրենսգրք, 05.05.2021, վերջին փոփ. առ 02.08.2025, հոդված 236, <https://www.arlis.am/hy/acts/210019>

<sup>86</sup> Venice Commission of the Council of Europe, “Armenia - Explanatory note regarding the electoral reform and draft laws amending election-related laws and codes” (Հայաստան. Բացատրական փաստաթուղթ ընտրական բարեփոխումների և ընտրական օրենքներում ու օրենսգրքերում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերի վերաբերյալ), Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողով, Ստրասբուրգ, 05.03.2021, <https://www.coe.int/en/web/venice-commission/-/cdl-ref-2021-018-e>, Խորհրդատվական խորհրդի հանդիպում, 31 հոկտեմբերի 2025 թ.:

<sup>87</sup> European Commission for Democracy Through Law of the Council of Europe (Venice Commission), “Armenia Amicus Curiae Brief on the Compatibility of Article 236 of the Criminal Code with the European Standards on Legal Certainty” (Հայաստան, Խորհրդատվական կարծիքի համառոտագիր՝ Քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի՝ իրավական որոշակիության վերաբերյալ Եվրոպական չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ), ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 144-րդ լիազումար նիստում, Ստրասբուրգ, 13.10.2025, [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2025\)037-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2025)037-e).

վերջին երեք տարիների ընթացքում այս հոդվածով մեղադրանք է առաջադրվել և կալանքի տակ է պահվել ավելի քան տասնյակ անձ<sup>88</sup>:

2025 թվականին նախորդ տարիների համեմատ մեծաքանակ հավաքներ ավելի հազվադեպ են եղել: Օրինակ՝ Շիրակի մարզի ռուսական ռազմաբազայի դիմաց անցկացվել են երկու հակադարձ ուղղվածությամբ հավաք՝ մեկը՝ ի պաշտպանություն ռազմաբազայի, մյուսը՝ այն հեռացնելու պահանջով<sup>89</sup>: Հավաքը վերահսկել են ոստիկանության մեծ թվով ծառայողներ, սակայն ՔՀԿ-ների և փորձագետների կողմից անօրինական վերաբերմունքի կամ բերման ենթարկելու որևէ դեպք չի գրանցվել: Ոստիկանական ուժերի զգալի ներկայությամբ մեկ այլ հավաք էր անհետ կորած զինվորների ծնողների բողոքի ցույցը, որտեղ ծնողները պահանջում էին վարչապետի կողմից պաշտոնաթող արված ԱԱԾ նախկին պետին վերականգնել իր պաշտոնում: Քանի որ ԱԱԾ պետը ի պաշտոնե ղեկավարում է ռազմագերիների, պատանդների և անհետ կորած անձանց հարցերով կառավարական հանձնաժողովը, ծնողները գտնում էին, որ նախկին պետն արդեն քաջատեղյակ էր իրենց խնդիրներից և պարբերաբար տեղեկատվություն էր տրամադրում իրենց անհետ կորած որդիների հարցերի վերաբերյալ, ուստի նրանք իրենց հույսերը կապում էին այս պաշտոնյայի հետ: Չնայած ցուցարարները երկու օր փակ պահեցին Երևանի ամենամեծ պողոտաներից մեկը՝ ոստիկանությունը չմիջամտեց և հավաքը պաշտպանեց այնքան ժամանակ, մինչև ցուցարարները պաշտոնյաների հետ բանակցություններից հետո բացեցին փողոցը<sup>90</sup>: 2025 թվականի սեպտեմբերի վերջին անհետ կորածների ծնողներն ու հարազատները բողոքի մի քանի ակցիա կազմակերպեցին Նաև Պաշտպանության նախարարության շենքի առջև՝ հանդիպում պահանջելով պաշտոնյաների հետ անհետ կորած զինվորների մասին տեղեկություններ ստանալու համար: Երբ ցուցարարները փակեցին նախարարության մուտքը, ռազմական ոստիկանությունը փորձեց ազատել տարածքը, ինչի արդյունքում քաջքռուկ տեղի ունեցավ ծառայողների և մասնակիցների միջև<sup>91</sup>: Տարվա ընթացքում տեղի են ունեցել նաև այլ փոքրաքանակ ցույցեր և բողոքի ակցիաներ՝ առանց ոստիկանական միջամտության: Միևնույն ժամանակ, շատ դեպքերում հավաքները հսկող ոստիկանների քանակը անհամաչափ է եղել՝ երբեմն մի քանի անգամ գերազանցելով ցուցարարների թիվը<sup>92</sup>:

<sup>88</sup> Քաղաքական իրավունքների հայկական կենտրոն, «Հայտարարություն «Հավաքներին մասնակցելու նպատակով կյուրապետ շահագրգռելու» հանցակազմի մասին Վենետիկի հանձնաժողովի կարծիքի վերաբերյալ», 15.10.2025, <https://drive.google.com/file/d/1ePcQIXSWdMpcsM7t-G3-nDsWxuOP3nbU/view>, Հայաստանի Հանրապետության բնչական կոմիտե, «Բողոքի ակցիաների ընթացքում առերևույթ հանցավոր արարքների կատարման համար քրեական հետապնդում է հարուցվել 58 անձի նկատմամբ, 29 անձի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը. ամփոփում», 17.06.2024, <https://www.investigative.am/news/boghqi-akcianeri-yntacqoum-arerevuyt-hancavor-ararqneri-katarman-hamar-grekan-hetapndoum-e-haroucvel-58-andzi-nkatmamb-29-andzi-nkatmamb-xapanman-mijoc-e-yntrel-kalanqy-ampopoum>

<sup>89</sup> Ազատություն, «Ցույցեր Գյումրիում՝ ընդդեմ և ի պաշտպանություն ռուսական ռազմաբազայի», YouTube, 23.08.2025, <https://www.youtube.com/watch?v=9y2uD-1qTbg>

<sup>90</sup> News.am, «Անհետ կորածների հարազատները գիշերել են Բաղրամյանում. այս պահին բանակցում են փոխօստիկանապետի հետ», 19.06.2025, <https://news.am/arm/news/889252.html>, Ռուզաննա Ստեփանյան, «Անհետ կորածների հարազատները բացել են Բաղրամյան պողոտան», Ազատություն Ռադիոկայան, 20.06.2025, <https://www.azatutyun.am/a/33449932.html>

<sup>91</sup> News.am, «Անհետ կորած զինծառայողների ծնողները ՊՆ-ի դիմաց են. պահանջում են հանդիպում բարձրաստիճան զինվորականների հետ», 29.09.2025, <https://news.am/arm/news/906951.html>, Ալինե Գրիգորյան, «Հայաստանի պաշտպանության նախարարության մոտ քաջքռուկ է տեղի ունեցել անհետ կորած զինծառայողների հարազատների և ոստիկանության միջև», ArmInfo, 29.09.2025, [https://arminfo.info/full\\_news.php?id=95055&lang=1](https://arminfo.info/full_news.php?id=95055&lang=1)

<sup>92</sup> Հարցազրույցներ և ֆոկլոր խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

## Չափորոշիչ 2. Պետությունն աջակցում է խաղաղ հավաքների ընթացքին և պաշտպանում է խաղաղ հավաքները:

Օրենքով սահմանված՝ հավաքի մասին իրազեկման գործընթացը հիմնականում համահունչ է միջազգային իրավունքին: Բացօթյա հանրային հավաքների դեպքում օրենքը պահանջում է հավաքի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 72 ժամ առաջ գրավոր իրազեկումներ կայացնել այն համայնքի ղեկավարին, որտեղ նախատեսվում է անցկացնել հավաքը: Մինչև 100 մասնակից ունեցող, շտապ և ինքնաբուխ հավաքների, ինչպես նաև առցանց հավաքների և փակ կամ մասնավոր տարածքում անցկացվող հավաքների համար իրազեկում չի պահանջվում: Իրազեկման նպատակը պետության կողմից հավաքի բնականոն և խաղաղ ընթացքն ապահովելու, ինչպես նաև այլ անձանց սահմանադրական իրավունքների ու հանրության շահերի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելն է<sup>93</sup>:

Իրազեկումը համայնքապետարանում մուտքագրվելուց հետո այն անմիջապես ուղարկվում է ոստիկանություն կարծիք ստանալու նպատակով: Եթե մտադրություն կա հավաքի անցկացման համար սահմանափակումներ կիրառել կամ արգելել հավաքը, ապա ՏԻՄ-ը լումներ է անցկացնում և ծանուցում հավաքի կազմակերպիչներին: Սահմանափակումներ կարող են կիրառվել, եթե նախատեսված հավաքի ժամանակը, վայրը կամ եղանակը անմիջականորեն կարող են հանգեցնել այլ անձանց հիմնարար իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակման: Նման դեպքում լիազոր մարմինը կազմակերպիչին կարող է առաջարկել փոխել հավաքի անցկացման ժամանակը, վայրը կամ եղանակը: Հավաքն արգելվում է, եթե հավաքի նպատակն է սահմանադրական կարգի բռնի տապալումը, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելը, բռնություն կամ պատերազմ քարոզելը: Եթե սահմանափակման կամ արգելման որոշում չի ընդունվում, ապա համարվում է, որ իրազեկումն ընդունված է ի գիտություն<sup>94</sup>: Հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների դեմ կարող է հայց ներկայացվել վարչական դատարան հավաքի նախատեսված օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ: Հայցադիմումները քննվում են 2 օրացուցային օրվա ընթացքում<sup>95</sup>: Գործնականում հավաքների մեծ մասն անցկացվել է առանց իրազեկման: ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականին (սեպտեմբերի 25-ի դրությամբ) անցկացված 619 հավաքներից միայն 133-ն են նախնական ծանուցմամբ կազմակերպվել, իսկ մնացածը եղել են շտապ, ինքնաբուխ կամ փոքրաքանակ հավաքներ<sup>96</sup>:

2024 թվականին ընդունված և 2025 թվականի նոյեմբերի 1-ին ուժի մեջ մտած «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքով ոստիկանության գվարդիայի հիմնական գործառույթների շրջանակում նշվում է հավաքների բնականոն ընթացքի ապահովումը և դրանց մասնակիցների իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանությունը: Բացի այդ՝ օրենքը ոստիկանության գվարդիայի ծառայողներին պարտավորեցնում է հատուկ պատրաստություն և պարբերական վերապատրաստում անցնել իրենց գործունեության ոլորտներում, ներառյալ հավաքների ազատության իրավունքի վերաբերյալ, և նախանշում է

<sup>93</sup> ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, հոդվածներ 9-13:

<sup>94</sup> Նույն տեղում, հոդվածներ 15-20:

<sup>95</sup> ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 05.12.2013, վերջին փոփ. առ 01.08.2025, հոդված 204, <https://www.arlis.am/hy/acts/209969>:

<sup>96</sup> Տվյալները տրամադրվել են ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից 2025 թվականի հոկտեմբերի 1-ին՝ ի պատասխան ԹԻՀԿ հարցման:

այն հատուկ պայմանները, որոնց դեպքում ոստիկանության գվարդիան կարող է ֆիզիկական ուժ կամ հատուկ միջոցներ գործադրել<sup>97</sup>: 2025 թվականի մայիսին ՀՀ ներքին գործերի նախարարը հաստատեց ոստիկանության ծառայողների կողմից ուժային միջոցների գործադրման պիլոտային ստանդարտ գործառնական ընթացակարգը<sup>98</sup>, իսկ 2025 թվականի հոկտեմբերին ընդունեց այդ ընթացակարգերը, ինչպես նաև հանրային քննարկմանը ներկայացրեց հարկադրանքի միջոցների կիրառման վերաբերյալ ստանդարտացված գործելակարգերի նախագիծը<sup>99</sup>: Ըստ Էուբյան, այս նոր կարգավորումները կարող են նվազեցնել ոստիկանության կողմից անհետևողական և անհամաչափ գործողությունների կիրառման ռիսկերը: Սակայն հարցազրույցների մասնակից փորձագետները կարծում են, որ ոստիկանության նոր մարմինը հիմնականում կհամալրվի նախկին ոստիկաններով, իսկ մնայուն այնպիսի խնդիրները, ինչպիսիք են վատ աշխատանքային պայմանները և նախորդ տարիների անօրինական գործողությունների համար քրեական պատասխանատվության բացակայությունը կասկածի տեղիք են տալիս, որ մոտ ապագայում ոստիկանության մոտեցումը հավաքներին էապես կփոխվի<sup>100</sup>: Ուստի դեռևս կարիք կա այս փոփոխությունները տեսնել գործնականում:

Համացանցի հասանելիությունը սահմանափակելու կամ գալիք հավաքների մասին տեղեկատվության տարածման գործում հավաքների կազմակերպիչներին որևէ այլ կերպ խոչընդոտելու փաստագրված դեպքեր չկան:

### [Չափորոշիչ 3. Պետությունն անհարկի պահանջներ չի առաջադրում խաղաղ հավաքների կազմակերպիչների և մասնակիցների նկատմամբ:](#)

Ըստ օրենքի՝ հավաքի ղեկավարը հավաքի ընթացքում պարտավոր է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հավաքի բնականոն ընթացքն ապահովելու համար, մասնավորապես հավաքի մասնակիցների կողմից բռնի գործողությունները կանխելու, բռնությունից զերծ մնալու և ուժի կիրառմանը պատրաստ մասնակիցներից սահմանազատվելու կոչերի միջոցով: Կազմակերպիչը պարտավոր է նաև հավաքի մասնակիցներին տեղեկացնել ոստիկանության ծառայողների պահանջների մասին, օրինակ, եթե պահանջվում է ազատել փողոցը կամ դադարեցնել հավաքը<sup>101</sup>: Ոստիկանությունը պարտավոր է հավաքի մասին տեղեկատվություն ստանալուց հետո անհապաղ նշանակել իր ներկայացուցչին, ինչպես նաև հավաքի անցկացման վայրից հեռացնել այն անձանց, որոնք կոպտորեն խախտում են հավաքի խաղաղ և բնականոն ընթացքը<sup>102</sup>: Հավաքի անցկացման և կամ առնչվող ծախսերի համար պետության կողմից որևէ վարձավճար սահմանված չէ: Հավաքի մասնակիցների գործողությունների

<sup>97</sup> ՀՀ օրենքը «Ոստիկանության գվարդիայի մասին» 24.10.2024, <https://www.arlis.am/hy/acts/199700>:

<sup>98</sup> ՀՀ ներքին գործերի նախարարի հրաման N 35-Լ «Ոստիկանության ծառայողների կողմից ուժային միջոցների գործադրման պիլոտային ստանդարտ գործառնական ընթացակարգը հաստատելու մասին», 07.05.2025, <https://mia.gov.am/wp-content/uploads/2025/05/4c67761f3de24a10ed32bc4a01233181bfe86e1bd5344aff964d3424c2f9a6b.pdf>

<sup>99</sup> ՀՀ ներքին գործերի նախարարի թիվ 6-Ն հրամանը «Ոստիկանության ծառայողների կողմից ուժային միջոցների գործադրման ստանդարտացված գործելակարգը հաստատելու մասին», 30.10.2025, <https://www.arlis.am/hy/acts/215815>, ՀՀ ներքին գործերի նախարարի հրամանի նախագիծ «Ոստիկանության ծառայողների կողմից հարկադրանքի միջոցների կիրառման ստանդարտացված գործելակարգերը հաստատելու մասին», Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/9263/about>

<sup>100</sup> Հարցազրույցներ և ֆոկլոր խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:  
<sup>101</sup> ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, հոդված 31:  
<sup>102</sup> Նույն տեղում, հոդված 32:

համար կազմակերպիչներին պատասխանատվության ենթարկելու որևէ պահանջ օրենքով սահմանված չէ:

Կազմակերպիչների կողմից հավաքների վերաբերյալ տեղեկատվության տարածման (այդ թվում առցանց եղանակով) կամ հավաքների ընթացքում սարքավորումների օգտագործման հետ կապված որևէ սահմանափակում չի արձանագրվել:

Չափորոշիչ 4. Իրավապահ մարմիններն աջակցում են խաղաղ հավաքներին և պատասխանատու են իրենց ներկայացուցիչների գործողությունների համար:

Օրենքը հստակ կարգավորումներ է սահմանում ոստիկանության կողմից ուժի, հատուկ միջոցների և հսկողության սարքերի կիրառման վերաբերյալ: Սակայն հավաքների ոստիկանական վերահսկման վերաբերյալ առանձին ենթաօրենսդրական կարգավորումներ չկան: Իրազեկման պահանջի խախտման դեպքում ոստիկանությունը պետք է բարձրախոսով տեղեկացնի, որ հավաքն անօրինական է, և որ մասնակիցները կարող են ենթարկվել պատասխանատվության: Միաժամանակ, ըստ օրենքի, ոստիկանությունը պարտավոր է ցանկացած դեպքում աջակցել հավաքին, եթե հավաքը խաղաղ բնույթ ունի՝ անկախ իրազեկման պահանջի իրականացումից: Ոստիկանությունը կարող է դադարեցնել հավաքը միայն այն դեպքում, եթե առավել մեղմ միջոցներով հնարավոր չի եղել կանխել այլ անձանց հիմնական իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակումը: Այդ դեպքում հավաքը դադարեցնելու պահանջով ոստիկանությունը դիմում է հավաքի ղեկավարին, այնուհետև (հավաքի ղեկավարի բացակայության կամ հավաքի ղեկավարի կողմից ոստիկանության պահանջը չկատարելու դեպքում) ոչ պակաս, քան երկու անգամ բարձրախոսով մասնակիցներից պահանջում է դադարեցնել հավաքը՝ սահմանելով ողջամիտ ժամկետ, և նախազուշացնում է չենթարկվելու դեպքում հատուկ միջոցներ (օրինակ՝ արցունքաբեր գազ, ջրանետեր, լուսաձայնային նռնակներ) կիրառելու հնարավորության մասին: Չանգվածային անկարգությունների դեպքում ոստիկանությունը լիազորված է անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ առանց նախապես ծանուցելու<sup>103</sup>:

Ըստ «Ոստիկանության մասին» օրենքի՝ արգելվում է հատուկ միջոցներ օգտագործել օրենքով սահմանված կարգի խախտմամբ անցկացվող, բայց խաղաղ և առանց զենքի հավաքները դադարեցնելու նպատակով: Արգելվում է նաև ոստիկանության սպառազինության մեջ հատուկ միջոցների այնպիսի տեսակներ ընդգրկել, որոնք կարող են մարդու առողջությանը ծանր վնաս պատճառել կամ չհիմնավորված ռիսկի աղբյուր են<sup>104</sup>: Բացի դրանից՝ օրենքը ոստիկանության ծառայողներին պարտավորեցնում է հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս կրել սահմանված համազգեստ՝ տեսանելի տարբերանշաններով<sup>105</sup>: Նույն օրենքով սահմանվել են նաև հսկողության տեխնիկական միջոցների կիրառման կանոնակարգերը, որոնք ապահովում են նման սարքերի օգտագործման վերաբերյալ պատշաճ ծանուցումը և անձնական տվյալների պաշտպանությունը: Հանրային վայրերում տեղադրված անշարժ տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերի մասին պետք է նախազգուշացնող ցուցանակներ տեղադրվեն տեսանելի վայրերում: Շարժական սարքավորումներ օգտագործելիս ոստիկանության ծառայողները դրանք պետք է կրեն տեսանելի ձևով՝

<sup>103</sup> Նույն տեղում, հոդվածներ 32 և 33:

<sup>104</sup> ՀՀ օրենքը «Ոստիկանության մասին», 16.04.2001, վերջին փոփ. առ 06.11.2025, հոդված 31, <https://www.arlis.am/hy/acts/215512>

<sup>105</sup> Նույն տեղում, հոդված 12:

բացառությամբ գաղտնի օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման դեպքերի: Տեսանյութերը կամ լուսանկարները կարող են օգտագործվել նպատակների միայն նեղ շրջանակի համար՝ առանց այլ անձանց նույնականացնող տվյալների հրապարակման կամ դրանց նվազագույն հրապարակմամբ: Տեսանյութերը կամ լուսանկարներն այլ նպատակներով օգտագործելը (այդ թվում՝ հրապարակելը) արգելվում է: Տեսանյութերի և լուսանկարների պահոց մուտք գործելու և տվյալներին ծանոթանալու իրավունք ունեցող ոստիկանության պաշտոնատար անձանց ցանկը, տվյալներից օգտվելու կարգը սահմանվում են ոստիկանության պետի հրամանով<sup>106</sup>:

Ոստիկանությունում առկա հատուկ միջոցների տեսակների և քանակի վերաբերյալ տեղեկատվությունը գաղտնի է դարձել 2024 թվականի հուլիսից ի վեր (2024 թվականի հունիսի ցույցերի ժամանակ լուսաձայնային նշանակների օգտագործումից հետո)<sup>107</sup>, ինչը հակասում է միջազգային չափանիշներին, մասնավորապես՝ ՄԱԿ-ի ուղեցույցին, ըստ որի՝ իրավապահ մարմինները պետք է թափանցիկություն ապահովեն իրենց տրամադրության տակ գտնվող ոչ մահացու զենքերի տեսակների վերաբերյալ<sup>108</sup>:

«Ոստիկանության մասին» օրենքում 2025 թվականին ընդունված փոփոխությունները թույլ են տվել ՀՀ ներքին գործերի նախարարությանը առցանց ռեժիմով հասանելիություն ունենալ պետական և համայնքային շենքերի, օդանավակայանների, սահմանային անցակետերի և հանրային կայանատեղիների տարածքում դրսի կողմից տեղադրված, ինչպես նաև հասարակական տրանսպորտում առկա տեսահսկման համակարգերին և տեսագրություններ ստանալ այս տարածքներից<sup>109</sup>: Ըստ օրենսդրական փոփոխությունների՝ տեսագրություններ պահանջելը և ստանալը, տեսահսկման համակարգերին հասանելիությունը, տեսահսկման համակարգերի միջոցով տվյալների մշակումը և տեսահսկման համակարգերի կիրառումը կարող են իրականացվել բացառապես օրենքով նախատեսված նպատակներով և այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ նվազագույն չափով: Տեսահսկման համակարգերին յուրաքանչյուր մուտք պետք է հաշվառվի էլեկտրոնային գրանցամատյանում, տեսանյութի վրա պետք է արտացոլվեն դրա ներբեռնման ժամը, տեսահսկման համակարգերով հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը պետք է պահպանվի, իսկ նշված պայմանները չկատարելու դեպքում պատասխանատվություն է սահմանվում: Բացի այդ՝ օրենքը թույլ է տալիս տեսահսկման համակարգերի միջոցով իրականացնել անձանց նույնականացում այն դեպքերում, եթե առկա է հիմնավոր կասկած, որ անձը կատարել է հանցագործություն կամ վարչական իրավախախտում: Չնայած ընդունված փոփոխությունները անձանց իրավունքների պաշտպանության որոշակի երաշխիքներ են սահմանում և զգալիորեն սահմանափակում են հսկողության շրջանակը՝ ի տարբերություն 2024 թվականին հրապարակված փոփոխությունների նախագծի<sup>110</sup>, դրանք դեռևս

<sup>106</sup> Նույն տեղում, հոդված 22:

<sup>107</sup> ՀՀ ներքին գործերի նախարարի թիվ 55-Լ հրամանը, 12.07.2024, հրապարակված է՝ 15.07.2024, ՀՀ ներքին գործերի նախարարություն, <https://mia.gov.am/2024/07/15/55/>:

<sup>108</sup> United Nations Human Rights, “Guidance on Less-Lethal Weapons in Law Enforcement” (Իրավապահ մարմիններում ոչ մահացու զենքերի վերաբերյալ ուղեցույց), Նյու Յորք և Ժնև, 2020, [https://www.ohchr.org/sites/default/files/Documents/HRBodies/CCPR/LLW\\_Guidance.pdf](https://www.ohchr.org/sites/default/files/Documents/HRBodies/CCPR/LLW_Guidance.pdf)

<sup>109</sup> ՀՀ օրենքը «Ոստիկանության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին», 05.03.2025, <https://www.arlis.am/hy/acts/204977>

<sup>110</sup> Տե՛ս՝ CSO Meter, “Armenia: Surveillance Law proposal on hold amid public concerns” (Հայաստան՝ հսկողության մասին օրենքի նախագիծը սառեցվեց հանրային մտահոգությունների ներքո), 28.11.2024, <https://csometer.info/updates/armenia-surveillance-law-proposal-hold-amid-public-concerns>

մտահոգությունների տեղիք են տալիս իրավախախտման հասկացության չափազանց լայն շրջանակի տեսանկյունից, որն օրենսդիրները մեկնաբանում են որպես ցանկացած խախտում, այդ թվում՝ «փողոցում աղբ թափելը»<sup>111</sup>: Իրավապահ մարմինների նկատմամբ վստահության ցածր մակարդակի և անկախ վերահսկողության բացակայության պայմաններում նման լայն մեկնաբանությունը անօրինական հսկողության ռիսկ է ստեղծում, որը հավաքների ազատության համատեքստում կարող է կաշկանդող ազդեցություն ունենալ՝ բացասաբար ազդելով թե՛ հավաքների կազմակերպման և թե՛ հավաքների մասնակիցների թվաքանակի վրա<sup>112</sup>:

Հավաքների ժամանակ ոստիկանների կատարած ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ թափանցիկ հետաքննության և պատժամիջոցների կիրառման բացակայությունը կարևորագույն խնդիր է մնում: ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ հավաքների ժամանակ ոստիկանական իրավախախտումների հիմքով նախարարությունը 2024 թվականին 33 ծառայողական քննություն է նախաձեռնել, որոնցից 18-ը՝ անհետևանք, իսկ 15-ի դեպքում քրեական գործ է հարուցվել, մինչդեռ 2025 թվականին, սեպտեմբեր ամսվա դրությամբ, երկու ծառայողական քննություն է հարուցվել, երկուսն էլ՝ անհետևանք<sup>113</sup>: Միևնույն ժամանակ, 2025 թվականի նոյեմբերի դրությամբ որևէ ոստիկանական ծառայող քրեական պատասխանատվության չի ենթարկվել 2024 թվականի հունիսի 12-ի հավաքի ընթացքում տեղի ունեցած խախտումների համար, թեև այդ հավաքի ընթացքում 101 անձ վնասվածքներ է ստացել, այդ թվում՝ ոստիկանության կողմից ենթադրաբար ապօրինի կերպով կիրառված նռնակների բեկորներից<sup>114</sup>:

#### Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- ՀՀ ներքին գործերի նախարարությանը՝ ապահովել հավաքների ոստիկանական հսկողության նոր ստանդարտների արդյունավետ կիրառումը՝ ոստիկանության գվարդիայի շարունակական վերապատրաստման, հետևողական, պրոֆեսիոնալ և իրավունքների վրա հիմնված կիրարկման միջոցով՝ երաշխավորելով, որ ուժի կամ հատուկ միջոցների կիրառման յուրաքանչյուր դեպքն օրինական, անհրաժեշտ և համաչափ է, իսկ ոստիկանության անօրինական գործողությունները արդյունավետորեն կանխվում և պատժվում են:
- Իրավապահ մարմիններին՝ արագ, թափանցիկ և արդյունավետ հետաքննություն իրականացնել հավաքների ընթացքում ոստիկանության կողմից կատարված խախտումների կամ ուժի անօրինական կիրառման բոլոր դեպքերի վերաբերյալ՝ ապահովելով համապատասխան պատժամիջոցների կիրառումը:

<sup>111</sup> Factor TV, «Ովքեր փողոցում աղբ կթափեն, տեսախցիկների միջոցով կնույնականացվեն, վարչական իրավախախտում կկազմվի», YouTube, 04.03.2025, <https://www.youtube.com/watch?v=RYTC4LHqwm>

<sup>112</sup> Քաղաքական իրավունքների հայկական կենտրոն, ««Մեծ եղբայրը Հայաստանում է»․ գեկույց ՀՀ ՆԳՆ-ին հեռավար կենսաչափական վերահսկողության լիազորություն տվող օրենքի փոփոխության վերաբերյալ», 03.05.2025, [https://drive.google.com/file/d/1-Q4jGOTFh7yFKkP8ywuKY5\\_d\\_7kQZKKv/view](https://drive.google.com/file/d/1-Q4jGOTFh7yFKkP8ywuKY5_d_7kQZKKv/view)

<sup>113</sup> Տեղեկությունը տրամադրվել է ՀՀ ներքին գործերի նախարարության 2025 թ. հոկտեմբերի 1-ի գրությամբ՝ ի պատասխան ԹԻ-ՀԿ հարցման:

<sup>114</sup> Մանրամասների համար տե՛ս՝ Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն (ECNL), «ԶԻԿ չափիչ. ԶԻԿ նպաստավոր միջավայրի մոնիտորինգ, Հայաստան 2024»

հետազոտության գեկույց, CSO Meter, 2025, [https://csometer.info/sites/default/files/2025-01/ARM%20Armenia%202024%20CSO%20Meter%20Country%20Report\\_0.pdf](https://csometer.info/sites/default/files/2025-01/ARM%20Armenia%202024%20CSO%20Meter%20Country%20Report_0.pdf)

- ՀՀ ներքին գործերի նախարարությանը՝ գաղտնագրծել հատուկ միջոցների տեսակի ու օգտագործման վերաբերյալ տեղեկությունները և դրանք հասանելի դարձնել հանրությանը:

### 3.5 Որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունք

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4.9 / 7

Իրավական դաշտ՝	Գործնական դաշտ՝
5.4 / 7	4.3 / 7

Օրենսդրությամբ մի շարք ինստիտուցիոնալ մեխանիզմներ են սահմանված քաղաքացիական հասարակությանը և հանրությանը որոշումների կայացման գործընթացում ներգրավելու համար, ներառյալ հանրային քննարկումների Էլեկտրոնային հարթակը, հանրագրերը, խորհրդարանական լսումները և խորհրդակցական մարմինները: Սակայն գործնականում մասնակցությունը դեռևս լիարժեք չի կիրարկվում, երբեմն՝ առանց հետևողականության և բովանդակալից ազդեցության: Մասնակցության հնարավորությունները զգալիորեն տարբեր են՝ կախված գերատեսչությունից և համայնքից, իսկ դեմառդեմ լայնածավալ քննարկումները հիմնականում նախաձեռնվել են ՔՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների կողմից: Ոլորտի դրական զարգացումներից են ՀՀ վարչապետի աշխատակազմում մասնակցային և բաց հարցերի վարչության ստեղծումը, պետական մարմիններում հասարակական խորհուրդների կանոնակարգերը սահմանող վարչապետի որոշումը և ռազմավարական կառավարման ընթացակարգերի արդիականացումը, որոնք հնարավորություն կտան ավելի կանոնավոր մասնակցություն ապահովել և բարելավել ներառականությունը, եթե հետևողականորեն կիրառվեն:

Ինչպես և նախորդ տարի, ՔՀԿ-ները պաշտոնյաների կողմից հանդիպումների հրավերներում ընտրողական միտում են նկատում: Տեղական մակարդակում մասնակցությունը հաճախ ֆորմալ է՝ իրազեկման անբավարար ջանքերով, իսկ հանքարդյունաբերության ազդակիր համայնքներում բնապահպանական հարցերով լսումները որոշ դեպքերում ուղեկցվել են բնակիչների նկատմամբ ճնշումներով՝ բացասաբար ազդելով հետագա մասնակցության պատրաստակամության վրա: Խորհրդարանում մասնակցության ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայությունը խնդրահարույց է մասնակցության ընդհանուր իրավական շրջանակի տեսանկյունից, թեև առանձին պատգամավորների հետ որոշակի արդյունավետ երկխոսություն է հաստատվել: Հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերը (SLAPP) շարունակում են բացասաբար ազդել քաղաքացիական ակտիվության վրա, իսկ դրանց դեմ պաշտպանության ուղղությամբ քայլեր դեռևս չեն ձեռնարկվել:

Չնայած իրավական երաշխիքներին և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթներին՝ տեղեկատվության հարցումների պատասխանների հետ կապված գործնական

խնդիրները պահպանվում են, քանի որ տեղեկատվության հարցումների պատասխանները շատ դեպքերում լինում են ուշացած, թերի կամ ընդհանրական: Պետական մարմինների կողմից տեղեկատվության հրապարակումը ևս գործնականում հաճախ չի համապատասխանում իրավական պահանջներին: Ակնկալվում է, որ կառավարության կողմից հավանության արժանացած և խորհրդարանում քննարկվող «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագիծը կընդլայնի տեղեկատվության հրապարակման շրջանակը:

2025 թվականի հոկտեմբերին հրապարակված «Հանրային ծառայության մասին» օրենքի փոփոխությունների նախագիծը նպատակ ունի բարելավել պաշտոնյաների՝ որոշումների ընդունման վրա ազդեցություն ունեցող հաղորդակցության թափանցիկությունը: Նախագիծը ԲՀԿ-ների համար հաշվետվության կամ այլ պարտականություններ չի առաջացնում, սակայն որոշ մտահոգություններ կան, որ հաշվետվողականության նոր պահանջները կարող են ինչ-որ չափով հետ պահել պաշտոնյաներին ԲՀԿ-ների հետ փոխազդելուց:

Այս ոլորտի ընդհանուր գնահատականը, ինչպես նաև առաջարկությունների մեծ մասը մնացել է նույնը, ինչ 2024 թվականին էր: Մասնավորապես, Ազգային ժողովին առաջարկվում է մեխանիզմներ ստեղծել պատգամավորների հեղինակած նախագծերի պարտադիր հանրային քննարկման համար և կառավարության հետ միասին ավելի արդյունավետ օգտագործել մասնակցության առկա գործիքները բովանդակալից մասնակցությունն ապահովելու նպատակով՝ ԲՀԿ-ներին ներգրավելով որոշումների կայացման վաղ փուլերում և իրավական հետևանքներ նախատեսելով մասնակցության վերաբերյալ դրույթները չկատարելու համար: Մի շարք առաջարկություններ վերաբերում են տեղեկատվության մատչելիության հետ կապված խնդիրներին՝ կոչ անելով ժամանակին, լիարժեք և որակյալ պատասխաններ տրամադրել և բաց տվյալների սկզբունքով տեղեկատվություն հրապարակել, անվճար հասանելիություն տալ առանցքային պետական տվյալների շտեմարաններին և տեղեկատվության ազատության հարցերով արտադատական անկախ մարմին ստեղծել: Բացի այդ՝ կառավարությանը առաջարկվում է նպաստել ԲՀԿ-ների մասնակցությանը քաղաքականության իրականացման և մշտադիտարկման գործում՝ ինստիտուցիոնալ և ֆինանսական հնարավորություններ ապահովելու միջոցով:

[Չափորոշիչ 1. Յուրաքանչյուր ոք կարող է մասնակցել որոշումների ընդունման գործընթացներին:](#)

Հայաստանում, ըստ օրենքի, յուրաքանչյուր ոք իրավունք ունի մասնակցելու որոշումների կայացմանը, և մի շարք հնարավորություններ կան քաղաքացիների և ԲՀԿ-ների մասնակցության համար: Սակայն մասնակցության պահանջները չկատարելու համար պատասխանատվության մեխանիզմները թերի են:

Ըստ ՀՀ Սահմանադրության՝ քաղաքացիները կարող են որոշում կայացնողներին օրենսդրական նախագծերի նախաձեռնություններ և հանրագրեր ներկայացնել: Մասնավորապես, ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք ունի<sup>115</sup>: 2024 թվականի սեպտեմբերին մեկնարկած և 51 հազարից ավելի ստորագրություն հավաքած քաղաքացիական նախաձեռնության հիման վրա 2025

<sup>115</sup> ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 109:

թվականի մարտին Ազգային ժողովը ընդունեց «Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» օրենքը<sup>116</sup>:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի համաձայն՝ օրենսդրական ակտերի նախագծերը ենթակա են պարտադիր հանրային քննարկման՝ բացառությամբ միջազգային պայմանագրերի վավերացման մասին օրենքի նախագծերի: Հանրային քննարկումները կանոնավոր կերպով տեղի են ունենում առցանց հարթակում ([www.e-draft.am](http://www.e-draft.am)), իսկ իրավաստեղծ մարմնի հայեցողությամբ կարող են կազմակերպվել նաև լրացուցիչ դեմառոյտ հանրային լսումներ, հարցումներ և քննարկումներ: Հանրային քննարկումների տևողությունն առնվազն 15 օր է, իսկ քննարկումների արդյունքները ենթակա են հրապարակման լրամշակված նորմատիվ իրավական ակտի նախագծի հետ միասին: Եթե կառավարություն է ներկայացվել հանրային քննարկում չանցած նախագիծ, ապա կառավարությունը կարող է վերադարձնել այն ներկայացնող մարմին<sup>117</sup>: Այս դրույթները, սակայն, չեն տարածվում Ազգային ժողովի կողմից նախաձեռնված, ինչպես նաև քաղաքացիական նախաձեռնության կարգով առաջադրված օրենսդրական նախագծերի վրա<sup>118</sup>: Բացի այդ՝ ռազմական և արտակարգ դրությանն առնչվող իրավական ակտերը ենթակա չեն պարտադիր հանրային քննարկման, թեև կարող են քննարկման դրվել մշակող կամ ընդունող մարմնի նախաձեռնությամբ<sup>119</sup>:

Պարտադիր հանրային քննարկումների վերաբերյալ դրույթը խախտելու համար վարչական պատժամիջոցներ սահմանված չեն: Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգում նշված է, որ հանրային քննարկումների իրականացման խախտումներ հայտնաբերելու դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են դիմել ինչպես տվյալ պետական մարմին, այնպես էլ ՀՀ արդարադատության նախարարություն պարզաբանում ստանալու նպատակով<sup>120</sup>:

Ըստ Ազգային ժողովի կանոնակարգի՝ խորհրդարանական լսումներ կարող են հրավիրվել ԱԺ նախագահի, մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովի, ինչպես նաև խմբակցության որոշմամբ<sup>121</sup>: 2025 թվականին, նոյեմբերի ավարտի դրությամբ, նախորդ տարվա համեմատ ավելի քիչ խորհրդարանական լսում է կազմակերպվել (վեց լսում՝ ի տարբերություն 2024 թվականի 10 լսումների)՝ հիմնականում մշտական հանձնաժողովների նախաձեռնությամբ<sup>122</sup>: Առաջիկա լսումների մասին տեղեկությունը հրապարակվում է խորհրդարանի կայքում, իսկ լսումները հեռարձակվում են ուղիղ եթերում: Բացի այդ՝ խորհրդարանական

<sup>116</sup> Մանրամասների համար տե՛ս՝ CSO Meter, “Armenia: Following a citizen legislative initiative, National Assembly passed a law to initiate EU accession in first reading” (Հայաստան. Քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության արդյունքում Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունեց ԵՄ անդամակցության գործընթացը սկսելու մասին օրենքը), 03.03.2025, <https://csometer.info/updates/armenia-following-citizen-legislative-initiative-national-assembly-passed-law-initiate-eu>

<sup>117</sup> ՀՀ օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի մասին», 21.03.2018, վերջին փոփ. առ 06.01.2024, հոդվածներ 3 և 4, <https://www.arlis.am/hy/acts/187324>

<sup>118</sup> Նույն տեղում, հոդված 1:

<sup>119</sup> Նույն տեղում, հոդված 27.1:

<sup>120</sup> Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգ, Հավելված ՀՀ կառավարության 2018 թ. հոկտեմբերի 10-ի N 1146-Ն որոշման, <https://www.arlis.am/hy/acts/126002>

<sup>121</sup> ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենք, 16.12.2016, վերջին փոփ. առ 01.08.2025, հոդված 125, <https://www.arlis.am/hy/acts/209968>

<sup>122</sup> Ըստ Ազգային ժողովի կայքի «Լուրեր» բաժնի ուսումնասիրության արդյունքների, <http://parliament.am/news.php?lang=arm>:

հանձնաժողովների կողմից կազմակերպվում են աշխատանքային քննարկումներ ԹՀԿ-ների և փորձագետների հետ հրավերների սկզբունքով:

Տեղական մակարդակում մի շարք իրավակարգավորումներ կան տեղական ինքնակառավարմանը համայնքի անդամների մասնակցության վերաբերյալ: Ըստ օրենքի՝ համայնքի ավագանու նիստերը հրապարակային են, իսկ 3000 և ավել բնակիչ ունեցող համայնքներում դրանք հեռարձակվում են առցանց եղանակով: Հանրային լուսմները պարտադիր են համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի քննարկումների դեպքում<sup>123</sup>: Առցանց մասնակցության հնարավորությունները ևս հասանելի են համայնքային կայքերի միջոցով (օրինակ՝ դիտարկումներ, առաջարկություններ և մասնակցային բյուջետավորման առաջարկներ ներկայացնելու համար):

Հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցադիմումների (SLAPP) վերաբերյալ իրավական դրույթներ չկան: 2025 թվականին հանքարդյունաբերական ընկերությունների կողմից բնապահպան ակտիվիստների դեմ զրպարտության և վիրավորանքի հիմքով հարուցված դատական գործերը շարունակվել են: 2025 թվականի մայիսին Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը (ՉՊՄԿ) գործադուլին մասնակցելու համար դատի տվեց աշխատանքից ազատված ութ աշխատակիցների՝ 4,7 միլիարդ դրամ փոխհատուցման և գույքի վրա արգելանք դնելու պահանջով: Քաղաքացիական հասարակության որոշ խմբեր հայտարարեցին, որ դատական հայցը նպատակ ունի վախեցնել աշխատողներին և Հայաստանի արդյունահանման ոլորտում ճնշել հետագա ակտիվիզմը<sup>124</sup>: Այս հայցը Բիզնեսի և մարդու իրավունքների ռեսուրս կենտրոնի կողմից ճանաչվեց որպես SLAPP<sup>125</sup>: Ընդհանուր առմամբ, այս և մի շարք այլ SLAPP գործեր կաշկանդող ազդեցություն ունեն հանրային շահերի հարցերում հանրության մասնակցության վրա և վտանգում են խոսքի ազատությունը (տե՛ս նաև Ոլորտ 6՝ «խոսքի ազատություն» և Ոլորտ 8՝ «Պետության կողմից պաշտպանության պարտականություն»)<sup>126</sup>:

2025 թվականի մարտին խորհրդարանն ընդունեց «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքը, որն իրավական հիմք է ապահովում հանրային կյանքի բոլոր ոլորտներում երիտասարդության մասնակցության խթանման, երիտասարդական ԹՀԿ-ների հետ պետության համագործակցության, համայնքներում երիտասարդական քաղաքականության ընդունման և համայնքային երիտասարդական կենտրոնների ստեղծման համար<sup>127</sup>: ԹՀԿ-ները նշում են օրենքի մշակման ընթացքում լայնածավալ մասնակցային գործընթացի<sup>128</sup> և առանձին

<sup>123</sup> ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 07.05.2002, խմբ. 16.12.2016, վերջին փոփ. առ 09.08.2025, <https://www.arlis.am/hy/acts/210071>

<sup>124</sup> Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, «Հանքարդյունաբերական ընկերության նախկին աշխատակիցների դեմ հայցը սպառնալիք է բնապահպանական ակտիվիզմին», 24.06.2025, <https://transparency.am/hy/media/news/article/5330>

<sup>125</sup> Business and Human Rights Resource Center, “Eight former employees of Zangezur Copper Molybdenum Combine CJSC (ZCMC)” (Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի (ՉՊՄԿ) ութ նախկին աշխատակիցներ), <https://www.business-humanrights.org/en/latest-news/8w-am-may-2025/>

<sup>126</sup> Հարցազրույցներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ., Տաթևիկ Ղարիբյան, Հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերը Հայաստանում, «Մարդու իրավունքների տուն Երևան» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն, 2025, <https://hrhyerevan.org/wp-content/uploads/2025/01/SLAPPs-report-2025.pdf>

<sup>127</sup> ՀՀ օրենքը «Երիտասարդական քաղաքականության մասին», 05.03.2025, <https://www.arlis.am/hy/acts/204846>

<sup>128</sup> Մանրամասների համար տե՛ս՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, «Երիտասարդական քաղաքականության մասին» նոր օրենքը որպես շրջադարձային փոփոխություն», 18.03.2025, <https://transparency.am/hy/media/news/article/5274>

համայնքներում ՏԻՄ և երիտասարդության միջև հաղորդակցության ակտիվացման մասին, սակայն դեռևս թերահավատորեն են վերաբերվում օրենքի կիրարկման գործընթացին՝ գտնելով, որ փոքր և հեռավոր համայնքներում երիտասարդների կարիքներին սակավ ուշադրություն է դարձվում<sup>129</sup>:

Ընդհանուր առմամբ ՔՀԿ-ները մասնակցության տարբեր փորձառություն են նշում՝ կախված թեմայից, տվյալ պետական մարմնից կամ համայնքից, ինչպես նաև պաշտոնյաների անհատական մոտեցումից: Պաշտոնյաներից շատերն արձագանքում են հանդիպման խնդրանքներին և բաց են երկխոսության համար, և ՔՀԿ-ները հնարավորություն ունեն մասնակցելու պետական մարմինների կողմից կազմակերպվող հանրային քննարկումներին: Օրինակ՝ ի տարբերություն նախորդ տարիների՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունն ավելի հաճախ է հանրային քննարկումներ կազմակերպել 2025 թվականին և ՔՀԿ առաջարկների հանդեպ ավելի բաց մոտեցում է ցուցաբերել, այդ թվում՝ հասարակական խորհրդի նիստերի ընթացքում: Սակայն լայնածավալ դեմաոդեմ հանրային քննարկումները հիմնականում նախաձեռնվում են ՔՀԿ-ների կամ միջազգային կազմակերպությունների, այլ ոչ թե պետական մարմինների կողմից<sup>130</sup>:

ՔՀԿ-ները նշում են նաև, որ չնայած մասնակցության առկա հարթակներին և հնարավորություններին՝ այն երբեմն կարող է ձևական բնույթ կրել, իսկ համապատասխան գերատեսչությունները կարող են հաշվի չառնել իրենց առաջարկները առանց պատշաճ հիմնավորում տրամադրելու: Կան նաև դեպքեր, երբ փաստաթղթերի արդեն իսկ քննարկված ու համաձայնեցված նախագծերը էապես փոխվում են, և նախորդ փուլում ընդունված առաջարկները արտացոլված չեն լինում իրավաստեղծ գործընթացի հաջորդ փուլերում, մասնավորապես՝ խորհրդարանական քվեարկության փուլում: Բացի այդ՝ ՔՀԿ-ները նշում են, որ ընտրողական մոտեցում են նկատել իրավերի մոտեցմամբ կազմակերպվող քննարկումների մասնակիցների ներգրավման հարցում: Նրանք, ովքեր քննադատական կամ բացասական կարծիքներ են արտահայտում, կարող են չիրավիրվել հետագա հանդիպումներին: Առանձին փորձագետներ նշում են կառավարության կողմից որոշ ՔՀԿ-ների նկատմամբ արտոնյալ վերաբերմունքի մասին, օրինակ, երբ վերջիններիս նախընտրությունն է տրվում տեղեկատվության տրամադրման և փակ հանդիպումներին հրավիրելու հարցում, ինչը կասկածի տակ կարող է դնել մասնակցության հնարավորությունների հավասարությունը<sup>131</sup>:

Տեղական մակարդակում մասնակցության և երկխոսության շրջանակն ու արդյունավետությունը հաճախ կախված են տեղական ՔՀԿ-ների ռեսուրսներից ու հաղորդակցվելու և արդյունավետ ներդրում կատարելու փորձագիտական կարողությունից, ինչպես նաև համայնքների ղեկավարների անձնական վերաբերմունքից: Շատ դեպքերում համայնքի բյուջեի և զարգացման ծրագրի վերաբերյալ հանրային լսումները ձևական բնույթ են կրում, քանի որ կազմակերպվում են հիմնականում համայնքային հիմնարկների աշխատակիցների ներգրավմամբ՝ առանց բնակիչների ավելի լայն շրջանակին տեղեկացնելու և ներգրավելու նախաձեռնողական ջանքերի: Եթե մի շարք համայնքներում տեղական իշխանությունները բաց են ՔՀԿ-ներին և հանրությանը ներգրավվելու և նրանց կարծիքը հաշվի

<sup>129</sup> Ֆոկուս խմբային քննարկումներ, սեպտեմբեր 2025 թ.:

<sup>130</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

<sup>131</sup> Նույն տեղում:

առնելու առումով, որոշ այլ համայնքներում մասնակցությունը նվազել է (օրինակ՝ Գյումրիում համայնքային իշխանության փոփոխությունից հետո)<sup>132</sup>:

ՔՀԿ-ները և քաղաքացիները խոչընդոտների են հանդիպում բնապահպանական հարցերի վերաբերյալ տեղական հանրային լուսմներին մասնակցելիս: Հանրային լուսմները օրենքով պարտադիր են այն համայնքներում, որոնք կարող են իրենց շրջակա միջավայրի վրա ազդեցություն կրել առաջարկվող որևէ ծրագրի (շինարարական, արտադրական, հանքարդյունաբերական և այլն) իրականացումից<sup>133</sup>: Սակայն խոշոր տնտեսական շահերը համայնքները խոցելի են դարձնում, քանի որ համայնքապետարաններն ու բնակիչները կարող են ճշման և հետապնդման ենթարկվել հանքարդյունաբերական ընկերությունների կողմից՝ համաձայնություն ձեռք բերելու նպատակով: 2025 թվականի ամենաակնառու օրինակը Քարաբերդ գյուղում տեղի ունեցած հանրային լուսմներն էին. այստեղ վերջին չորս տարիների ընթացքում անցկացվել է տասներկու նման լուսմ՝ հանքի ընդլայնման և շահագործման նոր նախագծերի վերաբերյալ, սակայն բնակիչների կողմից բազմիցս հնչեցված առարկությունները անտեսվել են: Փորձագետների կարծիքով՝ յուրաքանչյուր լուսմից հետո բնակիչների վրա գործադրված ճնշումները աստիճանաբար նվազեցրել են մասնակցությունը, ինչի հետևանքով վերջին լուսմը միայն մի քանի բնակիչ է մասնակցել, որոնցից շատերը արդեն կաշկանդվելով են արտահայտել իրենց դժգոհությունը: ՔՀԿ-ները դատապարտել են այս գործելակերպը՝ այն համարելով ավտորիտար կառավարման բարբերի, ազատ խոսքի ճնշման և սոցիալական ու բնապահպանական իրավունքների շարունակական խախտման օրինակ<sup>134</sup>:

[Չափորոշիչ 2. Վոկա են հստակ, դյուրին և թափանցիկ մեխանիզմներ ու ընթացակարգեր, որոնք նպաստում են ՔՀԿ-ների կանոնավոր, բաց և արդյունավետ մասնակցությանը պետական քաղաքականության մշակման, իրականացման և մոնիտորինգի գործում:](#)

Օրենսդրությամբ մի շարք մեխանիզմներ կան սահմանված հանրային քաղաքականության մշակման գործում հանրության բաց ու կանոնավոր մասնակցության համար: Այդ մեխանիզմները մասնավորապես ներառում են հանրային քննարկման նպատակով միասնական հարթակում իրավական նախագծերի հրապարակումը, հանրային լուսմների կազմակերպումը և խորհրդակցական մարմինների կազմավորումը:

Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) 2022-2024 թվականների գործողությունների ծրագրի<sup>135</sup> և Հայաստանի 2023-2025 թվականների հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության<sup>136</sup> հիման վրա 2024 թվականի դեկտեմբերին ՀՀ վարչապետի աշխատակազմում ստեղծվեց Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչություն՝

<sup>132</sup> Նույն տեղում:  
<sup>133</sup> ՀՀ օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 21.06.2014, վերջին փոփ. առ 09.06.2023, <https://www.arlis.am/hy/acts/178468>  
<sup>134</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ., Քաղիասարակության կազմակերպությունների հայտարարությունը ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում արմատացած հակաժողովրդավարական բարբերի մասին, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 19.08.2025, <https://transparency.am/hy/media/statements/article/5350>  
<sup>135</sup> ՀՀ կառավարության N 1568-Լ որոշումը ««Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», 06.10.2022, փոփ. 09.11.2023, <https://www.arlis.am/hy/acts/185253>  
<sup>136</sup> ՀՀ կառավարության N 691-Լ որոշումը «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը, 2023-2025 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքային շրջանակը հաստատելու մասին», 13.05.2022, փոփ. 11.08.2023, <https://www.arlis.am/hy/acts/181462>

մասնակցային կառավարման գործընթացները խթանելու նպատակով<sup>137</sup>: Նոր վարչության հիմնական գործառույթներից են պետական կառավարման համակարգի մարմինների մասնակցային կառավարման կառուցակարգերի և մեթոդաբանության մշակումը և մշտադիտարկումը, բաց կառավարման ծրագրերի համակարգումը և ՔՀԿ-ների հետ համագործակցության զարգացումը: Վարչության միջոցով կառավարությունը ինստիտուցիոնալացնում է իր ջանքերը հանրային քաղաքականության մշակմանը հանրության մասնակցության ապահովման ուղղությամբ, որը հանրային բարեփոխումների առաջնահերթություններից մեկն է<sup>138</sup>: Այս ջանքերին համահունչ՝ կառավարության կողմից հանրային քննարկմանը ներկայացված ԲԿԳ 2025–2027 թվականների գործողությունների ծրագրի նախագիծը պետական կառավարման համակարգում մասնակցային կառավարման մեխանիզմների զարգացման հանձնառություն է նախատեսում՝ մասնավորապես կարողությունների զարգացման միջոցառումների և պետական մարմինների համար միասնական մասնակցային կառավարման ուղեցույցների ներդրման միջոցով<sup>139</sup>:

Նախարարությունների կանոնադրություններում առանձին դրույթ կա նախարարության առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման ընթացքում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովման նպատակով նախարարին կից հասարակական խորհուրդ ստեղծելու մասին<sup>140</sup>: Հասարակական խորհուրդները կազմավորվում են հայտարարության միջոցով, իսկ անդամակցությունը բաց է համապատասխան փորձ ունեցող բոլոր քաղաքացիների և կազմակերպությունների համար: Յուրաքանչյուր նախարարությունում հասարակական խորհրդի վերջնական կազմի մասին որոշումն ընդունում է նախարարը, որը հանդիսանում է խորհրդի նախագահը: Սակայն գործնականում այդ խորհուրդները միշտ չէ, որ լիարժեք գործում են, և ՔՀԿ-ների կողմից դրանք հաճախ նկարագրվում են որպես ձևական մարմին: Նախարարությունների պաշտոնական կայքերում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականին (հոկտեմբերի դրությամբ) տասներկու նախարարություններից միայն չորսում են ընթացիկ տարում խորհրդի նիստեր գումարվել<sup>141</sup>:

2025 թվականի սեպտեմբերին ՀՀ վարչապետը որոշում է ստորագրել հասարակական խորհուրդների վերաբերյալ նոր կարգավորումների ներդրման վերաբերյալ: Ըստ նոր աշխատակարգի՝ նախարարությունների և կառավարությանը ենթակա մարմինների կողմից մշակված բոլոր ռազմավարությունների, հայեցակարգերի և ծրագրերի նախագծերի ենթակա են հասարակական խորհրդի հետ պարտադիր քննարկման՝ ինչպես գաղափարի ձևավորման փուլում, այնպես էլ իրավական ակտի մշակումից հետո՝ պաշտոնական շրջանառության մեջ

<sup>137</sup> ՀՀ վարչապետի N 1204-L որոշում «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի մայիսի 25-ի N 564-L որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 26.12.2024, <https://www.arlis.am/hy/acts/201524>

<sup>138</sup> Մանրամասների համար տե՛ս՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, «Կառավարության նոր ստորաբաժանումը՝ հանրային մասնակցության և բաց կառավարման խթան», 31.01.2025, <https://transparency.am/hy/media/news/article/5247>

<sup>139</sup> «Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2025-2027 թվականների գործողությունների ծրագիրը (նախագիծ), Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://e-draft.am/projects/9336>

<sup>140</sup> ՀՀ կառավարության N 1552-L որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 22-ի թիվ 624-L որոշման մեջ լրացում կատարելու մասին», 27.12.2018, <https://www.arlis.am/hy/acts/127419>

<sup>141</sup> Աղբյուր՝ ՀՀ կառավարության կայքում թվարկված 12 նախարարությունների պաշտոնական կայքեր, <https://www.gov.am/am/structure/>

ղնելուց առաջ<sup>142</sup>: Աշխատակարգը նաև խորհրդի նիստերին հեռավար մասնակցության հնարավորություն է տալիս. այս անհրաժեշտությունը բազմիցս շեշտվել է մարզային ՔՀԿ-ների կողմից, որոնք դժվարանում են մեկնել Երևան՝ նիստերին անձամբ մասնակցելու համար: Այս կարգավորումը իրավական մակարդակում ամրապնդում է հասարակական խորհուրդների դերը որպես պետություն-ՔՀԿ երկխոսության մասնակցային հարթակ, թեև իմաստալից մասնակցության առումով կարգավորման իրական ազդեցությունը կախված կլինի հետևողական կիրառումից:

Ըստ կառավարության կողմից հաստատված կարգի՝ պետական մարմնի կողմից մշակված նորմատիվ իրավական ակտի նախագծի հանրային քննարկումը պետք է տեղի ունենա հանրային քննարկում իրականացնող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում և Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում ([www.e-draft.am](http://www.e-draft.am))<sup>143</sup>: Նորմատիվ իրավական ակտի նախագծի հետ միասին այստեղ հրապարակվում են իրավական ակտի համառոտ նկարագիրը և հիմնավորումը և հնարավորություն է տրվում նախագծի վերաբերյալ առաջարկներ ներկայացնել, որոնք ևս հրապարակվում են նախագիծը հեղինակած գերատեսչության արձագանքի հետ մեկտեղ: ՔՀԿ-ները գտնում են, որ հարթակը օգտակար է որպես նախագծերի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր և առաջարկներ տրամադրելու ուղի, բայց նշում են հարթակի մի շարք թերություններ, ինչպիսիք են՝ նախագծերի վերանայված տարբերակի չհրապարակելը, հետադարձ կապի բացակայությունը կամ ուշացումը, առաջարկների մերժման դեպքում ոչ բավարար հիմնավորումները և քննարկման կարճ ժամկետը: Առավել կարևոր խնդիր է, որ կատարված փոփոխություններին հետևելու կամ փոփոխված տարբերակների վերաբերյալ կարծիք տրամադրելու մեխանիզմ չկա, այսինքն նախագծերի հետագա ընթացքը տեսնելու համար ՔՀԿ-ները պետք է շարունակաբար հետևեն կառավարության և խորհրդարանի կայքերին կամ անմիջականորեն դիմեն որոշում կայացնողներին, իսկ արդեն ընդունված նախագիծը կարող է էականորեն տարբերվել հանրային քննարկման համար տեղադրված տարբերակից<sup>144</sup>: Որպես դրական զարգացում հարկ է նշել, որ կառավարությունը ներկայումս իրականացնում է e-draft հարթակի արդիականացման աշխատանքներ և նախատեսում է լուծել նշված խնդիրներից մի քանիսը, այդ թվում՝ նախագծերի փոփոխություններին և կարգավիճակին հետևելու հնարավորություն տրամադրել<sup>145</sup>:

Ըստ հանրային քննարկումների կազմակերպման և իրականացման կարգի՝ հանրային լուծումների և հարցումների կազմակերպումը հայեցողական է: ՔՀԿ-ները գտնում են, որ e-draft հարթակում նախագծերի հրապարակումից առաջ պետք է կազմակերպվեն դեմառդեմ քննարկումներ ավելի բովանդակային կարծիք ստանալու համար: Իրավական նախագծի նախնական փուլերում դեմառդեմ քննարկում կազմակերպելու պրակտիկան կախված է

<sup>142</sup> ՀՀ վարչապետի N 835-L որոշումը «Հայաստանի Հանրապետության նախարարներին և կառավարությանը ենթակա մարմինների ղեկավարներին կից հասարակական խորհրդի աշխատակարգը և ձևավորման կարգը հաստատելու մասին», 22.09.2025, <https://www.arlis.am/hy/acts/212663>

<sup>143</sup> Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգ, Հավելված ՀՀ կառավարության 2018 թ. հոկտեմբերի 10-ի N 1146-Ն որոշման:

<sup>144</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

<sup>145</sup> Կառավարության ներկայացուցչի հետ տեղեկատվության ճշտում, սեպտեմբեր 2025 թ., ՀՀ կառավարության N 813-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1146-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», 20.06.2025 (ուժի մեջ է մտնում իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի արդիականացված տարբերակը գործարկելուց հետո), <https://www.arlis.am/hy/acts/208527>

Նախագիծը նախաձեռնող մարմնից: Բացի այդ՝ ԲՀԿ-ները նշում են, որ թեև պետական պաշտոնյաները ուշադիր լսում են իրենց հանրային քննարկումների ընթացքում, նրանց կարծիքը հաճախ հաշվի չի առնվում վերջնաորոշումներում, ինչը բացասաբար է անդրադառնում հետագա մասնակցության մոտիվացիայի և գործընթացի նկատմամբ վստահության վրա<sup>146</sup>: Ընդ որում, դեմառդեմ քննարկումները սովորաբար տեղի են ունենում երևանում առանց առցանց միանալու հնարավորության, ինչը դժվարացնում է մարզային ԲՀԿ-ների մասնակցությունը:

Կառավարության ռազմավարական կառավարման համակարգի վերաբերյալ հայեցակարգի 2024 թվականի քննարկումներից հետո կառավարության որոշմամբ փոփոխություններ տեղ գտան կառավարության աշխատակարգում, որտեղ ռազմավարական կառավարման վերաբերյալ նոր բաժին ավելացավ: Մինչ որոշման ընդունումը նախագիծը հրապարակվել է e-draft հարթակում հանրային քննարկման նպատակով, իսկ 2025 թվականի օգոստոսին քննարկվել է շահագրգիռ կողմերի հետ: Նոր կարգավորման ներքո կառավարությունը սահմանել է վեց առանցքային ռազմավարություն, որոնք հիմք կհանդիսանան մնացած ռազմավարական ծրագրերի համար: Ըստ աշխատակարգի՝ ռազմավարական կառավարման համակարգի հիմքում դրված սկզբունքներից են թափանցիկությունը, հաշվետվողականությունը, փաստահենությունը և ներառականությունը, իսկ ռազմավարության մշակման տարբեր փուլերում պետք է ապահովվի բազմաշահառու ներգրավում ու համագործակցություն<sup>147</sup>: Սակայն, ի տարբերություն 2024 թվականի նախագծի, ընդունված տարբերակը չի մանրամասնում մասնակցության մեխանիզմները և ներառականության չափանիշները: Կառավարության ներկայացուցչի խոսքով՝ այդ մանրամասները հետագայում կհստակեցվեն ուղեցույցների միջոցով<sup>148</sup>:

Օրենսդրության մշակման վաղ փուլերում հանրային խորհրդակցությունների բացը լրացնելու համար ԲՀԿ-ները «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում փոփոխությունների ջատագովություն են նախաձեռնել՝ կառավարության և քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերի հետ շարունակական երկխոսության միջոցով: Առաջարկվող դրույթները հիմնված են ԲՀԿ-ներից ստացած հետադարձ կապի և «ԲՀԿ չափիչ» զեկույցի առաջարկությունների վրա՝ առաջ քաշելով իրավական ակտերի մշակման «վաղ (նախապատրաստական) փուլի» գաղափարը և պարտադիր դեմառդեմ քննարկումներ նախատեսելով հանրային կարևոր նշանակություն ունեցող օրենսդրության դեպքերում՝ միաժամանակ հեռակա մասնակցության հնարավորություն ապահովելու պայմանով:

2025 թվականին պետական մարմիններն ավելի ակտիվ են եղել բյուջեի նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումների կազմակերպման հարցում, իսկ քննարկումների հայտարարությունները և արդյունքները հրապարակվել են ՀՀ ֆինանսների նախարարության հատուկ կայքէջում: Թեև պետական բոլոր գերատեսչությունները պարտավոր են բյուջեի նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ իրականացնել, 2025 թվականին 34 մարմիններից միայն 10-ն են կարողացել հանրությունից կարծիքներ հավաքագրել, ինչը

<sup>146</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

<sup>147</sup> ՀՀ կառավարության N 1342-Լ որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 252-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 18.09.2025, <https://www.arlis.am/hy/acts/212560>

<sup>148</sup> Հարցազրույց, օգոստոս 2025 թ.:

որոշակի առաջընթաց է 2024 թվականին կարծիք հավաքագրած հինգ գերատեսչության համեմատ<sup>149</sup>:

Տեղական մակարդակում հանրության մասնակցությունը, ըստ օրենքի, նախատեսված է մասնավորապես համայնքների զարգացման ծրագրերի, տարեկան բյուջեի և պետական բյուջեից ֆինանսավորման համար կառավարությանը ներկայացվող սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ քննարկումների միջոցով: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը քաղաքացիներին հնարավորություն է տալիս նաև ստորագրահավաքի միջոցով համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ներառել օրենքով սահմանված քանակով ստորագրություններ հավաքագրելու դեպքում<sup>150</sup>:

Վերջին մի քանի տարիներին բազմաթիվ համայնքներում ներդրվել է մասնակցային բյուջետավորման գործընթացը, որտեղ քաղաքացիները հնարավորություն ունեն տեղական բյուջեներից ֆինանսավորվող նախագծերի գաղափարներ առաջարկել և քվեարկել դրանց օգտին<sup>151</sup>: Այս գործընթացին աջակցելու նպատակով 2025 թվականին կառավարությունը սուբվենցիաների միջոցով մեկ միլիոն դրամ հատկացրեց 21 համայնքներին մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով՝ համայնքի բյուջեից առնվազն 20%-ի չափով ներդրում ունենալու պայմանով<sup>152</sup>: Մինևոյն ժամանակ, այլ համայնքներ ևս քաղաքացիների կողմից առաջարկված ծրագրերի իրականացում նախաձեռնեցին համայնքային միջոցների հաշվին: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի փոփոխությունների նախագծում մասնակցային բյուջետավորման մասին դրույթը ներառվել է համայնքի պարտադիր խնդիրների շարքում՝ այդպիսով հիմք ստեղծելով այս գործելակերպի ինստիտուցիոնալացման համար<sup>153</sup>: Այնուամենայնիվ, դեռևս կան մի շարք մարտահրավերներ, այդ թվում՝ քաղաքացիների թերի իրազեկվածությունն ու անբավարար մոտիվացիան, առաջարկներն առցանց ներկայացնելու կամ քվեարկելու համար անհրաժեշտ թվային հմտությունների պակասը, ինչպես նաև պետական սուբսիդիաներից օգտվելու դեպքում բացառապես սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորման հնարավորությունը<sup>154</sup>: ԶԳԿ-ները նաև նշում են, որ գործընթացը վերահսկող հանձնաժողովներում գերակշռում են ՏԻՄ ներկայացուցիչները՝ քաղաքացիական հասարակության նվազ ներգրավմամբ, ինչը ռիսկ է ստեղծում, որ համայնքապետարանները քաղաքացիական նախաձեռնությունների քողի տակ կարող են առաջ տանել իրենց սեփական նախագծերը<sup>155</sup>:

<sup>149</sup> Բյուջետային տեղեկատվության հանրայնացում, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, [https://minfin.am/hy/page/hy\\_government\\_list\\_1](https://minfin.am/hy/page/hy_government_list_1)

<sup>150</sup> ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 07.05.2002, հոդված 14:

<sup>151</sup> Մասնակցային բյուջետավորում, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, [https://minfin.am/en/page/en\\_participatory\\_1](https://minfin.am/en/page/en_participatory_1)

<sup>152</sup> ՀՀ կառավարության N 188-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի N 1890-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 20.02.2025, <https://www.arlis.am/hy/acts/203408>

<sup>153</sup> «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթ, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://e-draft.am/projects/9105/about>

<sup>154</sup> Անկախ հաշվետվական մեխանիզմ, «Արդյունքների վերաբերյալ գեկույց. Հայաստան 2022-2024», Բաց կառավարման գործընկերություն, հունիս 2025, [https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2025/06/Armenia\\_Results-Report\\_2022-2024\\_ARM.pdf](https://www.opengovpartnership.org/wp-content/uploads/2025/06/Armenia_Results-Report_2022-2024_ARM.pdf)

<sup>155</sup> Ֆոկուս խմբային քննարկումներ, սեպտեմբեր 2025 թ.:

Քաղաքականության իրականացման և մշտադիտարկման գործընթացներում մասնակցությունը ապահովող հատուկ իրավակարգավորումներ չկան: Պետական քաղաքականությունների ու ծրագրերի իրականացման, մշտադիտարկման և գնահատման փուլերում ԶԶ-ներին ներգրավելու գործելակերպը սահմանափակ է և հաճախ կախված է ԶԶ-ների նախաձեռնողականությունից և դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի առկայությունից: Ռազմավարական կառավարման աշխատակարգի վերաբերյալ կառավարության որոշումը սահմանում է, որ ռազմավարությունները կարող են ենթարկվել անկախ, այլընտրանքային մշտադիտարկման, և վերջինիս զեկույցները ենթակա են քննարկման համապատասխան աշխատանքային խմբի կողմից<sup>156</sup>: Չնայած ԶԶ-ների այլընտրանքային զեկույցները նախկինում էլ սովորաբար քննարկվել են պետական մարմինների կողմից՝ այս դրույթը կարող է ավելի համակարգային հիմք ապահովել դրանց դիտարկման համար: Քաղաքականության որոշակի ոլորտների, նախագծերի կամ ծրագրերի շուրջ ստեղծված աշխատանքային խմբերը, հանձնաժողովները և բազմաշահառու խմբերը գործակցության հաջողված փորձ են գրանցել, սակայն դեռևս սահմանափակ ընդգրկում և ազդեցություն ունեն (մանրամասների համար տե՛ս Ոլորտ 10՝ «Պետություն-ԶԶ համագործակցություն»):

ՀՀ պետական գրանցում ունեցող ՀՀ-ները և լրատվական գործունեություն իրականացնողները կարող են պատասխանատու պետական ստորաբաժանման հետ միասին մասնակցել գնումների պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացին (եթե գնումները պետական գաղտնիք չեն պարունակում) իրենց դիմումի հիման վրա՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համապատասխան վկայական ստանալուց հետո<sup>157</sup>: 2025 թվականի օգոստոսի դրությամբ 14 ԶԶ և մեկ լրատվական կազմակերպություն վկայական են ստացել՝ հնարավորություն ստանալով մասնակցել պետական գնումների կատարման արդյունքների մոնիտորինգին (2024 թվականի օգոստոսի դրությամբ դրանք երեքն էին)<sup>158</sup>:

### Չափորոշիչ 3. ԶԶ-ներին հասանելի է արդյունավետ մասնակցության համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

ՀՀ օրենսդրությունը տեղեկություններ ստանալու իրավունքին առնչվող հստակ ընթացակարգեր է սահմանում, այդ թվում՝ պետական մարմինների կողմից որոշումների կայացման գործընթացի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու պահանջ: Տեղեկություններ ստանալու իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ<sup>159</sup>: Ըստ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի՝ գրավոր հարցման պատասխանը դիմողին է տրվում հարցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, իսկ եթե հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 օր<sup>160</sup>: Տեղեկությունների տրամադրումը կարող

<sup>156</sup> ՀՀ կառավարության N 1342-Լ որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 252-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 18.09.2025:  
<sup>157</sup> ՀՀ կառավարության N 732-Լ որոշումը «ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 23.05.2024, <https://www.arlis.am/hy/acts/193122>  
<sup>158</sup> Տուգակ պայմանագրի կատարման արդյունքի ընդունման գործընթացին մասնակցելու իրավունք ունեցող հասարակական կազմակերպությունների և լրատվական գործունեություն իրականացնող անձանց վերաբերյալ, 27.08.2025, ֆինանսների նախարարություն ՀՀ գնումների համակարգ, <https://gnumner.minfin.am>, (ներբեռնվել է 2025 թվականի սեպտեմբերին):  
<sup>159</sup> ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 51:  
<sup>160</sup> ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23.09.2003, վերջին փոփ. առ 06.04.2023, հոդված 9, <https://www.arlis.am/hy/acts/175858>

Ե սահմանափակվել ազգային անվտանգության, մասնագիտական գաղտնիության, անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության, հեղինակային իրավունքի և քրեական վարույթի՝ հրապարակման ոչ ենթակա տվյալների, ինչպես նաև սահմանափակ տարածման ծառայողական տեղեկության դեպքում<sup>161</sup>: «Սահմանափակ տարածման ծառայողական տեղեկության» հասկացությունը ներառում է այն տեղեկությունները, որոնք չեն դասվում պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների շարքին, սակայն դրանց տարածումը կարող է բացասաբար անդրադառնալ երկրի «պաշտպանությանը, ազգային անվտանգությանը, արտաքին հարաբերություններին, քաղաքական և տնտեսական շահերին, իրավակարգի պահպանությանը»<sup>162</sup>:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկությունների տրամադրման համար կատարվող գանձումը ներառում է միայն տեխնիկական ծախսերը, ընդ որում գանձում չի կատարվում մինչև 10 Էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս, տեղեկությունն Էլեկտրոնային փոստով տրամադրելիս կամ գրավոր հարցումներին պատասխանելիս<sup>163</sup>: «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի համաձայն՝ տեղեկատվություն տնօրինողների կողմից օրենքով սահմանված տեղեկության ապօրինի չտրամադրելու համար նախատեսվում է տուգանք՝ 30000-70000 դրամի չափով, իսկ մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելու դեպքում՝ 100000-150000 դրամի չափով<sup>164</sup>: Էլեկտրոնային հարցումների միասնական [www.e-request.am](http://www.e-request.am) պետական հարթակը<sup>165</sup> հնարավորություն է տալիս առցանց դիմում, հարցում, բողոք ուղարկել պետական մարմիններին և հետևել դրանց ընթացքին: Պետական տվյալների որոշ շտեմարանների դեպքում կոնկրետ տեղեկություն ստանալու համար վճարներ են սահմանված: Օրինակ՝ պետոռեգիստրից որևէ կազմակերպության մասին տվյալների համար գանձվող վճարը կազմում է 3000 դրամ<sup>166</sup>, ինչը դժվարացնում է դիտորդական և մոնիտորինգի աշխատանքներով զբաղվող ՔՀԿ-ների աշխատանքը<sup>167</sup>:

Օրենքով նախատեսվում է նաև պետության կողմից որոշակի տեղեկությունների պարտադիր հրապարակումը: Պետական մարմինները, մարզպետարանները ու ՏԻՄ-երը առնվազն տարին մեկ անգամ պետք է իրենց կայքում հրապարակեն օրենքով սահմանված տեղեկությունները<sup>168</sup>: Հայաստանը վավերացրել է «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի (ԵԽ) կոնվենցիան, որը տեղեկատվության մատչելիության իրավունքի սահմանափակումների խիստ շրջանակ է սահմանում և նախատեսում է պաշտոնական փաստաթղթերի վերաբերյալ հարցումներին պատասխանելու նվազագույն չափորոշիչներ<sup>169</sup>: Թեև կոնվենցիան բողոքարկման արագ և ոչ թանկ ընթացակարգի պահանջ է նախատեսում, Հայաստանը դեռևս չունի արտադատական անկախ մարմին, որը պատասխանատու կլինի

<sup>161</sup> ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23.09.2003, հոդված 8:

<sup>162</sup> ՀՀ օրենքը «Պետական գաղտնիքի մասին», 01.03.2023, վերջին փոփ. առ 06.04.2025, <https://www.arlis.am/hy/acts/20481>

<sup>163</sup> ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23.09.2003, հոդված 10:

<sup>164</sup> Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրք, 06.12.1985, հոդված 189.7:

<sup>165</sup> Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման կարգ, Հավելված ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշման, վերջին փոփ. առ 28.11.2020, <https://www.arlis.am/hy/acts/147567>

<sup>166</sup> ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին», 27.12.1997, հոդված 20:

<sup>167</sup> Հարկ է նշել, որ գանգվածային լրատվամիջոցների համար այս վճարը հանվել է 2020 թվականին:

<sup>168</sup> ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23.09.2003, հոդված 7:

<sup>169</sup> ՀՀ օրենքը «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան վավերացնելու մասին», 23.03.2022, <https://www.arlis.am/hy/acts/161489>

տեղեկատվության մատչելիության իրավունքի իրացման վերահսկման և վեճերի քննման համար, իսկ դատական ընթացակարգը տեղեկատվության մատչելիության հետ կապված գործերի քննման համար սեղմ ժամկետներ չի նախատեսում<sup>170</sup>:

2025 թվականի օգոստոսին կառավարությունը հավանություն տվեց մի օրենսդրական փաթեթի, որը ներառում է «Հանրային տեղեկությունների մասին», «Կիբեռանվտանգության մասին» և «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» նոր օրենքները, ինչպես նաև հարակից օրենքներում փոփոխությունների և լրացումների նախագիծը, իսկ հոկտեմբերի սկզբին Ազգային ժողովը առաջին ընթերցմամբ քվեարկեց այս փաթեթի օգտին<sup>171</sup>: Ի թիվս այլ նպատակների՝ փաթեթով նախատեսվում է հստակեցնել պետական մարմինների կողմից տվյալների կառավարման կանոնները և հանրային տեղեկությունների հասանելիության կարգավորումները: Նոր օրենսդրության հիման վրա պետական մարմինները պարտավոր կլինեն նախաձեռնողական կերպով հրապարակել ցանկացած տվյալ, որը դասակարգված չէ որպես գաղտնի, ինչը լրատվամիջոցներին և քաղաքացիական հասարակության խմբերին հնարավորություն կտա ավելի արագ ստանալ հաշվետվությունների և մշտադիտարկման համար անհրաժեշտ տեղեկատվությունը: Որպես հետագա քայլ՝ կառավարությունը նախատեսում է համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտեր ընդունել, մասնավորապես՝ «Տեղեկությունների բացահայտման կարգը և շրջանակը սահմանելու մասին» որոշում և այլ ընթացակարգեր, որոնք կխթանեն նոր օրենսդրության կիրարկումը<sup>172</sup>: Մինչև կառավարության կողմից հավանություն ստանալը փաթեթը մի քանի անգամ վերանայվել է, իսկ ՔՀԿ-ների ու փորձագետների առաջարկությունների մեծ մասը՝ հասցեագրվել<sup>173</sup>: Փաթեթով լրացումներ են առաջարկվում նաև «Պետական գաղտնիքի մասին» օրենքում, որտեղ ավելի մանրամասն սահմանում է տրվում «սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն» հասկացությանը և թվարկվում են այն դեպքերը, երբ այս հասկացությունը չի կարող կիրառվել<sup>174</sup>: Այս լրացումները

<sup>170</sup> St' u ևաև՝ Council of Europe, “Baseline Evaluation Report on the implementation of the Council of Europe Convention on access to official documents (CETS No. 205 –Tromsø Convention)-ARMENIA” (Եվրոպայի խորհրդի պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին կոնվենցիայի (CETS № 205 – Տրոմսյոյի կոնվենցիա) իրականացման վերաբերյալ ելակետային գնահատման զեկույց - ՀԱՅԱՍՏԱՆ), 11.03.2025, <https://rm.coe.int/baseline-evaluation-report-armenia/1680b4ad1b>

<sup>171</sup> ՀՀ օրենքը «Հանրային տեղեկությունների մասին», առաջին ընթերցում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, [http://www.parliament.am/draftreading\\_docs8/K-1139-1\\_R1.pdf](http://www.parliament.am/draftreading_docs8/K-1139-1_R1.pdf), ՀՀ օրենքը «Կիբեռանվտանգության մասին», առաջին ընթերցում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, [http://www.parliament.am/draftreading\\_docs8/K-1139\\_R1.pdf](http://www.parliament.am/draftreading_docs8/K-1139_R1.pdf), ՀՀ օրենքը «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին», առաջին ընթերցում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, [http://www.parliament.am/draftreading\\_docs8/K-1139-2\\_R1.pdf](http://www.parliament.am/draftreading_docs8/K-1139-2_R1.pdf): Նշում. Օրենսդրական փաթեթն ամբողջությամբ ընդունվել է խորհրդարանի կողմից 2025 թվականի դեկտեմբերի 4-ին («ՔՀԿ չափի») զեկույցում ներառված ժամանակաշրջանից հետո):

<sup>172</sup> «Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2025-2027 թվականների գործողությունների ծրագիրը, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք:

<sup>173</sup> Մանրամասների համար տե՛ս՝ CSO Meter, “Armenia takes next steps to improve management of public information and cybersecurity in digital public services” (Հայաստանը շարունակում է քայլեր ձեռնարկել հանրային տեղեկությունների կառավարման և թվային հանրային ծառայություններում կիբեռանվտանգության բարելավման ուղղությամբ), 22.09.2025, <https://cso-meter.info/updates/armenia-takes-next-steps-improve-management-public-information-and-cybersecurity-digital>

<sup>174</sup> ՀՀ օրենքը «Պետական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», առաջին ընթերցում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=78882>

կարող են նվազեցնել հայեցողական մեկնաբանության ռիսկը, սակայն հասկացության անտեղի կիրառման վերաբերյալ մտահոգությունները դեռևս պահպանվում են:

Մյուս կողմից, հաշվի առնելով գործնականում շարունակվող խնդիրները, բոլոր տվյալների հրապարակման համընդհանուր կանոնը դժվար թե լիարժեք կերպով կիրառվի մոտ ապագայում: Ըստ փորձագետների և ԶԻԿ-ների՝ պետական մարմիններն ու համայնքապետարանները պատշաճ կերպով չեն հրապարակում անգամ այն տեղեկատվությունը, որն արդեն իսկ պահանջվում է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով: Բացի այդ՝ հրապարակված տեղեկատվությունը սովորաբար մեքենայի համար ոչ ընթերցանելի PDF ձևաչափ է ունենում և չի համապատասխանում բաց տվյալների ու մատչելիության սկզբունքներին: ԶԻԿ-ների կողմից իրականացված՝ Հայաստանի հինգ մարզերի 32 համայնքների կայքերի մոնիտորինգի արդյունքները ցույց են տվել, որ չնայած այդ համայնքների մեծ մասը հրապարակում է համայնքային զարգացման ծրագրերի, բյուջեի, տեղական իրավական ակտերի, ծառայությունների և գույքի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես և պահանջվում է օրենքով, համայնքային կայքերից մի քանիսը այդ պահանջները չեն կատարում: Մինևույն ժամանակ, համայնքների մեծ մասը չէր հրապարակել հնգամյա և տարեկան ծրագրերի իրականացման հաշվետվությունները, խորհրդակցական մարմինների ձևավորման և նիստերի, ինչպես նաև հանրային քննարկումների ընթացակարգի և արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը<sup>175</sup>:

Ինչպես և նախորդ տարիներին, ԶԻԿ-ները նշում են տեղեկատվության հարցումների հետ կապված խնդիրների մասին: Թեև պետական մարմինների մեծամասնությունը պատասխանում է հարցումներին, պատասխանները կարող են ուշացած կամ թերի լինել, կամ չափազանց ընդհանրական տեղեկատվություն են պարունակում՝ չանդադառնալով հարցման մեջ նշված բոլոր կետերին: Հաճախ ԶԻԿ-ները զանգահարում են իրենց հարցման հետքերով, որպեսզի գերատեսչությունից պատասխան ստանան: ԶԻԿ-ները նշում են, որ հարցումներին ավելի քիչ են արձագանքում հատկապես ՏԻՄ-երը և տարածքային կառավարման մարմինները, այդ թվում՝ տեխնիկական խնդիրների պատճառով, թեև այս փորձառությունը տարբեր է համայնքից համայնք<sup>176</sup>: Դեպքեր են լինում, երբ պետական մարմինները առանց պատշաճ հիմնավորման օգտվում են պատասխանը 30 օրով հետաձգելու հնարավորությունից, իսկ վերջում մերժում են տեղեկատվության տրամադրումը<sup>177</sup>: Այս խնդիրները հատկապես բնորոշ են իրավապահ, ռազմական և անվտանգության ոլորտներում աշխատող պետական մարմինների, ինչպես նաև մարզպետարանների ու ՏԻՄ-երի դեպքում, որոնք կարող են մերժել հարցումները, ուշացնել պատասխանը կամ ընդհանրապես պատասխան չտրամադրել<sup>178</sup>:

Դատավարության տևական ընթացակարգի և վարչարարության պատճառով հարցումների պատասխանների բողոքարկումը դատարանում անարդյունավետ է համարվում, և անգամ

<sup>175</sup> Էլեկտրոնային հաղորդակցություն «Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ ներկայացուցչի հետ, սեպտեմբեր 2025 թ.:

<sup>176</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

<sup>177</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ., Ինֆորմացիայի ազատության կենտրոն, «ՍԵՎ ՑՈՒՑԱԿ 2025 թ. 2-րդ եռամսյակ. տեղեկություն ստանալու իրավունքի խախտումներ», 08.07.2025, <https://foi.am/news-events/38716>

<sup>178</sup> Հեյսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, «Պետական կառույցների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթների պահպանումը՝ ըստ ՀԶԱ Վանաձորի գրասենյակի 2024 թվականի տեղեկատվական հարցումների տվյալների», 25.03.2025, <https://hcav.am/report-inf-25-03-2025/>

դրական ելքի դեպքում տրամադրված տեղեկատվությունը հաճախ կարող է լինել հնացած կամ այլևս ոչ պիտանի<sup>179</sup>:

ՔՀԿ-ներն ակնկալում են, որ տեղեկատվության հրապարակման որակը կբարելավվի կառավարության կողմից պաշտոնական կայքերի բարելավման և տեղեկատվության հրապարակման չափորոշիչների սահմանման ուղղությամբ ձեռնարկվող քայլերի, ինչպես նաև «Հանրային տեղեկությունների մասին» նոր օրենքի շնորհիվ: Ներկայումս պետական կայքերի մեծ մասն արդիականացվել է, սակայն ոչ բոլորն են լիարժեք գործում և համապատասխանում մատչելիության չափանիշներին<sup>180</sup>: 2024 թվականին երեք պետական գերատեսչությունների կողմից ինքնազնահատման մեթոդաբանության փորձարկումից հետո 2025 թվականին այս մեթոդաբանությունը տարածվեց նաև այլ պետական մարմինների վրա, որոնք ինքնազնահատում իրականացրին և միասնական ձևաչափով հրապարակեցին հարցումների վիճակագրության վերաբերյալ իրենց հաշվետվությունները<sup>181</sup>:

#### Չափորոշիչ 4. Մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին տարբերվում է քաղաքական և լոբբիստական գործունեությունից:

Հանրային քաղաքականության գործընթացում ՔՀԿ-ների մասնակցության խոչընդոտներ չկան: Միևնույն ժամանակ, հասարակական կազմակերպությունները չեն կարող հետամուտ լինել այնպիսի նպատակների, որոնք վերապահված են հասարակական միավորումների այլ տեսակներին, օրինակ՝ քաղաքական կուսակցություններին<sup>182</sup>: Կուսակցությունների նպատակները սահմանված են որպես «հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելը»<sup>183</sup>:

Հայաստանում լոբբիստական գործունեության վերաբերյալ օրենքներ չկան: Հակակոռուպցիոն ռազմավարության և 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի համաձայն մինչև 2025 թվականի ավարտը նախատեսվել է լոբբիստական գործունեության թափանցիկության վերաբերյալ կարգավորումների մշակումը<sup>184</sup>: Այս դրույթի հիման վրա ՀՀ արդարադատության նախարարությունը մշակեց օրենսդրական փոփոխությունների նախագծի փաթեթ, ըստ որի՝ պետական պաշտոնյաները պարտավոր են տեղեկացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հետ ցանկացած բանավոր կամ գրավոր ուղիղ կամ միջնորդավորված հաղորդակցության մասին, որն ուղղված է իրավաստեղծ կամ ռազմավարական

<sup>179</sup> Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ, «Տեղեկատվության ազատությանն առնչվող խնդիրները Հայաստանի Հանրապետությունում», <https://ldpf.am/uploads/files/c6e6d078c1c6e6d948c317374cdade30.pdf>:

<sup>180</sup> Տեղեկատվության ճշտում «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» և ««Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ-ների ներկայացուցիչների հետ, սեպտեմբեր 2025 թ.:

<sup>181</sup> Տեղեկատվության ճշտում կառավարության ներկայացուցիչի հետ, սեպտեմբեր 2025 թ., Ինֆորմացիայի ազատության կենտրոն, «Հաջողության պատմություն 46. ԻԱԿ մշակած SU ինքնազնահատման համակարգը ներդրվել է պետական մարմիններում», 12.12.2024, [https://foi.am/success\\_stories/37374](https://foi.am/success_stories/37374)

<sup>182</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 3:

<sup>183</sup> ՀՀ Սահմանադրական օրենքը «Կուսակցությունների մասին», 16.12.2016, վերջին փոփ. 14.07.2022, հոդված 2, <https://www.arlis.am/hy/acts/204213>

<sup>184</sup> Հակակոռուպցիոն ռազմավարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, <https://www.moi.am/page/583> (Հավելված «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1871-L որոշման, 26.10.2023, <https://www.arlis.am/hy/acts/184674>)

փաստաթղթերի մշակման գործունեությանը՝ որոշ բացառություններով, ինչպիսիք են օրինակ՝ հանրային քննարկման ընթացքում կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից իրենց իրավունքների պաշտպանության և իրացման հետ կապված հաղորդակցությունը<sup>185</sup>: 2025 թվականի հուլիսին նախարարությունը առաջարկվող կարգավորումները ներկայացրեց ԶՅԿ-ներին,<sup>186</sup> ապա հանրային քննարկման նպատակով հրապարակեց «Հանրային ծառայության մասին» օրենքի վերանայված նախագիծը, որը վերաբերում է միայն գործադիր օղակի բարձրաստիճան պետական պաշտոնյաներին<sup>187</sup>: Ընդհանուր առմամբ փորձագետները առաջարկվող փոփոխությունները դրական են համարում լոբբինգի թափանցիկության բարելավման տեսանկյունից՝ նշելով, որ դրանք ԶՅԿ-ների վրա լրացուցիչ բեռ չեն դնում: Այնուամենայնիվ, փոփոխությունների գործնական ազդեցությունը դեռ պարզ չէ: Մտահոգություն կա, որ հաշվետվողականության նոր պարտավորությունները կարող են բացասաբար ազդել որոշ պաշտոնյաների՝ քաղաքացիական հասարակության հետ համագործակցելու պատրաստակամության վրա, կամ կաշկանդել ԶՅԿ-ների հետ երկխոսությունը զգայուն հարցերի (օրինակ՝ սեռական փոքրամասնությունների իրավունքների) շուրջ քննարկումների դեպքում հրապարակայնությունից խուսափելու պատճառով<sup>188</sup>:

Գործնականում ԶՅԿ-ները կարող են ներգրավվել քաղաքականության մշակման գործընթացում և ջատագովության գործողություններում՝ առանց հատուկ կարգավիճակ ունենալու կամ գրանցվելու անհրաժեշտության: ԶՅԿ-ներին չեն հալածում կամ հետապնդում քաղաքական կուսակցությունների շահերին սատարող կամ այլընտրանքային տեսակետների համար: Սակայն անհատները իրենց քաղաքական հայացքների համար կարող են ատելության խոսքի և վիրավորանքի թիրախ դառնալ (տե՛ս նաև Ոլորտ 6՝ «խոսքի ազատություն»):

### Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- ԶԶ Ազգային ժողովին՝ մեխանիզմներ նախատեսել ԱԺ պատգամավորների հեղինակած նախագծերի պարտադիր հանրային քննարկումներն իրականացնելու և իրավական նախագծերի նախնական գաղափարների քննարկման, ինչպես նաև կառավարության կողմից ներկայացված նախագծերի վերանայման ավարտական փուլերում ԶՅԿ-ներին ներգրավելու (այդ թվում՝ մշտական հանձնաժողովների մակարդակով մասնակցության) համար:
- Պետական մարմիններին՝ օգտագործել մասնակցության առկա և նոր ինստիտուցիոնալ մեխանիզմները և ապահովել բովանդակալից մասնակցություն, այդ թվում՝ ներգրավել ԶՅԿ-ներին քաղաքականության մշակման վաղ փուլերում, հասցեագրել e-draft հարթակի խնդիրները և վիճակագրություն կազմել պետական մարմինների կողմից իրականացվող մասնակցային գործընթացների և առաջարկների ներառման վերաբերյալ, բավարար

<sup>185</sup> Տեղեկատվության ճշտում ԹԻՅԿ և Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի ներկայացուցիչների հետ:

<sup>186</sup> Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, «Արդարադատության նախարարության կողմից ներկայացվել են լոբբիստական գործունեության վերաբերյալ առաջարկվող կարգավորումները», 29.07.2025, <https://moj.am/article/4428>

<sup>187</sup> «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ, իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://e-draft.am/projects/9275>

<sup>188</sup> Խորհրդատվական խորհրդի հանդիպում, 31 հոկտեմբերի 2025 թ., տեղեկատվության ճշտում փոքրամասնությունների իրավունքները պաշտպանող ԶՅԿ-ի ներկայացուցչի հետ, նոյեմբեր 2025 թ.:

Ժամանակ տրամադրել քննարկումների համար և ավելի հաճախ դեմառդեմ քննարկումներ կազմակերպել, այդ թվում՝ մարզերում, հնարավորինս հաշվի առնել և ներառել ՔՀԿ-ների փաստահեն և հիմնավորված առաջարկությունները:

- ՀՀ կառավարությանը՝ ընդլայնել ՔՀԿ-ների մասնակցությունը քաղաքականության իրականացման և մշտադիտարկման փուլերում, այդ թվում՝ բազմաշահառու և աշխատանքային խմբերի շարունակական գործունեության, ՔՀԿ-ներին մշտադիտարկում պատվիրակելու նպատակով բյուջեի հատկացումների, ինչպես նաև այլ ինստիտուցիոնալ մեխանիզմների միջոցով՝ ապահովելու հանրային մասնակցությունը օրենքների, քաղաքականությունների և ռազմավարությունների ընդունմանը հաջորդող փուլերում:
- ՀՀ կառավարությանը և Ազգային ժողովին՝ իրավական հետևանքներ նախատեսել հանրային քննարկումների և խորհրդակցական մարմինների վերաբերյալ դրույթները չկատարելու համար (օրինակ՝ իրավական ակտն անվավեր ճանաչելու հնարավորություն):
- Պետական մարմիններին՝ օրենքով նախատեսված ժամկետներում լիարժեք պատասխաններ տալ ՔՀԿ-ների հարցումներին և ապահովել պաշտոնական կայքերում տեղեկությունների ժամանակին հրապարակումը և շարունակական թարմացումը:
- ՀՀ կառավարությանը և Ազգային ժողովին՝ իրավական միջոցառումներ ապահովել տեղեկատվության մատչելիությունը բարելավելու համար, այդ թվում՝ տեղեկատվության ազատության հարցով արտադատական անկախ մարմին ստեղծել, ավելի սեղմ ժամկետներ նախատեսել տեղեկատվության ազատության իրավունքին վերաբերող գործերի քննության համար այս իրավունքի արդյունավետ պաշտպանությունը հնարավոր դարձնելու համար, «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքից հանել «սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն» հասկացությունը:
- ՀՀ կառավարությանը՝ ապահովել «Հանրային տեղեկությունների մասին» նոր օրենքի արդյունավետ կիրառումը դրա ընդունումից հետո՝ ներդնելով կիրարկման հստակ կանոնակարգեր, բարելավելով տվյալները հրապարակելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տեխնիկական կարողությունները և ապահովելով, որ տեղեկատվությունը ժամանակին և լիարժեք հրապարակվի և հասանելի լինի բաց տվյալների սկզբունքներին համապատասխան ձևաչափով:
- ՀՀ արդարադատության նախարարությանը՝ ապահովել պետոռեգիստրի կայքում առկա գրանցամատյանի, ինչպես նաև պետության կողմից տնօրինվող այլ տեղեկատվական բազաների անվճար հանրային հասանելիությունը հանրության մասնակցությունն ու վերահսկողությունը խթանելու նպատակով:

### 3.6 Խոսքի ազատություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4.7/7

Իրավական դաշտ՝ 5.2/7	Գործնական դաշտ՝ 4.2/7
-------------------------	--------------------------

Խոսքի ազատության և կարծիք արտահայտելու իրավունքը երաշխավորված է օրենսդրությամբ և կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ որոշակի նպատակների ներքինակում: Ըստ օրենքի՝ լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի ազատության և բազմակարծության սկզբունքների հիման վրա: Արգելվում է գրաքննությունը, լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելը և խտրականությունը: Բացառությամբ հեռուստառադիոընկերությունների՝ լրատվամիջոցները կարող են իրենց գործունեությունն իրականացնել առանց գրանցման և լիցենզավորման պահանջի: 2022 թվականին համագործակցության հուշագրով ամրագրված և տարիներ շարունակ քննարկվող մեդիա օրենսդրության բարեփոխումները դեռևս շոշափելի առաջընթաց չեն ունեցել, իսկ լրատվամիջոցների ինքնակարգավորման մեխանիզմների վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները դեռ նախագծի փուլում են: 2025 թվականին կառավարությունը զանգվածային լրատվության միջոցների (ՉԼՄ) վերաբերյալ օրենքներում և Քաղաքացիական օրենսգրքում փոփոխությունների մի շարք նախագծեր ներկայացրեց գրպարտության վերաբերյալ կարգավորումներն արդիականացնելու, առցանց բովանդակության համար պատասխանատվություն սահմանելու և հեռարձակողների նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնելու նպատակով:

Անկախ լրատվամիջոցները 2025 թվականին կայունության պահպանման լուրջ խնդրի առջև կանգնեցին ԱՄՆ աղբյուրներից աջակցության կորստի պատճառով, թեև այս բացը հետագայում լրացվեց ԵՄ և այլ դոնորների աջակցությամբ: Միևնույն ժամանակ, կառավարությունը հեռարձակող ՉԼՄ-ներին աջակցելու նպատակով հիմնադրամ ստեղծեց՝ քննադատության արժանանալով առցանց լրատվամիջոցներին անտեսելու համար:

Լրագրողներն ու լրատվամիջոցները գործում են խիստ բևեռացված քաղաքական միջավայրում, որը բնութագրվում է վիրավորական խոսքով, գրպարտչական արշավներով և երբեմն անգամ ֆիզիկական հարձակումներով: Սոցիալական ցանցերում գրառումների և հրապարակային հայտարարությունների համար հարուցված քրեական գործերը՝ հարկադիր ամենախիստ միջոցների կիրառմամբ, մտահոգություններ են առաջացրել այլախոհությունը զսպելու նպատակով քրեական օրենսդրության կիրառման վերաբերյալ: Ատելության խոսքի դեմ պատժամիջոցների կիրառումը ընկալվում է որպես ընտրողական, քանի որ իրավապահ մարմինները ավելի հաճախ հակված են պաշտպանելու պաշտոնյաներին, այլ ոչ թե խոցելի խմբերին կամ քննադատական խոսք արտահայտողներին: Թշնամական մթնոլորտը զսպող ազդեցություն է ունեցել կարծիքի արտահայտման վրա. շատ ակտիվիստներ և ԶԳԿ-ներ դիմում են ինքնագրաքննության՝ խուսափելու հարձակումներից կամ քաղաքական կողմնակալության

մեղադրանքներից, սակայն դրա հետ միասին քաղաքացիական հասարակությունը քննադատվում է նաև զգայուն հարցերի շուրջ լռելու համար:

Չուգահեռաբար, կառավարությունը ապատեղեկատվության դեմ պայքարի ուղղությամբ քայլեր է ձեռնարկում, այդ թվում՝ ՀՀ վարչապետի աշխատակազմում ռազմավարական հաղորդակցության վարչության ստեղծման և «Ապատեղեկատվության դեմ պայքարի ազգային հայեցակարգի» շրջանակներում մեդիագրագիտության մակարդակի բարձրացման, պետական ծառայողների վերապատրաստման և հանրային իրազեկման շարունակվող աշխատանքների միջոցով:

Հաշվի առնելով խոսքի ազատության ընդհանուր միջավայրի վատթարացումը, ներառյալ հարուցված քրեական գործերը՝ այս ոլորտում գործնական դաշտի գնահատականը նախորդ տարվա 4,3 միավորի փոխարեն դարձել է 4,2 միավոր՝ հանգեցնելով ոլորտի ընդհանուր գնահատականի նվազմանը 4,8 միավորից 4,7 միավոր: Առանցքային առաջարկությամբ պետական մարմիններին և պաշտոնատար անձանց կոչ է արվում պահպանել խոսքի ազատության չափորոշիչները, խթանել բաց և հարգալից հանրային երկխոսության մշակույթ և պատասխանատու հաղորդակցությունն ապահովել լրատվամիջոցների հետ: Բացի այդ, ինչպես նախորդ զեկույցներում, առաջարկվում է շարունակել համակարգային երկխոսությունը ՔՀԿ-ների և լրատվամիջոցների հետ ՉԼՄ-ների հետ կապված օրենսդրության շուրջ, արդար և համաչափ մոտեցում կիրառել ատելության խոսքի և բռնության կոչերի հիմքով քրեական գործերում՝ խուսափելով ընտրողական կիրառումից, և ամրապնդել ապատեղեկատվության դեմ պայքարի ինստիտուցիոնալ ջանքերը՝ բարելավելով աշխատանքների թափանցիկությունը, ներառականությունը և հաշվետվողականությունը:

[Չափորոշիչ 1. Յուրաքանչյուր ոք կարծիք արտահայտելու և խոսքի ազատության իրավունք ունի:](#)

ՀՀ օրենսդրությունը երաշխավորում է յուրաքանչյուրի՝ խոսքի ազատության և իր կարծիքն արտահայտելու իրավունքը: Ըստ ՀՀ Սահմանադրության՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, որը ներառում է առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով: Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը ևս երաշխավորվում է ՀՀ Սահմանադրությամբ<sup>189</sup>:

Ըստ «Չանգվածային լրատվության մասին» օրենքի՝ լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի ազատության և բազմակարծության սկզբունքների հիման վրա: Արգելվում է գրաքննությունը, լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը և խտրականությունը: Օրենքը սահմանափակում է գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաև այնպիսի տեղեկատվության

<sup>189</sup> ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 42:

տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը<sup>190</sup>: Չանգվածային լրատվության միջոցները պատասխանատվություն են կրում չնույնականացվող աղբյուրի տարածած տեղեկատվության վերարտադրության համար<sup>191</sup>:

Լրատվական միջոցները թողարկվում և տարածվում են առանց նախնական կամ ընթացիկ պետական գրանցման, լիցենզավորման, պետական կամ որևէ այլ մարմնում հայտարարագրման կամ որևէ մարմնի ծանուցման<sup>192</sup>: Լիցենզավորման պահանջը վերաբերում է բացառապես ռադիո և հեռուստաընկերություններին: «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքը կանոնակարգում է հեռարձակող լրատվամիջոցների գործունեությունը, այդ թվում՝ դրանց հեղինակագրման, լիցենզավորման կարգը, իրավունքներն ու պարտականությունները<sup>193</sup>:

Մեդիա կազմակերպությունների, ԱԺ ոլորտային մշտական հանձնաժողովի և ՀՀ արդարադատության նախարարության միջև 2022 թվականին ստորագրված հուշագրի հիման վրա մշակվում է մեդիա ոլորտի բարեփոխումների հայեցակարգը: Սակայն բարեփոխումների իրականացումը մեծ հաշվով կանգ է առել<sup>194</sup>: «Չանգվածային լրատվության մասին» օրենքում և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխությունների 2023-2024 թվականներին քննարկված նախագծերը, որոնք ուղղված էին Հայաստանի մեդիա ոլորտի իրավական շրջանակը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն և լրատվամիջոցների բարեվարքությունն ու հաշվետվողականությունը ամրապնդելու համար ինքնակարգավորման մեխանիզմների ներդրմանը, 2025 թվականի սեպտեմբերի դրությամբ որևէ առաջընթաց չեն ունեցել<sup>195</sup>: Այս կարգավորումները կարող էին որոշ չափով հասցեագրել մի շարք լրագրողների և լրատվամիջոցների կողմից էթիկական և մասնագիտական նորմերի շարունակական խախտումների հետ կապված առկա խնդիրները<sup>196</sup>:

Թեև «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության գնահատականներում երկրի վարկանիշը 71,60-ից բարձրացել է մինչև 73,96, ըստ այս զեկույցի, չնայած բազմակարծության միջավայրին և լրատվամիջոցների ազատ գործունեությանը, Հայաստանի լրատվական դաշտը շարունակում է քաղաքական բևեռացման, լրագրողների դեմ ուղղված գրպարտչական արշավների և անկախ լրատվամիջոցների կայունության խնդիրների ազդեցության տակ մնալ<sup>197</sup>: 2025 թվականի հունվարին ԱՄՆ աջակցության դադարեցումը լուրջ վնաս հասցրեց հայաստանյան լրատվամիջոցներին, քանի որ բազմաթիվ անկախ ՉԼՄ-ներ և լրագրողական

<sup>190</sup> ՀՀ օրենքը «Չանգվածային լրատվության մասին», 13.12.2003, վերջին փոփ. առ 21.06.2022, հոդված 7, <https://www.arlis.am/hy/acts/164454>

<sup>191</sup> Ըստ օրենքի՝ «չնույնականացվող աղբյուրը» սահմանվում է որպես համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող կայք կամ համացանցային կայքի կամ հավելվածի օգտահաշիվ կամ այլք կամ էջ, որի տնօրինողի նույնականացման տվյալները բացակայում են կամ ակնհայտ կեղծ են կամ թերի են, եթե այդ թերությունը թույլ չի տալիս նույնականացնել աղբյուրը տնօրինողին:

<sup>192</sup> ՀՀ օրենքը «Չանգվածային լրատվության մասին», 13.12.2003, հոդված 4:

<sup>193</sup> ՀՀ օրենքը «Տեսալսողական մեդիայի մասին», 16.07.2020, վերջին փոփ. առ 14.08.2025, <https://www.arlis.am/hy/acts/210224>

<sup>194</sup> Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, «Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2025 թ. երկրորդ եռամսյակային զեկույց», 22.07.2025, <https://khosq.am/reports/hայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-41/>

<sup>195</sup> Հարցազրույց, սեպտեմբեր 2025 թ.:

<sup>196</sup> Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2025 թ. եռամսյակային զեկույցներ, <https://khosq.am/reports>

<sup>197</sup> Reporters Without Borders, Armenia (2025) (Հայաստան 2025), <https://rsf.org/en/country/armenia>

կազմակերպություններ կորցրեցին ԱՄՆ ՄՉԳ-ի կողմից հատկացվող զգալի ֆինանսավորումը, ինչը ստիպեց նրանց կասեցնել նախագծերը և կրճատել անձնակազմը<sup>198</sup>: Այնուամենայնիվ, նրանցից շատերը կարողացան լրացնել այս բացը տարվա վերջում՝ այլ դոնորների, մասնավորապես Ժողովրդավարության աջակցության եվրոպական հիմնադրամի և ԵՄ աջակցության շնորհիվ<sup>199</sup>:

Թեև կառավարությունը որևէ անմիջական քայլ չձեռնարկեց աջակցելու ճգնաժամային իրավիճակում գտնվող առցանց լրատվամիջոցներին, 2025 թվականի ապրիլին կառավարության որոշմամբ տեսալսողական ծրագրերում հանրօգուտ բովանդակությանը աջակցելու նպատակով ստեղծվեց հիմնադրամ, որը պետական դրամաշնորհներ է տրամադրելու հանրային մոլտիպլեքսում գործող լիցենզավորված հեռարձակողներին՝ հիմնվելով դիտելիության մասսայականության գնահատումների վրա<sup>200</sup>: Լրագրողական կազմակերպությունները գտնում են, որ այս որոշումը կասկածի տակ է դնում լրատվական դաշտի աջակցության օպտիմալ մոդելի քննարկման ուղղությամբ համատեղ աշխատանքը, ինչպես նաև խտրական մոտեցում է ցուցաբերում՝ աջակցություն տրամադրելով միայն հանրային մոլտիպլեքսի հեռուստատարիներին և բացառելով առցանց լրատվամիջոցները, և կոչ են արել կառավարությանը ժամանակավորապես կասեցնել որոշման կատարումը և հայեցակարգային մոտեցումներ և սկզբունքներ մշակել՝ ամբողջ մեդիա ոլորտի զարգացման և այդ նպատակով պետական աջակցություն տրամադրելու համար<sup>201</sup>: Այնուհետև 2025 թվականի հոկտեմբերին խորհրդարանը արագացված ընթացակարգով ընդունեց «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրինագիծը՝ կրճատելով հանրային հեռարձակողների նվազագույն քանակը և հանելով կրթական-մշակութային ուղղվածության ծրագրերով հանրային հեռարձակող ունենալու պահանջը<sup>202</sup>: Լրատվական կազմակերպությունները քննադատեցին այս նախաձեռնությունը որպես չհիմնավորված և քաղաքական նպատակահարմարություն ունեցող՝ նկատելով, որ այն, ըստ Էուրոպայի, ուղղված է Հայ Առաքելական Եկեղեցու հեռուստատարիքի դեմ՝ եկեղեցու և կառավարության միջև քաղաքական լարվածության ֆոնին<sup>203</sup>:

Քաղաքական բևեռացման և նախընտրական տարվա լարվածության ֆոնին 2025 թվականին շարունակվել են լրագրողների նկատմամբ հարձակումները, վիրավորանքները և իրավական

<sup>198</sup> Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, «Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2025 թ. առաջին եռամսյակային զեկուլց», 23.04.2025, <https://khosq.am/reports/hայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-40/>, Tigran Grigoryan, “The impact of U.S. aid cuts on Armenia’s civil society and media” (ԱՄՆ օգնության կրճատման ազդեցությունը Հայաստանի քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների վրա), CivilNet, 17.03.2025, նշված տեղում:

<sup>199</sup> Խորհրդատվական խորհրդի հանդիպում, 31 հոկտեմբերի 2025 թ., European Council, Joint press release: EU and Armenia reaffirm and advance their partnership during a Leaders’ meeting (Համատեղ մամուլի հաղորդագրություն. ԵՄ-ն և Հայաստանը վերահաստատում և խթանում են իրենց գործընկերությունը առաջնորդների հանդիպման ժամանակ), 14.07.2025, <https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2025/07/14/joint-press-release-eu-and-armenia-reaffirm-and-advance-their-partnership-during-a-leaders-meeting/>

<sup>200</sup> ՀՀ կառավարության N 742-Ա որոշումը ««Հանրօգուտ մեդիամիջավայր» հիմնադրամ ստեղծելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին», 17.04.2025, <https://www.arlis.am/hy/acts/208028>

<sup>201</sup> Լրագրողական կազմակերպությունների հայտարարությունը Կառավարության՝ «Հանրօգուտ մեդիամիջավայր» հիմնադրամ ստեղծելու որոշման առնչությամբ, Հանրային լրագրության ակումբ, 22.04.2025, <https://pic.am/iragrohakan-kazmakerputyunneri-haytararutyune-karavarutyanyan-himnadram-steghtselu-oroshman-arnchutyamb>

<sup>202</sup> ՀՀ օրենքը ««Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», 24.10.2025, <https://www.arlis.am/hy/acts/215601>

<sup>203</sup> Լրագրողական կազմակերպությունների հայտարարություն, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 27.10.2025, <https://khosq.am/2025/10/20/hայտարարություն-140/>

ճշումները: Գերբաղաբանականացված լրատվական միջավայրում ընդդիմադիր քաղաքական գործիչների կողմից իշխանամետ լրատվամիջոցների, իսկ իշխանության ներկայացուցիչների կողմից՝ ընդդիմադիր լրատվամիջոցների նկատմամբ վերաբերմունքը հաճախ թշնամական է և երբեմն վերածվում է բաց հակամարտության: Պատգամավորների կողմից լրագրողներին վիրավորելու և նրանց աշխատանքը խոչընդոտելու դեպքերը մեծ մասամբ անարձագանք են մնացել՝ նպաստելով անպատժելիության մշակույթի: Լրագրողական կազմակերպությունները բազմիցս կոչ են արել պատասխանատվության մեխանիզմներ, օրինակ՝ Էթիկայի հարցերով խորհրդարանական հանձնաժողով ստեղծել, սակայն այդ ուղղությամբ կոնկրետ քայլեր չեն ձեռնարկվել<sup>204</sup>: Անկախ և հետաքննող լրատվամիջոցները նույնպես հայտնվում են բարձրաստիճան պաշտոնյաների կողմից զրպարտչական արշավների և վիրավորանքների թիրախում, այդ թվում՝ կողմնակալության, կոռուպցիայի և պրոֆեսիոնալիզմի բացակայության մեղադրանքներով: Նման հռետորաբանությունը լայնորեն դատապարտվել է մեդիա կազմակերպությունների կողմից՝ որպես լրատվամիջոցների անկախության և խոսքի ազատության խաթարում, որը բերում է անկախ լրագրության համար թշնամական միջավայրի ստեղծմանը: Վերջին տարվա ընթացքում առկա օրինակներից են բարձրաստիճան պաշտոնյաների կողմից «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությանը հրապարակավ մեղադրելը կեղծ լուրեր տարածելու և միակողմանի լրատվության համար, ինչպես նաև Երևանի քաղաքապետի կողմից կոռուպցիայի վերաբերյալ հաղորդումներին ի պատասխան հետաքննող լրատվամիջոցներին բազմիցս վիրավորելն ու վարկաբեկելը<sup>205</sup>:

Տարվա ընթացքում տեղի են ունեցել նաև լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության մի շարք դեպքեր: 2025 թվականի սեպտեմբերին մի լրագրող դիմակավորված անձի կողմից հարձակման է ենթարկվել փողոցում սոցիալական ցանցերում քաղաքապետարանի պաշտոնյաներին կոշտ քննադատելուց և ապա քաղաքապետարանի բարձրաստիճան պաշտոնյայի կողմից սպառնալիքներ ստանալուց հետո: Միջադեպից հետո այդ պաշտոնյան նկատողություն է ստացել քաղաքապետից, իսկ հարձակումը հետաքննելու համար քրեական գործ է հարուցվել<sup>206</sup>: Ֆիզիկական բռնության մեկ այլ դեպք էր գրանցվել 2025 թվականի ապրիլին, երբ Երևանի վարչական շրջաններից մեկի ղեկավարը մի քանի տղամարդկանց հետ միասին թաղապետարանի շենքում ծեծի է ենթարկել մի ակտիվիստ բլոգերի: Հարձակվողներից մի քանիսը որոշ ժամանակով ձերբակալվել են, սակայն վարչական շրջանի

<sup>204</sup> Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, Լրագրողական կազմակերպությունների հայտարարություն, 29.04.2025, <https://khosq.am/2025/04/29/hայտարարություն-136/>, Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2025 թ. երկրորդ եռամսյակային զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 22.07.2025, նշված տեղում, Arshaluys Barseghyan, “Armenian official hints at a crackdown on media in case there is no ‘self-regulation’” (Հայ պաշտոնյան ակնարկում է լրատվամիջոցների նկատմամբ ճշումների մասին, եթե «ինքնակարգավորում» չլինի), OC Media, 05.05.2025, <https://oc-media.org/armenian-official-hints-at-a-crackdown-on-media-in-case-there-is-no-self-regulation/>

<sup>205</sup> Երևանի մամուլի ակումբ, «Հայտարարություն «Ազատություն» ռադիոկայանի դեմ կազմակերպված արշավի վերաբերյալ», 27.02.2025, <https://ypc.am/hy/statements/վետրվարի-27-2025/>, Գևորգ Թոսունյան, ««Մեդիան դարձել է մի մեծ աղբանոց»։ Ավինյանն ընդդեմ ՍիվիլՆեթի», CivilNet, 19.12.2024, <https://www.civilnet.am/news/810084/մեդիան-դարձել-է-մի-մեծ-աղբանոց-ավինյան-ընդդեմ-սիվիլնեթի/>, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, «Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2025 թ. երրորդ եռամսյակային զեկույց», 22.10.2025, <https://khosq.am/reports/hայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-42/>

<sup>206</sup> Գրիշա Բալասանյան, «Դիմակավորված անձը ծեծել է Երևանի նախկին քաղաքապետի մամուլի քարտուղարին», Հետք, 16.09.2025, <https://hetq.am/hy/article/176833>

ղեկավարը նրանց թվում չէր, թեև միջադեպի տեսանյութերը վկայում էին նրա մասնակցության մասին<sup>207</sup>:

Պետական պաշտոնյաների և Հայ Առաքելական Եկեղեցու միջև լարվածության սրման ֆոնին մի քանի անձինք, այդ թվում՝ հոգևորականներ և իրավապաշտպաններ, քրեական հետապնդման կամ կալանքի են ենթարկվել սոցիալական ցանցերում հրապարակումների կամ հրապարակային հայտարարությունների համար՝ դատավորների, դատախազների կամ քննիչների գրապարտության, իշխանությունը զավթելու կամ սահմանադրական կարգը տապալելու հրապարակային կոչերի հիմքերով: Որոշ դեպքերում կալանքը հետագայում փոխարինվել է հարկադրանքի ավելի մեղմ միջոցներով: ԶԿ-ների մի խումբ համատեղ հայտարարություն է տարածել, որում դատապարտում է նման դեպքերը՝ որպես քաղաքական դրդապատճառներով պայմանավորված՝ ընդգծելով, որ քրեական արդարադատության գործիքների և այդ դեպքերի համար հարկադրանքի ամենախիստ միջոցների կիրառումը անհամաչափ միջամտություն է մարդու իրավունքներին, և զգուշացնելով, որ նման գործելակերպը վտանգավոր նախադեպ է ստեղծում այլախոհությունը լռեցնելու համար<sup>208</sup>: Միջազգային գործիչները նույնպես մտահոգություն են հայտնել այս առիթով. այսպես, ՄԱԿ-ի իրավապաշտպանների հարցերով հատուկ զեկուցողը դատապարտեց հոգևորականների քրեական հետապնդման վերաբերյալ կոշտ արտահայտված փաստաբանի դեմ առաջադրված մեղադրանքները<sup>209</sup>, իսկ Եվրոպական խորհրդարանի պատգամավորը Հայաստանին կոչ արեց զգուշություն ցուցաբերել մարդկանց իրենց կարծիքների համար հետապնդելիս՝ անընդունելի համարելով նման գործելակերպը<sup>210</sup>:

Որոշ ԶԿ-ներ և փորձագետներ նշում են, որ թշնամական և բևեռացված միջավայրը, որտեղ բացակայում է բաց և հարգալից քննարկման մշակույթը, հետզհետե ավելի զսպող ազդեցություն ունի արտահայտման ազատության վրա: Շատերը դիմում են ինքնազրաքննության՝ առցանց հարձակումներից, քաղաքական կողմնակալության մեղադրանքներից կամ իրենց իսկ գործընկերների կողմից մարգինալացման միտումից խուսափելու համար, մինչդեռ մյուս կողմից քաղաքացիական հասարակությունը քննադատության է ենթարկվում մարդու իրավունքների և ժողովրդավարության ենթադրյալ խախտումների դեպքերում լռելու համար<sup>211</sup>:

<sup>207</sup> Սուսան Բադայան, «Նոր Նորքի թաղապետարանի միջադեպի գործով կա 6 ձերբակալված, այդ թվում՝ Չախոյանը, թաղապետն ազատության մեջ է», Ազատություն Ռադիոկայան, 30.04.2025, <https://www.azatutyun.am/a/33401086.html>

<sup>208</sup> ԶԿ-ների հայտարարություն, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, 18.10.2025, <https://prwb.am/2025/10/18/haytararuthyun-2/>

<sup>209</sup> Փաստաբանը վիրավորական արտահայտություններ է օգտագործել քննիչների, դատախազների և դատավորների հասցեին, ինչը որակվել է որպես ՀՀ Քրեական օրենսգրքի 490-րդ հոդվածի խախտում: (Դատավորի, դատախազի, քննիչի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելը):

<sup>210</sup> Մերի Լոլոր, Մարդու իրավունքների պաշտպանների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող, ֆեյսբուքյան գրառում, 29.10.2025, <https://www.facebook.com/MaryLawlorHRDs/posts/pfbid02NrAYEi6FW7Q98wnZfX7puonTYm9FTPW5o8UxAe3FXSxhSjnuq1cqPtNSqbXeoYZBI>, News.am, «Եվրոպայի պատգամավորը կոչ արեց Հայաստանին զգույշ լինել մարդկանց իրենց կարծիքի համար հետապնդելիս», 28.10.2025, <https://news.am/arm/news/912171.html>

<sup>211</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ., Մարիամ Խալաթյան, Արփի Մանուսյան, Սոնա Մարտիրոսյան, «Ի՞նչ անել, երբ հին ակտիվիզմը չի աշխատում. ռադիկալացնել ժողովրդավարությունը», «Սոցիոսկոպ» ՀԿ, 13.08.2025, <https://socioscope.am/wp-content/uploads/2025/08/Civil->

Չափորոշիչ 2. Պետությունն աջակցում է խոսքի և կարծիքի արտահայտման ազատությանը և պաշտպանում այն:

Գործող օրենսդրությունն աջակցում է խոսքի և կարծիքի արտահայտման ազատությանը և պաշտպանում այն՝ հիմնականում միջազգային իրավունքին համապատասխան: Ըստ «Չանգվածային լրատվության մասին» օրենքի՝ լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները պարտավոր չեն բացահայտել իրենց տեղեկատվության աղբյուրը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա սահմանվել է դատարանի որոշմամբ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով<sup>212</sup>: Ազդարարների անձնական տվյալների գաղտնիությունը պաշտպանվում է «Ազդարարման համակարգի մասին» օրենքով<sup>213</sup>: «Չանգվածային լրատվության մասին» օրենքի խնդրահարույց դրույթն այն է, որ օրենքը թույլ է տալիս պետական մարմիններին դադարեցնել լրագրողի հավատարմագրումը, եթե նա մեկ տարվա ընթացքում երկրորդ անգամ խախտել է տվյալ մարմնի աշխատակարգի կանոնները<sup>214</sup>:

Վիրավորանքը և զրպարտությունը Հայաստանում ապաքրեականացվել են 2010 թվականին: Զրպարտությունն ու վիրավորանքը և դրանց համար փոխհատուցման առավելագույն չափերը կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, որտեղ մինչև 3 միլիոն դրամի փոխհատուցում է նախատեսվում վիրավորանքի և 6 միլիոն դրամ՝ զրպարտության համար: Ըստ Քաղաքացիական օրենսգրքի՝ փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը պետք է հաշվի առնի վիրավորողի կամ զրպարտողի գույքային դրությունը<sup>215</sup>:

2025 թվականի ապրիլին ՀՀ արդարադատության նախարարությունը ներկայացրեց Քաղաքացիական օրենսգրքում և «Չանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխությունների փաթեթի նախագիծ՝ վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ դրույթները արդիականացնելու նպատակով: Առաջարկվող նախագծով պատասխանատվություն պետք է կիրառվի ոչ միայն լրատվական կազմակերպությունների, այլև անհատների կողմից առցանց հարթակներում հրապարակված զրպարտչական կամ վիրավորական բովանդակության համար, ինչպես նաև նախատեսվել է վիրավորանք կամ զրպարտություն համարվող տվյալների հեռացում պահանջելու հնարավորություն, որը ներկայումս բացակայում է<sup>216</sup>: Այս նախագիծը մշակվել է ՀՀ սահմանադրական դատարանի 2024 թվականի որոշման<sup>217</sup> հիման վրա և քննարկվել է ՔՀԿ-ների և փորձագետների հետ, սակայն 2025 թվականի նոյեմբերի դրությամբ դեռևս չի ընդունվել:

[Society-and-Transformation\\_Arm-1.pdf](#), Տիգրան Գրիգորյան, «Ժողովրդավարությունը ճնշման տակ. քաղաքացիական հասարակության դերը Հայաստանում», CivilNet, 13.11.2025, <https://www.civilnet.am/news/986069/ժողովրդավարությունը-ճնշման-տակ-քաղաքացիական-հասարակության-դերը-հայաստանում/>

<sup>212</sup> ՀՀ օրենքը «Չանգվածային լրատվության մասին», 13.12.2003, հոդված 5:

<sup>213</sup> ՀՀ օրենքը «Ազդարարման համակարգի մասին», 09.06.2017, վերջին փոփ. առ 01.01.2023, <https://www.arlis.am/hy/acts/172131>:

<sup>214</sup> ՀՀ օրենքը «Չանգվածային լրատվության մասին», 13.12.2003, հոդված 6:

<sup>215</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգրք, 05.05.1998, վերջին փոփ 10.09.2024, հոդված 1087.1:

<sup>216</sup> «Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Չանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծեր, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/8612/about>

<sup>217</sup> ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1752 որոշումը «Արտակ Չեյնայանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով», 01.10.2024, <https://www.arlis.am/hy/acts/198197>

Լրագրողների դատապարտման կամ տեղեկատվության աղբյուրները բացահայտելու նպատակով ոստիկանության կողմից լրատվամիջոցների խուզարկության դեպքեր չեն արձանագրվել: 2025 թվականին որևէ ավանդական կամ առցանց լրատվամիջոց չի արգելափակվել: Համացանցի հրապարակումների համար հատուկ թույլտվություն կամ ավանդական լրատվամիջոցների համար կիրառելի հատուկ վարչական կանոնակարգերին համապատասխանություն չի պահանջվում:

Ըստ խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի մոնիտորինգային զեկույցի՝ 2025 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին գրապարտության և վիրավորանքի հատկանիշներով 45 հայց է հարուցվել լրագրողների և լրատվամիջոցների դեմ (2024 թվականի նույն ժամանակահատվածում 35 հայց էր գրանցվել): Այս դատական հայցերի մեծ մասը ներկայացվում է պետական մարմինների և բարձրաստիճան պաշտոնյաների կողմից, սակայն նախորդ տարվա համեմատ ավելի քիչ են եղել այն դեպքերը, երբ պաշտոնյաները փորձել են վեճը կարգավորել արտադատական մարմինների միջոցով<sup>218</sup>:

ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում ատելության խոսքի համար, թեև այս հասկացությունը որպես այդպիսին սահմանված չէ: Ըստ օրենսգրքի 329-րդ հոդվածի՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաև այդ նպատակով նյութի կամ առարկայի տարածումը պատժվում է օրենքով: Պատժամիջոցները ներառում են 20000 դրամի չափով տուգանքից մինչև չորս տարվա ժամկետով ազատազրկում՝ ծանրացնող հանգամանքների դեպքում: Օրենսգրքի 330-րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանվում բռնություն գործադրելու հրապարակային կոչերի և բռնությունը հրապարակային արդարացնելու կամ քարոզելու համար՝ որպես պատիժ սահմանելով տուգանքը կամ մինչև երեք տարի ժամկետով ազատազրկումը՝ ծանրացնող հանգամանքների դեպքում: Այս երկու հոդվածներում ծանրացնող հանգամանքները ներառում են այն դեպքերը, երբ արարքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունների, զանգվածային լրատվության միջոցների կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ<sup>219</sup>:

Ինչպես և նախորդ տարիներին, ապատեղեկատվության, կեղծ լուրերի և ատելության խոսքի մեծ ծավալը մտահոգություն է առաջացնում, ինչը նշվում է նաև միջազգային կազմակերպությունների զեկույցներում<sup>220</sup>: ԶԻԿ-ները գտնում են, որ ատելության խոսքի և բռնության կոչերի դեմ պայքարի օրենսդրությունը ընտրովի է կիրառվում, և իրավապահ մարմինները հակված են պաշտպանելու պետական պաշտոնյաներին, այլ ոչ թե ատելության խոսքի, ոտնձգությունների և վիրավորանքների թիրախում գտնվող ԶԻԿ-ներին և սոցիալական

<sup>218</sup> Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի, «Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2025 թ. երրորդ եռամսյակային զեկույց», 22.10.2025:

<sup>219</sup> ՀՀ քրեական օրենսգիրք, 05.05.2021, հոդվածներ 329 և 330:

<sup>220</sup> Reporters Without Borders, Armenia (2025) (Հայաստան 2025), նշված տեղում:

խմբերին<sup>221</sup> (օրինակ՝ ԼԳՏԻԲ+ խմբեր, բնապահպան ակտիվիստներ, Լեռնային Ղարաբաղից բռնազաղթվածներ, իրավապաշտպաններ կամ լրագրողներ): 2025 թվականի նոյեմբերին ԱԸԾ դիմակավորված աշխատակիցները խուլիգանության մեղադրանքով ձերբակալեցին երկու բլոգերների, որոնք սեռական բնույթի վիրավորանքներ էին հնչեցրել Ազգային ժողովի նախագահի հասցեին՝ ի պատասխան վերջինիս վիրավորական արտահայտությունների: Ոստիկանները նաև առգրավեցին պողոթանի համար օգտագործված սարքավորումները, իսկ ավելի ուշ բլոգերները երկու ամսվա նախնական կալանքի ենթարկվեցին<sup>222</sup>: Դատապարտելով հայիոյախոսությունն ու վիրավորանքը հանրային տիրույթում՝ լրատվական կազմակերպությունները արձանագրեցին, որ անհամաչափ ուժի և բիրտ ճնշումների կիրառումը, ԱԸԾ-ի ներգրավմամբ ցուցադրական գործողությունները և խմբագրության ողջ տեխնիկայի առգրավումը անթույլատրելի են և կոչ արեցին իրավապահ մարմիններին գերծ մնալ ընտրողական մոտեցումից վիրավորանքների և հայիոյախոսության համար անձանց հետապնդելիս<sup>223</sup>: 2025 թվականի փետրվարին մի քաղաքացի ատելություն և թշնամանք հրահրելու համար որոշ ժամանակով ձերբակալվեց՝ այն բանից հետո, երբ քննադատեց ոստիկանությանը Երևանի կենտրոնում ադրբեջանամետ ելույթների առնչությամբ գործողություններ չանելու համար, թեև փորձագետները նրա խոսքը ազատ արտահայտման իրավունքի սահմաններում են տեսնում: Քաղաքացին ենթարկվեց վարչական հսկողության՝ հրապարակային խոսքի իրավունքի սահմանափակմամբ, որը մեկ ամիս անց վերացվեց Վերաքննիչ դատարանի որոշմամբ<sup>224</sup>: Միևնույն ժամանակ, իրավապահ մարմինները ընթացք չեն տվել այն հաղորդումներին, որոնք վերաբերել են պաշտոնյաների կողմից Լեռնային Ղարաբաղի հայերի դեմ ուղղված ատելության խոսքի կիրառմանը<sup>225</sup>: ԶԿԿ ներկայացուցչի նկատմամբ սպառնալիքների և բռնության կոչերի վերաբերյալ մի քանի տարի առաջ հարուցված գործը 2025 թվականին փակվեց վաղեմության ժամկետը լրանալու հիմքով<sup>226</sup>:

2025 թվականի օգոստոսին Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը հանրային քննարկմանը ներկայացրեց «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի փոփոխությունների նախագիծը, որի նպատակներից է «նվազեցնել քաղաքացիների վրա բացասաբար ազդող տեղեկատվությունը» և «ապահովել ՀՀ տեղեկատվական ինքնիշխանությունը»: Փոփոխությունների նախագծով առաջարկվում է վերանայել տեսալսողական հաղորդումների չարաշահման արգելքի վերաբերյալ հոդվածը՝ ներառելով սահմանադրական կարգը բռնի տապալելու, պատերազմ, բռնություն և դաժանություն

<sup>221</sup> Հարցազրույցներ և ֆոկլոր խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

<sup>222</sup> Tigran Grigoryan and Tatev Ghazaryan, “Opposition Bloggers Detained in Armenia: Implications for Free Speech and Political Discourse” (Ընդդիմադիր բլոգերների ձերբակալությունը Հայաստանում. հետևանքներ խոսքի ազատության և քաղաքական դիսկուրսի համար), CivilNet, 20.11.2025, <https://www.civilnet.am/en/news/987597/opposition-bloggers-detained-in-armenia-implications-for-free-speech-and-political-discourse/>

<sup>223</sup> Լրագրողական կազմակերպությունների հայտարարությունը՝ AntiFake.am-ի նկատմամբ իրականացված գործողությունների առնչությամբ, Յետք, 14.11.2025, <https://hetq.am/hy/article/178120>

<sup>224</sup> Գայանե Սարիբեկյան, «Իրանի քաղաքացիների մասնակցությամբ տեսանյութի դեպքով քրգործ է հարուցվել, մեկ հոգի ձերբակալվել է», Ազատություն Ռադիոկայան, 01.02.2025, <https://www.azatutyun.am/a/irani-kaghakatsineri-masnaktsoutyamb-tesanyouti-depkov-krqorts-e-haroutsvel-mek-hogi-dzerebakalvel-e/33299735.html>, Նաիրա Բուլղադարյան, «Մեկամյա լրությունից հետո Ղարիբ Բաբայանն իրավունք ունի արտահայտվել», Ազատություն Ռադիոկայան, 07.03.2025, <https://www.azatutyun.am/a/mekamsya-lroutyouunits-heto-gharib-babayann-iravounk-ouni-artahaytvel/33339777.html>

<sup>225</sup> Ժաննա Ավագյան, «Ինչու և ով է հովանավորում արցախցիների դեմ ատելության արշավը», CivilNet, 10.04.2025, <https://www.civilnet.am/news/944160/ինչու-և-ով-է-հովանավորում-արցախցիների-դեմ-ատելության-արշավը/>

<sup>226</sup> Հարցազրույցներ և ֆոկլոր խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

քարոզելու, խտրականություն սերմանելու նպատակ հետապնդող տեղեկատվություն, ինչպես նաև պոռնկագրություն և քրեորեն պատժելի կամ օրենսդրությամբ արգելված այլ արարքների կոչեր տարածելու արգելք: Ըստ նախագծի՝ կարգավորող պետական մարմինը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը, իրավասու է վերահսկել բովանդակության կանոնների պահպանումը, իսկ առերևույթ խախտումների դեպքում պահանջել դադարեցնել տեսալսողական ծրագրի վերահաղորդումը<sup>227</sup>: Ընդունելով թշնամական միջավայրի, Կրեմլի լայնածավալ քարոզչության և ընտրություններին ընդառաջ Հայաստանի սոցիալ-քաղաքական կյանքին հնարավոր միջամտության պայմաններում ռիսկերը մեղմացնող միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտությունը՝ խոսքի ազատության փորձագետը նշել է, որ չափազանց կոշտ լծակները լուրջ վտանգ են պարունակում խոսքի ազատությունը սահմանափակելու տեսանկյունից և պետք է առնվազն միջանկյալ պատժամիջոցներ նախատեսվեն, օրինակ՝ գրավոր նախազգուշացում<sup>228</sup>: Ընդհանուր առմամբ, նախագիծը հանձնաժողովի լիազորությունները ընդլայնելու միտում ունի և եթե այն ընդունվի, ըստ փորձագետների՝ այս կառույցը հնարավորություն կստանա քաղաքական դրդապատճառներով պայմանավորված պատժիչ գործողություններ կիրառել<sup>229</sup>:

Ապատեղեկատվության դեմ պայքարի և պետական մարմինների կողմից այս հարցում միասնական մոտեցում ապահովելու ուղղությամբ 2025 թվականին ձեռնարկված քայլերից էր հունիսին ՀՀ վարչապետի աշխատակազմում ռազմավարական հաղորդակցության վարչության ստեղծումը: Նոր վարչությունը ապահովելու է ռազմավարական մակարդակում կառավարության հաղորդակցության համակարգում, մշակելու է համապատասխան ռազմավարությունը և հաղորդակարգերը, աջակցելու է բարեփոխումների վերաբերյալ հաղորդակցության գործողություններին և համակարգելու է ապատեղեկատվության դեմ պայքարի աշխատանքները<sup>230</sup>: Այս գործողությունը բխում էր ԲԿԳ 2022-2024 թվականների գործողությունների ծրագրի հանձնառությունից, որի նպատակն էր պետության ռազմավարական հաղորդակցության ճարտարապետության ստեղծումը<sup>231</sup>:

Չուգահեռաբար, կառավարությունը շարունակել է «Ապատեղեկատվության դեմ պայքարի 2024-2026 թվականների հայեցակարգի»<sup>232</sup> շրջանակներում նախատեսված աշխատանքները՝ քայլեր ձեռնարկելով մեդիագրագիտության բարելավման և բուհերում ռազմավարական հաղորդակցության կրթական ծրագրի ներդրման, պետական ծառայողների

<sup>227</sup> «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/8982>

<sup>228</sup> Հարցազրույց, սեպտեմբեր 2025 թ.:

<sup>229</sup> Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, «Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2025 թ. երրորդ եռամսյակային զեկույց», 22.10.2025, նշված տեղում:

<sup>230</sup> ՀՀ վարչապետի N 536-L որոշումը «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի մայիսի 25-ի N 564-L որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», 20.06.2025, <https://www.arlis.am/hy/acts/208470/>

<sup>231</sup> ՀՀ կառավարության N 1568-L որոշումը ««Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», 06.10.2022:

<sup>232</sup> ՀՀ վարչապետի N 1319-L որոշումը «Ապատեղեկատվության դեմ պայքարի 2024-2026 թվականների հայեցակարգը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», 27.12.2023, <https://www.arlis.am/hy/acts/187979>

կարողությունների զարգացման և մասնավոր հատվածի լրատվական ընկերությունների հետ համագործակցությամբ հանրային իրազեկման արշավների անցկացման ուղղությամբ<sup>233</sup>:

### Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Պետական մարմիններին և պաշտոնյաներին՝ պահպանել խոսքի ազատության չափորոշիչները, խթանել բաց և հարգալից հանրային երկխոսության մշակույթ և պատասխանատու հաղորդակցությունն ապահովել լրատվամիջոցների հետ՝ զերծ մնալով այլախոհ կամ քննադատական կարծիքների նկատմամբ անհանդուրժողականությունից, ինչպես նաև այնպիսի հայտարարություններից, որոնք կարող են թշնամանք հրահրել կամ խաթարել հանրության վստահությունը լրագրողների և լրատվամիջոցների նկատմամբ:
- Պետությանը՝ շարունակել համակարգային երկխոսությունը ԲՀԿ-ների և լրատվամիջոցների հետ ՉԼՄ-ների հետ կապված օրենսդրության վերաբերյալ՝ քննարկումներն իրականացնելով սկսած վաղ փուլերից և ապահովելով 2022 թվականի համագործակցության հուշագրով նախաձեռնված մեդիա ոլորտի բարեփոխումների իրականացումը:
- Իրավապահ մարմիններին՝ արդար, հետևողական և համաչափ մոտեցում կիրառել ատելության խոսքի և բռնության կոչերի հիմքով քրեական գործեր հարուցելիս և քննելիս՝ խուսափելով ընտրողական կիրառումից:
- ՀՀ կառավարությանը՝ ընդլայնել ապատեղեկատվության դեմ պայքարի ջանքերը՝ ռազմավարական հաղորդակցության նոր վարչության կողմից ավելի ինստիտուցիոնալ մոտեցում և «Ապատեղեկատվության դեմ պայքարի հայեցակարգի» լիարժեք և արդյունավետ իրականացում ապահովելով, բարելավելով աշխատանքների թափանցիկությունը, ներառականությունը և հաշվետվողականությունը:

## 3.7 Մասնավոր կյանքի իրավունք

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4.8/7

Իրավական դաշտ՝ 5.7/7	Գործնական դաշտ՝ 3.8/7
-------------------------	--------------------------

Մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանության իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ և համապատասխան օրենսդրությամբ: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքը, ընդհանուր առմամբ, համապատասխանում է միջազգային

<sup>233</sup> Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն, Հաշվետվություն «Ապատեղեկատվության դեմ պայքարի 2024-2026 թթ. հայեցակարգի գործողությունների ծրագրի» 2024 թ. կատարողականի վերաբերյալ, 16.01.2025, տրամադրվել է կառավարության «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցչի կողմից էլեկտրոնային հաղորդակցության միջոցով, սեպտեմբեր 2025 թ.:

չափանիշներին՝ սահմանելով անձնական տվյալների օրինական, համաչափ և թափանցիկ մշակման պահանջներ: ՀՀ արդարադատության նախարարությանը կից գործող Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը (ԱՏՊԳ) վերահսկում է անձնական տվյալների վերաբերյալ իրավական պահանջների կատարումը, համապատասխան ուղղորդում է տրամադրում և ըստ անհրաժեշտության կարող է վարչական վարույթներ հարուցել: Սակայն ռեսուրսների պակասը դժվարացնում է այս մարմնի արդյունավետ աշխատանքը, և ներկայումս բարեփոխումներ են նախատեսվում ԱՏՊԳ-ի անկախությունն ապահովելու ու կարողությունները բարելավելու ուղղությամբ՝ եվրոպական չափանիշներին համապատասխան: Մասնավորապես, 2025 թվականին կառավարությունը մշակել է անձնական տվյալների պաշտպանության անկախ մարմին ստեղծելու հայեցակարգ, որը հիմք կծառայի այս ոլորտում օրենսդրության և պրակտիկայի բարելավման համար:

«Հանրային տեղեկատվության մասին» և «Կիբեռանվտանգության մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որը նաև փոփոխություններ է ներառում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքում, տվյալների պաշտպանությունը դիտարկում է կիբեռանվտանգության և տեղեկատվական համակարգերի ավելի լայն շրջանակում տեխնիկական և գաղտնագրման պահանջների կիրառման վերահսկողությունը վերապահելով տեղեկատվական համակարգերի կարգավորման նոր մարմին:

Գործնականում կիրարկման և պատասխանատվության թույլ գործիքակազմի պատճառով շարունակական խնդիրներ են արձանագրվում պետական հաստատությունների կողմից տվյալների մշակման հարցում: Մասնավոր կյանքի անձեռնմխելիության խախտումների և գաղտնալսումների արտահոսքերի վերջին դեպքերը ի ցույց դրեցին տվյալների ապօրինի մշակումից պաշտպանության հարցում առկա համակարգային խնդիրները և ընդգծեցին արդյունավետ կանխարգելման ու պատասխանատվության մեխանիզմների պակասը:

«Ոստիկանության մասին» օրենքում 2025 թվականի փոփոխություններն ընդլայնեցին ոստիկանության հասանելիությունը հանրային տարածքների տեսահսկման համակարգերին և հնարավորություն տվեցին իրական ժամանակում անձանց նույնականացում կատարել՝ միաժամանակ առանց համապատասխան երաշխիքների համայնքներին հասանելիություն տալով իրենց վարչական տարածքի տեսահսկման համակարգերին: Հսկողության գործողությունների օրինականության նկատմամբ անկախ վերահսկողության պակասի և իրավապահ մարմինների նկատմամբ անբավարար հանրային վստահության պայմաններում այս կարգավորումները մեծացնում են անօրինական հսկողության և մասնավոր կյանքին միջամտելու ռիսկերը:

Մասնավոր կյանքի իրավունքի խախտման միջադեպերի և ոստիկանության հսկողության հնարավորությունների ընդլայնման արդյունքում ոլորտի իրավական և գործնական գնահատականները 2024 թվականի համեմատ նվազել են՝ իրավական դաշտում 5,8-ից իջնելով 5,7 միավոր, իսկ գործնականում՝ 3,9-ից 3,8 միավոր, ինչի արդյունքում ոլորտի ընդհանուր գնահատականը 4,9-ից դարձել է 4,8 միավոր: Ոլորտային առաջարկություններում կոչ է արվում բարելավել անձնական տվյալների պաշտպանության օրենսդրության կիրառումը և ավելի գործունե երաշխիքներ ապահովել անօրինական հսկողության և մասնավոր կյանքի անձեռնմխելիության խախտումների դեմ, ապահովել անկախ վերահսկողություն և խախտումների թափանցիկ հետաքննություն և վերանայել հսկողության կարգավորումները՝

դրանք միջազգային չափանիշներին լիարժեք համապատասխանեցնելով և բոլոր լիազորված մարմինների համար հաշվետվողականության արդյունավետ երաշխիքներ ապահովելով:

Չափորոշիչ 1. Յուրաքանչյուր ոք ունի մասնավոր կյանքի և անձնական տվյալների պաշտպանության իրավունք:

ՀՀ օրենսդրությունը երաշխավորում է մասնավոր կյանքի իրավունքը և պատշաճ պաշտպանությունը մասնավոր կյանքի նկատմամբ միջամտությունից կամ հարձակումներից: Այսպես, ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուրի մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքը, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով<sup>234</sup>: Քրեական օրենսգրքով պատասխանատվություն է սահմանվում մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն առանց նրա համաձայնության օգտագործելու, իրացնելու կամ հայտնելու կամ այդ տեղեկությունն օրենքով սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու, իրացնելու կամ հայտնելու նպատակով ձեռք բերելու կամ պահելու համար<sup>235</sup>: Սակայն Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված չէ մասնավոր հարաբերություններում անձնական կյանքի գաղտնիության իրավունքի խախտման հետևանքով տուժած անձին ոչ նյութական վնասի հատուցում<sup>236</sup>:

ՀՀ Սահմանադրության առանձին հոդված վերաբերում է անձնական տվյալների պաշտպանությանը: Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ<sup>237</sup>: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքը կարգավորում է անձնական տվյալները մշակելու, դրանց նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու կարգն ու պայմանները: Ըստ օրենքի՝ տվյալների մշակումը պետք է հետապնդի օրինական նպատակ, դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր<sup>238</sup>: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի դրույթները խախտելու համար սահմանված են մի շարք վարչական տույժեր, այդ թվում՝ 50000-ից մինչև 500000 դրամ տուգանք, եթե խախտումը ենթակա չէ քրեական պատասխանատվության<sup>239</sup>:

ՀՀ արդարադատության նախարարությանը կից գործող ԱՏԳ-ն լիազորված է վերահսկողություն իրականացնել անձնական տվյալների պաշտպանության իրավական պահանջների կատարման նկատմամբ, վարել անձնական տվյալներ մշակող կազմակերպությունների ռեեստրը և ապահովել համապատասխան իրավունքների

<sup>234</sup> ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 31:

<sup>235</sup> ՀՀ Քրեական օրենսգրք, 05.05.2021, հոդված 204:

<sup>236</sup> Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ, «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների վերլուծություն. Մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք, Հայաստան», Երևան, 2022, <https://ldpf.am/uploads/files/d70768ed98487c0018d16b3639493d04.pdf>:

<sup>237</sup> ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 34:

<sup>238</sup> ՀՀ օրենքը «Անձնական տվյալների պաշտպանության մասին», 18.05.2015, վերջին փոփ. առ 13.10.2023, հոդված 5, <https://www.arlis.am/hy/acts/183134>

<sup>239</sup> ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրք, 06.12.1985, հոդված 189.17:

պաշտպանությունը: Գործակալությունը տրամադրում է խորհրդատվություն, քաղաքացիների դիմումների հիման վրա հարուցում է վարչական վարույթ, կարծիքներ է տրամադրում օրենքների և իրավական նախագծերի՝ անձնական տվյալների մշակման սկզբունքներին համապատասխանության վերաբերյալ, ինչպես նաև կազմակերպում է ուսուցման և իրազեկման միջոցառումներ ու քաղաքացիների համար ուղեցույցներ և տեղեկատվական նյութեր է հրապարակում անձնական տվյալները պաշտպանելու վերաբերյալ<sup>240</sup>: 2025 թվականին կառավարությունը մշակել է անձնական տվյալների պաշտպանության անկախ լիազոր մարմնի ստեղծման հայեցակարգ՝ այս ոլորտում օրենսդրության և պրակտիկայի լավարկման, ինչպես նաև միջազգային պարտավորությունների իրականացման նպատակով<sup>241</sup>:

ԱՏԳ-ն պարտավոր է վարույթներ հարուցել հայցերի և զեկույցների հիման վրա: Վերջին տարեկան զեկույցի համաձայն՝ 2024 թվականին գործակալությունը իրականացրել է շուրջ 50 գործերով անձնական տվյալների մշակման իրավաչափության քննություն և նշանակել է մեկ տասնյակից ավելի վարչական տույժեր<sup>242</sup>: Ընդհանուր առմամբ, այս գործակալության կարողությունները դեռևս անբավարար են, և ակնկալվում է, որ վերոնշյալ բարեփոխումները կնպաստեն ԱՏԳ-ի անկախության ու կարողությունների ամրապնդմանը՝ պետության կողմից ԵՄ պահանջների կատարման և վիզաների ազատականացման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությանը համահունչ<sup>243</sup>:

Չնայած «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքը միջազգային իրավունքին համահունչ նպաստավոր դրույթներ է պարունակում՝ այդ օրենքի կիրարկման և վարչական պատասխանատվության գործիքակազմը թույլ է, ուստի գործնականում այս դրույթների կիրառումը պատշաճ կերպով չի ապահովվում, և տեղ են գտնում խախտումների դեպքեր: Անձնական տվյալների մշակման իրավական պահանջներին համապատասխանության ապահովման առումով կան համակարգային խնդիրներ, մասնավորապես՝ պետական մարմինների կողմից նման տվյալներ հավաքագրելիս կամ օգտագործելիս պատշաճ իրավական հիմքեր չկան, օրինակ, երբ ՏԻՄ-երը և դատարանները հրապարակում են իրենց ակտերը, որոնք անձնական տվյալներ են պարունակում:

Ոլորտին առնչվող օրենսդրական զարգացումներից հարկ է նշել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքում նախատեսված փոփոխությունները, որոնք ներառված են «Հանրային տեղեկությունների մասին», «Կիբեռանվտանգության մասին» և «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքների նախագծերի փաթեթում: Ըստ այդ փոփոխությունների՝ տեղեկատվական համակարգերում անձնական տվյալների մշակման տեխնիկական պահանջները և անվտանգության կանոնակարգերը հաստատվում են Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի կողմից՝ կառավարության

<sup>240</sup> Տե՛ս Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, Հրապարակային հաշվետվություն 2024 թ., <https://www.pdpa.am/public/uploads/REPORT-2024.pdf>

<sup>241</sup> Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ, «Վարչապետի գլխավորությամբ քննարկվել է անձնական տվյալների պաշտպանության համակարգի բարեփոխումների ընթացքը», 31.10.2025, <https://www.primeminister.am/hy/press-release/item/2025/10/31/Nikol-Pashinyan-meeting/>

<sup>242</sup> Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, Հրապարակային հաշվետվություն 2024 թ., նշված տեղում:

<sup>243</sup> Հարցազրույց, օգոստոս 2025 թ., Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, «Քննարկվել են անձնական տվյալների պաշտպանության եվրոպական ստանդարտների ներդրման հետ կապված հարցեր», <https://www.pdpa.am/hy/post/view/58>

հաստատած ընթացակարգերի հիման վրա: Նոր մարմինը նաև հսկողություն կիրականացնի «Կիբեռանվտանգության մասին» օրենքի իմաստով ծառայություն մատուցող, իսկ «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի իմաստով տվյալների շտեմարանի կառավարիչ համարվող անձանց կողմից անձնական տվյալներ պարունակող տեղեկատվական համակարգերի պաշտպանության նպատակով գաղտնագրման պահանջների կիրառման նկատմամբ<sup>244</sup>:

Գործնականում մասնավոր կյանքի իրավունքի խախտումները և անձնական տվյալների անօրինական մշակումը Հայաստանում շարունակում են խնդիր մնալ: 2025 թվականի հոկտեմբերին բնակարանում նկարահանված ինտիմ բնույթի տեսանյութերի առցանց հրապարակումը, որոնցում ենթադրաբար արքեպիսկոպոս Էր ներգրավված, ի ցույց դրեցին մասնավոր կյանքին սպառնացող համակարգային ռիսկերը և ընդգծեցին նման միջամտությունները կանխելու և հետաքննելու արդյունավետ մեխանիզմների պակասը<sup>245</sup>: Մարդու իրավունքների պաշտպանը դատապարտեց միջադեպը որպես մասնավոր կյանքի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանության իրավունքի լուրջ խախտում՝ ընդգծելով, որ պետությունն է պատասխանատու խախտումները կանխարգելող կառուցակարգեր մշակելու, իսկ դեպքերի առկայության պարագայում անձանց պատասխանատվության ենթարկելու հարցում<sup>246</sup>: Դատախազությունը վարույթ հարուցեց այս գործով<sup>247</sup>: Այնուամենայնիվ, կառավարություն-եկեղեցի լարվածության սրման ֆոնին այս դեպքը լայնորեն ընկալվեց որպես արտահոսք իշխանամետ աղբյուրներից, ինչը մտահոգություններ առաջացրեց անօրինական հսկողության գործում պետական ծառայողների հնարավոր ներգրավվածության կամ առնվազն անփութության վերաբերյալ: Այս մտահոգություններին է նպաստում նաև վերջին շրջանում համացանցում տարբեր գաղտնալսված խոսակցությունների տարածումը, որոնց հիման վրա իրավապահները քրեական վարույթներ են հարուցել եկեղեցական և ընդդիմադիր գործիչների դեմ<sup>248</sup>: Է՛լ ավելի բորբոքելով քաղաքական դրդապատճառներով հսկողության գործիքների չարաշահման վերաբերյալ մեղադրանքները<sup>249</sup>:

## [Չափորոշիչ 2. Պետությունը պաշտպանում է ԶԳԿ-ների և առնչվող անձանց մասնավոր կյանքի իրավունքը:](#)

ԶԳԿ-ների մասնավոր կյանքի իրավունքը հիմնականում երաշխավորված է օրենսդրությամբ, սակայն մտահոգություններ կան՝ կապված գործնականում այդ իրավունքի իրացման հետ: ԶԿ-

<sup>244</sup> ԶԳ օրենքը «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», առաջին ընթերցում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=78886>

<sup>245</sup> DP Hub, «Մասնավոր կյանքի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման նոր ռիսկեր. մասնավոր տարածքում գաղտնի տեսահսկման և տեսագրությունների տարածման ինդիորը», <https://dphub.am/archives/532>

<sup>246</sup> Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, «Պաշտպան Անահիտ Մանասյանն անթույլատրելի է համարում մասնավոր կյանքի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանության իրավունքների համատարած խախտումները», 25.10.2025, <https://ombuds.am/am/site/ViewNews/3558>

<sup>247</sup> Եվգենյա Համբարձումյան, «Դատախազությունն ընթացք է տվել Արշակ արքեպիսկոպոսի հաշատրյանին վերագրվող տեսանյութերի վերաբերյալ հաղորդմանը», Factor.am, 27.10.2025, <https://factor.am/945320.html>

<sup>248</sup> Շուշան Ստեփանյան, «Սկանդալային գաղտնալսումների սկզբնաղբյուրները. ի՞նչ սխեմա է օգտագործվում», CivilNet, 25.10.2025, <https://www.civilnet.am/news/982111/սկանդալային-գաղտնալսումների-սկզբնաղբյուրները-ի՞նչ-սխեմա-է-օգտագործվում/>

<sup>249</sup> Tigran Grigoryan, “Big Brother is Watching You: Surveillance, Leaks, and Democratic Backsliding” (Մեծ եղբայրը հետևում է քեզ՝ հսկողություն, արտահոսքեր և ժողովրդավարական հետընթաց), CivilNet, 27.10.2025, <https://www.civilnet.am/en/news/982251/big-brother-is-watching-you-surveillance-leaks-and-democratic-backsliding/>

ների և հիմնադրամների հաշվետվություններում չի պահանջվում հրապարակել աշխատակիցների անունները՝ բացառությամբ ղեկավարի: Հիմնադրամի հաշվետվության ձևաչափում պահանջվում է ներառել հիմնադիրների, Հոգաբարձուների խորհրդի անդամների անուններն ու ազգանունները, եթե հաշվետու տարվա ընթացքում նրանք օգտվել են հիմնադրամի միջոցներից և ծառայություններից<sup>250</sup>:

Հսկողության տեխնիկական միջոցների կիրառման կանոնակարգերը սահմանվել են «Ոստիկանության մասին» օրենքում՝ նման սարքերի օգտագործման վերաբերյալ պատշաճ ծանուցումը և անձնական տվյալների պաշտպանությունը ապահովելու նպատակով: Հանրային վայրերում տեղադրված անշարժ տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերի մասին պետք է նախազգուշացնող ցուցանակներ տեղադրվեն տեսանելի վայրերում: Շարժական սարքավորումներ օգտագործելիս ոստիկանության ծառայողները դրանք պետք է կրեն տեսանելի ձևով՝ բացառությամբ գաղտնի օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման դեպքերի: Ստացված տեսանյութերը կամ լուսանկարները կարող են օգտագործվել հանցագործությունների կամ հասարակական կարգի խախտումների դեպքերի քննության, ոստիկանության ծառայողների գործողությունների վերաբերյալ բողոքները քննելու, անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն աջակցելու, ոստիկանության ծառայողի նկատմամբ իրականացված ծառայողական քննության ավարտից հետո վերջինիս վերագրվող կարգապահական խախտման դեպքի առկայությունը կամ բացակայությունը հրապարակայնացնելու նպատակով՝ առանց այլ անձանց նույնականացնող տվյալների հրապարակման կամ դրանց նվազագույն հրապարակմամբ: Տեսանյութերը կամ լուսանկարներն այլ նպատակներով օգտագործելը (այդ թվում՝ հրապարակելը) արգելվում է: Տեսանյութերի և լուսանկարների պահոց մուտք գործելու և տվյալներին ծանոթանալու իրավունք ունեցող ոստիկանության պաշտոնատար անձանց ցանկը, տվյալներից օգտվելու կարգը սահմանվում են ոստիկանության պետի հրամանով<sup>251</sup>: Թեև օրենքն արգելում է ոստիկանների կողմից անձնական տեխնիկական միջոցների օգտագործումը, սակայն, ըստ նախորդ տարիների ԶՀԿ զեկույցների, ցույցերի ժամանակ որոշ ոստիկաններ նկարահանում էին ցուցարարներին իրենց բջջային հեռախոսներով, ինչը մտահոգություն է առաջացրել տվյալների հետագա հնարավոր անօրինական մշակման և համապատասխան պատասխանատվության միջոցների վերաբերյալ<sup>252</sup>:

Ոստիկանության աշխատակիցները կարող են օգտագործել դեմքի նույնականացման տեխնիկական միջոցներ՝ ենթադրյալ հանցանքի կատարման համար հետախուզման մեջ գտնվող անձի հետ նմանության առկայությունը իրական ժամանակում ստուգելու նպատակով: Միաժամանակ, ըստ օրենքի, տեխնիկական միջոցների տեսադաշտում հայտնված անձանց պատկերը չի կարող ամրագրվել, պահպանվել կամ մշակվել<sup>253</sup>:

2025 թվականի մարտին Ազգային ժողովն ընդունեց «Ոստիկանության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» և կից օրենքներում փոփոխությունները, որոնք ուղղված էին փողոցային հանցագործության դեմ պայքարին: Այս փոփոխությունները ոստիկանությանը

<sup>250</sup> ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 39:

<sup>251</sup> ՀՀ օրենքը «Ոստիկանության մասին», 16.04.2001, հոդված 22:

<sup>252</sup> Զաղաքական իրավունքների հայկական կենտրոն, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, «ՀԱՏՈՒԿ ՉԵԿՈՒՅՑ Հոնիսի 12-ին երևանում՝ Ազգային ժողովի նստավայրի մոտ տեղի ունեցած հավաքի և ոստիկանության գործողությունների վերաբերյալ», 17.06.2024, Երևան, [https://armhels.com/wp-content/uploads/2024/08/Joint\\_Ad\\_Hoc\\_Report\\_HCA\\_ACPR\\_17.06.2024\\_arm.pdf](https://armhels.com/wp-content/uploads/2024/08/Joint_Ad_Hoc_Report_HCA_ACPR_17.06.2024_arm.pdf)

<sup>253</sup> ՀՀ օրենքը «Ոստիկանության մասին», 16.04.2001, հոդված 22:

լիազորում են հասանելիություն ունենալ հանրային տարածքներում, այդ թվում՝ պետական և համայնքային կազմակերպությունների շինությունների արտաքին մասում, օդանավակայաններում, սահմանային անցակետերում, ավտոկայանատեղերում և հանրային տրանսպորտում տեղադրված տեսահսկման համակարգերին<sup>254</sup>: Ըստ նախագիծը հեղինակող պատգամավորի՝ ոստիկանությունը տեսահսկման համակարգերին անմիջական հասանելիություն կունենա Էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոնի միջոցով, ինչը հնարավորություն կտա նույնականացնել իրավախախտում կատարողներին, օրինակ՝ եթե նրանք աղբ են թափում փողոցում<sup>255</sup>: Հաշվի առնելով իրավապահ մարմինների նկատմամբ հանրային վստահության պակասը և անկախ վերահսկողության բացակայությունը՝ նման լայն մեկնաբանությունը մեծացնում է անօրինական հսկողության և քաղաքացիների անձնական կյանքին միջամտելու ռիսկերը<sup>256</sup>: Ավելին, երկրորդ ընթերցումից առաջ օրենքում լրացուցիչ դրույթ ավելացվեց, ըստ որի՝ ոստիկանությունը համայնքներին հասանելիություն է տալիս տվյալ համայնքի վարչական տարածքում տեղադրված տեսահսկման համակարգերին: Քանի որ տեղական ինքնակառավարման օրենսդրության մեջ բացակայում են տվյալների անօրինական օգտագործման համապատասխան երաշխիքները, ինչպիսիք են, օրինակ, մուտքային գործողությունների հաշվառումը (լրգավորում), գաղտնիության պահպանումը և նպատակների ներշնչանակը (որոնք սահմանված են ոստիկանության դեպքում), այս դրույթը լուրջ մտահոգություններ է առաջացնում անձնական կյանքի իրավունքի պաշտպանության տեսանկյունից<sup>257</sup>:

ՔՀԿ գրասենյակային տարածքներում խուզարկություն կամ հաղորդակցության հսկողություն կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ՝ բացառությամբ այն անհետաձգելի դեպքերի, երբ հապաղումը կարող է հանգեցնել ահաբեկչության կատարման կամ պետական անվտանգությանը սպառնացող գործողությունների: Նման դեպքում ԱԱԾ-ն կարող է հսկողություն իրականացնել մինչև 48 ժամվա ընթացքում՝ նախքան դատարանի որոշման տրամադրումը<sup>258</sup>:

Գործնականում փորձագետները և ՔՀԿ-ները կասկածներ ունեն ԱԱԾ-ի ու իրավապահ մարմինների կողմից հսկողության լիազորությունների օգտագործման օրինականության վերաբերյալ, քանի որ հսկողության գործունեության օրինավորության վերահսկման և հաշվետվողականության մեխանիզմները բացակայում են, իսկ տվյալների արտահոսքի դեպքերի թափանցիկ քննություն չի իրականացվել: Իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից առանց դատարանի համապատասխան թույլտվության ՔՀԿ

<sup>254</sup> ՀՀ օրենքը ««Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», 05.03.2025:

<sup>255</sup> Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, «Ոստիկանությանը հասանելիություն կտրվի պետական կառույցների տեսանկարահանող սարքերին. օրենսդրական փաթեթը քննարկվել է առաջին ընթերցմամբ», 11.02.2025,

[http://parliament.am/news.php?cat\\_id=2&NewsID=21726&year=2025&month=2&day=11&lang=arm&enc=utf8](http://parliament.am/news.php?cat_id=2&NewsID=21726&year=2025&month=2&day=11&lang=arm&enc=utf8), Factor TV, «Ովքեր փողոցում աղբ կթափեն, տեսախցիկների միջոցով կնույնականացվեն, վարչական իրավախախտում կկազմվի», YouTube, 04.03.2025, նշված տեղում:

<sup>256</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ., Քաղաքական իրավունքների հայկական կենտրոն, ««Մեծ եղբայրը Հայաստանում է»». զեկույց ՀՀ ՆԳՆ-ին հեռավար կենսաչափական վերահսկողության լիազորություն տվող օրենքի փոփոխության վերաբերյալ», 03.05.2025, նշված տեղում:

<sup>257</sup> Հարցազրույց, օգոստոս 2025 թ.:

<sup>258</sup> ՀՀ օրենքը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», 22.10.2007, վերջին փոփ. առ 01.08.2025, հոդվածներ 32 և 34, <https://www.arlis.am/hy/acts/209915>

գրասենյակը խուզարկելու կամ ՔՀԿ փաստաթղթերին ծանոթանալու դեպքերի վերաբերյալ հաղորդումներ չեն եղել զեկույցի հաշվետու ժամանակահատվածի ընթացքում:

**Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.**

- ՀՀ կառավարությանը՝ ավելի գործուն երաշխիքներ նախատեսել անօրինական հսկողության և մասնավոր կյանքի իրավունքի խախտումների դեմ ապահովելով անկախ վերահսկողություն և թափանցիկ հետաքննություն:
- ՀՀ կառավարությանը՝ բարելավել անձնական տվյալների պաշտպանության օրենսդրության կիրառումը՝ ապահովելով, որ պետական մարմինների կողմից տվյալների հավաքագրումն ու մշակումը լինեն հիմնավորված և խստորեն համապատասխանեն իրավական պահանջներին, ուղեկցվեն հաշվետվողականության և իրավական պաշտպանության հստակ մեխանիզմներով, և վերահսկողության ենթարկվեն անձնական տվյալների պաշտպանության նոր անկախ մարմնի կողմից՝ միջազգային չափանիշներին համապատասխան:
- ՀՀ ներքին գործերի նախարարությանը և Ազգային ժողովին՝ վերանայել «Ոստիկանության մասին» օրենքի հսկողության վերաբերյալ նոր կարգավորումները՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին, ապահովելով օրինական նպատակների նեղ սահմանված շրջանակ և բոլոր լիազորված մարմինների կողմից օրինական օգտագործման և հաշվետվողականության արդյունավետ երաշխիքներ:

### 3.8 Պետության կողմից պաշտպանության պարտականություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4.5/7

Իրավական դաշտ՝ 5.2/7	Գործնական դաշտ՝ 3.8/7
-------------------------	--------------------------

ՔՀԿ-ների և նրանց շահառուների պաշտպանության համար առկա են իրավական երաշխիքներ ու մեխանիզմներ, ներառյալ տեղական և միջազգային դատարաններ դիմելու իրավունքը: Սակայն գործնականում ՔՀԿ-ների և նրանց փոխկապակցված անձանց պաշտպանությունը իրավապահների կողմից բավարար չէ: Ինչպես նախորդ տարիներին, զգայուն ոլորտներում աշխատող ՔՀԿ-ները ենթարկվում են ճնշումների և սպառնալիքների, իսկ բնապահպան ակտիվիստների դեմ նոր SLAPP հայցեր են նախաձեռնվել 2025 թվականին:

ՔՀԿ-ները դատարանում կարող են հանրային շահեր ներկայացնել շրջակա միջավայրի պահպանության և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտներում: Սակայն մի շարք բարդ նախապայմանների պատճառով գործնականում այս իրավունքի իրացումը սահմանափակված է, հատկապես բնապահպանական հարցերի

դեպքում: 2025 թվականին ՔՀԿ-ները շարունակել են քննարկումները այս հարցի շուրջ՝ շրջակա միջավայրի և հաշմանդամության հարցերից բացի հանրային շահի այլ ոլորտներ ներառելու նպատակով:

ՔՀԿ-ներն այժմ ավելի լավ են տեղեկացված իրավաբանական անձանց իրական շահառուների հայտարարագրման պահանջի մասին, սակայն այս հայտարարագրի նպատակը և տվյալների թարմացման համար անհրաժեշտ վարչարարությունն ու ծախսերը հարցեր են առաջացնում և լրացուցիչ բեռ հանդիսանում:

Պետության կողմից պաշտպանության պարտականության ոլորտի միավորները 2024 թվականի համեմատ չեն փոխվել: «ՔՀԿ չափիչի» նախորդ տարվա զեկույցի առաջարկությունները մնում են արդիական, այդ թվում՝ ՀԿ-ների կողմից հանրային շահերը դատարանում ներկայացնելու իրավունքի ընդլայնումը, իրական շահառուների վերաբերյալ տվյալների թարմացման համար գանձվող վճարների չեղարկումը և ՔՀԿ-ների ավելի արդյունավետ պաշտպանության ապահովումը, այդ թվում՝ SLAPP հայցերի դեմ քայլեր ձեռնարկելու միջոցով:

### Չափորոշիչ 1. Պետությունը պաշտպանում է ՔՀԿ-ներին և նրանց հետ կապված մարդկանց միջամտությունից և հարձակումներից:

Ըստ օրենքի՝ պետությունն ապահովում է ՀԿ-ների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը<sup>259</sup>: ՀԿ-ն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի ներկայացնելու և պաշտպանելու իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերը դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում<sup>260</sup>: Հիմնադրամը ևս իրավունք ունի դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող<sup>261</sup>: Վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ իր իրավունքները և ազատությունները խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից, ինչպես նաև այն դեպքում, երբ խոչընդոտներ են հարուցվել կամ անհրաժեշտ պայմաններ չեն ապահովվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար<sup>262</sup>: Սա վերաբերում է նաև կազմակերպությունների գրանցման մասին որոշումներին. գրանցման մերժում ստանալու դեպքում հիմնադիրները կարող են երկամսյա ժամկետում բողոքարկել այս որոշումը վարչական դատարանում<sup>263</sup>: Վարչական դատարանի որոշումները կարող են բողոքարկվել վերաքննիչ և այնուհետև՝ վճռաբեկ դատարանում: ՔՀԿ-ների անդամների և հիմնադիրների համար հասանելի են նաև միավորման ազատության իրավունքի միջազգային իրավական պաշտպանության մեխանիզմները՝ ՄԱԿ-ի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի միջոցով:

ՀԿ-ները կարող են դատարանում հանրային շահերը ներկայացնել շրջակա միջավայրի պահպանության և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին պաշտպանության

<sup>259</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 9:

<sup>260</sup> Նույն տեղում, հոդված 16:

<sup>261</sup> ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, հոդված 3:

<sup>262</sup> ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 05.12.2013, հոդված 3:

<sup>263</sup> Նույն տեղում, հոդված 72:

ուլորտներում՝ պայմանով, որ դիմող կազմակերպությունը բավարարի մի շարք պայմանների: Մասնավորապես, բնապահպանական հարցերի դեպքում հայցը պետք է բխի կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակներից, կազմակերպությունը պետք է մասնակցած լինի տվյալ հարցի հետ կապված հանրային քննարկումներին կամ ապացուցի, որ նրան նման հնարավորություն չի տրվել, և վերջապես, հայցը ներկայացնելու պահին նախորդող առնվազն 2 տարվա ընթացքում ակտիվ գործունեություն ծավալած լինի շրջակա միջավայրի պահպանության ոլորտում<sup>264</sup>: Այս պահանջները խորթին են (օրինակ՝ տվյալ հարցի հետ կապված հանրային քննարկումներին մասնակցելու կամ մասնակցության անհնարինության վերաբերյալ հիմքեր ներկայացնելը) և խոչընդոտում են այս իրավունքի գործնական իրացմանը: Այսպես, մի քանի տարվա պայթարի արդյունքում միայն վերաքննիչ դատարանի որոշումից հետո բնապահպանական կազմակերպությունները կարողացան հասնել նրան, որ 2022 թվականին իրենց հայցը քննվի դատարանում<sup>265</sup>:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում հայց ներկայացնելու համար ևս անհրաժեշտ է, որ կազմակերպության կանոնադրությամբ համապատասխան նպատակ սահմանված լինի, և հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում կազմակերպությունը գործունեություն ծավալի տվյալ ոլորտում: Բացի այդ՝ կազմակերպության անդամների պարզ մեծամասնությունը հաշմանդամություն ունեցող անձինք պետք է լինեն<sup>266</sup>:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության 2023-2025 թվականների գործողությունների ծրագրով նախատեսվել էր ընդլայնել հանրային նշանակության հարցերով դատարան դիմելու ՀՀ-ների իրավունքը՝ հաշվի առնելով *‘actio popularis’* սկզբունքը (երբ հասարակության ցանկացած անհամ կարող է դատական հայց ներկայացնել հանրային շահերը պաշտպանելու կամ համայնքին հասցված վնասի համար)<sup>267</sup>: 2024-2025 թվականների ընթացքում «ԶԻԿ չափիչ» ծրագրի շրջանակներում Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը քննարկումներ նախաձեռնեց *‘actio popularis’* սկզբունքի իրականացման հետ կապված խնդիրների և կարիքների շուրջ: ԶԻԿ-ների առաջարկների հիման վրա 2025 թվականի մարտին մի քանի պատգամավորներ փոփոխությունների նախագծեր ներկայացրին «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում<sup>268</sup> և Վարչական դատավարության օրենսգրքում<sup>269</sup>, ըստ որոնց նախատեսվում է հանել շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ դատարան դիմելու համար սահմանված՝ նախորդ հանրային քննարկումներին մասնակցելու պահանջը և ընդլայնել ԶԻԿ-

<sup>264</sup> ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 16:

<sup>265</sup> Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն (ECNL), «ԶԻԿ չափիչ նպաստավոր միջավայրի և ԶԻԿ-ների իրավագործման կողմնացույց. Հայաստան 2022» հետազոտության զեկույց, 2023, <https://csometer.info/sites/default/files/2023-04/2022%20Armenia%20CSO%20Meter%20Country%20Report%20ARM.pdf>

<sup>266</sup> ՀՀ վարչական դատավարության օրենսգրք, 05.12.2013, հոդված 216.6:

<sup>267</sup> ՀՀ կառավարության N 1978-Լ որոշումը «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը բխող 2020-2022 թվականների և 2023-2025 թվականների գործողությունների ծրագրերը հաստատելու մասին», 26.12.2019, վերջին փոփ. 12.04.2024, <https://www.arlis.am/hy/acts/191790>

<sup>268</sup> ՀՀ օրենքը ««Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», նախագիծ, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=77221>

<sup>269</sup> ՀՀ օրենքը «Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», նախագիծ, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=77226>

ների դատական ներկայացուցչության իրավունքը նաև խտրականության գործերով, այսինքն՝ հաշմանդամությունից զատ խտրականության այլ հիմքերով, ինչպիսիք են սեռը, ռասան, լեզուն, կրոնը և այլ անձնական կամ սոցիալական հանգամանքները: Այս քայլը ողջունելով հանդերձ՝ ՔՀԿ-ները առաջարկեցին էլ ավելի ընդլայնել հանրային շահերի վերաբերյալ դատական ներկայացուցչության ոլորտները՝ ներառելով այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են պատմամշակութային արժեքների պահպանումը, սպառողների իրավունքների պաշտպանությունը, ընտրախախտումները, պետական և համայնքային սեփականությունը և այլն<sup>270</sup>: Բացի այդ՝ անհրաժեշտություն կա հանրային շահերի հարցերով դատարանում հանդես գալու իրավասություն տալ նաև հիմնադրամներին և ավելի հստակ սահմանել նորմատիվ իրավական ակտերի օրինականությունը վիճարկելու ՔՀԿ-ների իրավունքը՝ այդպիսով ամրապնդելով հանրային վերահսկողության մեխանիզմները<sup>271</sup>: Այնուամենայնիվ, չնայած ռազմավարությամբ ամրագրված պարտավորությանը, վերը նշված օրենսդրական փոփոխությունների ընդունման հարցում դեռևս առաջընթաց չի գրանցվել:

Վերջին տարիներին ՔՀԿ-ները և նրանց հետ փոխկապակցված անձինք տարբեր կազմակերպությունների և խմբերի կողմից բազմիցս ենթարկվել են ճնշումների, ատելության խոսքի և հարձակումների: Մասնավորապես, ԼԳՏԻԲ+ իրավունքների պաշտպանության, բնապահպանության, վերահսկողական (watchdog) գործունեության ոլորտներում գործող կազմակերպությունները հաճախ են հանդիպում երրորդ անձանց կողմից սպառնալիքների և ճնշումների, սակայն բավարար պաշտպանություն չեն ստանում իրավապահների կողմից<sup>272</sup>: Ավելին, պետական պաշտոնյաները և քաղաքական գործիչները հենց իրենք էլ իրենց հայտարարություններում և սոցիալական ցանցերում թիրախավորում են վերահսկող և բնապահպան ակտիվիստներին: Օրինակ՝ Ամուլսարի հանքարդյունաբերության երկարատև վիճարկվող նախագծի վերսկսման կապակցությամբ (այս նախագիծը ակտիվիստների շարունակական ցույցերի պատճառով արդեն մի քանի տարի դադարեցված էր) ՀՀ Էկոնոմիկայի նախարարը սոցիալական ցանցերի իր պաշտոնական էջում գրեց՝ «Շունը հաչում է, քարավանը՝ գնում»: Ձևակերպման հետ կապված քննադատությունից և հարցադրումներից հետո, թե ում նկատի ունենալիս նախարարը, վերջինս պնդել է, որ ասացվածքը վերաբերում էր որոշ նախկին պաշտոնյաների, իսկ ավելի ուշ հեռացրեց գրառումը<sup>273</sup>: Նման հռետորաբանությունը անկախ ՔՀԿ-ներին և ակտիվիստներին պիտակավորելու ավելի լայն միտման արտահայտում է: Օրինակ, ըստ փորձագետների, դեպքեր են լինում, երբ ՔՀԿ-ների կողմից քննադատության ենթարկվելիս պաշտոնյաները և իշխանամետ լրատվամիջոցները ՔՀԿ-ներին անվանում են «ռուսական գործակալներ» (մի տերմին, որը փոխարինել է նախկինում տարածված «սորոսական» հասկացությանը)՝ դրանով իսկ խթանելով ապատեղեկատվության և ճնշումների տարածումը: Այս գործելակերպը բերում է ակտիվիստների շրջանում

<sup>270</sup> Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ, «‘Actio Popularis’ ինստիտուտի կիրառման խնդիրները Հայաստանի Հանրապետությունում», 2025, <https://ldpf.am/uploads/files/dd90febff575d1a778cb27b1f0b05fa2.pdf>

<sup>271</sup> Մանրամասների համար տե՛ս՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, «Հայաստանում նախատեսվում է ընդլայնել ՔՀԿ-ների դերը դատարանում հանրային շահերի ներկայացման գործում», 19.05.2025, <https://transparency.am/hy/media/news/article/5308>

<sup>272</sup> Ֆոկուս խմբային քննարկումներ, սեպտեմբեր 2025 թ.:

<sup>273</sup> Factor TV, ««Շունը հաչում է, քարավանը՝ գնում»․ Պապոյանն ու Ավինյանը՝ նույն խոսույթի մեջ», YouTube, 04.03.2025, <https://www.youtube.com/watch?v=fT5uJiDP3Oo>

ինքնագրաբանությանը և վնաս հասցնում ՔՀԿ-ների հեղինակությանը ու ֆոնդահայթայթման գործունեությանը<sup>274</sup>:

Հանքարդյունաբերական ընկերությունների կողմից բնապահպան ակտիվիստների դեմ (հիմնականում զրպարտության և վիրավորանքի հիմքով<sup>275</sup>) հարուցված դատական գործերը շարունակվել են: 2025 թվականին հանքարդյունաբերական ընկերություններից մեկը դատական հայց է ներկայացրել բնապահպան ակտիվիստ փաստաբանի դեմ պահանջելով իր գործարար համբավին հասցված ենթադրյալ վնասի համար մեկ միլիոն դրամ փոխհատուցում և հրապարակային լուսման փամանակ արված հայտարարությունների հերքում<sup>276</sup>: 2025 թվականի մայիսին Հայաստանի ամենամեծ հանքարդյունաբերական ընկերությունը դատական հայց ներկայացրեց աշխատանքից ազատված ութ աշխատակիցների դեմ, որոնց գույքի վրա այս պահանջի հիման վրա կալանք դրվեց դատարանի կողմից (տե՛ս նաև Ոլորտ 5՝ «Որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունք»)՝<sup>277</sup>: Այս դատական հայցին նախորդել էր նախկին աշխատակիցների կողմից դատարան ներկայացված աշխատանքի վերականգնման հայցը այն բանից հետո, երբ նրանք աշխատանքից ազատվել էին աշխատավարձերի բարձրացման և սոցիալական արդարության հաստատման պահանջով գործադուլին մասնակցելու համար<sup>278</sup>: Հասարակական կազմակերպությունները և միջազգային կազմակերպությունները դատապարտեցին ընկերության դատական հայցը՝ համարելով այն պատժիչ և անհամաչափ միջոց, որը հարցեր է առաջացնում այլախոհությունը լռեցնելու գործում կառավարության հնարավոր մեղսակցության մասին (բանի որ ՉՊՄԿ-ի մի մասնաբաժին կառավարության սեփականությունն է հանդիսանում)<sup>279</sup>: Դատական գործը ներկայումս ընթացքում է: ՔՀԿ կողմից կազմված տվյալների բազայի համաձայն՝ վերջին յոթ տարիների ընթացքում գրանցվել է առնվազն 33 SLAPP դեպք, որոնք նախաձեռնվել են հանքարդյունաբերական և շինարարական ընկերությունների կողմից<sup>280</sup>: Ակտիվիստների հանդեպ զգալի ֆինանսական և հոգեբանական ճնշում գործադրելով՝ նման դատական հայցերը հաճախ նպատակ ունեն լռեցնել նրանց և հետ պահել մյուսներին

<sup>274</sup> Հարցազրույցներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

<sup>275</sup> Չրպարտությունն ու վիրավորանքը կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, որտեղ սահմանված են դրանց համար փոխհատուցման առավելագույն չափերը՝ մինչև 3 միլիոն ՀՀ դրամի փոխհատուցում վիրավորանքի և 6 միլիոն ՀՀ դրամ՝ զրպարտության համար: Ըստ օրենսգրքի՝ փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը պետք է հաշվի առնի վիրավորողի կամ զրպարտողի գույքային դրությունը (տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրք, 05.05.1998, վերջին փոփ. առ 10.09.2024, հոդված 1087.1):

<sup>276</sup> Էկոլուր, «ՄԵՏԱ ԳՈՒԴ» ՍՊԸ-ի տնօրենը հերքման պահանջով դատի է տվել «Հայաստանի անտառներ» ՀԿ-ի տնօրեն Նազելի Վարդանյանին, 20.08.2025, <https://www.ecolor.org/hy/news/mining/16112/>

<sup>277</sup> Arshaluys Barseghyan, “Zangezur mine demands \$12 million from eight fired workers over strike” (Չանգեզուրի հանքը ութ ազատված աշխատողներից 12 միլիոն դոլար է պահանջում գործադուլի պատճառով), OC-Media, 26.05.2025, <https://oc-media.org/zangezur-mine-demands-12-million-from-eight-fired-workers-over-strike/>

<sup>278</sup> Մարինե Մարտիրոսյան, «ՉՊՄԿ-ից ազատված 8 աշխատողները դատարան են դիմել՝ աշխատանքի վերականգնման համար», Հետք, 29.04.2025, <https://hetq.am/hy/article/174091>

<sup>279</sup> Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, «ՔՀԿ-ները դատապարտում են ՉՊՄԿ-ի կողմից իր նախկին աշխատակիցների դեմ դատական ճնշումները», 04.06.2025, <https://transparency.am/hy/media/news/article/5322>, Coalition for Human Rights in Development, “Civil society groups condemn ZCMC’s retaliation against eight workers, who went on strike to demand better labour conditions and environmental protection” (Քաղաքացիական հասարակության խմբերը դատապարտում են ՉՊՄԿ-ի կողմից ձեռնարկված հաշվեհարդարը ութ աշխատողների նկատմամբ, որոնք գործադուլ էին հայտարարել՝ պահանջելով աշխատանքային պայմանների բարելավում և շրջակա միջավայրի պաշտպանություն), 10.06.2025, <https://rightsinddevelopment.org/news/armenia-zcmc-mining-workers-reprisals/>

<sup>280</sup> Կանաչ Հայաստան, Հանքարդյունաբերական և շինարարական ընկերությունների կողմից քաղաքացիների դեմ ներկայացված քաղաքացիական հայցերի ցանկը, [https://www.green-armenia.org/storage/exel/1760612625\\_SLAPP%20-%20Դատավարությունների%20տվյալների%20բազա%20\(Հայաստան\)%20-%202025.09.2025.pdf](https://www.green-armenia.org/storage/exel/1760612625_SLAPP%20-%20Դատավարությունների%20տվյալների%20բազա%20(Հայաստան)%20-%202025.09.2025.pdf)

իրավախախտումների դեմ բարձրաձայնելուց: Որպես ԵԽ անդամ ՀՀ կառավարությունը պարտավոր է հետևել 2024 թվականի ապրիլին հրապարակված՝ SLAPP հայցերի կիրառմանը հակազդելու վերաբերյալ ԵԽ հանձնարարականներին<sup>281</sup>: Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) բազմաշահառու խմբի վերջերս կայացած հանդիպման ժամանակ պետական պաշտոնյաները քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ քննարկել են SLAPP-ին վերաբերող հարցերը՝ նախնական պայմանավորվածություն ձեռք բերելով երկխոսությունը շարունակելու վերաբերյալ և ՀՀ արդարադատության նախարարությանը հանձնարարելով ուսումնասիրել հնարավոր SLAPP-ի դեպքերը և միջազգային փորձի վրա հիմնված իրավական կարգավորումները<sup>282</sup>:

Քրեական օրենսգիրքը ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագման, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների կամ այլ անձնական կամ սոցիալական հանգամանքների վրա հիմնված ատելությունը, անհանդուրժողականությունը կամ թշնամանքը սահմանում է որպես մի շարք հանցագործությունների ծանրացնող հանգամանք<sup>283</sup>: Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հատկանիշները որպես լրացուցիչ պաշտպանության հիմք սահմանված չեն օրենսդրությամբ: ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված և 2024 թվականին շահագրգիռ ՔՀԿ-ների հետ քննարկված «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի նախագիծը<sup>284</sup> դեռևս վերանայման գործընթացում է<sup>285</sup>: Նախագծի նպատակն է ապահովել խտրականության դեմ պայքարը և ստեղծել խտրականության հարցերով խորհուրդ ցանկացած տեսակի խտրականությունից պաշտպանությունն ապահովելու համար, սակայն պաշտպանված հատկանիշների ցանկում թվարկված չեն «սեռական կողմնորոշման», «գենդերային ինքնության», «առողջական վիճակի» և «ընտանեկան կարգավիճակի» հասկացությունները՝ ի հակառակ ՔՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների առաջարկությունների<sup>286</sup>: Օրենքի ընդունումը նշանակալից առաջընթաց կլինի խտրականության դեմ պայքարի և մարդկանց խտրականությունից պաշտպանելու ուղղությամբ աշխատող ՔՀԿ-ների իրավական միջավայրի բարելավման առումով:

ՀՀ Սահմանադրությամբ համաչափության և որոշակիության սկզբունքներ են նախատեսված հիմնարար իրավունքների և ազատությունների սահմանափակման համար, ինչպես նաև հնարավորություն է տրվում արտակարգ կամ ռազմական դրության դեպքում

<sup>281</sup> Council of Europe Committee of Ministers, “Recommendation CM/Rec(2024)2 of the Committee of Ministers to member States on countering the use of strategic lawsuits against public participation (SLAPPs)” (Նախարարների կոմիտեի CM/Rec(2024)2 հանձնարարականը անդամ պետություններին՝ հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերի կիրառմանը (SLAPPs) հակազդելու վերաբերյալ), 05.04.2024, <https://rm.coe.int/0900001680af2805>

<sup>282</sup> ՀՀ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության բազմաշահառու խմբի նիստի արձանագրություն N 17, 30.10.2025, [https://www.eiti.am/file\\_manager/EITI%20Documents/Minutes/30102025-msg-meeting-minutes.pdf](https://www.eiti.am/file_manager/EITI%20Documents/Minutes/30102025-msg-meeting-minutes.pdf)

<sup>283</sup> ՀՀ Քրեական օրենսգիրք, 05.05.2021:

<sup>284</sup> «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթ, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/7408/about>

<sup>285</sup> Տեղեկությունը տրամադրվել է Արդարադատության նախարարության կողմից 2025 թ. սեպտեմբերի 26-ի գրությամբ՝ ի պատասխան «ՔՀԿ չափիչի» փորձագիտական խմբի անդամի հարցման:

<sup>286</sup> Մանրամասների համար տե՛ս՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, «խտրականության դեմ օրենքի նոր նախագիծը ներկայացվել է հանրային քննարկման», 01.08.2024, <https://transparency.am/hy/media/news/article/5146>

Ժամանակավորապես կասեցնել կամ սահմանափակել որոշ իրավունքներ ու ազատություններ<sup>287</sup>: 2025 թվականի ընթացքում արտակարգ կամ ռազմական դրություն չի հայտարարվել:

Չափորոշիչ 2. Ծայրահեղականության, ահաբեկչության, փողերի լվացման և կոռուպցիայի դեմ պայքարի միջոցները նպատակաուղղված են, համաչափ, համապատասխանում են ռիսկի վրա հիմնված մոտեցմանը և ապահովում են միավորումների, հավաքների ու արտահայտման վերաբերյալ մարդու իրավունքների ստանդարտների պահպանումը:

ՀՀ օրենսդրությունը հասցեական և համաչափ կարգավորումներ է նախատեսում ահաբեկչության, փողերի լվացման և կոռուպցիայի դեմ պայքարի համար՝ ռիսկերի վրա հիմնված մոտեցմանը համահունչ կերպով: «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքը<sup>288</sup> հաշվետվություն տրամադրող անձանցից (օրինակ՝ բանկեր, վարկային կազմակերպություններ, նոտարներ, պետոնեգիստր) պահանջում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնել՝ ներդնելով ռիսկերի կառավարման ընթացակարգեր, որոնց միջոցով այս կառույցները կբացահայտեն և կգնահատեն հնարավոր կամ առկա ռիսկերը, կապահովեն համարժեք միջոցների ձեռնարկումը և համապատասխան ռիսկերը հայտնաբերելու դեպքում կհաղորդեն լիազոր պետական մարմին: 2025 թվականին ՔՀԿ-ներն ավելի հաճախ են նշել բանկային հաշիվների հետ կապված ռիսկերի վերաբերյալ մասին, քանի որ հաշիվ բացելու համար բանկերը բազմաթիվ փաստաթղթեր, այդ թվում՝ դրամաշնորհային պայմանագրեր, դրոնոր կազմակերպությունների ցանկեր և կազմակերպության գործունեության ու առաջիկա ծրագրերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն են պահանջել, իսկ որոշ դեպքերում ընդհանրապես մերժել են հաշիվ բացումը: Բացի այդ՝ գործող բանկային հաշիվներ ունեցող որոշ ՔՀԿ-ներ նշել են, որ ռիսկերի վերաբերյալ մասին են ունեցել իրենց կայքում առցանց նվիրատվությունների կոճակ ստեղծելու համար բանկից թույլտվություն ստանալու հարցում<sup>289</sup>: Այս խնդիրները, սակայն, ծագել են ոչ թե փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրավական շրջանակի փոփոխություններից, այլ բանկերի կողմից ներդրված ներքին համապատասխանության ընթացակարգերի խստացումից՝ պայմանավորված ընթացիկ աշխարհաբաղաբանական զարգացումների ֆոնին համաշխարհային բանկային միջավայրի և միջազգային գործարքների սահմանափակումներով<sup>290</sup>:

Բոլոր իրավաբանական անձանց, այդ թվում՝ ոչ առևտրային կազմակերպությունների համար գործում է իրական շահառուների հայտարարագրման պահանջը<sup>291</sup>: Սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու կամ հայտարարագրման հետ կապված կարգի խախտման դեպքում պատժամիջոցները ներառում են նախազգուշացում և 30000-ից մինչև 100000 դրամի չափով տուգանքի նշանակում<sup>292</sup>, իսկ երեք տարի անընդմեջ հայտարարագիր չներկայացնելու դեպքում կազմակերպությունը կարող

<sup>287</sup> ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 76-79:  
<sup>288</sup> ՀՀ օրենքը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին», 26.05.2008, վերջին փոփ. առ 08.08.2025, <https://www.arlis.am/hy/acts/210014>  
<sup>289</sup> Հարցազրույցներ և ֆոկլոր խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:  
<sup>290</sup> Տեղեկատվության ճշտում ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցչի հետ, սեպտեմբեր 2025 թ.:  
<sup>291</sup> ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին», 03.04.2001, գլուխ 12.1:  
<sup>292</sup> Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, 06.12.1985, հոդված 169.29:

Է հարկադիր լուծարման ենթարկվել<sup>293</sup>: Ինչպես և նախորդ տարիներին, որոշ ՔՀԿ-ներ նշում են, որ «իրական շահառու» հասկացությունը շփոթեցնող է: Հարցազրույցներին և ֆոկուս խմբային քննարկումներին մասնակցած ՔՀԿ-ների մեծամասնությունը որպես իրական շահառու էին հայտարարագրել գործադիր ղեկավարին, սակայն համարում են, որ սա ձևական պահանջ է, քանի որ գործադիր ղեկավարները, այսպես թե այնպես, ներկայացված են գրանցման փաստաթղթերում<sup>294</sup>: Թեև իրական շահառուների վերաբերյալ առաջին հայտարարագիրը, ինչպես նաև յուրաքանչյուր տարի տվյալների հաստատումը անվճար է, սակայն տվյալների (օրինակ՝ անվան, հասցեի կամ անձնագրային տվյալների) փոփոխության գրանցման համար յուրաքանչյուր անգամ անհրաժեշտ է վճարել 10000 դրամ: Սա ՔՀԿ-ների համար անհամաչափ ծախս է հանդիսանում՝ հատկապես հաշվի առնելով, որ գործադիր ղեկավարի տվյալների փոփոխության դեպքում այդ նույն փոփոխությունները նաև տեղ են գտնում գրանցման փաստաթղթերում՝ 5000 դրամ վճարի դիմաց, այսինքն ՔՀԿ-ները ստիպված են կրկնակի վճարներ կատարել<sup>295</sup>:

### Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- ՀՀ Ազգային ժողովին՝ օրենսդրական փոփոխություններ իրականացնել՝ ՔՀԿ-ներին հնարավորություն տալով իրենց նպատակների շրջանակում հանրային շահերը ներկայացնել դատարանում, և ապահովել, որ նրանք կարողանան գործնականում օգտվել այս իրավունքից՝ մեղմելով չափազանց բարդ պահանջները և առնչվող վարչարարական ընթացակարգերը:
- Պետությանը՝ համարժեք պաշտպանություն ապահովել ՔՀԿ-ների համար, այդ թվում՝
  - խտրականության դեմ պայքարի մասին օրենք ընդունել և համապատասխան մարմին ստեղծել,
  - Եվրոպայի խորհրդի կողմից 2024 թվականի ապրիլին ընդունված հանձնարարականների հիման վրա SLAPP հայցերի դեմ իրավական ու գործնական միջոցառումներ իրականացնել,
  - երրորդ անձանց կողմից թիրախավորված ՔՀԿ-ներին աջակցող հրապարակային հայտարարություններ ներկայացնել,
  - ողջամիտ ժամկետում ՔՀԿ-ների ու ակտիվիստների դեմ հարձակումների պատշաճ քննություն իրականացնել:
- ՀՀ արդարադատության նախարարությանը և պետոեգիստրին՝ ոչ առևտրային կազմակերպություններից իրական շահառուների մասին տեղեկությունների փոփոխության համար վճար չգանձել և տվյալների ինքնաշխատ թարմացման հնարավորություն ստեղծել:

<sup>293</sup> ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին», 03.04.2001, հոդված 60.5:

<sup>294</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

<sup>295</sup> ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին», 27.12.1997, հոդված 16:

### 3.9 Պետական աջակցություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4.1/7

Իրավական դաշտ՝ 4.3/7	Գործնական դաշտ՝ 3.9/7
-------------------------	--------------------------

Պետական ֆինանսավորումը ԶՅԿ-ներին հատկացվում է մի շարք նախարարությունների կողմից՝ հիմնականում սոցիալական, կրթական, մշակութային և սպորտային ծրագրերին աջակցելու նպատակով: Թեև պետական բյուջեից ֆինանսավորման մեծ մասը հիմնված է համապատասխան պետական կարգի վրա, որով դրամաշնորհների հատկացման մրցութային և թափանցիկ մեխանիզմներ են նախատեսված, պետական մարմինները միշտ չէ, որ հրապարակում են պահանջվող տեղեկատվությունը, իսկ բյուջեով նախապես պլանավորված կամ գաղտնի ընթացակարգերի հիման վրա տրամադրված ոչ մրցութային ֆինանսավորման դեպքերը մտահոգություններ են առաջացնում ֆինանսավորման արդարության և թափանցիկության վերաբերյալ: Համայնքային մակարդակում աջակցությունը հիմնականում հայեցողական հիմունքներով է հատկացվում՝ թափանցիկության ու հաշվետվողականության անբավարար մակարդակով, իսկ բնաիրային աջակցությունը, ինչպես օրինակ ԶՅԿ աշխատանքների համար տարածքի տրամադրումը, տրվում է ըստ պահանջի:

Դրամաշնորհային հայտերի ներկայացման համար օգտագործվում է պետական գնումների էլեկտրոնային հարթակը, սակայն ԶՅԿ-ները կշռում են, որ այս հարթակը խրթին է և տեխնիկական խնդիրներով լի: Պետական գնումների նոր էլեկտրոնային համակարգը դեռևս չի գործարկվել:

ԶՅԿ-ներն ազատված են հարկերից՝ անհատույց և անվերադարձ հիմքով ապրանքների մատակարարման, աշխատանքի կատարման և ծառայությունների մատուցման, ինչպես նաև բարեգործական ծրագրերի դեպքում: Ծրագրի բարեգործական կարգավիճակը սահմանվում է կառավարության համապատասխան հանձնաժողովի հատուկ որոշմամբ՝ անցնելով երկարատև ու բարդ գործընթաց: ԶՅԿ-ների ձեռնարկատիրական գործունեության և անհատ նվիրատուների համար հարկային արտոնություններ չկան, իսկ նվիրատու կազմակերպությունների համար առկա արտոնությունները փոքրաթիվ են:

Կամավորությունը կարգավորվում է 2023 թվականի «Կամավոր աշխատանքի մասին» օրենքով, որը դրույթներ է նախատեսում կամավորների իրավունքների պաշտպանության ու կամավորական աշխատանքի հավաստագրման վերաբերյալ: Կամավորությունը լայն տարածում ունի, հատկապես երիտասարդների շրջանում, սակայն ԶՅԿ-ները որոշակի վարչարարական դժվարությունների են հանդիպել կամավորների հետ պայմանագրերի կնքման հարցում, իսկ փոքր կազմակերպությունների շրջանում օրենքի պահանջների վերաբերյալ իրազեկման ու դրա դրույթների կիրառման կարողությունների պակաս կա:

Այս ոլորտի գնահատականը 2024 թվականի համեմատ չի փոխվել: Առաջարկվում է բարելավել պետական և տեղական բյուջեից ֆինանսավորման ծավալը և թափանցիկությունը, ավելի

բարենպաստ հարկային միջավայր ստեղծել տարբեր աղբյուրներից կայուն ֆինանսավորման հնարավորությունները խթանելու նպատակով և ԶՀԿ-ների ու միջազգային գործընկերների հետ միասին հասցեագրել կամավորության կարգավորման հետ կապված օրենսդրական և գործնական խնդիրները:

Չափորոշիչ 1. Պետության կողմից ԶՀԿ-ների ֆինանսական և նյութական աջակցության բազմազան ու արդյունավետ մեխանիզմներ կան:

ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաներ և դրամաշնորհներ տրամադրելու վերաբերյալ կարգի համաձայն՝ դրամաշնորհ ստացող կազմակերպությունն ընտրվում է մրցույթի արդյունքում, իսկ սուբսիդիան հատկացվում է պետական մարմնի և կազմակերպության միջև կնքված սուբսիդիայի տրամադրման մասին պայմանագրի հիման վրա<sup>296</sup>: ԶՀԿ-ներին տրամադրվող ֆինանսավորումը հիմնականում իրականացվում է դրամաշնորհների ձևաչափով՝ մեկ տարի ժամկետով, դրամաշնորհ տրամադրող մարմնի տարեկան բյուջեի հիման վրա: Ըստ ՊԵԿ կողմից տրամադրված տեղեկատվության՝ ԶՀԿ տարեկան հաշվետվությունների համաձայն՝ 2024 թվականին պետական կամ համայնքային բյուջեից ֆինանսավորում է ստացել 132 հիմնադրամ և 288 ՀԿ<sup>297</sup>: ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների համաձայն՝ 2024 թվականին 267 ՀԿ և հիմնադրամ պետական բյուջեից ստացել է ընդհանուր առմամբ մոտ 13 միլիարդ դրամ: Ֆինանսավորման մեծ մասը (մոտ 70%) հատկացվել է մշակութային, կրթական, սոցիալական և երիտասարդական ծրագրերին՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կնքված դրամաշնորհային պայմանագրերի շրջանակներում: Պետական բյուջեից ֆինանսավորում է տրամադրվել նաև ընդհանուր առմամբ մոտ 500 միլիոն դրամ արժեք ունեցող գնման պայմանագրերի միջոցով՝ 12 ՀԿ-ների և 22 հիմնադրամների, որոնց մեծ մասը պետության կողմից հիմնադրված հիմնադրամներ կամ բարձրագույն ուսումնական հաստատություններ են: Ընդ որում, այս պայմանագրերի մեծամասնությունը տրամադրվել է ոչ մրցութային ընթացակարգերով<sup>298</sup>:

ՏԻՄ-երը ևս կարող են ֆինանսավորում հատկացնել ԶՀԿ-ներին՝ բյուջեի համապատասխան տողով: Համայնքապետարանները ամենից հաճախ ֆինանսավորում են հատկացնում սոցիալական և երիտասարդական կազմակերպություններին, շատ դեպքերում կազմակերպությանը կամ ներկայացուցիչներին հատկացվող դրամական աջակցության տեսքով: «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի հիման վրա որոշ համայնքներ իրենց բյուջեներում միջոցներ են նախատեսել երիտասարդական ծրագրերի համար<sup>299</sup>: ՏԻՄ-երի կողմից ԶՀԿ-ներին ծառայություններ պատվիրակելու գործելակերպը դեռևս զարգացած չէ, սակայն առանձին դեպքերում ԶՀԿ-ներին հաջողվել է համայնքային բյուջեից համաֆինանսավորում ստանալ իրենց սոցիալական ծրագրերի համար: Տեղական մակարդակով ԶՀԿ-ներին տրամադրվող բնաիրային աջակցությունը հազվադեպ է և հիմնականում սահմանափակվում է համայնքային, ցերեկային կամ երիտասարդական կենտրոնների համար տարածքի հատկացմամբ: ԶՀԿ-ները նաև նշում են, որ

<sup>296</sup> ՀՀ կառավարության N 1937-Ն որոշումը «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին», 24.12.2003, վերջին փոփ. 03.04.2025, <https://www.arlis.am/hy/acts/205168>

<sup>297</sup> Տեղեկությունը տրամադրվել է ՊԵԿ-ի 2025 թ. սեպտեմբերի 18-ի գրությամբ՝ ի պատասխան ԹԻՀԿ հարցման:

<sup>298</sup> Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ի պատասխան ԹԻՀԿ հարցման 2025 թ. հոկտեմբերի 23-ի գրությամբ տրամադրված տվյալներ:

<sup>299</sup> Ֆոկուս խմբային քննարկումներ, սեպտեմբեր 2025 թ.:

համայնքապետարանները սովորաբար պատրաստակամ են միանվագ միջոցառումների, օրինակ՝ դասընթացների կամ հանդիպումների համար տարածք տրամադրելու հարցում<sup>300</sup>:

Չափորոշիչ 2. ԲՀԿ-ների պետական աջակցությունը կարգավորվում է հստակ և օբյեկտիվ չափանիշներով և հատկացվում է թափանցիկ ու մրցակցային ընթացակարգով:

Պետական կառավարման մարմինների կողմից պետական աջակցությունը տրամադրվում է մրցութային հիմքով և կարգավորվում մանրամասն ընթացակարգով և չափորոշիչներով: Տեղական բյուջեներից աջակցությունը հայեցողական հիմքով է հատկացվում՝ առանց համապատասխան հաշվետվողականության:

Իրավաբանական անձանց պետական դրամաշնորհների և սուբսիդիաների հատկացման կարգով կարգավորումներ են նախատեսված դրամաշնորհների հայտարարման գործընթացի և գնահատող հանձնաժողովի գործունեության, այդ թվում՝ շահերի բախման, ընտրության գործընթացի թափանցիկության և ընտրության չափանիշների սահմանման վերաբերյալ: Կարգով չի պարտադրվում ԲՀԿ ներկայացուցիչներին ներգրավել գնահատող հանձնաժողովում, սակայն դա կարող է արվել դրամաշնորհներ տրամադրող պետական մարմնի հայեցողությամբ: Վերոնշյալ կարգը նաև էլեկտրոնային համակարգի միջոցով մրցույթներ իրականացնելու, պայմանագրեր կնքելու և հաշվետվություն ներկայացնելու մասին դրույթ է պարունակում<sup>301</sup>:

Ըստ սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի՝ մրցույթի արդյունքները, ընտրող հանձնաժողովի արձանագրությունը և մրցույթին առնչվող այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրամաշնորհային ծրագրերի հաշվետվությունները պետք է հրապարակվեն պետական մարմնի պաշտոնական կայքում: Սակայն գերատեսչությունները ոչ միշտ են ժամանակին և ամբողջական տեղեկատվություն տրամադրում: Օրինակ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հրապարակում է դրամաշնորհային ծրագրեր ստացած բոլոր ԲՀԿ-ների հաշվետվությունները<sup>302</sup>, իսկ նախարարության կայքում դրամաշնորհային մրցույթների արդյունքների վերաբերյալ բաժին է ստեղծվել, սակայն այս բաժնում 2025 թվականի նոյեմբերի դրությամբ որևէ փաստաթուղթ վերբեռնված չէ<sup>303</sup>: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հրապարակում է դրամաշնորհային մրցույթների փաստաթղթերը, սակայն ԲՀԿ-ների ծրագրային հաշվետվությունները բացակայում են<sup>304</sup>: Այնուհետև, կան դեպքեր, երբ դրամաշնորհները տրամադրվում են առանց մրցույթի, օրինակ՝ նախապես հաստատված բյուջետային ֆինանսավորման հիման վրա (հիմնականում սպորտային կազմակերպություններին, ազգային փոքրամասնությունները ներկայացնող ԲՀԿ-ներին և բուհերին)<sup>305</sup> կամ գաղտնիության ընթացակարգով՝ առանց բավարար հիմնավորման: Այսպես, 2025 թվականի նոյեմբերին լրատվամիջոցներում

<sup>300</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

<sup>301</sup> ՀՀ կառավարության N 1937-Ն որոշումը «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին», 24.12.2003:

<sup>302</sup> Հաշվետվություններ (դրամաշնորհային ծրագրեր), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, <https://www.mlsa.am/reports/1274>

<sup>303</sup> Հաշվետվություններ (Ընտրող հանձնաժողովի արձանագրություններ), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, <https://www.mlsa.am/reports/2963>

<sup>304</sup> Դրամաշնորհային ծրագրեր, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, <https://escs.am/am/category/grantsprograms>

<sup>305</sup> ՀՀ կառավարության N 2323-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին», 28.12.2023, <https://www.arlis.am/hy/acts/202735>

հրապարակում հայտնվեց, ըստ որի՝ վերջին հինգ տարվա ընթացքում վարչապետի աշխատակազմը գաղտնի որոշումներով մոտ 207 միլիոն դրամաշնորհ է հատկացրել մի հետազոտական ինստիտուտի՝ 2018 թվականի հեղափոխությունից և 2020 թվականի պատերազմից հետո քաղաքական միջավայրի ուսումնասիրությունների համար, ինչը լայն մտահոգություններ առաջացրեց հովանավորչության և ֆինանսավորման թափանցիկության բացակայության վերաբերյալ<sup>306</sup>:

Պետական գնումների էլեկտրոնային armeps.am համակարգն օգտագործվում է դրամաշնորհային ծրագրերին դիմելու և դրամաշնորհների պայմանագրերի հրապարակման համար: ՀՀ ֆինանսների նախարարությունն իր կայքում ուղեցույցներ է հրապարակել գնումների մասնակիցների, ինչպես նաև դրամաշնորհային մրցույթներ կազմակերպող մարմինների համար<sup>307</sup>: Հարթակում պայմանագրերը հրապարակվում են մեքենայի համար ոչ ընթեռնելի PDF ձևաչափով, իսկ որոնման գոտիները թույլ չեն տալիս հեշտությամբ գտնել այն ՔՀԿ-ներին, որոնք պետական բյուջեից դրամաշնորհային ֆինանսավորում կամ ծառայությունների պայմանագիր են ունեցել, քանի որ գնումների յուրաքանչյուր ընթացակարգի ներքո ներկայացված են բոլոր ստացող կազմակերպությունները (իսկ դրամաշնորհային մրցույթները տեխնիկապես դիտվում են որպես գնման ընթացակարգի տեսակ): Պետական դրամաշնորհներով հետաքրքրված բազմաթիվ ՔՀԿ-ներ գնումների հարթակը համարում են բարդ ու խրթին՝ լի տեխնիկական տերմիններով և պահանջներով, որոնք գործնականում հասու են միայն գնումների մասնագետներին: Առանձին ՔՀԿ-ներ նշել են, որ տեխնիկական խնդիրների պատճառով իրենց հայտերը չեն դիտարկվել: Մինևույն ժամանակ, նախորդ տարիներից փորձ ձեռք բերած կազմակերպությունները ավելի քիչ են դժվարությունների հանդիպել<sup>308</sup>: ՀՀ ֆինանսների նախարարությունը շարունակել է աշխատանքները պետական գնումների նոր էլեկտրոնային հարթակի մշակման ուղղությամբ, որի ներդրմամբ ակնկալվում է լուծել ընթացիկ տեխնիկական խնդիրները և բարելավել դրամաշնորհների մասին տեղեկատվության թափանցիկությունը: Նախարարությունը ՔՀԿ-ների հետ քննարկել է հարթակի նախագծային տարբերակները, սակայն հարթակը դեռևս չի գործարկվել:

Պետական դրամաշնորհների տրամադրման գործընթացում առկա տեխնիկական խնդիրներից բացի՝ ՔՀԿ-ները նշում են անհարկի վարչարարության, ընտրության գործընթացի թափանցիկության պակասի և աշխատանքների ծավալին խիստ անհամապատասխան ֆինանսավորման չափի մասին: Նրանց կարծիքով՝ գործնականում գրեթե անհնար է աշխատանքի պահանջվող ծավալն իրականացնել առանց կազմակերպության կամ այլ դոնորների համաֆինանսավորման: Որոշ դեպքերում նախարարությունները ծրագրի բյուջեն կրճատել են դրամաշնորհային առաջարկը հաստատելուց հետո՝ մինևույն ժամանակ ակնկալելով նախատեսված գործողությունների լիարժեք իրականացում: Ընդ որում, այդ փոփոխությունները հաճախ բանավոր կերպով են հաղորդակցվել՝ ընտրող հանձնաժողովի

<sup>306</sup> Նարեկ Կիրակոսյան, «Բյուջեից 207 մլն դրամ ստացած ՀՀ-ի ղեկավարը 2019-ին Փաշինյանի քայլարշավի ու փողոցային շարժման մասին գիրք է գրել», Factor.am, 31.10.2025, <https://factor.am/947296.html>, OC Media, “Armenian government under scrutiny over secret grants to research institute” (Հայաստանի կառավարությունը ուշադրության կենտրոնում է հետազոտական ինստիտուտին տրամադրված գաղտնի դրամաշնորհների համար), 05.11.2025, <https://oc-media.org/armenian-government-under-scrutiny-over-secret-grants-to-research-institute/>

<sup>307</sup> Ուղեցույցներ, ձեռնարկներ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, <https://www.minfin.am/hy/page/uxecuydzernark/>

<sup>308</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

որոշումից հետո: Վարչարարության և ընթացակարգերի հետ կապված խնդիրներ են նշվել՝ կապված ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից մարզային երիտասարդական կենտրոնների ստեղծման նպատակով հատկացված դրամաշնորհների հետ: Պայմանագրերի ուշ ստորագրման և վճարումների ուշացման, գնումների բարդ ընթացակարգերի և ծավալուն վարչարարության պատճառով դրամաշնորհ ստացած կազմակերպությունները չեն կարողացել նախատեսված շինարարությունը կամ վերանորոգումը ավարտել պայմանագրային ժամկետում և արդյունքում տուգանվել են<sup>309</sup>:

Տեղական մակարդակով ֆինանսավորման մրցակցային մեխանիզմ չկա, և համայնքապետարանների հատկացումները հիմնականում տրամադրվում են հայեցողական հիմունքներով՝ ստացած դիմումների հիման վրա: ԶՀԿ-ները նշում են գործընթացի թափանցիկության պակասի, ինչպես նաև ֆինանսավորված նախաձեռնությունների մոնիտորինգի և հաշվետվությունների ներկայացման մեխանիզմի բացակայության մասին: Համայնքապետարանի կողմից բնամթերային աջակցությունը, օրինակ՝ գրասենյակային տարածքի հատկացումը, նույնպես իրականացվում է հայեցողական հիմքով՝ ըստ ԶՀԿ-ների հետ նախկին համագործակցության փորձի և պետական դրամաշնորհներով պահանջվող ներդրման անհրաժեշտության<sup>310</sup>:

### Չափորոշիչ 3. ԶՀԿ-ներն օգտվում են բարենպաստ հարկային միջավայրից:

Ընդհանուր առմամբ, հարկային օրենսդրությունը հիմնականում բարենպաստ չէ ԶՀԿ-ների համար, թեև առկա են որոշ արտոնություններ: Ըստ Հարկային օրենսգրքի՝ ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները, աշխատանքները և ծառայությունները շահութահարկով հարկման ենթակա չեն<sup>311</sup>: Միևնույն ժամանակ, մասնավոր ընկերությունների կողմից բնաիրային նվիրատվությունները հարկվում են ԱԱՀ-ով, ընդ որում հարկման բազան կազմում է նվիրաբերված ակտիվների արժեքի 80%-ը<sup>312</sup>: ԱԱՀ-ից ազատվում են հասարակական, բարեգործական և կրոնական կազմակերպությունների կողմից ապրանքների անհատույց մատակարարումը, աշխատանքների անհատույց կատարումը և (կամ) ծառայությունների անհատույց մատուցումը: Սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը ևս ազատվում են ԱԱՀ-ից, եթե դրանք իրականացվում են համապատասխան միջկառավարական համաձայնագրերի շրջանակներում, ինչպես նաև այն դեպքում, եթե այդ ծրագրերի վերաբերյալ կառավարության և/կամ ծրագրերը որպես բարեգործական որակող համապատասխան հանձնաժողովի կողմից համապատասխան որոշում է կայացվել: Այս դրույթները լիարժեք կիրառվում են գործնականում:

ԶՀԿ-ները մասնավոր ընկերությունների նման իրենց աշխատակիցների համար եկամտահարկ են վճարում, ինչպես նաև գույքահարկ՝ որևէ տարածք տնօրինելու կամ վարձակալելու դեպքում: ԱՄՆ նախագահի հրամանից հետո արտաքին աջակցության կտրուկ անկման հետևանքով բազմաթիվ կազմակերպություններ դժվարությունների բախվեցին հարկային պարտավորությունները կատարելու հարցում, սակայն ֆինանսավորման զգալի

<sup>309</sup> Ֆոկուս խմբային քննարկումներ, սեպտեմբեր 2025 թ.:

<sup>310</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

<sup>311</sup> ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, հոդված 108:

<sup>312</sup> Նույն տեղում, հոդված 62:

կրճատումներից տուժած կազմակերպությունների համար հարկային արձակուրդներ կամ այլ մեղմացնող միջոցառումներ չնախատեսվեցին<sup>313</sup>:

ՔՀԿ-ների տնտեսական գործունեության խրախուսման հարկային մեխանիզմներ չկան, իսկ ուղղակի ձեռնարկատիրական գործունեության դեպքում ՔՀԿ-ները, ի տարբերություն փոքր ընկերությունների, չեն կարող օգտվել հարկման հատուկ համակարգերից (տե՛ս նաև Ոլորտ 2՝ «Հավասար վերաբերմունք»): Ֆինանսական դժվար իրավիճակում շատ ՔՀԿ-ներ փորձում են դիտարկել տնտեսական գործունեությունը որպես ինքնաֆինանսավորման միջոց, սակայն նրանք բախվում են անբավարար կարողությունների և մասնավոր ընկերությունների հետ շուկայում անհավասար մրցակցության խնդիրների:

Ոչ առևտրային կազմակերպություններն իրենց ապրանքների և ծառայությունների համար պետք է ԱԱՀ գանձեն, եթե գործունեության բոլոր տեսակներից իրացման տարեկան շրջանառությունը գերազանցի 115 միլիոն դրամը<sup>314</sup>: 2023 թվականից սկսած ՔՀԿ-ները երկխոսություն սկսեցին կառավարության հետ՝ դրամաշնորհները ԱԱՀ-ով հարկման ենթակա եկամուտ համարելու հարցի շուրջ իրենց մտահոգությունը արտահայտելու և հնարավոր լուծումներ գտնելու համար, սակայն հանդիպումների ընթացքում կառավարության կողմից առաջարկված լուծումները չեն հասցեագրել առկա ռիսկերը (տե՛ս նաև Ոլորտ 3՝ «Ֆինանսավորման մատչելիություն»):

Ըստ «Բարեգործության մասին» օրենքի՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնությունները բարեգործական որակված ծրագրերին տրամադրվում են օրենքով սահմանված կարգով<sup>315</sup>: ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվում են նախագծերը բարեգործական որակելու կարգը, ինչպես նաև հայտ ներկայացնելու, որոշումներ կայացնելու, բարեգործական ծրագրերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և բարեգործական որակավորումը վերանայելու կարգերը<sup>316</sup>: Բարեգործական կարգավիճակը տրամադրվում է կոնկրետ ծրագրի համար դրա ողջ տևողության ընթացքում, բայց կարող է վերանայվել, եթե ծրագրի իրականացման ընթացքում խնդիրներ լինեն, օրինակ՝ ներկայացված փաստաթղթերում հայտնաբերվեն կեղծ տեղեկություններ կամ օրենսդրության պահանջների խախտումներ<sup>317</sup>: Եթե ծրագրին տրվել է բարեգործական կարգավիճակ, ապա կազմակերպությունը պարտավոր է լիազոր մարմնին տարեկան հաշվետվություն տրամադրել իր գործունեության մասին<sup>318</sup>:

<sup>313</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

<sup>314</sup> ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, հոդված 59:

<sup>315</sup> ՀՀ օրենքը «Բարեգործության մասին», 08.10.2002, վերջին փոփ. առ 14.11.2024, հոդված 16, <https://www.arlis.am/hy/acts/199719>

<sup>316</sup> ՀՀ կառավարության N 66-Ն որոշումը «Բարեգործական ծրագրերի մասին», 16.01.2003, վերջին փոփ. առ 12.02.2019, <https://www.arlis.am/hy/acts/128100>

<sup>317</sup> Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգը, Հավելված N 1 ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշման, հոդված 28:

<sup>318</sup> Բարեգործական ծրագրերի որակման և գրանցման կարգի համաձայն՝ որոշումներ ընդունող և համապատասխան այլ գործառնություններ իրականացնող լիազոր մարմինը փոխվարչապետի գրասենյակն է, որը որոշումները կայացնում է բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի առաջարկության հիման վրա: Տե՛ս ՀՀ վարչապետի N 1111-Ա որոշումը «Բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովի կանոնադրությունն ու կազմը հաստատելու և ՀՀ վարչապետի 2001 թվականի մարտի 14-ի թիվ 205 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», 21.08.2018, վերջին փոփ. առ 20.05.2025, <https://www.arlis.am/hy/acts/206991>

Բարեգործական ծրագրի կարգավիճակ ստանալու և համապատասխան հարկերից ազատվելու ընթացակարգը բավականին բարդ է և ժամանակատար, լի տեխնիկական և վարչարարական պահանջներով, և այս գործընթացը սովորաբար մեկ ամսից ավելի է տևում, ինչը հատկապես խնդրահարույց է արագ արձագանքման ծրագրերի դեպքում: Բացի այդ՝ բարեգործական ճանաչված ծրագրի շրջանակներում գնման յուրաքանչյուր պայմանագիր պետք է հաստատվի հարկային արտոնություն ստանալու համար<sup>319</sup>: Համագործակցելով միջազգային կազմակերպությունների հետ՝ վերջին տարիներին ԲՀԿ-ները երկխոսություն են ծավալել կառավարության և խորհրդարանի հետ՝ բարեգործության վերաբերյալ գործող օրենսդրությունը վերանայելու, բարեգործական գործունեության համար այն ավելի նպաստավոր դարձնելու և բարեգործությունը խթանելու նպատակով<sup>320</sup>:

ԲՀԿ-ների կողմից դրամահավաքի՝ քառուղֆանդինգի հարթակների օգտագործման աճող միտում կա: Սակայն հարկային օրենսդրությունը լրացուցիչ խնդիրներ է ստեղծում քառուղֆանդինգի հարթակներ տրամադրող միջնորդ կազմակերպությունների համար: Մասնավորապես, այս կազմակերպությունները պետք է ԱԱՀ վճարեն մուտք արված յուրաքանչյուր նվիրատվության համար, ինչը նվազեցնում է շահառու ԲՀԿ-ների համար նախատեսված միջոցները: Որպես լուծում՝ նրանք կազմակերպում են նվիրատվությունների ուղիղ փոխանցում շահառու ԲՀԿ-ներին (տարանցիկ բանկային հաշիվների միջոցով), որպեսզի գումարն ամբողջությամբ հասնի շահառուին<sup>321</sup>:

#### Չափորոշիչ 4. ԲՀԿ-ներին նվիրատվությունների հատկացման դեպքում ընկերությունները և անհատներն օգտվում են հարկային արտոնություններից:

Նվիրատվությունների համար նախատեսված հարկային արտոնությունները բավարար չեն խոշոր և հաճախակի նվիրատվություններ խթանելու համար: Նվիրատու կազմակերպությունների համար հարկային արտոնությունը հետևյալն է՝ շահույթահարկ վճարողների հարկման բազայից նվազեցվում է ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրված ակտիվների, դրանց համար կատարված աշխատանքների և (կամ) դրանց մատուցված ծառայությունների արժեքը, բայց ոչ ավելի, քան հարկային տարվա համախառն եկամտի 0,25%-ը<sup>322</sup>: Ինչպես արդեն նշվեց, ընկերությունների բնափրային նվիրատվությունները հարկվում են ԱԱՀ-ով (եթե ԱԱՀ-ից ազատման մասին կառավարության հատուկ որոշում չկա), ընդ որում հարկի հաշվարկման բազան կազմում է նվիրաբերված ակտիվների արժեքի 80%-ը<sup>323</sup>: Գործնականում մի շարք ընկերություններ գումարներ են հատկացնում ԲՀԿ-ներին սոցիալական, կրթական, առողջապահական և բնապահպանական նախաձեռնությունների համար, սակայն տևական և բարդ գործընթացներից խուսափելու համար նախընտրում են չօգտվել հարկի նվազեցման հնարավորությունից<sup>324</sup>:

<sup>319</sup> Տեղեկատվության ճշտում «ՀԿ Կենտրոնի» ներկայացուցչի հետ, սեպտեմբեր 2025 թ.:

<sup>320</sup> ՀԿ Կենտրոն, «Dialogue4Progress. «Բարեգործական ոլորտի իրավական կարգավորման մեխանիզմներն ու կարիքները. Ինչու՞ կարգավորել բարեգործական ոլորտը» խորագրով պանելային քննարկում», 18.09.2024, <https://ngoc.am/dialogue4progress-2/>, ՀԿ Կենտրոն, «Բարեգործությամբ զորացված. իրավական բարեփոխումների խթանում բարեգործական գործունեության համար Հայաստանում», <https://ngoc.am/programs/cso-meter-ngoc/>

<sup>321</sup> Տեղեկատվության ճշտում «Ռեկրմենիա» հիմնադրամի հետ, սեպտեմբեր 2025 թ.:

<sup>322</sup> ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, հոդված 123:

<sup>323</sup> Նույն տեղում, հոդված 62:

<sup>324</sup> «ՍԻՎԻՏՏԱ ԷՅԷՄ» ՓԲԸ, «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնավոր ոլորտի կողմից ֆինանսավորման հնարավորությունների գնահատում», 2023, [https://www.counterpart.org/wp-content/uploads/2024/02/REPORT\\_Private-sector-funding-CSO.pdf](https://www.counterpart.org/wp-content/uploads/2024/02/REPORT_Private-sector-funding-CSO.pdf)

Չափորոշիչ 5. Օրենսդրությունն ու քաղաքականությունը խթանում են կամավորությունը և խթաններ տրամադրում դրա զարգացման համար:

«Կամավոր աշխատանքի մասին» օրենքը, որն ուժի մեջ մտավ 2023 թվականի հոկտեմբերին, սահմանում է կամավորության ու կամավորի կարգավիճակի իրավական հիմքերը, դատարանում համապատասխան իրավունքների պաշտպանությունը, կամավոր աշխատանքից բխող լրացուցիչ ծախսերի փոխհատուցման իրավունքը, կամավորների առողջության և անվտանգության երաշխիքները և կամավորի իրավունքների պաշտպանությանն առնչվող այլ դրույթներ: ԲՀԿ ձեռնարկատիրական գործունեության մեջ կամավորներին ներգրավելու արգելք չկա: Ըստ օրենքի՝ կամավոր է համարվում այն անձը, որը կազմակերպության հետ կամավոր աշխատանքի պայմանագիր է կնքել: Առանց պայմանագրի կամավոր աշխատանքում ներգրավվելու դեպքում տվյալ աշխատանքը համարվում է անօրինական, և կազմակերպությունը կարող է ենթարկվել տուգանքի: Միևնույն ժամանակ, օրենքում սահմանված է «ակցիայի»՝ մեկնագամյա կամ մշտական բնույթ չկրող միջոցառման հասկացությունը, և նշված է, որ կամավոր աշխատանքի մասին պայմանագիր կնքելը պարտադիր չէ ակցիային մասնակցելու դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ կամավոր աշխատանքը կատարվում է ոչ կազմակերպության միջոցով<sup>325</sup>: Ըստ օրենքի՝ կամավորներն իրավունք ունեն կազմակերպությունից ստանալ կատարած կամավոր աշխատանքի վերաբերյալ տեղեկանք, որը կարող է հետագայում նրանց օգնել աշխատանքի կամ համալսարան ընդունվելիս: Այդ նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կամավորական աշխատանքի ժամանակահատվածը աշխատանքային փորձառություն համարելու վերաբերյալ տեղեկանքի տրամադրման կարգ է ընդունել, ըստ որի՝ կամավոր ընդունող կազմակերպությունները պետք է կամավորի վերաբերյալ տվյալները լրացնեն նախարարության «Աշխատանքի էլեկտրոնային բորսա» հարթակում (e-work.am), որից հետո կարող են համակարգից ինքնաշխատ տարբերակով ներբեռնել համապատասխան տեղեկանքը<sup>326</sup>:

Գործնականում ԲՀԿ-ները հաճախ են կամավորների ներգրավում իրենց աշխատանքում, և կամավորության գաղափարը աստիճանաբար ավելի ճանաչելի է դառնում, հատկապես երիտասարդների շրջանում: Կամավորական փորձը հաճախ ճանաչվում է գործատուների և բուհերի կողմից: Որոշ համալսարաններ կամավորական փորձ են պահանջում որպես ընդունելության նախապայման, ինչն էլ ավելի է հանրայնացնում կամավորությունը և խրախուսում երիտասարդներին ներգրավվել ԲՀԿ-ներում որպես կամավոր:

ԲՀԿ-ները նշում են, որ պայմանագրի առկայությունը նպաստում է կամավորների ավելի պարտաճանաչ մոտեցմանը պայմանագրային դրույթներին հետևելու և աշխատանքային ժամերը պահպանելու հարցում: Այնուամենայնիվ, ԲՀԿ-ները մի շարք դժվարություններ են նշում, որոնց առնչվել են անկախ կամավոր աշխատանքի տևողությունից պայմանագիր կնքելու պահանջի հետ կապված, քանի որ այս պահանջը վարչարարական բեռ է դառնում հարյուրավոր կամավորներ կառավարող կազմակերպությունների համար<sup>327</sup>: Բացի այդ՝ օրենքը պահանջում է պայմանագրում նշել հանրային ծառայությունների համարանիշը, ինչը

<sup>325</sup> ՀՀ օրենքը «Կամավոր աշխատանքի մասին», 14.06.2023, <https://www.arlis.am/hy/acts/180260>  
<sup>326</sup> ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի թիվ 10-Ն հրամանը «Կամավոր աշխատանքի ժամանակահատվածն աշխատանքային փորձառություն համարելու վերաբերյալ տեղեկանքի կամ երաշխավորագրի տրամադրման կարգը հաստատելու մասին», 12.01.2024, <https://www.arlis.am/hy/acts/188744>  
<sup>327</sup> Ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

հնարավոր չէ արտասահմանից եկած կամավորների դեպքում: ՔՀԿ-երը նաև նշում են, որ բազմաթիվ կազմակերպություններ տեղեկացված չեն «Կամավոր աշխատանքի մասին» օրենքի դրույթներից կամ բավարար կարողություններ չունեն դրանց կիրարկման համար, հատկապես փոքր համայնքային կազմակերպությունները, որոնք չունեն հաշվապահ կամ իրավաբան և դժվարանում են համապատասխան փաստաթղթերի պատրաստման հարցում<sup>328</sup>: Այս բացերը հասցեագրելու համար ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում կամավորական աշխատանքի կառավարման ուղեցույց է մշակվել<sup>329</sup>, իսկ մի քանի մարզային ՔՀԿ-ներ իրազեկման և կարողությունների զարգացման նախաձեռնություններ են սկսել:

### Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- ՀՀ կառավարությանը՝ ընդլայնել ՔՀԿ-ներին տրամադրվող ֆինանսավորման շրջանակը, մասնավորապես՝ ավելացնելով պետական ֆինանսավորում տրամադրող պետական մարմինների քանակը և դրամաշնորհների ֆինանսավորման ու ծառայությունների պատվիրակման ծավալներն ու գործելակերպը, ապահովել ֆինանսավորման թափանցիկ, մրցակցային և հաշվետու հատկացում ինչպես պետական, այնպես էլ տեղական մակարդակներում, այդ թվում՝ արդիականացնել պետական դրամաշնորհների տրամադրման էլեկտրոնային հարթակը այն առավել սահուն ու արդյունավետ օգտագործելու համար և կանոնակարգեր ընդունել ոչ մրցութային ֆինանսավորման չափորոշիչների հստակ ու նեղ շրջանակ սահմանելու և տեղական բյուջեներից թափանցիկ ու մրցակցային հատկացումներ ապահովելու համար:
- ՀՀ կառավարությանը (մասնավորապես՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը), ինչպես նաև Ազգային ժողովին՝ ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային միջավայր ստեղծել, որը կօգնի բարելավել տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ անհատների և տնտեսվարող սուբյեկտների նվիրատվություններից և ուղղակի ձեռնարկատիրական գործունեությունից ֆինանսավորում և բնահրային աջակցություն հայթայթելու հնարավորությունները, մասնավորապես՝
  - դյուրինացնել բարեգործական գործունեությունը հարկերից ազատելու ընթացակարգերը՝ հնարավորություն ընձեռելով ժամանակին և արդյունավետ գործարքներ կատարել բարեգործական նպատակների համար,
  - տնտեսական գործունեությամբ զբաղվող ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային ռեժիմ ապահովել՝ խրախուսելու ինքնաֆինանսավորման հասնելու նրանց ջանքերը,
  - հաշվի առնել միջազգային առաջատար փորձը, որը կօգնի խթանել ՔՀԿ-ների գործունեությունը ավելի բարենպաստ հարկային ընթացակարգերի միջոցով,

<sup>328</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

<sup>329</sup> Վահրամ Պետրոսյան, Ստեփան Սիոյան, «Կամավոր աշխատանքի կառավարման ուղեցույց» քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար, «ՊրոԴեֆորմ» ՍՊԸ, Երևան 2025, <https://erit.am/storage/documents/pdf/fef01317c73b69201cd353b3339cdb05.pdf>

- ավելի զգալի հարկային արտոնություններ տրամադրել անհատների և ընկերությունների նվիրատվությունների համար<sup>330</sup> և ԱԱՀ-ից ազատել ՔՀԿ-ներին տրամադրվող բնաիրային նվիրատվությունները:

- ՀՀ կառավարությանը և Ազգային ժողովին՝ համագործակցել ՔՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ՝ կամավորության կարգավորումների հետ կապված օրենսդրական և գործնական խնդիրները հասցեագրելու նպատակով, ինչպես նաև երաշխավորել ՔՀԿ-ների կողմից մշակված կամավոր աշխատանքի կառավարման ուղեցույցներն ու ձևանմուշները:

### 3.10 Պետություն-ՔՀԿ համագործակցություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4.0 / 7

Իրավական դաշտ՝ 4.4 / 7	Գործնական դաշտ՝ 3.6 / 7
---------------------------	----------------------------

Պետություն-ՔՀԿ համագործակցության վերաբերյալ առանձին քաղաքականություն կամ ռազմավարություն Հայաստանում չկա, իսկ մասնակցությունը կարգավորվում է տարբեր օրենքների ու ռազմավարությունների համապատասխան դրույթներով: Վերջին տարվա ընթացքում տեղ գտած բարեփոխումները, օրինակ՝ ՀՀ վարչապետի աշխատակազմում մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչության ստեղծումը, նպատակ ունեն բարելավել երկխոսությունը, իսկ կոռուպցիայի դեմ պայքարի, գեղարվեստի հավասարության, երիտասարդական և մարդու իրավունքների ոլորտների ռազմավարությունները ՔՀԿ-ների ներգրավվածություն են նախատեսում:

«Հանրային խորհրդի մասին» օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրությամբ որպես կառավարության խորհրդակցական մարմին սահմանված և վերջին տարիներին չգործող Հանրային խորհուրդը վերսկսեց իր գործունեությունը: Երկխոսության մյուս ինստիտուցիոնալ հարթակներից են նախարարներին և այլ պետական մարմինների ղեկավարներին կից հասարակական խորհուրդները, տարբեր ոլորտային հանձնաժողովները, դիտորդական խմբերը և առանձին միջազգային նախաձեռնությունների, օրինակ՝ ԲԿԳ-ի և ԱՃԹՆ շրջանակներում ստեղծված բազմաշահառու հարթակները: Գործնականում, սակայն, հասարակական և ոլորտային խորհուրդների շատերը ակտիվ չեն, հաշվետվողականության պակաս ունեն և դժվարամատչելի են մարզային ՔՀԿ-ների համար: 2025 թվականի սեպտեմբերին ընդունված՝ հասարակական խորհուրդների նոր

<sup>330</sup> Օրինակ՝ Լեհաստանում, Բուլղարիայում և Չեխիայում ընկերությունների նվիրատվությունները նվազեցվում են հարկման բազայի մինչև 10%-ի չափով. տե՛ս՝ ECNL, "Tax Benefits Stimulating Philanthropy: Comparative Research" («Բարեգործությունը խթանող հարկային արտոնություններ. համեմատական հետազոտություն»), մայիս 2021 թ., <https://ecnl.org/sites/default/files/2021-07/Final%20ECNL%20Tax%20benefits%20stimulating%20philanthropy%20July.pdf>:

աշխատակարգը նպատակ ունի բարելավել նիստերի հաճախականությունը, մարզային ներկայացուցչությունը և հետադարձ կապի մեխանիզմները:

Պետություն-ԶՅԿ համագործակցության ոլորտի ընդհանուր գնահատականը մնացել է նույնը, ինչ 2024 թվականին էր, իսկ իրավական դաշտի գնահատականը բարելավել է 4,3-ից 4,4 միավոր, ինչը պայմանավորված է հասարակական խորհուրդների վերաբերյալ նոր իրավակարգավորումների ընդունմամբ և ՀՀ վարչապետի գրասենյակի նոր ստորաբաժանման ստեղծմամբ: Առաջարկվում է, որ այս ստորաբաժանումը ԶՅԿ-ների ու միջազգային կազմակերպությունների հետ համատեղ քայլեր ձեռնարկի քաղաքացիական հասարակության նպաստավոր միջավայրի բարելավման ուղղությամբ և համապատասխան գործողությունների ծրագիր մշակի: Բացի այդ՝ պետական մարմիններին առաջարկվում է լիարժեք կիրառել հասարակական խորհուրդների վերաբերյալ նոր ընթացակարգը՝ ապահովելով ընտրության գործընթացի թափանցիկությունը և աշխատանքների վերաբերյալ կանոնավոր հանրային հաշվետվությունները, իսկ Հանրային խորհրդին առաջարկվում է ապահովել ԶՅԿ-ների ավելի սերտ ներգրավումը և Փաստահավաք հանձնաժողովի թափանցիկ, հաշվետու և արժանիքների վրա հիմնված ընտրության գործընթացը և կարողությունները:

Չափորոշիչ 1. Պետական քաղաքականությունը նպաստում է ԶՅԿ-ների զարգացմանը և նրանց հետ համագործակցությանը:

Հայաստանում պետության և ԶՅԿ-ների միջև համագործակցությունը ամրագրված չէ որևէ քաղաքականությամբ կամ ռազմավարությամբ, չկա նաև ԶՅԿ-ների զարգացման վերաբերյալ որևէ պետական ռազմավարություն, որը կնպաստեր ԶՅԿ հատվածի զարգացմանն ուղղված առավել արդյունավետ գործընկերությանը և համատեղ ջանքերին: Պետության և ԶՅԿ-ների միջև համագործակցության շրջանակը ուրվագծված է քաղաքացիական հասարակության մասնակցության համար հնարավորություններ սահմանող տարբեր իրավական ակտերի և ռազմավարությունների միջոցով: Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության 2023-2025 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքային շրջանակը նախատեսում են մասնակցային կառավարման մշտադիտարկման ու ընթացակարգերի սպասարկման ինստիտուցիոնալ մեխանիզմի ձևավորում և թվային ու անցանց գործիքների բարելավում, ինչպես նաև թիրախային ցուցանիշներ սահմանում բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկվածության և նախագծերի շուրջ դիտարկումների ներառման վերաբերյալ<sup>331</sup>: Այս տեսլականին համապատասխան՝ 2024 թվականի դեկտեմբերին ՀՀ վարչապետի որոշմամբ վարչապետի աշխատակազմում ստեղծվեց մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչությունը<sup>332</sup>: Վարչության գործառույթներից են մասնակցային կառավարման մեթոդաբանության մշակումը և մշտադիտարկումը, բաց կառավարման ծրագրերի համակարգումը, ԶՅԿ-ների կայացմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքները և ԶՅԿ-ների հետ համագործակցության զարգացումը<sup>333</sup>:

<sup>331</sup> ՀՀ կառավարության N 691-Լ որոշումը «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը, 2023-2025 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքային շրջանակը հաստատելու մասին», 13.05.2022:  
<sup>332</sup> ՀՀ վարչապետի N 1204-Լ որոշում «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի մայիսի 25-ի N 564-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 26.12.2024:  
<sup>333</sup> Վարչապետի աշխատակազմ, մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչություն, Հայաստանի Հանրապետության կառավարություն, <https://www.gov.am/am/staff-structure/info/289/>

ՔՀԿ-ների հետ գործակցությանը վերաբերող դրույթներ են ամրագրված Հակակոռուպցիոն ռազմավարության, Գեներալի քաղաքականության իրականացման ռազմավարության, Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության, «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի շրջանակներում, ինչպես նաև բազմաշահառու հանձնաժողովների և համատեղ աշխատանքային խմբերի հիմնադրումը և գործունեությունը կարգավորող իրավական ակտերում: Այս փաստաթղթերը մշակվել են ՔՀԿ-ների մասնակցությամբ և իրականացման ու մշտադիտարկման արդյունավետության տարբեր մակարդակներ ունեն:

Չափորոշիչ 2. Պետությունը ՔՀԿ-ների հետ համագործակցությանն աջակցող հատուկ մեխանիզմներ ունի:

ՀՀ Սահմանադրությամբ առանձին դրույթ է նախատեսված Հանրային խորհրդի վերաբերյալ՝ որպես կառավարության խորհրդակցական մարմին<sup>334</sup>: Այս մարմնի գործառույթներն են՝ քաղաքականության մշակման և իրականացման գործում հասարակության տարբեր շերտերի շահերը ներկայացնելը, պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցությանը նպաստելը, հանրային նշանակություն ունեցող հարցերի, այդ թվում՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի, պետական ծրագրերի, ռազմավարությունների, հայեցակարգերի և դրանց նախագծերի վերաբերյալ հասարակական կարծիքը բացահայտելը<sup>335</sup>:

«Հանրային խորհրդի մասին» օրենքը սահմանում է խորհրդի անդամակցության և գործունեության հիմնական սկզբունքները: Հանրային խորհուրդը կազմված է 45 անդամից: Նրանցից տասնհինգը նշանակվում է կառավարության կողմից՝ ՀՀ վարչապետի առաջադրած թեկնածությունների հիման վրա: Նշանակումից հետո այս տասնհինգ անդամները տարբեր կառույցների կողմից առաջադրված թեկնածուներից ընտրում են մյուս տասնհինգին (Հանրային խորհրդի հանձնաժողովների նախագահներին), ապա այդ 30 անդամներն առաջադրում և ընտրում են մնացած 15 անդամներին: Հանրային խորհրդի նախագահի թեկնածությունը առաջարկվում է վարչապետի կողմից և հաստատվում է կառավարության նիստում<sup>336</sup>: 2024 թվականի դեկտեմբերին «Հանրային խորհրդի մասին» օրենքում փոփոխություններ ընդունվեցին՝ անդամների ընտրության ընթացակարգը կարգավորելու և Հանրային խորհրդի կազմում փաստահավաք հանձնաժողով կազմավորելու նպատակով: Ըստ այս փոփոխությունների՝ Հանրային խորհրդի անդամների հավաքագրման վերաբերյալ հայտարարության հրապարակման, թեկնածությունների հավաքագրման և քվեարկության կազմակերպման գործընթացը իրականացնում է ՀՀ վարչապետի աշխատակազմի՝ Հանրային խորհրդի քարտուղարությունն ապահովող կառուցվածքային ստորաբաժանումը, որը գործում էր դեռևս հիմնական օրենքի ընդունումից ի վեր<sup>337</sup>:

2025 թվականի հունվարի ավարտին կառավարության որոշմամբ նշանակվեցին Հանրային խորհրդի՝ վարչապետի կողմից առաջադրված տասնհինգ անդամները: Այնուհետև օրենքով սահմանված կարգով ընտրվեցին մնացած անդամները: Տարբեր կառույցներից առաջադրված

<sup>334</sup> ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 161:  
<sup>335</sup> ՀՀ օրենքը «Հանրային խորհրդի մասին», 07.03.2018, վերջին փոփ. առ 09.01.2025, հոդված 2, <https://www.arlis.am/hy/acts/201686>  
<sup>336</sup> Նույն տեղում, հոդված 5:  
<sup>337</sup> ՀՀ օրենքը «Հանրային խորհրդի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին, 04.12.2024, <https://www.arlis.am/hy/acts/201682>

թեկնածուների ցանկը (ընդհանուր առմամբ 77 թեկնածու), ինչպես նաև Հանրային խորհրդի անդամների վերջնական ցանկը հրապարակվել է կառավարության կայքում<sup>338</sup>: Վարչապետի հայտարարության համաձայն՝ 2025 թվականի ապրիլի 10-ից Հանրային խորհուրդը համարվում է կազմավորված<sup>339</sup>: Այդ ժամանակվանից ի վեր Հանրային խորհուրդը մի շարք նիստեր և հանդիպումներ է անցկացրել՝ համապատասխան տեղեկատվությունը հրապարակելով իր ֆեյսբուքյան էջում<sup>340</sup>: Մինևույն ժամանակ, ֆոկուս խմբային քննարկումներին մասնակցած ԶԳԿ-ների մեծ մասը տեղյակ չէր Հանրային խորհրդի նոր կազմի և գործունեության մասին:

Հանրային խորհրդի մասին օրենքի փոփոխությունների հիման վրա խորհրդի կազմում պետք է ստեղծվի Փաստահավաք հանձնաժողով՝ 1991 թվականի սեպտեմբերի 21-ից մինչև 2023 թվականը ներառյալ ժամանակահատվածում տեղի ունեցած մարդու իրավունքների հիմնարար և պարբերական խախտումները հետաքննելու համար: Հանձնաժողովի մանդատն է՝ նպաստել խախտումների պատճառների և համակարգային խնդիրների բացահայտմանը, հնարավոր խախտումների կանխարգելմանը, կրկնության բացառմանը, հասարակության սոցիալական վերափոխմանը, սոցիալական արդարության վերականգնմանը, հաշտեցմանը, իսկ գործունեության սկզբունքներից են՝ օբյեկտիվությունը և անկողմնակալությունը, քաղաքական չեզոքությունն ու զսպվածությունը, հանրային հաշվետվողականությունը և թափանցիկությունը, այդ թվում՝ հանրային համապատասխան տեղեկությունների հանրայնացման, Փաստահավաք հանձնաժողովի զեկույցներում ներառելու և հրապարակելու միջոցով<sup>341</sup>: 2025 թվականի օգոստոսին կառավարության որոշումներով հաստատվեցին հանձնաժողովի գործունեության, հանձնաժողովի անդամների թեկնածուների ներկայացման, փաստաթղթերի ներկայացման և ուսումնասիրման կարգերը<sup>342</sup>: Հարցազրույցների մասնակիցները կասկած հայտնեցին փաստահավաք հանձնաժողովը Հանրային խորհրդի ներքո կազմակերպելու նպատակահարմարության վերաբերյալ՝ նշելով, որ խորհուրդը այդպիսի լուրջ մանդատի համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ վարկանիշ և մասնագիտական կարողություններ չունի: Բացի այդ՝ հանձնաժողովի աշխատանքի շրջանակը չափազանց լայն է յոթ հոգանոց թիմի կողմից սահմանափակ ժամանակահատվածում նախատեսված խնդիրները արդյունավետորեն իրականացնելու համար<sup>343</sup>: 2025 թվականի հոկտեմբերին Փաստահավաք հանձնաժողովի անդամների հավաքագրման մրցույթ հայտարարվեց, սակայն հայտերի անբավարար քանակի պատճառով մրցույթը համարվեց չկայացած<sup>344</sup>:

<sup>338</sup> Հանրային խորհրդի հայտատուներն ըստ հանձնաժողովների, Հայաստանի Հանրապետության կառավարություն, [https://www.gov.am/u\\_files/file/Haytararutyun-2025/ղիմումատուներ.pdf](https://www.gov.am/u_files/file/Haytararutyun-2025/ղիմումատուներ.pdf), Հանրային խորհրդի անդամներ, Հայաստանի Հանրապետության կառավարություն, 09.04.2025, [https://www.gov.am/u\\_files/file/Haytararutyun-2025/Հանրային%20խորհուրդ.pdf](https://www.gov.am/u_files/file/Haytararutyun-2025/Հանրային%20խորհուրդ.pdf)

<sup>339</sup> Հայաստանի Հանրապետության վարչապետ, «ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒԹՅՈՒՆ Հանրային խորհրդի կազմավորման մասին», 10.04.2025, <https://www.gov.am/files/docs/5898.pdf>

<sup>340</sup> ՀՀ Հանրային խորհուրդ, Facebook, <https://www.facebook.com/profile.php?id=100069520519448>

<sup>341</sup> ՀՀ օրենքը «Հանրային խորհրդի մասին», հոդված 11.1-11.7:

<sup>342</sup> ՀՀ կառավարության N 1143-Լ որոշումը «Փաստահավաք հանձնաժողովի գործունեության կարգը սահմանելու մասին», 14.08.2025, <https://www.arlis.am/hy/acts/210680>, ՀՀ կառավարության N 1128-Լ որոշումը «Փաստահավաք հանձնաժողովում ընտրվելու նպատակով ոչ առևտրային կազմակերպությունների կողմից թեկնածուների ներկայացման կարգը, ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դրանց ներկայացման և ուսումնասիրման կարգը սահմանելու մասին», 14.08.2025, <https://www.arlis.am/hy/acts/210608>

<sup>343</sup> Հարցազրույցներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

<sup>344</sup> Աղբյուր՝ ՀՀ Հանրային խորհուրդի ֆեյսբուքյան էջ:

Նախարարությունների խնդիրների և գործառույթների իրականացմանը քաղաքացիական հասարակության մասնակցությունն ապահովելու նպատակով 2016 թվականին կառավարությունը որոշում ընդունեց նախարարներին կից հասարակական խորհուրդներ ստեղծելու վերաբերյալ, իսկ 2018 թվականին հասարակական խորհուրդներին վերաբերող դրույթը ներառվեց պետական կառավարման համակարգի մարմինների կանոնադրության օրինակելի ձևի մեջ<sup>345</sup>: Ըստ առանձին նախարարությունների կողմից ընդունված աշխատակարգերի, որտեղ սահմանված են հասարակական խորհրդի անդամների ընտրության, հանդիպումների պարբերականության և գործունեության թափանցիկության սկզբունքները՝ խորհուրդները պետք է կազմավորվեն թափանցիկ ձևով և նիստեր գումարեն առնվազն եռամսյակը մեկ անգամ: Գործնականում, ըստ նախարարությունների պաշտոնական կայքերում հրապարակված տեղեկատվության, 2025 թվականին (սոյեմբեր ամսվա դրությամբ) տասներկու նախարարություններից միայն չորսում են գումարվել հասարակական խորհուրդների նիստեր՝ մեծ մասամբ ոչ կանոնավոր հիմքով<sup>346</sup>: Այս նախարարություններից միայն մեկն է հաշվետվություն ներկայացրել խորհրդի տարեկան գործունեության վերաբերյալ<sup>347</sup>: Կառավարությանը ենթակա մարմիններից այս առումով առավել ակտիվ է եղել ՊԵԿ-ը, որը գումարել է Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի երեք նիստ՝ ԹՀԿ-ների և տնտեսվարող ընկերությունների մասնակցությամբ<sup>348</sup>: Գործող խորհուրդներում ներգրավված ԹՀԿ-ները նշել են, որ այս հարթակը օգտակար է կառավարության ծրագրերի և քաղաքականության վերաբերյալ անմիջական տեղեկատվություն ստանալու համար, և երբեմն հնարավորություն է տալիս խնդիրներ բարձրաձայնել կամ հետադարձ կապ տրամադրել նախագծերի մշակման վաղ փուլում: Սակայն չկան մեխանիզմներ, որոնք կապահովեն, որ ԹՀԿ-ների առաջարկությունները պատշաճ կերպով հաշվի կառնվեն<sup>349</sup>: Մարզային ԹՀԿ-ների դեպքում հասարակական խորհուրդներին մասնակցելու զգալի խոչընդոտ է այն, որ նիստերն անցկացվում են Երևանում՝ առանց առցանց միանալու հնարավորության և ճանապարհածախսի փոխհատուցման:

2025 թվականի սեպտեմբերին ՀՀ վարչապետի որոշմամբ նախարարներին և կառավարությանը ենթակա մարմինների ղեկավարներին կից հասարակական խորհուրդների վերաբերյալ նոր կանոնակարգեր ներդրվեցին: Որոշման նախագիծը քննարկվել էր ԹՀԿ-ների հետ, իսկ 2025 թվականի հուլիսին հրապարակվել է e-draft հարթակում<sup>350</sup>: Ընդունված աշխատակարգերի համաձայն՝ նախարարությունների և այլ մարմինների կողմից մշակված բոլոր ռազմավարությունների, հայեցակարգերի և ծրագրերի նախագծերը ենթակա են հասարակական խորհրդի հետ պարտադիր քննարկման ինչպես գաղափարի ձևավորման փուլում, այնպես էլ իրավական ակտի մշակումից հետո՝ պաշտոնական շրջանառության մեջ

<sup>345</sup> ՀՀ կառավարության N 1552-Լ որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 22-ի թիվ 624-Լ որոշման մեջ լրացում կատարելու մասին», 27.12.2018:

<sup>346</sup> Աղբյուր՝ ՀՀ կառավարության կայքում թվարկված 12 նախարարությունների պաշտոնական կայքեր, <https://www.gov.am/am/structure/>

<sup>347</sup> ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը կից հասարակական խորհրդի 2024 թ. գործունեության հաշվետվություն, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, <https://escs.am/files/files/2024-12-26/c436da771ac470a8929522d93ff09140.pdf>

<sup>348</sup> Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհուրդ, <https://www.src.am/am/getMenuContents/2018>

<sup>349</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

<sup>350</sup> «Հայաստանի Հանրապետության նախարարությունների հասարակական խորհրդի աշխատակարգը և ձևավորման կարգը հաստատելու մասին», ՀՀ վարչապետի որոշման նախագիծ, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/8404>

ընելուց առաջ: Բացի այդ՝ ընդունված կանոնակարգերով նախատեսվում է նիստերին հեռավար միանալու հնարավորության ապահովում, խորհրդի անդամների առաջարկներին հետադարձ կապի տրամադրում և նիստերի միջև շարունակական հաղորդակցություն, ինչպես նաև սահմանվում է խորհրդի անդամների ընտրության կարգը: Խորհուրդներում կարող են ներգրավվել համապատասխան ոլորտում գործունեություն ծավալող ոչ պետական ոչ առևտրային կազմակերպությունները, որոնք վերջին հինգ տարվա ընթացքում ունեն տվյալ ոլորտի առնվազն երեք տարվա գործունեության փորձ և այդ ժամանակահատվածում տվյալ ոլորտում իրականացրել են առնվազն երկու ծրագիր: Մարզային կազմակերպությունների համար սահմանվել է 25% քվոտա, ընդ որում, այս կազմակերպությունների դեպքում առնվազն երկու տարվա գործունեության փորձ է պահանջվում: Տվյալ ոլորտում համապատասխան մասնագիտական փորձառություն ունեցող անհատ փորձագետները ևս կարող են ներգրավվել խորհուրդների կազմում: Խորհրդի կազմը, նիստերի արձանագրությունները և գործունեության տարեկան հաշվետվությունները պետք է հրապարակվեն համապատասխան պետական մարմնի պաշտոնական կայքում<sup>351</sup>: Վարչապետի որոշմամբ 90-օրյա ժամկետ է սահմանվել նոր ընթացակարգին համապատասխան հասարակական խորհուրդներ ձևավորելու և վեցամսյա ժամկետ՝ պաշտոնական կայքերը թափանցիկության պահանջներին համապատասխանեցնելու համար:

Վարչապետի որոշումների հիման վրա, ինչպես նաև նախարարությունների և այլ պետական գերատեսչությունների կողմից ձևավորվել են նաև այլ ոլորտային խորհուրդներ և հանձնաժողովներ, այդ թվում՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը, Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը, Կանանց հարցերով խորհուրդը, Ազգային փոքրամասնությունների հարցերով խորհուրդը, Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովը և այլն: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ևս մի քանի խորհրդակցական մարմին է հիմնել: Բացի դրանից, կան նաև տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին կից խորհրդակցական մարմիններ: Սակայն այս մարմիններից միայն մի քանիսն են կանոնավոր հանդիպում, մինչդեռ թե՛ ազգային, թե՛ տեղական մակարդակով կազմավորված բազմաթիվ խորհուրդներ չեն գործում: ԶՀԿ-ները մասնավորապես ընդգծում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից համակարգվող միասնական սոցիալական ծառայությունների տեղական ստորաբաժանումների և ԶՀԿ-ների համատեղ հանձնաժողովների ակտիվ աշխատանքը տեղական մակարդակում<sup>352</sup>: Խորհրդակցական մարմիններից շատերը, սակայն, չունեն անդամների ընտրության և գործունեության վերաբերյալ թափանցիկ սկզբունքներ, իսկ համապատասխան վարչական մարմինները սովորաբար հանդիպումների և կայացած որոշումների մասին որևէ տեղեկատվություն չեն հրապարակում, ինչը դժվարացնում է իրենց գործունեության մշտադիտարկումը:

Մասնակցային գործելակերպի հանձնառությունն ապահովելու նպատակով բազմաշահառու աշխատանքային խմբեր են ստեղծվել միջազգային տարբեր նախաձեռնությունների, օրինակ՝

<sup>351</sup> ՀՀ վարչապետի N 835-Լ որոշումը «Հայաստանի Հանրապետության նախարարներին և կառավարությանը ենթակա մարմինների ղեկավարներին կից հասարակական խորհրդի աշխատակարգը և ձևավորման կարգը հաստատելու մասին», 22.09.2025

<sup>352</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

ԲԿԳ<sup>353</sup> և ԱՃԹՆ<sup>354</sup> շրջանակներում, սակայն այս խմբերը ավելի հազվադեպ են հանդիպում վերջին տարիներին: Ըստ կարիքի՝ համատեղ աշխատանքային խմբեր են ձևավորվում առանձին իրավական նախագծերի կամ ռազմավարությունների մշակման և իրականացման շուրջ: Օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանության 2023-2025 թվականների ռազմավարության համակարգող խորհուրդը կանոնավոր հանդիպումներ է ունենում ԵՄ կողմից ֆինանսավորված և ՄԱԿ-ի գործակալությունների կողմից իրականացվող ծրագրի շրջանակում<sup>355</sup>:

Պետական մարմինների կողմից ձևավորված դիտորդական խմբերը հանրային վերահսկողություն են իրականացնում փակ հաստատություններում: ՀՀ արդարադատության նախարարության կողմից նախաձեռնված՝ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդական խումբը կանոնավոր այցեր է կատարում քրեակատարողական հիմնարկներ<sup>356</sup>, իսկ ՀՀ ներքին գործերի նախարարությունը վերանայել է ձերբակալվածներին պահման վայրերը մշտադիտարկող դիտորդական խմբի կարգը և կազմը և ուսուցում կազմակերպել խմբի անդամների համար<sup>357</sup>: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բուժման և խնամքի ծառայություններ մատուցող հաստատությունները մշտադիտարկելու նպատակով դիտորդական խումբ է գործում նաև ՀՀ առողջապահության նախարարության ներքո: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության խնամքի ծառայություններ մատուցող հաստատությունները վերահսկող դիտորդական խումբը 2024 թվականին լուծարվել էր՝ համապատասխան օրենսդրական հիմքի բացակայության պատճառով<sup>358</sup>: «Սոցիալական աջակցության մասին» օրենքի<sup>359</sup> փոփոխությունների հիման վրա 2025 թվականին նախարարությունը հանրային քննարկման նպատակով դիտորդական խմբի ընթացակարգերը սահմանող նոր որոշման նախագիծ հրապարակեց<sup>360</sup>: Դիտորդական խմբերի անդամ ԲՀԿ-ների

<sup>353</sup> Խմբի անդամներ, Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, <https://ogp.gov.am/hy/խմբի-մասին/>

<sup>354</sup> ԲՀԿ-ի կազմ, Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն, <https://www.eiti.am/hy/ԲՀԿ-ի-կազմ/>

<sup>355</sup> Հարցազրույց, սեպտեմբեր 2025 թ., ՀՀ արդարադատության նախարարության ֆեյսբուքյան հրապարակում, 02.03.2025,

<https://www.facebook.com/mojofarmenia/posts/pfbid0p9pe4usS9ckoPcvdZ4KBzPHzFD1Ycm3AqNmATjuLYXCgZQNiCbrR2TCbGCVFN74fl>

<sup>356</sup> ՀՀ արդարադատության նախարարի թիվ 126-Ն հրաման, 20.03.2020, վերջին փոփ. 11.05.2022, <https://www.arlis.am/hy/acts/162767>, Prison Monitoring Group (Բանտերի մշտադիտարկման խումբ), Facebook, <https://www.facebook.com/prisonmonitoring/>

<sup>357</sup> ՀՀ ներքին գործերի նախարարի թիվ 15-Ն հրամանը «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերում և ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի կազմավորման և հասարակական վերահսկողության իրականացման կարգը սահմանելու մասին», 30.10.2024, <https://www.arlis.am/hy/acts/200054>, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն, «Արդյունավետ փոխգործակցություն, փորձի փոխանակում. տեղի է ունեցել ԶՊԿ-ներում դիտորդական խմբերի վերապատրաստում», 17.09.2025, <https://mia.gov.am/2025/09/17/dzpv-3/>

<sup>358</sup> Խնամքի հաստատություններում դիտորդական խմբի գործունեության դադարեցման վերաբերյալ համատեղ հայտարարություն, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ, 31.05.2024, <https://dra.am/hy/articles/announcement/joint-announcement-on-the-termination-of-the-monitoring-group-in-care-institutions>

<sup>359</sup> ՀՀ օրենքը «Սոցիալական աջակցության մասին», 24.10.2024, <https://www.arlis.am/hy/acts/199657>

<sup>360</sup> ՀՀ ԱՍՀ նախարարի հրաման «Շուրջօրյա խնամք տրամադրող կազմակերպություններում հասարակական մշտադիտարկման իրականացման կարգը, պայմանները, հասարակական կազմակերպություններին ներկայացվող պահանջները, ինչպես նաև հասարակական դիտորդների խմբի իրավասությունների շրջանակը սահմանելու մասին» (նախագիծ), Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, <https://www.e-draft.am/projects/9126/about>

կարծիքով՝ այս խմբերն արդյունավետ են որպես հասարակական վերահսկողության մեխանիզմ և պետություն-ԶԳ համագործակցության հարթակ, սակայն մարտահրավերների են բախվում կանոնավոր գործունեության համար միջոցներ ապահովելու հարցում<sup>361</sup>:

**Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.**

- Կառավարության մասնակցային ու բաց կառավարման հարցերի նորակազմ վարչությանը՝ քայլեր ձեռնարկել քաղաքացիական հասարակության նպաստավոր միջավայրի բարելավման ուղղությամբ, մասնավորապես՝ համապատասխան գործողությունների ծրագիր մշակելու և պետական մարմինների, ԶԳ-ների ու միջազգային կազմակերպությունների հետ համատեղ աշխատանքի միջոցով:
- Պետական մարմիններին՝ լիարժեք օգտագործել խորհրդակցական մարմինների և աշխատանքային խմբերի ներուժը և արդյունավետ կերպով կիրառել հասարակական խորհուրդների վերաբերյալ նոր ընթացակարգը՝ ապահովելով ընտրության գործընթացի և աշխատանքների թափանցիկությունը, մասնավորապես՝ պաշտոնական կայքերի հատուկ բաժնում և սոցիալական ցանցերում տեղեկատվության պարբերական հրապարակման միջոցով:
- Հանրային խորհրդին՝ ապահովել ԶԳ-ների ավելի լայն իրազեկումը և ավելի սերտ մասնակցությունը իր աշխատանքներում, իսկ Փաստահավաք հանձնաժողովի մասով՝ ապահովել հանձնաժողովի թափանցիկ, հաշվետու և արժանիքների վրա հիմնված ընտրության գործընթացը և հագեցվածությունը անհրաժեշտ իրավասություններով, ռեսուրսներով ու մասնագիտական կարողություններով՝ արդյունավետ և վստահելի գործելու համար:

### 3.11 Թվային իրավունքներ

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ 4.4/7

Իրավական դաշտ՝ 4.8/7	Գործնական դաշտ՝ 4.0/7
-------------------------	--------------------------

Թվային իրավունքների պաշտպանությունը արտացոլված է խոսքի ազատության, մասնավոր կյանքի, տեղեկատվության ազատության և այլ ոլորտների իրավական կարգավորումներում: 2025 թվականին կառավարությունը հավանության արժանացրեց և Ազգային ժողովին ներկայացրեց «Կիբեռանվտանգության մասին», «Հանրային տեղեկությունների մասին» և «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքների նախագծերը, որոնք նպատակ ունեն ամրապնդել կիբեռանվտանգությունը, հստակ պարտականություններ սահմանել այս ոլորտներում պետական մարմինների և ծառայություն մատուցողների համար,

<sup>361</sup> Հարցազրույցներ և տեղեկատվության ճշտում դիտորդական խմբերի անդամների հետ, սեպտեմբեր 2025 թ.:

ինչպես նաև ստեղծել տեղեկատվական համակարգերը վերահսկող անկախ մարմին: Նախագծերը բազմաթիվ քննարկումներ են անցել, սակայն, ըստ ԶԳ-ների, գործնականում ի հայտ եկող խնդիրներին զուգընթաց օրենքներում հետագա վերանայումների կարիք կլինի:

Հսկողության նպատակներով տեխնոլոգիաների օգտագործումը մանրամասն կարգավորվում է գործող օրենսդրությամբ և սահմանափակված է նպատակների նեղ շրջանակի համար: Սակայն այս կարգավորումների կիրարկումը թերի է, իսկ վերահսկողությունը՝ սահմանափակ, ինչը չարաշահման և անօրինական հսկողության ռիսկեր է ստեղծում: «Ոստիկանության մասին» օրենքում կատարված փոփոխություններն ընդլայնել են ոստիկանության հասանելիությունը տեսահսկման համակարգերին: Թեև այս փոփոխություններով որոշ երաշխիքներ են սահմանվել ոստիկանության կողմից հսկողության վերաբերյալ, մինևույն ժամանակ ոստիկանության տեսահսկման համակարգերին հասանելիություն է տրամադրվել համայնքապետարաններին՝ առանց հստակ երաշխիքների: ԶԳ-ները, լրագրողները և ակտիվիստները շարունակում են լրտեսող ծրագրերի, ֆիշինգի և DDoS հարձակումների թիրախում լինել, ինչը Ռուսաստանի հետ կապված հաբերային խմբերի ակտիվության աճի հետ միասին ընդգծում է թվային անվտանգության միջոցների ամրապնդման անհրաժեշտությունը:

Մի շարք թվային հարթակներ պետական մարմինների կողմից տնօրինվող տեղեկատվության հասանելիություն են ապահովում, ինչպես նաև մասնակցության և էլեկտրոնային եղանակով հարցումներ ու բողոքներ ներկայացնելու հնարավորություն ընձեռում: 2021-2025 թվականների թվայնացման ռազմավարությամբ ու գործողությունների ծրագրով նախատեսված թվային ծառայությունների հասանելիությունը բարելավվել է, օրինակ՝ «Ես եմ» և Hartak.am հարթակները առցանց նույնականացման ու էլեկտրոնային ծառայություններից օգտվելու հնարավորություններ են տալիս: Սոցիալական ցանցերն ազատորեն գործում են Հայաստանում, իսկ համացանցը ընդհանուր առմամբ մատչելի է և լայնորեն հասանելի: Բազմաթիվ ԶԳ-ներ ներգրավված են մեդիա կրթության և փաստերի ստուգման աշխատանքներում, որոնք հաճախ իրականացվում են կառավարության հետ համագործակցությամբ և կարևոր դեր են խաղում ապատեղեկատվության դեմ պայքարի և թվային դիմադրողականության ամրապնդման գործում, թեև հանրության իրազեկվածության խնդիրը դեռևս բավարար չափով լուծված չէ:

Թվային իրավունքների ոլորտի ընդհանուր գնահատականը 2024 թվականի համեմատ նվազել է 4,5 միավորից 4,4 միավոր՝ իրավական դաշտի գնահատականի 4,9-ից 4,8 միավոր նվազման արդյունքում: Կիբեռանվտանգության մասին օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի ընդունումը կարող է նպաստել կիբեռանվտանգության բարելավմանը և ապօրինի լրտեսող ծրագրերից պաշտպանության ապահովմանը: Մյուս առաջարկներն են՝ վերանայել ոստիկանության կողմից տեսահսկման համակարգերի օգտագործման իրավական կարգավորումները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու և արդյունավետ երաշխիքներ ապահովելու նպատակով, ինչպես նաև ապահովել իրավապահ մարմինների կողմից հսկողության տեխնոլոգիաների իրավաչափ օգտագործումը՝ ենթադրյալ չարաշահումների դեպքերում իրականացնելով թափանցիկ և արդյունավետ հետաքննություն:

Չափորոշիչ 1. Թվային իրավունքները պաշտպանված են, իսկ թվային տեխնոլոգիաները համապատասխանում են մարդու իրավունքների ստանդարտներին:

Օրենսդրության մեջ թվային իրավունքների սահմանում չկա, սակայն մի շարք առնչվող պարտավորություններ են սահմանված՝ հիմնված միջազգային կոնվենցիաների և մարդու

իրավունքներին վերաբերող համապատասխան օրենքների վրա: Հայաստանը վավերացրել է «Կիբեռհանցագործությունների մասին» կոնվենցիան, որը պետության հանդեպ որոշակի պարտականություններ է սահմանում կապված կիբեռտարածքում իրավունքների պաշտպանության հետ<sup>362</sup>: Ներպետական օրենսդրությամբ թվային իրավունքների պաշտպանության մեխանիզմներ են նախատեսված խոսքի ազատության, տեղեկատվության ազատության, մասնավոր կյանքի իրավունքի, անձնական տվյալների պաշտպանության, կիբեռհանցագործությունների և այլ առնչվող հարցերի վերաբերյալ ՀՀ Սահմանադրության, տարբեր օրենքների և ենթաօրենսդրական ակտերի դրույթների միջոցով: ՀՀ Սահմանադրությունը համաչափության և որոշակիության սկզբունքներ է նախատեսում իրավունքների և ազատությունների սահմանափակումների նկատմամբ, ինչպես նաև թույլ է տալիս որոշակի իրավունքներ և ազատություններ սահմանափակել արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում<sup>363</sup>:

Արհեստական բանականության վերաբերյալ հատուկ կարգավորում չկա: Քրեական օրենսգիրքը կիբեռհանցագործությունների համար պատասխանատվություն է սահմանում «Կիբեռհանցագործությունների մասին» կոնվենցիայում հռչակված սկզբունքներին համապատասխան: Ինչպես նշված է Ոլորտ 6-ում («խոսքի ազատություն»), ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելը, բռնություն գործադրելու հրապարակային կոչերը և բռնության հրապարակային արդարացումը կամ քարոզը, ներառյալ առցանց հարթակներում, ենթակա են քրեական պատասխանատվության: Քրեական օրենսգրքում սահմանվել է կիբեռհանցագործությունների ցանկը, որտեղ ներառվել են ժամանակի հետ ի հայտ եկած նոր խնդիրներ (օրինակ՝ ՏՀՏ-ի կիրառմամբ հեղինակային ու հարակից իրավունքները խախտելը, մանկական պոռնոգրաֆիա ստեղծելը և տարածելը և ատելության խոսք քարոզելը, համակարգչային ցանց ներթափանցելը և տվյալներ փոփոխելը, տվյալները ապօրինի որսալը կամ դրանց տիրանալը, համակարգչային կեղծիքը և այլն)<sup>364</sup>: 2025 թվականի մայիսին Ազգային ժողովն ընդունեց «Կրիպտոակտիվների մասին» օրենքը՝ կրիպտոակտիվների շուկայում համակարգային ռիսկերը կարգավորելու և նվազեցնելու նպատակով<sup>365</sup>:

Տվյալների քաղաքականության մշակման վերաբերյալ ԲԿԳ հանձնառության հիման վրա կառավարությունը «Կիբեռանվտանգության մասին», «Հանրային տեղեկությունների մասին» և «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» նոր օրենքների և հարակից օրենքներում փոփոխությունների նախագիծ մշակեց: Մասնավորապես, «Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագիծը նպատակ ունի կիբեռանվտանգ միջավայր ապահովել կենսական նշանակության ծառայությունների մատուցման համար կիրառվող տեղեկատվական համակարգերում և կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքներում և սահմանում է այս ոլորտի ծառայություն մատուցողների հիմնական պարտականությունները, արձագանքման միջոցառումները տարբեր սցենարների, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների համար, պետական մարմինների դերերի և

<sup>362</sup> Կոնվենցիա կիբեռհանցագործությունների մասին, Եվրոպայի խորհուրդ, 23.11.2001, <https://www.arlis.am/hy/acts/48028>  
<sup>363</sup> ՀՀ Սահմանադրություն, փոփ. 06.12.2015, հոդվածներ 76-79:  
<sup>364</sup> ՀՀ քրեական օրենսգիրք, 05.05.2021, գլուխ 38, հոդվածներ 359-365:  
<sup>365</sup> ՀՀ օրենքը «Կրիպտոակտիվների մասին», 29.05.2025, <https://www.arlis.am/hy/acts/208599>

պատասխանատվության շրջանակը և գործողությունների համակարգումը՝ ազգային համակարգչային արտակարգ իրավիճակների արձագանքման թիմի (CERT) մասնակցությամբ, կենսական նշանակության ոլորտները, ինչպես նաև կիբեռանվտանգության ապահովման հիմնական պայմաններն ու համապատասխանության պահանջները, որոնց կիրառումը գնահատվում է կիբեռանվտանգության աուդիտի արդյունքում<sup>366</sup>: «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի նախագծով ստեղծվում է տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության բնագավառի պատասխանատու անկախ հանձնաժողով՝ սահմանելով դրա լիազորությունների շրջանակը: Հանձնաժողովը պատասխանատու կլինի պետական տեղեկատվական համակարգերի կառավարման, թվային անվտանգ միջավայրի պաշտպանվածության նպատակով միջոցառումների մշակման և համակարգման, տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության վերաբերյալ օրենսդրական նախագծերի վերաբերյալ խորհրդատվական կարծիքների տրամադրման և համապատասխան պետական քաղաքականության մշակմանը մասնակցության համար: ԹՀԿ-ների առաջարկի հիման վրա նախագծում նաև համագործակցության վերաբերյալ մի դրույթներ առվեց, ըստ որի՝ հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս պետք է համագործակցի քաղաքացիական հասարակության կառույցների և այլ շահագրգիռ կողմերի հետ<sup>367</sup>: Մի քանի անգամ վերանայվելուց և քննարկվելուց հետո<sup>368</sup> նախագծի փաթեթը 2025 թվականի օգոստոսին հաստատվեց կառավարության կողմից, իսկ 2025 թվականի հոկտեմբերին առաջին ընթերցմամբ ընդունվեց Ազգային ժողովում<sup>369</sup>:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքը համապատասխան կարգավորումներ է նախատեսում անձնական տվյալների օգտագործման և մշակման վերաբերյալ: Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունքը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրությամբ: Այս իրավունքի սահմանափակումները կարող են նախատեսվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ՝ բացառությամբ, երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով<sup>370</sup>:

Ըստ «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» օրենքի՝ Էլեկտրոնային հաղորդակցության հսկողությունը կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ՝ բացառությամբ այն անհետաձգելի դեպքերի, երբ հապաղումը կարող է հանգեցնել

<sup>366</sup> ՀՀ օրենքը «Կիբեռանվտանգության մասին», առաջին ընթերցում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:  
<sup>367</sup> ՀՀ օրենքը «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին», առաջին ընթերցում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:  
<sup>368</sup> Մանրամասների համար տե՛ս՝ CSO Meter, “Armenia takes next steps to improve management of public information and cybersecurity in digital public services” (Հայաստանը շարունակում է քայլեր ձեռնարկել հանրային տեղեկությունների կառավարման և թվային հանրային ծառայություններում կիբեռանվտանգության բարելավման ուղղությամբ), 22.09.2025, նշված տեղում:  
<sup>369</sup> Օրենսդրական փաթեթն ամբողջությամբ ընդունվել է խորհրդարանի կողմից 2025 թվականի դեկտեմբերի 4-ին («ԹՀԿ չափիչ» զեկույցում ներառված ժամանակաշրջանից հետո):  
<sup>370</sup> ՀՀ Սահմանադրություն, փոփ. 06.12.2015, հոդված 33:

ահաբեկչական գործողությունների կամ սպառնալ պետական անվտանգությանը: Նման դեպքում ԱԸԾ-ն կարող է հսկողություն իրականացնել մինչև 48 ժամվա ընթացքում՝ նախքան դատարանի որոշման տրամադրումը<sup>371</sup>: Քրեական դատավարության օրենսգրքում և սահմանված է, որ վարույթի ընթացքում անձի նամակագրությանը, հեռախոսային խոսակցություններին և հաղորդակցության այլ ձևերին միջամտելը կարող է իրականացվել բացառապես դատարանի որոշմամբ<sup>372</sup>: Սակայն եթե հիմքեր կան կասկածելու, որ անձը հանցագործություն է կատարել, ապա քննիչները կարող են տեղեկատվություն պահանջել տվյալ անձի հաղորդակցության վերաբերյալ՝ հսկող դատախազի հաստատմամբ<sup>373</sup>: Մինևույն ժամանակ, հսկողության արդյունքում ստացված նյութերի պահպանման և ոչնչացման հստակ և մանրամասն ընթացակարգեր չկան, չկան նաև հսկողության համակարգի նկատմամբ անկախ և արդյունավետ արտաքին վերահսկողության (ներառյալ հանրային վերահսկողության) մեխանիզմներ<sup>374</sup>: Այս խնդիրները հատկապես տեսանելի դարձան վերջին ամիսներին մամուլում հրապարակված գաղտնալսումների և տեսագրությունների դեպքերի համատեքստում, որոնք լայն հանրային հնչեղություն ստացան և հետագայում որպես հիմք ծառայեցին քրեական գործերի հարուցման համար (մանրամասների համար տե՛ս Ոլորտ 7 «Մասնավոր կյանքի իրավունք»):

Իրավապահ մարմինների կողմից թվային տեխնոլոգիաների օգտագործումը կանոնակարգվում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների համար տեխնիկական միջոցների օգտագործման վերաբերյալ դրույթներով, որոնք երաշխիքներ են պարունակում մասնավոր կյանքի իրավունքի խախտման դեմ: Կառավարության որոշման համաձայն՝ թույլատրվում է մշակել տեխնիկական, այդ թվում՝ ծրագրային միջոցներ, որոնք հատուկ նախատեսված են համակարգչային ցանցերում և համակարգերում պահվող տեղեկատվությունը կորզելու և ինտերնետային հաղորդակցության բոլոր ձևերի, ներառյալ տեքստի, ձայնային և մուլտիմեդիա բովանդակության գաղտնի վերահսկման, գաղտնալսման և ձայնագրման համար<sup>375</sup>: Ըստ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի՝ նախատեսված դեպքերում և կարգով բոլոր օպերատորները և ծառայություն մատուցողները պարտավոր են ապահովել իրավապահ և ազգային անվտանգության աշխատակիցների մուտքը հաղորդակցության սարքավորումներին և նմանատիպ այլ սարքերին օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացմանն աջակցելու նպատակով<sup>376</sup>: Սակայն օրենքը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների համար պարտավորություն չի սահմանում հեռահաղորդակցության օպերատորներին նախապես (կամ անհետաձգելի դեպքերում՝ հետագայում) ներկայացնել միջոցառումը թույլատրող դատարանի

<sup>371</sup> ՀՀ օրենքը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», 22.10.2007, հոդվածներ 32 և 34:

<sup>372</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, 30.06.2021, վերջին փոփ. առ 01.08.2025, հոդված 26,

<https://www.arlis.am/hy/acts/209973>

<sup>373</sup> Նույն տեղում, հոդված 232:

<sup>374</sup> Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ, «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների վերլուծություն. Մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք, Հայաստան», Երևան, 2022 թ., նշված տեղում:

<sup>375</sup> ՀՀ կառավարության N 810-Ն որոշումը «Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ (մշակված, ծրագրված, հարմարեցված) տեխնիկական միջոցների ցանկը հաստատելու մասին», 31.07.2008, <https://www.arlis.am/hy/acts/45845>

<sup>376</sup> ՀՀ օրենքը «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», 08.07.2005, վերջին փոփ. առ 01.08.2025, հոդված 50, <https://www.arlis.am/hy/acts/209934>

որոշումը, ինչը զգալի ռիսկ է ստեղծում լիազորությունները չարաշահելու և անձանց հաղորդակցությանը չարտոնված կերպով միջամտելու առումով<sup>377</sup>:

2025 թվականի մարտին Ազգային ժողովը «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություններ ընդունեց, որոնք ՀՀ ներքին գործերի նախարարությանը հնարավորություն տվեցին հասանելիություն ունենալ պետական և համայնքային կազմակերպությունների շինության արտաքին մասում, օդանավակայաններում, սահմանային անցակետերում, ավտոկայանատեղերում և տրանսպորտում տեղադրված տեսահսկման համակարգերին և պահանջել այս համակարգերի տեսագրությունները<sup>378</sup>: Օրենքը թույլ է տալիս տեսահսկման համակարգերի միջոցով իրականացնել անձանց նույնականացում այն դեպքերում, եթե առկա է հիմնավոր կասկած, որ անձը կատարել է հանցագործություն կամ վարչական իրավախախտում, ինչպես նաև որոշակի երաշխիքներ է սահմանում տեսահսկման համակարգերի թափանցիկ և հաշվետու օգտագործումն ապահովելու համար, օրինակ՝ յուրաքանչյուր մուտքի էլեկտրոնային հաշվառումը, տեսանյութի ներբեռնման ժամի արտացոլումը, տեսահսկման համակարգերի օգտագործումը միայն իրավասու աշխատակիցների կողմից, և պատասխանատվության միջոցներ նախատեսում նշված պայմանները չկատարելու դեպքում: Խորհրդարանական երկրորդ ընթերցումից առաջ նախագծում նոր դրույթ ավելացվեց, ըստ որի ոստիկանությունը համայնքներին հասանելիություն է տալիս տվյալ համայնքի վարչական տարածքում տեղադրված տեսահսկման համակարգերին: Այս դրույթը չարաշահումների դեմ հստակ իրավական երաշխիքներ չունի և որևէ նախնական փորձագիտական քննարկում չի անցել: Մասնագետներն ընդգծում են հետևողական մշտադիտարկման անհրաժեշտությունը՝ համոզվելու համար, որ տեղադրված տեսախցիկները համապատասխանում են պահանջվող ընթացակարգերին և օգտագործվում են միայն հստակ ու կոնկրետ նպատակներով, և ընդգծում են, որ ՏԻՄ-երը չունեն այն տեխնիկական կարողությունները, պատշաճ կանոնակարգերն ու երաշխիքները, որոնք կօգնեն պատասխանատու կերպով կառավարել հսկողությունը (տե՛ս նաև Ոլորտ 7՝ «Մասնավոր կյանքի իրավունք»)<sup>379</sup>:

Ինչ վերաբերում է գործնականում հսկողության միջոցների կիրառմանը՝ որոշ ԶԿ ներկայացուցիչներ նշել են, որ չեն բացառում իրավապահների և ԱԱԾ-ի կողմից ապօրինի հսկողության հնարավորությունը<sup>380</sup>: Վերջին տարիներին քաղաքացիական հասարակության որոշ ներկայացուցիչներ և լրագրողներ թիրախ են դարձել լրտեսող ծրագրերի, ֆիշինգային արշավների և DoS հարձակումների համար, որոնք ուղղված են զգայուն տվյալների հափշտակմանը, գործունեության խափանմանը և կիբեռանվտանգության սահմանափակ կարողությունների սպառմանը: Ըստ «Մեդիա բազմազանության ինստիտուտի» զեկույցի՝ ավելացել է հայկական թվային ենթակառուցվածքների թիրախավորումը Ռուսաստանի հետ կապեր ունեցող հաբերային խմբերի կողմից: Օրինակ՝ 2025 թվականի ապրիլին տասնյակ ԶԿ-ներ Signal հավելվածի միջոցով Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավարի անունից ֆիշինգային հաղորդագրություն ստացան, որի հիմքում վնասակար մի հղում էր՝ քողարկված իբրև Microsoft Teams-ի հանդիպման հղում, իսկ մուտք գործողների IP հասցեները պատկանել

<sup>377</sup> Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ, «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների վերլուծություն. Մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք, Հայաստան», Երևան, 2022 թ., նշված տեղում:

<sup>378</sup> ՀՀ օրենքը «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», 05.03.2025:

<sup>379</sup> Հարցազրույցներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

<sup>380</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

են Ռուսաստանում գտնվող ամային սերվերի պրովայդերին<sup>381</sup>: 2025 թվականի մայիսին դրան հաջորդեց մեկ այլ ֆիշինգային հարձակում, որտեղ որպես պաշտոնական փաստաթուղթ ուղարկված PDF կցորդի հղումը վերահասցեավորում էր վնասակար կայքէջի<sup>382</sup>: Այսպիսի հարձակումները ընդգծում են ՔՀԿ-ների շրջանում թվային անվտանգության պրակտիկայի ամրապնդման անհրաժեշտությունը:

Հայաստանում սոցիալական ցանցերն ազատորեն գործում են: Մետան համագործակցում է պետական մարմինների հետ կիբեռհարձակումների դեմ պայքարում, իսկ ծանր հանցագործությունների դեպքերում տվյալներ է տրամադրում խարդախությունը բացահայտելու համար, եթե իշխանությունները կարողանում են ապացուցել, որ բոլոր այլ միջոցները սպառվել են: Այս ընթացակարգի հիման վրա 2024 թվականի հուլիս-դեկտեմբեր ժամանակահատվածում Հայաստանի իշխանություններից 13 հարցում է ուղարկվել, որոնցից 10-ը վերաբերում էին դատական վարույթներին<sup>383</sup>:

Սոցիալական ցանցերում իրավունքների խախտման դեպքում պետության պաշտպանությանը դիմելու վերաբերյալ հատուկ իրավակարգավորումներ չկան: 2025 թվականի ապրիլին հանրային քննարկմանը ներկայացվեց Քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների նախագծի փաթեթը, ըստ որի՝ պատասխանատվություն է սահմանվում անհատների կողմից առցանց հարթակներում հրապարակված զրպարտչական կամ վիրավորական բովանդակության համար, ինչպես նաև նախատեսվում է վիրավորանք կամ զրպարտություն համարվող տվյալների հեռացում պահանջելու հնարավորություն (ավելին տե՛ս Ոլորտ 6՝ «Խոսքի ազատություն»)<sup>384</sup>:

Ըստ Freedom House կազմակերպության «Ազատությունը համացանցում» 2025 թվականի զեկույցի՝ Հայաստանի գնահատականը նվազել է՝ 2024 թվականի 74 միավորից 2025 թվականին դառնալով 72 միավոր: Համացանցի ազատության տեսանկյունից երկիրը գնահատվել է որպես «ազատ»՝ կայքերի արգելափակման և բովանդակության հեռացման հազվադեպ դեպքերով: Սակայն զեկույցում մի քանի խնդրահարույց հարցեր են նշվում, օրինակ՝ առցանց հարթակներում իշխանությանը քննադատելու համար ձերբակալությունները և կոմերցիոն լրտեսական ծրագրերի միջոցով քաղաքացիների հսկողությունը<sup>385</sup>:

## Չափորոշիչ 2. Պետությունը պայմաններ է ստեղծում թվային իրավունքների իրացման համար:

Թվային իրավունքներին վերաբերող իրավական դաշտը կարգավորվում է տարբեր առնչվող օրենքներով: 2021-2025 թթ. Հայաստանի թվայնացման ռազմավարությունը և ռազմավարության միջոցառումների ծրագիրը մի շարք միջոցառումներ է նախատեսում ՀՀ կառավարության, տնտեսության և հասարակության թվային փոխակերպման ուղղությամբ:

<sup>381</sup> Internews, CyberHUB, «Հայաստան. Թվային սպառնալիքների համայնապատկերը 2024», հունիս 2025 թ., [https://mdi.am/wp-content/uploads/2025/06/Armenia\\_Threat\\_Landscape\\_2024\\_ARM.pdf](https://mdi.am/wp-content/uploads/2025/06/Armenia_Threat_Landscape_2024_ARM.pdf)

<sup>382</sup> CyberHUB, Թիրախավորված ֆիշինգային հարձակում հայկական ՀԿ-ի ուղղությամբ, 29.05.2025, <https://cyberhub.am/hy/blog/2025/05/29/case-study-targeted-phishing-attack-on-armenian-ngo-arm/>

<sup>383</sup> Meta, Government Requests for User Data: Armenia, (Պետությունների կողմից օգտատերերի տվյալների հարցումներ, Հայաստան) <https://transparency.meta.com/reports/government-data-requests/country/AM/>

<sup>384</sup> «Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Չանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծեր, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք:

<sup>385</sup> Freedom House, “Freedom on the Net 2025: Armenia” (Ազատությունը համացանցում 2025. Հայաստան), <https://freedomhouse.org/country/armenia/freedom-net/2025>

Այդ միջոցառումները ներառում են նորարարական տեխնոլոգիաների, կիրառական տնտեսագիտության, տվյալների քաղաքականության, էլեկտրոնային ծառայությունների և էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրում և զարգացում, թվայնացման գործընթացների համակարգում, միասնական ստանդարտների և թվայնացված միջավայրի ստեղծում, մասնավոր հատվածում և հասարակության կողմից թվային տեխնոլոգիաների կիրառմանը նպաստող ծրագրերի մշակում և իրականացում, ինչպես նաև անձնական տվյալների և հեղինակային իրավունքների պաշտպանության բարելավում<sup>386</sup>: 2025 թվականին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը հրապարակեց ռազմավարության շրջանակում 2024 թվականին գործընկերների հետ համատեղ իրականացված գործողությունների հաշվետվությունը<sup>387</sup>: Այս գործողությունների շարքում նախարարությունը նշել է Արհեստական բանականության վիրտուալ ինստիտուտի հարթակի ստեղծումը, որը կհամախմբի հետազոտողներին, ուսանողներին և ոլորտի մասնագետներին՝ աջակցելով արհեստական բանականության հետազոտություններին, գիտելիքների փոխանակմանն ու նորարարությանը և միաժամանակ խթանելով տեխնոլոգիայի էթիկական և թափանցիկ օգտագործումը<sup>388</sup>:

Հայաստանում գործում են մի շարք թվային հարթակներ, որոնք հնարավորություններ են ընձեռում պետական մարմինների կողմից տնօրինվող տեղեկատվությանը հասանելիության, էլեկտրոնային եղանակով բողոքներ ներկայացնելու և մասնակցության համար: Այս հարթակները ներառում են e-register.am-ը, որը տեղեկատվություն է տրամադրում գրանցման գործընթացի և գրանցված իրավաբանական անձանց մասին, ինչպես նաև առցանց գրանցման հնարավորություն տալիս (առևտրային ընկերությունների դեպքում), e-gov.am-ը, որը մասնավորապես տեղեկատվություն է տրամադրում կառավարության որոշումների, հաշվետվությունների, գրանցամատյանների վերաբերյալ, իրավական տեղեկատվական համակարգը՝ arlis.am-ը, և հանրագրերի միասնական հարթակ e-petition.am-ը (հանրագիր.հայ): 2024 թվականին գործարկված «Ես եմ» նույնականացման ազգային հարթակը առցանց մուտք է ապահովում դեպի պետական ծառայություններ նույնականացման գործընթացը հաջողությամբ անցնելուց հետո<sup>389</sup>: Պետական ծառայությունների հետ կապված մեկ այլ նոր հարթակ է Hartak.am-ը, որը մշակվել է ինքնաշխատ ձևաչափով ծառայությունների մատուցման գործընթացը հեշտացնելու համար<sup>390</sup>: Ի տարբերություն նախորդ տարիների՝ նույնականացում պահանջող հարթակները (օրինակ՝ էլեկտրոնային հանրագրերի e-petition, էլեկտրոնային հարցման e-request, «Ես եմ» հարթակները) այժմ թույլ են տալիս մուտք գործել բջջային նույնականացման քարտի միջոցով՝ ֆիզիկական նույնականացման քարտի և էլեկտրոնային կարդացող սարքի միջոցով մուտքի փոխարեն: Այս փոփոխությունը հարթակներն ավելի հասանելի է դարձրել օրեցօր ավելացող այն քաղաքացիների համար, որոնք նույնականացման քարտ են ձեռք բերել 2025 թվականին ներդրված եկամտի

<sup>386</sup> ՀՀ կառավարության N 183-L որոշումը «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին», 11.02.2021, <https://www.arlis.am/hy/acts/149957>

<sup>387</sup> Թվայնացման ռազմավարության առաջընթացի հաշվետվություն, Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, <https://hightech.gov.am/hy/tegekatvakan-kentron/financial/reports/5102025313>

<sup>388</sup> Արհեստական բանականության վիրտուալ ինստիտուտ, [https://ai.gov.am/landinghy/hy/about-the-project\\_hy.html](https://ai.gov.am/landinghy/hy/about-the-project_hy.html)

<sup>389</sup> «Ես եմ» ազգային նույնականացման հարթակ, <https://nid.e-gov.am/>

<sup>390</sup> Ծառայությունների միասնական հարթակ, <https://hartak.am/>

հայտարարագրման համընդհանուր պահանջը կատարելու համար<sup>391</sup>: Այնուամենայնիվ, փորձագետներն ու ՔՀԿ-ները շեշտում են միասնական էլեկտրոնային կառավարման համակարգի անհրաժեշտությունը, որը կօգնի մեկ տեղում հավաքել ներկայիս բազմազան ու բազմաբնույթ հարթակները և բարելավել հանրային իրազեկվածությունը: Թեև ակնկալվում է, որ պետական ծառայությունների թվայնացումը կնվազեցնի վարչարարությունը, փորձագետները նաև զգուշացնում են խարդախության և անձնական տվյալների ապօրինի օգտագործման ռիսկերի մասին<sup>392</sup>:

Համացանցը լայնորեն հասանելի և մատչելի է Հայաստանում, հատկապես բջջային կապի օգտատերերի համար, քանի որ բնակավայրերի մեծ մասը (99,5%) ունի ինտերնետ հասանելիություն բջջային օպերատորների միջոցով: Լայնաշերտ (\$իքսված) ինտերնետն առկա է բնակավայրերի 75,3%-ում (2024 թվականի ավարտի դրությամբ)՝ ի տարբերություն նախորդ տարվա 72,4%-ի, ընդ որում օպտիկամանրաթելային ցանցերի հասանելիությունը ավելացել է 7 տոկոսով<sup>393</sup>:

Հայաստանի օրենսդրությամբ ցանցի չեզոքության սկզբունքը չի կարգավորվում, թեև ազգային լիազոր մարմինը՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, մի քանի հայտարարություն է արել՝ նշելով, որ տեխնոլոգիաների չեզոքությունը կարգավորման կարևոր սկզբունք է<sup>394</sup>: Հանձնաժողովի որոշման համաձայն՝ եթե հեռահաղորդակցության օպերատորները և ծառայություններ մատուցողները համացանցում չեն սատարում որոշակի արձանագրություններ կամ առավելություն են տալիս որևէ արձանագրությանը, ապա պետք է այդ մասին հրապարակեն և տեղեկացնեն բաժանորդներին: Որոշմամբ ամրագրվում է նաև, որ ծառայությունների մատուցման սակագները և պայմանները պետք է ամբողջապես հասանելի լինեն հանրությանը՝ բացառելով դրանց ներկայացման նկատմամբ որևէ խտրական կամ հայեցողական մոտեցում<sup>395</sup>: Գործնականում, սակայն, հեռահաղորդակցության որոշ ընկերություններ իրենց հաճախորդներին առաջարկում են անվճար մուտք դեպի հոսքային մուլտիմեդիա և հաղորդագրությունների առանձին ծառայություններ՝ անհավասար մրցակցային միջավայր ստեղծելով հայկական հավելվածների համար<sup>396</sup>:

ՀՀ օրենսդրությունը թույլ է տալիս պաշտպանել խախտված իրավունքները ինչպես անցանց, այնպես էլ առցանց միջավայրում, որի համար անհրաժեշտ է հայց, բողոք կամ դիմում ներկայացնել դատարան, իրավապահ մարմիններին, պատասխանողի վերադասին կամ մասնագիտացված հաստատություններ, օրինակ՝ ԱՏՊԳ կամ Մարդու իրավունքների

<sup>391</sup> Հայաստանի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտե, «Ինչ պետք է իմանալ ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման մասին», 11.10.2023, <https://src.am/am/getNews/216>

<sup>392</sup> Հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ, օգոստոս-սեպտեմբեր 2025 թ.:

<sup>393</sup> Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, «Վերլուծական տեղեկանք Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային ամրակցված (\$իքսված) կապի հասանելիության (ներթափանցելիության) ապահովման աշխատանքների վերաբերյալ», 2025 թ., [https://www.psrc.am/uploads/files/Էլեկտրոնային\\_հաղորդակցություն/Ցանցերի\\_հասանելիություն/Hasaneliutyun1.pdf](https://www.psrc.am/uploads/files/Էլեկտրոնային_հաղորդակցություն/Ցանցերի_հասանելիություն/Hasaneliutyun1.pdf)

<sup>394</sup> Դավիթ Սանդուխյան, «Թվային իրավունքները և դրանց կարևորությունը ինֆորմացիոն հասարակության համար», Սամվել Մարտիրոսյան, «Թվային իրավունքների հետ կապված մարտահրավերները Հայաստանում», Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ, Երևան 2021, [https://mdi.am/wp-content/uploads/2021/10/digital\\_human\\_rights\\_research\\_and\\_articles.pdf](https://mdi.am/wp-content/uploads/2021/10/digital_human_rights_research_and_articles.pdf)

<sup>395</sup> ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի թիվ 471-Ն որոշումը «Տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման սակագների և պայմանների հրապարակման կարգը հաստատելու մասին», 03.09.2008, վերջին փոփ. 25.07.2012, <https://www.arlis.am/hy/acts/77489>

<sup>396</sup> Հարցազրույց, օգոստոս 2025 թ.:

պաշտպանի գրասենյակ: Ըստ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի՝ եթե որևէ մեկը համարում է, որ իր անձնական տվյալները մշակվել են օրենքի պահանջների կամ իր իրավունքների և ազատությունների խախտմամբ, կարող է դիմել անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին կամ դատարան և վնասի հատուցում պահանջել<sup>397</sup>:

ԶԳ-ների կողմից իրականացվում են փաստերի ստուգման մի շարք նախաձեռնություններ, որոնք նպատակ ունեն նվազեցնել կեղծ լուրերի տարածումը և հանրությանը իրազեկել ապատեղեկատվության բացահայտման միջոցների մասին<sup>398</sup>: Սիվիլնեթը՝ հայկական լրատվական կազմակերպությունը, միացել է Մետայի երրորդ կողմի փաստերի ստուգման ծրագրին և ներկայումս իրականացնում է Ֆեյսբուքի և Ինստագրամի հայալեզու բովանդակության փաստերի ստուգումը<sup>399</sup>: Թեև Մետան հայտարարեց նախ ԱՄՆ-ում, ապա մյուս երկրներում փաստերի ստուգման ծրագրի աստիճանական դադարեցման մասին<sup>400</sup>, Սիվիլնեթը արձագանքեց, որ կշարունակի փաստերի ստուգման նախաձեռնությունը այնքան ժամանակ, քանի դեռ Մետայի հետ պայմանագիրն ուժի մեջ է, այսինքն՝ մինչև 2026 թվականի հունվարը<sup>401</sup>: Ավելին, Սիվիլնեթի փաստերի ստուգման թիմը՝ CivilNetCheck-ը, դարձել է Փաստերի ստուգման եվրոպական չափորոշիչների ցանցի առաջին անդամը Հայաստանում: Այս ցանցը միավորում է եվրոպայում գործող փաստերի ստուգման ամենահեղինակավոր կազմակերպությունները<sup>402</sup>: 2025 թվականի մարտին «Իրազեկ քաղաքացիների միություն» ՀԿ-ի կողմից ստեղծված մեկ այլ հարթակ՝ FIP.am-ը (Փաստերի ստուգման հարթակ), դարձավ Փաստերի ստուգման միջազգային ցանցի անդամ<sup>403</sup>:

ԶԳ-ները շարունակում են նաև թվային իրավունքների վերաբերյալ կրթության և մեդիա գրագիտության նախաձեռնությունները՝ նպատակ ունենալով լրացնել այս ոլորտում առկա բացը, ինչը հատկապես կարևոր է լայնածավալ ապատեղեկատվության համատեքստում: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը համագործակցում է ԶԳ-ների մեդիագրագիտության տարածման հարցում և պարբերաբար վերապատրաստումներ կազմակերպում «Թվային գրագիտության ու համակարգչային գիտության» դպրոցական առարկան դասավանդող ուսուցիչների համար: Նախարարության հետ համագործակցությամբ «Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը» ստեղծել է մեդիագրագիտության խորհրդատվական խումբ, որի նպատակն է համատեղել ջանքերը մեդիակրթությունը Հայաստանում զարգացնելու և մեդիագրագիտության տարածման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ<sup>404</sup>: Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը նաև «Մեդիա լիցիտություն» առցանց դասընթաց է մշակել,

<sup>397</sup> ՀՀ օրենքը «Անձնական տվյալների պաշտպանության մասին», 18.05.2015, հոդված 17:

<sup>398</sup> Տե՛ս, օրինակ՝ Փաստերի ստուգման հարթակ, Իրազեկ քաղաքացիների միավորում, <https://fip.am/>, Ստուգված է, media.am, <https://media.am/hy/category/verified/>, InFact/Փաստացի «Հետք» ՀԿ նախաձեռնած ֆեյսբուքյան խումբ, <https://www.facebook.com/groups/pastatsi/>, CivilNetCheck, CivilNet, <https://www.civilnet.am/civilnetcheck/>

<sup>399</sup> CivilNetCheck, CivilNet

<sup>400</sup> Meta, More Speech and Fewer Mistakes (Խոսքն ավելի շատ, սխալներն ավելի քիչ), 07.01.2025, <https://about.fb.com/news/2025/01/meta-more-speech-fewer-mistakes/>

<sup>401</sup> Տիգրանուհի Մարտիրոսյան, «Meta-ի՝ Փաստեր ստուգման ծրագիրն առայժմ կշարունակի Հայաստանում գործել», Media.am, 08.01.2025, <https://media.am/hy/newsroom/2025/01/08/41464/>

<sup>402</sup> CivilNetCheck, «Սիվիլնեթի փաստերի ստուգման թիմը դարձել է եվրոպական հեղինակավոր ցանցի անդամ», CivilNet, 24.02.2025, <https://www.civilnet.am/news/818980/>

<sup>403</sup> IFCN Code of Principles, Fact Investigation Platform (FIP.am) (Փաստերի ստուգման հարթակ), [https://ifcncodeofprinciples.poynter.org/profile/fact-investigation-platform-\(fip.am\)-](https://ifcncodeofprinciples.poynter.org/profile/fact-investigation-platform-(fip.am)-)

<sup>404</sup> Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն, Հաշվետվություն «Ապատեղեկատվության դեմ պայքարի 2024-2026 թթ. հայեցակարգի գործողությունների ծրագրի» 2024 թ. կատարողականի վերաբերյալ, 16.01.2025:

որը շրջանառվել է ՀՀ նախարարությունների և պետական գերատեսչությունների հաղորդակցության ստորաբաժանումների ներկայացուցիչների շրջանում, և յուրաքանչյուր տարի կառավարության հետ համատեղ կազմակերպում է մեդիագրագիտության շաբաթ՝ նպատակ ունենալով ավելի մեծ ուշադրություն հրավիրել մեդիան հասկանալու, վերլուծելու, գրագետ և արդյունավետ օգտագործելու կարևոր խնդիրների վրա<sup>405</sup>: Այլ ԶՀԿ-ներ նույնպես իրականացնում են տեղական և ազգային մակարդակի ծրագրեր, որոնք աջակցություն են ստանում կառավարության ու դոնորների կողմից և ուղղված են երիտասարդության և ավելի լայն բնակչության շրջանում մեդիագրագիտության բարելավմանը<sup>406</sup>: Այնուամենայնիվ, դեռևս կարիք կա կառավարության կողմից ավելի շատ իրազեկման միջոցառումներ իրականացնելու այս ոլորտում, մասնավորապես՝ հանրային լրատվական ալիքների միջոցով<sup>407</sup>:

### Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- ՀՀ կառավարությանը՝ ներդնել անհրաժեշտ ենթաօրենսդրական կարգավորումները «Կիբեռանվտանգության մասին» օրենքի արդյունավետ կիրարկումն ապահովելու համար, բարելավել կիբեռսպառնալիքներից պաշտպանությունը և կանխել անօրինական լրտեսող ծրագրերի օգտագործումը:
- ՀՀ ներքին գործերի նախարարությանը և Ազգային ժողովին՝ վերանայել «Ոստիկանության մասին» օրենքի հսկողության վերաբերյալ նոր կարգավորումները դրանք միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով՝ ապահովելով օրինական նպատակների նեղ սահմանված շրջանակ և բոլոր լիազոր մարմինների կողմից հաշվետվողականության և իրավաչափ օգտագործման արդյունավետ երաշխիքներ (տե՛ս նաև Ոլորտ 7 «Մասնավոր կյանքի իրավունք»):
- Իրավապահ մարմիններին՝ ապահովել հսկողության տեխնոլոգիաների իրավաչափ օգտագործումը՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» և «Ոստիկանության մասին» օրենքներով սահմանված պահանջներին համապատասխան, իսկ ոչ իրավաչափ հսկողության ենթադրյալ դեպքերում իրականացնել թափանցիկ և արդյունավետ հետաքննություն:

<sup>405</sup> Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, «Մեդիա iqիտություն. Մեդիագրագիտության առցանց դասընթաց», <https://elearning.media.am/course-category/մեդիա-իգիտություն/>, Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, «Մեդիագրագիտության շաբաթ Հայաստանում 2025», <https://mediainitiatives.am/ml-week-2025/>

<sup>406</sup> Ֆոկուս խմբային քննարկումներ, սեպտեմբեր 2025 թ.:

<sup>407</sup> Հայաստանում մեդիագրագիտության և ապատեղեկատվության խնդիրների վերաբերյալ լրացուցիչ տեղեկության համար տե՛ս՝ Մարիամ Խալաթյան, Նվարդ Մարգարյան, «Ապատեղեկատվությունը Հայաստանում. հանրային ընկալումների ուսումնասիրություն», «Սոցիոսկոպ» ՀԿ, Երևան 2024, [https://socioscope.am/wp-content/uploads/2025/01/Research\\_08.01\\_2025\\_2.pdf](https://socioscope.am/wp-content/uploads/2025/01/Research_08.01_2025_2.pdf)

# IV. ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025 թվականին Հայաստանի ԶԿ միջավայրը բնութագրվել է ինչպես որոշակի դրական իրավական բարեփոխումներով, այնպես էլ շարունակական գործնական խնդիրներով: Որպես դրական զարգացում հանրային խորհուրդների և ռազմավարական կառավարման աշխատակարգի վերաբերյալ նոր կարգավորումները հստակեցրել են պետական քաղաքականության գործում ԶԿ-ների մասնակցության հնարավորությունները՝ հիմք ստեղծելով ավելի կառուցվածքային երկխոսության և վաղ փուլերում մասնակցության հնարավորության համար, ինչն առաջարկվել էր «ԶԿ չափիչի» գեկույցներում: Ընթացքի մեջ են կիրառված տանգոյության և տեղեկատվական համակարգերի վերաբերյալ իրավական բարեփոխումները, դատարաններում ԶԿ-ների կողմից հանրային շահերի պաշտպանության հնարավորությունների ընդլայնման ծրագրերը, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության անկախ գործակալության ստեղծումը: Այս քայլերը հնարավորություն կտան լուծել համապատասխան ոլորտներում առկա հրատապ խնդիրները և օրենսդրությունը համապատասխանեցնել Հայաստանի ու աշխարհի ներկայիս մարտահրավերներին: Ի լրումն դրա, կառավարությունը բարեփոխումներ է նախաձեռնել հավաքների ոստիկանական վերահսկման և ուժի կիրառման համաչափ և օրինական ապահովման ուղղությամբ, թեև գործնական դաշտում կիրարկումը և այս ոլորտում «ԶԿ չափիչի» առաջարկությունների իրականացումը դեռևս տեսանելի չեն:

Միևնույն ժամանակ, ֆինանսական կայունության խնդիրները ավելի են խորացել, քանի որ ֆինանսավորման մատչելիության և պետական աջակցության մեխանիզմների հետ կապված խնդիրները մնացել են չլուծված՝ ԱՄՆ արտաքին օգնության դադարեցումից հետո դոնորական աջակցության զգալի կրճատման ֆոնին: Բացասական միտումներ են նկատվել խոսքի ազատության ոլորտում, որտեղ իրավիճակը լարված է եղել քաղաքական բևեռացման, լրագրողների նկատմամբ հետապնդումների և մի շարք քրեական գործերի հարուցման պատճառով: Մասնավոր կյանքի անձեռնմխելիության խախտումները և գաղտնալսումների շարունակական արտահոսքերը՝ ոստիկանության կողմից հսկողության հնարավորությունների ընդլայնման և հանրային վերահսկողության պակասի հետ մեկտեղ, ավելացրել են անձնական կյանքին միջամտելու վերաբերյալ մտահոգությունները: Որոշումների կայացմանը մասնակցությունը անհամաչափ է. թեև մասնակցության պաշտոնական հարթակները բարելավվել են, կիրարկման բացերը և ԶԿ-ների ընտրողական ներառումը խնդիր են մնում:

## Հաշվի առնելով վերոնշյալը՝ 11 ոլորտներում ներկայացված 38 առաջարկությունների համագումարից որպես առաջնային են առանձնացվել հետևյալ յոթ առաջարկությունները.

1. ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ սահմանել «դրամաշնորհ» հասկացությունը՝ հաշվի առնելով միջազգային առաջատար փորձը և խորհրդակցելով ԶԿ-ների հետ, և

դրամաշնորհային ծրագրերն ու ոչ առևտրային գործունեության այլ տեսակները չհամարել ձեռնարկատիրական գործունեություն:

2. ՀՀ կառավարությանը (մասնավորապես՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը), ինչպես նաև Ազգային ժողովին՝ ԶՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային միջավայր ստեղծել, որը կօգնի բարելավել տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ անհատների և տնտեսվարող սուբյեկտների նվիրատվություններից ֆինանսավորում և բնաիրային աջակցություն հայթայթելու հնարավորությունները:
3. ՀՀ Ազգային ժողովին՝ մեխանիզմներ նախատեսել ԱԺ պատգամավորների հեղինակած նախագծերի պարտադիր հանրային քննարկումներն իրականացնելու և իրավական նախագծերի նախնական գաղափարների քննարկման, ինչպես նաև կառավարության կողմից ներկայացված նախագծերի վերանայման ավարտական փուլերում ԶՀԿ-ներին ներգրավելու (այդ թվում՝ մշտական հանձնաժողովների մակարդակով մասնակցության) համար:
4. Պետական մարմիններին՝ օգտագործել մասնակցության առկա և նոր ինստիտուցիոնալ մեխանիզմները և ապահովել բովանդակային մասնակցություն, այդ թվում՝ ներգրավել ԶՀԿ-ներին քաղաքականության մշակման վաղ փուլերում, հասցեագրել e-draft հարթակի խնդիրները և վիճակագրություն կազմել պետական մարմինների կողմից իրականացվող մասնակցային գործընթացների և առաջարկների ներառման վերաբերյալ, բավարար ժամանակ տրամադրել քննարկումների համար և ավելի հաճախ դեմառդեմ քննարկումներ կազմակերպել, այդ թվում՝ մարզերում, հնարավորինս հաշվի առնել և ներառել ԶՀԿ-ների փաստափեմ և հիմնավորված առաջարկությունները:
5. Պետական մարմիններին և պաշտոնյաներին՝ պահպանել խոսքի ազատության չափորոշիչները, խթանել բաց և հարգալից հանրային երկխոսության մշակույթ և պատասխանատու հաղորդակցություն ապահովել լրատվամիջոցների հետ՝ գերծ մնալով այլախոհ կամ քննադատական կարծիքների նկատմամբ անհանդուրժողականությունից, ինչպես նաև այնպիսի հայտարարություններից, որոնք կարող են թշնամանք հրահրել կամ խաթարել հանրության վստահությունը լրագրողների և լրատվամիջոցների նկատմամբ:
6. ՀՀ կառավարությանը՝ ավելի գործունե երաշխիքներ նախատեսել անօրինական հսկողության և մասնավոր կյանքի իրավունքի խախտումների դեմ՝ ապահովելով անկախ վերահսկողություն և թափանցիկ հետաքննություն:
7. Պետությանը՝ համարժեք պաշտպանություն ապահովել ԶՀԿ-ների համար, այդ թվում՝ խտրականության դեմ պայքարի մասին օրենքի ընդունման և համապատասխան մարմնի ստեղծման, Եվրոպայի խորհրդի կողմից 2024 թվականի ապրիլին ընդունված հանձնարարականների հիման վրա SLAPP հայցերի դեմ օրենսդրական ու գործնական միջոցառումների իրականացման, երրորդ անձանց կողմից թիրախավորված ԶՀԿ-ներին աջակցող հրապարակային հայտարարությունների ներկայացման և ողջամիտ ժամկետում ԶՀԿ-ների ու ակտիվիստների դեմ հարձակումների պատշաճ քննության միջոցով:

# V. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«ԲՀԿ չափիչը» աջակցում է Արևելյան գործընկերության (ԱԷԳ) երկրներում գործող ԲՀԿ-ների միջավայրի կանոնավոր ու հետևողական մոնիտորինգի իրականացմանը: Այն բաղկացած է 11 տարբեր ոլորտների չափորոշիչներից և ցուցանիշներից, որոնք օգտագործվում են իրավական և գործնական միջավայրի գնահատման նպատակով: Գործիքի մշակման հիմքում են միջազգային չափորոշիչները և ոլորտի առաջատար փորձը: «ԲՀԿ չափիչը» մշակվել է ECNL-ի և ԱԷԳ վեց երկրների գործընկեր կազմակերպությունների փորձագետների հիմնական խմբի կողմից:

Երկրի գործընկեր կազմակերպությունները փորձագիտական խմբի անդամ մյուս ԲՀԿ-ների հետ միասին իրականացրել են մոնիտորինգի գործընթացը և մշակել նկարագրական զեկույցը: Յուրաքանչյուր երկրում ստեղծվել է նաև խորհրդատվական խորհուրդ, որը կազմված է հիմնական շահագրգիռ կողմերը ներկայացնող տեղացի փորձագետներից: Խորհրդի անդամներն ունեն երկու հիմնական խնդիր՝ վերանայել նկարագրական զեկույցը և զեկույցի տեքստի հիման վրա յուրաքանչյուր չափորոշիչի համար գնահատական սահմանել:

Չեկույցը ներառում է 2025 թվականի հունվարից նոյեմբեր ընկած ժամանակահատվածը:

## Մոնիտորինգի գործընթացը

Մոնիտորինգն իրականացվել է որակական մեթոդներով, այն է՝ փաստաթղթերի վերլուծություն, հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ: Փաստաթղթերի վերլուծության ընթացքում ուսումնասիրվել են համապատասխան իրավական ակտերը, ոլորտային զեկույցները, լրատվամիջոցների և ԲՀԿ-ների հրապարակումները, պետական մարմիններին ուղարկված հարցումների պատասխանները: Չեկույցի մշակման ընթացքում այն քննարկվել է «ԲՀԿ չափիչ» ծրագրի փորձագիտական խմբի անդամների հետ: Տասնհինգ հարցազրույց է իրականացվել փորձագետների, պետական մարմինների և ԲՀԿ ներկայացուցիչների հետ, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվություն է հավաքագրվել ԲՀԿ և պետական մարմինների 18 ներկայացուցիչից:

Կազմակերպվել է չորս դեմառդեմ և երկու առցանց ֆոկուս խմբային քննարկում՝ Հայաստանի բոլոր մարզերը և Երևանը ներկայացնող 57 ԲՀԿ-ների մասնակցությամբ, որոնք գործունեություն են ծավալում սոցիալական, կրթական, երիտասարդական, բնապահպանական, իրավապաշտպան, կարողությունների զարգացման, համայնքային զարգացման և այլ ոլորտներում: Հետազոտությանը մասնակցած փորձագետների և ԲՀԿ-ների կողմից ներկայացված կարծիքները ներկայացուցչական չեն և չեն կարող ներառել ԲՀԿ միջավայրում առկա բոլոր մարտահրավերներն ու ձեռքբերումները: Այնուհանդերձ, մոնիտորինգի մասնակիցների կողմից ներկայացված խնդիրներն արտացոլել են Հայաստանի ԲՀԿ միջավայրի հիմնական զարգացումները և հնարավորինս լրացվել են տարբեր զեկույցների և վերլուծությունների օգնությամբ:

Չեկույցի նախագիծն ուսումնասիրվել է Հայաստանի խորհրդատվական խորհրդի անդամների կողմից Էլեկտրոնային հաղորդակցության միջոցով և քննարկվել 2025 թվականի հոկտեմբերին

կայացած հանդիպման ժամանակ: Խորհրդի անդամների առաջարկությունների հիման վրա գեկույցի հիմնական բացահայտումները և առաջարկները վերանայվել և լրացվել են:

## Գնահատման գործընթացը

Հայաստանի հետազոտողները և Խորհրդատվական խորհրդի տասը անդամները գնահատել են «ԶԿ չափիչ» գործիքի 11 ոլորտների օրենսդրական ու գործնական դաշտի այն չափորոշիչները, որտեղ զգալի փոփոխություններ են արձանագրվել նախորդ տարվա գեկույցի համեմատ: Գնահատման համար օգտագործվել է 7 բալանոց սանդղակ: Այնուհետև հաշվարկվել է յուրաքանչյուր չափորոշիչի վերջնական գնահատականը՝ մի բանաձևի հիման վրա, որտեղ 50 տոկոսով հաշվի են առնվել հետազոտողների գնահատականները և 50 տոկոսով՝ Խորհրդատվական խորհրդի անդամների գնահատականների թվաբանական միջինը: Յուրաքանչյուր ոլորտի միավորը հաշվարկվել է որպես բոլոր չափորոշիչների վերջնական գնահատականների թվաբանական միջին, ապա գեկույցում ներկայացնելու նպատակով մոտարկվել մինչև մեկ տասնորդական նիշ:

Սանդղակի ծայրահեղ արժեքները համարվում են ծայրահեղ կամ իդեալական իրավիճակներ կամ միջավայր: Օրինակ՝ 1-ը ԶԿ-ների համար չափազանց անբարենպաստ (ավտորիտար) միջավայր է նշանակում, իսկ 7-ը՝ ծայրահեղ բարենպաստ (իդեալական ժողովրդավարական) միջավայր: «ԶԿ չափիչ» գործիքի, գնահատման գործընթացի և հաշվարկի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք <https://csometer.info/>:

# VI. ՀՂՈՒՄՆԵՐ

## ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, <https://www.arlis.am/hy/acts/102510>
- ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 09.11.2004, վերջին փոփ. առ 14.08.2025, <https://www.arlis.am/hy/acts/210471>
- ՀՀ դատական օրենսգիրք, 07.02.2018, վերջին փոփ. առ 21.11.2024, <https://www.arlis.am/hy/acts/199816>
- ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, վերջին փոփ. առ 02.08.2025, <https://www.arlis.am/hy/acts/210052>
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 05.05.1998, վերջին փոփ. առ 08.08.2025, <https://www.arlis.am/hy/acts/210215>
- ՀՀ քրեական օրենսգիրք, 18.04.2003, վերջին փոփ. առ 02.08.2025, <https://www.arlis.am/hy/acts/210019>
- ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 05.12.2013, վերջին փոփ. առ 01.08.2025, <https://www.arlis.am/hy/acts/209969>
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 30.06.2021, վերջին փոփ. առ 01.08.2025, <https://www.arlis.am/hy/acts/209973>
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, 06.12.1985, վերջին փոփ. առ 01.09.2025, <https://www.arlis.am/hy/acts/211145>
- ՀՀ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենք, 16.12.2016, վերջին փոփ. առ 01.04.2025, <https://www.arlis.am/hy/acts/204213>.
- ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենք, 16.12.2016, վերջին փոփ. առ 01.08.2025, <https://www.arlis.am/hy/acts/209968>
- ՀՀ օրենքը «Ազդարարման համակարգի մասին», վերջին փոփ. առ 01.01.2023, <https://www.arlis.am/hy/acts/172131>
- ՀՀ օրենքը «Անձնական տվյալների պաշտպանության մասին», 18.05.2015, վերջին փոփ. առ 13.10.2023, <https://www.arlis.am/hy/acts/183134>
- ՀՀ օրենքը «Բարեգործության մասին», 08.10.2002, վերջին փոփ. առ 14.11.2024, <https://www.arlis.am/hy/acts/199719>
- ՀՀ օրենքը «Երիտասարդական քաղաքականության մասին», 05.03.2025, <https://www.arlis.am/hy/acts/204846>
- ՀՀ օրենքը «Ձանգվածային լրատվության մասին», 13.12.2003, վերջին փոփ. առ 21.06.2022, <https://www.arlis.am/hy/acts/164454>

- ԶՅ օրենքը «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», 08.07.2005, վերջին փոփ. առ 01.08.2025, <https://www.arlis.am/hy/acts/209934>
- ԶՅ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին», 03.04.2001, վերջին փոփ. առ 01.08.2025, <https://www.arlis.am/hy/acts/210005>
- ԶՅ օրենքը «Կամավոր աշխատանքի մասին», 14.06.2023, <https://www.arlis.am/hy/acts/180260>
- ԶՅ օրենքը «Կրիպտոակտիվների մասին», 29.05.2025, <https://www.arlis.am/hy/acts/208599>
- ԶՅ օրենքը «Հանրային խորհրդի մասին», 07.03.2018, վերջին փոփ. առ 09.01.2025, <https://www.arlis.am/hy/acts/201686>
- ԶՅ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, վերջին փոփ. առ 13.10.2023, <https://www.arlis.am/hy/acts/183139>
- ԶՅ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, վերջին փոփ. առ 14.11.2024, <https://www.arlis.am/hy/acts/199693>
- ԶՅ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, վերջին փոփ. առ 20.10.2025, <https://www.arlis.am/hy/acts/214356>
- ԶՅ օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի մասին», 21.03.2018, վերջին փոփ. առ 06.01.2024, <https://www.arlis.am/hy/acts/187324>
- ԶՅ օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 21.06.2014, վերջին փոփ. առ 09.06.2023, <https://www.arlis.am/hy/acts/178468>
- ԶՅ օրենքը «Սոցիալական աջակցության մասին», 24.10.2024, <https://www.arlis.am/hy/acts/199657>
- ԶՅ օրենքը «Ոստիկանության մասին», 16.04.2001, վերջին փոփ. առ 06.11.2025, <https://www.arlis.am/hy/acts/215512>
- ԶՅ օրենքը «Ոստիկանության գվարդիայի մասին», 24.10.2024, <https://www.arlis.am/hy/acts/199700>
- ԶՅ օրենքը «Պետական գաղտնիքի մասին», 01.03.2023, վերջին փոփ. առ 06.04.2025, <https://www.arlis.am/hy/acts/204813>
- ԶՅ օրենքը «Պետական տուրքի մասին», 27.12.1997, վերջին փոփ. առ 01.09.2025, <https://www.arlis.am/hy/acts/211026>
- ԶՅ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 07.05.2002, խմբ. 16.12.2016, վերջին փոփ. առ 09.08.2025, <https://www.arlis.am/hy/acts/210071>
- ԶՅ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23.09.2003, վերջին փոփ. առ 06.04.2023, <https://www.arlis.am/hy/acts/175858>
- ԶՅ օրենքը «Տեսալսողական մեդիայի մասին», 16.07.2020, վերջին փոփ. առ 08.11.2025, <https://www.arlis.am/hy/acts/215610>

- ՀՀ օրենքը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին», 26.05.2008, վերջին փոփ. առ 08.08.2025, <https://www.arlis.am/hy/acts/210014>
- ՀՀ օրենքը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», 22.10.2007, վերջին փոփ. առ 01.08.2025, <https://www.arlis.am/hy/acts/209915>
- ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1752 որոշումը «Արտակ Չեյնայանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 8-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով», 01.10.2024, <https://www.arlis.am/hy/acts/198197>
- ՀՀ կառավարության N 66-Ն որոշումը «Բարեգործական ծրագրերի մասին», 16.01.2003, վերջին փոփ. 31.01.2019, <https://www.arlis.am/hy/acts/128100>
- ՀՀ կառավարության N 183-Ն որոշումը «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին», 11.02.2021, <https://www.arlis.am/hy/acts/149957>
- ՀՀ կառավարության N 691-Ն որոշումը «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը, 2022-2024 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքային շրջանակը, ռազմավարության իրականացման հսկողությունն ու համակարգումն ապահովող անձանց ցանկը հաստատելու մասին», 13.05.2022, փոփ. 11.08.2023, <https://www.arlis.am/hy/acts/181462>
- ՀՀ կառավարության N 732-Ն որոշումը «ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 23.05.2024, <https://www.arlis.am/hy/acts/193122>
- ՀՀ կառավարության N 810-Ն որոշումը «Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ (մշակված, ծրագրված, հարմարեցված) տեխնիկական միջոցների ցանկը հաստատելու մասին», 31.07.2008, <https://www.arlis.am/hy/acts/45845>
- ՀՀ կառավարության N 813-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1146-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», 20.06.2025 (ուժի մեջ է մտնում իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի արդիականացված տարբերակը գործարկելուց հետո), <https://www.arlis.am/hy/acts/208527>
- ՀՀ կառավարության N 1128-Ն որոշումը «Փաստահավաք հանձնաժողովում ընտրվելու նպատակով ոչ առևտրային կազմակերպությունների կողմից թեկնածուների ներկայացման կարգը, ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դրանց ներկայացման և ուսումնասիրման կարգը սահմանելու մասին», 14.08.2025, <https://www.arlis.am/hy/acts/210608>
- ՀՀ կառավարության N 1143-Ն որոշումը «Փաստահավաք հանձնաժողովի գործունեության կարգը սահմանելու մասին», 14.08.2025, <https://www.arlis.am/hy/acts/210680>

- ՀՀ կառավարության N 1146-Ն որոշումը «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի թիվ 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», 10.10.2018, <https://www.arlis.am/hy/acts/126002>
- ՀՀ կառավարության N 1204-Ն որոշումը «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին», 15.10.2015, վերջ. փոփ. 26.11.2020, <https://www.arlis.am/hy/acts/147567>
- ՀՀ կառավարության N 1342-Լ որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 252-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 18.09.2025, <https://www.arlis.am/hy/acts/212560>
- ՀՀ կառավարության N 1552-Լ որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 22-ի թիվ 624-Լ որոշման մեջ լրացում կատարելու մասին», 27.12.2018, <https://www.arlis.am/hy/acts/127419>
- ՀՀ կառավարության N 1568-Լ որոշումը ««Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», 06.10.2022, փոփ. 09.11.2023, <https://www.arlis.am/hy/acts/185253>
- ՀՀ կառավարության N 1871-Լ որոշումը «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», 26.10.2023, <https://www.arlis.am/hy/acts/184674>
- ՀՀ կառավարության N 1890-Ն որոշումը «ՀՀ համայնքներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին», 02.11.2023, վերջին փոփ. 20.02.2025, <https://www.arlis.am/hy/acts/203410>
- ՀՀ կառավարության N 1937-Ն որոշումը «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին», 24.12.2003, վերջին փոփ. 03.04.2025, <https://www.arlis.am/hy/acts/205168>
- ՀՀ կառավարության N 1978-Լ որոշումը «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը բխող 2020-2022 թվականների և 2023-2025 թվականների գործողությունների ծրագրերը հաստատելու մասին», 26.12.2019, վերջին փոփ. 12.04.2024, <https://www.arlis.am/hy/acts/191790>
- ՀՀ կառավարության N 2323-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին», 28.12.2023, <https://www.arlis.am/hy/acts/202735>

- ՀՀ վարչապետի N 564-L որոշումը «Վարչապետի աշխատակազմի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին», 25.05.2018, վերջին փոփ. 20.06.2025, <https://www.arlis.am/hy/acts/208470/>
